809,198,1-3

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ՀՈՎՈՒՆՅԱՆԻ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԺԳ.



1938

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՕՈՅՍ» Պէյրութ

Լեզուասէր բարեկամներիս և ընկերներիս

«Յուշագրիս» նման գրութիւններ կարդացող շատ քիչ մարդ կայ մեզանում. հազիւ մի քանի տասնեակ. հետևապէս ոչ մէկ յոյս կայ տպագրութեան ծախքն իսկ գոցելու։ Ձևի համար գին նշանակած եմ մէկ ֆրանք։ Ասում եմ «ձևի համար», որովհետև եթէ քիչ է կարդացողը, շատ աւելի քիչ է գնորդը։ Ընկերներս ու բարեկամներս գիտեն իմ նիւթական կացութիւնը, գիտեն նաև, որ այս տեսակ ծախքերի տակ մտնելու ես հնար չունեմ։ Եթէ նրանք ինձ նման այն կարծիքին լինեն թէ Յուշագրերս կարող են պիտանի լինել մեր լեզուի քննութեան համար՝ կը խնդրեմ նիւթապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ։ Յուշագրերս տպագրելու եմ պրակ առ պրակ։ Ամեն պրակի ծախքն է մօտ 200 ֆր. 500 օրինակի համար։ Ստացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ։ Աւելորդ է ասել թէ աշխատանքիս համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ գումարից։ Հրատարակուած պրակների ամբողջ պահեստն ու մնացորդ գումարը պիտի մնայ Համազգային Ընկերութեան։

Սիրով Ն. Աղբալեան

Հասցէ՝

Collège Arménien,
Rue Wadi Abou Djémil, No. 127
Beyrouth, Liban

A II 29432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԹԷ, ԵԹԷ

Ա. Մէյէ կարծում է, որ եթէ բառն ածանցաւոր է. հնագոյնը թէ ձևն է, իսկ եթէ-ն մի ե է և մի թէ, որով ե + թէ → եթէ, նա կշռում է լիտ. te բառին: Հիւրչման այս մեկնութիւնը ապահով չի համարում. Նրա կարծիքով եթէ ձևն է հնագոյնը, որ յապաւելով իր ե-ը՝ դարձած է թէ: Թէ ինչ մասնիկ է այդ ե-ը նրանք չեն ասում: Մէյէի կարծիքով թէ բառի հնագոյն իմաստն եղած է «ա՛յսպէս, ա՛յս կերպ», իսկ նոյն բառի «որ» նշանակութիւնը «հաստատուած է և հանդիպում է ամենահին բնագիրների մէջ»[1]:

Բարբառների մէջ թէ շաղկապը երևում է տարբեր ձևերով. Արցախ — թա, Թիֆլիս — թու, այլուր՝ — թը, դր: Արցախեցու թա-ն կարծում եմ պէտք է համարել մի հին թայ, որի յ ձայնը արժէքազուրկ է դարձած, ինչպէս ընծայ, տեսայ և նման բառերի և ձևերի մէջ: Երևանցին ասում է. «տեսնում ա»- որ է՝ «տեսնում է» և ուր պարզ է թէ ա-ն մի հին այ է, որ է չի դարձած: Դա բայի եղ. 3-դ դէմքի վախճանն է, ինչպէս ստան-այ ձևի մէջ: Այսպիսով մենք կ'ունենանք երեք ձև.— թայ, թէ, թու: Ինչ և համարենք

---

[1]) Տես. Մէյէ. Esquisse. § 108, էջ 106-7: Նաև Հ. Աճառեան, Արմատական բառարան, թէ բառի տակ:

ե ձայնը երէ բառի մէջ՝ պարզ է, որ երէ-ն մի ե է և մի բէ։ Բարբառները չեն պահած երէ բառը։ Կարող ենք ենթադրել, որ նրանք չեն պահած նաև *երայ և *երու ձևերը, որ հնարաւոր էին, նկատի ունենալով բէ և երէ բառերի հակադրութիւնը։

Այս ձևերից բէ-ն և երէ-ն հին են և կիրարկուած են դասական լեզուի մէջ [1]։ Կարծում եմ հին պէտք է համարուին նաև բայ և բու ձևերը, թէև վկայուած չեն։ Թու ձևի մի հետքը ես գտնում եմ Եղնիկի մօտ, որ գրում է թէ Սատանան հասաատ չդիտէր, որ մարդուն անհնազանդութեան մղելով՝ նրան կարող է վընասել, «այլ կարծեօք ի բերուս մատուցեալ եթէ լիցի և թէ չլինիցի». բայց երբ Ադամ մեղանչեց և Աստուած նրան պատուհասեց՝ ա՛յն ժամանակ Սատանան իմացաւ, որ մարդու պատուիրազանցութիւնը նրան մահ բերաւ։ «Ի թեթուս» բառը կարծում եմ կազմուած է բէ և բու բառերից։ Հին ժամանակ գրում էին բե և ոչ բէ, որով՝ բե+բու → բերու։ Սա եզակին է բերուք բառի, որ ունինք և նշանակում է կարծիք։ Թերուք այսպիսով պիտի նշանակէր թէեր և թուեր, այսինքն՝ եթէներ և «ի թեթուս մատչիլ» պիտի նշանակէր երկմտել, տարակուսել, արդիւնքի մասին կասկած ունենալ, մտածել թէ կը լինի՞, չի՞ լինի. մի խօսքով՝ բէ ու բուի մէջ ընկնել։ Թերու այնպիսի բառ է, ինչպէս դաւառական «հա ու չէ» ասութիւնը. «նրա հա ու չէն Աստուած գիտէ», այսինքն՝ դժուար է իմանալ համաձա՞յն է թէ ոչ։ Կամ լաւ ևս՝ նման է դաւառ. «չեմուչում» բառին. «առաջ չեմուչում

---

[1]) Ոչ բէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն. Սաղմ. Ե.— Զի երէ և կամիցիմ պարծել՝ ոչ եղէց անըզդամ. Առ Կորնթ. ԺԲ. 6.

արաւ, վերջը համաձայնեց». այսինքն՝ նախ ասաց որ չեմ կարող, վերջը յօժարեց։ «Չեմ» ու «չում» ձայնաւորների նոյն տարբերութիւնն ունին ինչ որ թէ ու թու բառերը. և ինչպէս «չեմ»-ը «եմ» բայի ժխտականն է, այնպէս և «չում» բառը ժխտականն է նոյնարժէք «ում» բառի, որ նոյնպէս էական բայ է. հմ. թող-ում և ասեմ։ Այս մասին սակայն մի ուրիչ անգամ։

Այսպէս ուրեմն թու ձևը ես համարում եմ հին, որ մտնում է Եղնիկի «ի թեթուս» բառի մէջ իբր բաղադրիչ։ «Ի թեթուս» նախդրիւ տրականն է «թեթուք» բառի։

Նայելով թայ, թէ, թու ձևերին՝ կարելի է ասել, որ դրանք մի շատ հին բայի Սահմ. ներկայ եզ. 3-դ դէմքեր են. հմ. գնայ, ասէ, թողու։ Այսպէս է թըւում նաև եթէ ձևը։ Մեր բայերից երկուսը — դնել և տալ — է յաւելուկ ունեն անց. կատ. եզ. բոլոր դէմքերի մէջ. ետու, ետուր, ետ. եդի, եդեր, եդ։ Ուրիչ բայեր միմիայն եզ. 3-դ դէմքի մէջ ունեն այդ յաւելուկը. հմ. հաց, եհաց. տես, ետես և այլն։ Բուն իսկ դասական չրջանին այդ յաւելուկը չատ էր երեւուն. միաժամանակ գրում էին և՛ հաց և՛ եհաց։ Ե-ի ներկայութիւնը անհրաժեշտ չէր նկատւում։ Նոյն վիճակի մէջ էր և եթէ ձևի ե-ը. դասական չրջանին գրում էին և՛ թէ և՛ եթէ։ Ուստի կարող ենք ասել. եթէ ձևը թէ ձևին յարաբերում է այնպէս, ինչպէս եհաց ձևը հաց ձևին։

Այս հին ու մոռցուած բայը ունեցած է երեք տարբեր խոնարհում երեք տարբեր բարբառների մէջ։ Երրորդ դէմքի հիման վրայ կարող ենք վերականգնել մնացած երկու դէմքերը։

*թամ.	*թեմ.	*թում.	*եթեմ
*թաս.	*թես.	*թուս.	*եթես
թայ.	թէ.	թու.	եթէ

Այս ձևերին իբր զուգահեռ կարող ենք տալ միևնոյն «թողնել» բայի գաւառական և դասական խոնարհման ձևերը.

գաւառական		դասական
թողնամ.	թողնեմ.	թողում
թողնաս.	թողնես.	թողուս
թողնայ.	թողնէ (այ)	թողու

Դասական լեզուի հիմքը կազմող բարբառն ասում էր *թեմ, *թես, թէ և *եթեմ, *եթես, եթէ. բայց այս ձևերը կիրարկած է շատ հին ժամանակ: Դասական շրջանին այս բայը մոռցուած էր. իր հին ու լրիւ խոնարհումից մնացած էր միմիայն մի փշրանք, մի 3-դ դէմք: Քայքայուած էր և իր կազմը. Ե-ն ընկնելու վրայ էր. թէև դեռ կար եթէ ձևը, բայց նրա հետ միասին և աւելի յաճախ կիրարկւում է թէ ձևը, որ և ընդհանրացաւ հետագային: Մեր դրական լեզուի մէջ եթէ բառը մի փոխառութիւն է գրաբար լեզուից. ժողովուրդը չունի այդ ձևը: Թէ և եթէ բառերը իրենց ճակատագրով նման են գոմ, գոս, գոյ և գուցէ բառերին, որ նոյնպէս մի փշրանք են մի հին ու լրիւ խոնարհման:

Թէ և եթէ բառերի պաշտօնի և կիրարկութեան համար կարելի է իբր զուգահեռ յիշել յուն. ſanai բայը, որ մեր «բան» բառի կշիռն է և նոյնպէս պակասաւոր է, հետևապէս հին բայ է. իր անց. կատ. եզ. 3-րդ դէմքն է Ե՛Ցէ, ուր Ե-ն յաւելուկ է. հմ. իբր ձև մեր եթէ բառը:

Այս բայը նշանակում է «ասել» և նոյն պաշտօնն է կատարում ինչ որ մեր թէ և եթէ բառերը. նա կիրարկւում է ուրիշի խօսքերը մէջ բերելու հա-

մար [1]։ Սահմ. ներկայի եզ. 3-դ դէմքի վաղեմի l ձայնը մեր լեզուի մէջ փոխարինուած է յ ձայնով. այսպէս՝ *ասե՛տի → *ասե՛յի *ասե՛յ (ի-ն յովտացած և ձուլուած նախորդ յ-ի հետ) → ասէ (եյ հնչուած ու գրուած իբր է)։ Այս հաչուով վաղեմի *բե՛տի ձևը դառնալով *բե՛յի՝ ամփոփուած է իբր *բե՛յ և դարձած է բէ. նոյն կարգով հին *բոտի ձևը տուած է *բոյի և դարձած *բոյ [2]։ Ոյ վախճանը բարբառների մէջ տըւած է ու. եկեղեցւոյ, որդւոյ → եկեղեցու, որդու։ Այս նոյն ճամբով հին բոյ ձևը դարձած է բու։ Բոյր լեզուներից յոյնն ու սանսկրիտը անցեալ ժամանակները կազմում են մի յաւելուկով, որ է ե կամ ա. յունարէնը տեսանք վերը, ե՛-ՖԷ։ Այսպէս նաև սանսկ. jayati = յաղթում է. բայց a′-jayat նշանակում է յաղթում էր. արմատ gam = գնալ. a′-gamat = գնաց:

Այս հաչուով գուցէ մեր բէ ձևը համարելով Սահմ. ներկայ եզ. 3-դ դէմք, եբէ ձևը կարելի էր համարել անցեալ անկատար։ Բայց այս խնդիրը շատ կընճռոտ է և ես խուսափում եմ մտնել նրա քննութեան բաւիղների մէջ։ Դասական շրջանին հայ մարդը բէ-ն ու եբէ-ն չէր ըմբռնում իբր բայական ձևեր, հետևապէս չէր կարող այդ ձևերի տարբերութիւնն զգալ իբր ներկայ և անցեալ, ուստի անխտիր գործ էր ածում բէ-ն ու եբէ-ն իբր պարզ շաղկապ։

---

[1]) *Rieman et Gœlzer. Gramm. Grecque complète.* էջ 238-9։

[2]) Ինձ թւում է, որ այս ձևը մեր բ գրի անունն է։ Մեր, ոլաւ և վրաց գրերի անունները հին արմատներ կամ պարզ բառեր են։ Այդ անունների հիման վրայ կարելի էր ասել, որ Ս. Մաշթոցն է իրօք վրաց գրերի յօրինողը։ Այս մասին մի ուրիշ անգամ։

Ինչպէս անանուն էք pէ՞ն և եpէ՞ն նոյն արժէքն ունէին, ինչ որ Թիֆլիսեցու «կ՚օսէ»-ն և Երևանցու «ասում ա»-ն։ 60-ամեան քաւերի դաւեշտախոպերից մէկում Թիֆլիսցի հայը քաղաքանում անանում է Սամսոնէի նիկոյացուցիչը և ասկը պատմում է ոգևորուած թէ ինչպէս Սամսոնէին ասում էր հօրը. (գրում եմ յիշողութեամբ). «կիս հա՛յ իմ, կ՚օսէ. դուն թո՛ւրք իս, կ՚օսէ. վաթ իմ հաւասը չի՛ս հաշնում, կ՚օսէ, քաս լօթխանա մի՛որ, կ՚օսէ», ուր «կ՚օսէ» նշանակում է «ասում է»։ կամ Երևանցին. «ասում եմ. դնա՛.— նա թէ՝ ո՞նց դնամ, ամօթ ա». հմ. Ղազար ասպետեանի խօսքը. «Աչէ. ուրախ լինուք և պարձանալ թէ՝ օրհնեցէք զՏէր»։

Արդ՝ ես ասում եմ. pէ և եpէ բառերը հին բաղադձեր են. այդ հին բայի հնագոյն խմառաը եղած է «ասալ». և ուրեմն pէ նշանակած է «ասում է», իսկ եpէ դարձ նշանակած է «ասում էր»։ Ժամանակի ընթացքին և գաւառական չրջանից չաս առաջ այդ բառերը սկսում էին պարզաններ, կորցրին իրենց բուն խմառաը և վերածուեցին պարզ չակերտների։

Բայց լեզուի չարաչարութեան կարգը աւանդաւած է։ Pէ և եpէ բառերի խմառաը մոռացուեց, բայց նրանց կիրարկութեան կարգը մնաց հին ձևով, այնպէս որ մենք կարող ենք այսօր pէ և եpէ չակերտները փոխարինել «ասում է» բայով և տեսնել թէ ճի՞շդ է մեր վարկածը նրանց հնագոյն խմառաի մասին։ Այդ խմառաը չաս պարզ երևում է օրինակ՝ առ Հռոմ. թղթէ ժե. 10-11 համարներից. «Եւ պարձանալ ասէ. Ուրախ լերուք հնմանոսք ընդ ժողովրդեան նորա։ Եւ պարձանալ՝ pէ. Օրհնեցէք ամենայն հնմանոսք զՏէր». այստեղ «Եւ պարձանալ թէ» նշանակում է. «Եւ պարձնալ ասէ»։ Ասորի ես պատգրում եմ pէ և եpէ բա-

ների դասական կիրարկությունները և նրանց աչխարհաբար թարգմանությունը, ուր այդ բառերը փոխարինում եմ «ասում է» բայով։ Օրինակներն առնում եմ Հ. Ա. Այտընեանի Հայկազնեան լեզուի քերականությունից (էջ 174 78)։

Իբր ծանօթություն գծի տակ բերում եմ զուգահեռ խօսքեր գաւառական կազմութեամբ, որ ցոյց են տալիս թէ հին ու նոր լեզուն մտածութեան նոյն կարգն ունեն։

Յատուկ ուշադրութեան արժանի է «ոչ եթէ» առադրութեան իմաստը. Պողոս գրում է. (Հռովմ. ԺԵ. 2-3). «այլ՝ իւրաքանչիւր ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ի բարիս՝ վասն շինութեան. քանզի և Քրիստոս ոչ երէ անձին հաճոյ եղև, այլ որպէս և գրեալ է ...» Եզնիկ գրում է. «Փառք ոչ երէ անձնաւոր են, այլ ...» շարադրութեան այս կարգի մէջ «ոչ» մակբայը վերաբերում է բային. այդ խօսքերը պիտի չրջուին իբր՝ Եթէ՝ քանզի և Քրիստոս ո՛չ եղև անձին հաճո՛յ այլ ... «Եթէ՝ փառք ո՛չ են անձնաւոր, այլ ... այսինքն՝ «Ասում է. որովհետեւ Քրիստոս եւս իր անձին հաճոյ չեղաւ, այլ ...»։ — «Ասում է. փառքը անձնաւոր չէ, այլ ...»։

Մնացած օրինակները յատուկ մեկնութեան կարիք չունեն։

— Եթէ կամիս՝ կարող ես.	ասում է՝ կամենաս՝ կարող ես. [1])
— Թէ միայն մերձենամ՝ փրկիմ.	ասում է՝ միայն մերձենամ՝ կը փրկուիմ. [2])
— Գիտէին թէ մեռաւ	կարծում էին՝ ասում է՝ մեռաւ.

Հմ. գաւառ. [1]) ասում է. կ'ուզես՝ կը գնաս։ [2]) ասում է. նրան տեսնեմ՝ կը լաւանամ։

— Տացուք եթէ ոչ տացուք	Տա՞նք, ասում է՝ չտա՞նք.
— Ի ժամանակի խնդիր լինիցի սուտ խօսեցաւ թէ արդար	Ժամանակին խնդիր պիտի լինի սո՞ւտ խօսեց, ասում է՝ իրա՞ւ (խօսեց). [3]
— Ո՞վ եղև խորհրդակից Տեառն եթէ խելամուտ արասցէ զնա.	Աստծուն խորհրդակից ո՞վ եղաւ, ասում է՝ նը-րան խելամուտ անի. [4]
— Ոչ եմք անձանց տեարք եթէ ըստ կամս գնասցուք	Մեր անձի տէրը չենք, ասում է՝ ուղածնիս պէս չարժուինք. [5]
— Չեմ այնչափ անմիտ թէ ոչ գիտիցեմ.	Այնքան անմիտ չեմ, ասում է՝ չիմանամ. [6]
— Եթէ որդիք, ապա և ժառանգք.	Ասում է. որդիք էք, ուրեմն ժառանգ էք: [7]
— Չեն ինչ խիստ հրամանքն՝ եթէ կամիցիմք. ապա թէ ոչ կամիցիմք՝ և թեթևքն մեզ ծանր թուին:	Ասում է՝ կամենանք՝ հրամանները ծանր բան չեն. յետոյ ասում է. չկամենանք՝ թեթև (հրամաններն) անդամ ծանր կը թուան: [8]

Նոյն հին իմաստը երևում է և այն զէպքում, երբ թէ-ն ու եթէ-ն կից են ուրիշ բարերի.

---

[3]) Ո՞վ գիտէ, ասում է՝ լա՞ւ խօսեց, վա՞տ խօսեց: [4]) ասում է, ո՞վ է բարեկամս՝ գայ ինձ օգնի: [5]) ասում է. ձին մերը չի՝ առնեն տանք իրան:— [6]) այնքան յիմար չեմ, ասում է՝ չհասկանամ ուղածը:— [7]) ասում է. հիւանդ՝ ուրեմն անկարող: [8]) ասում է. ուղենանք՝ կանենք. զուղենանք՝ ամեն բան ծանր կ՚երևայ:

— Զլեզու ոչ կարէ այլ ինչ կապել բայց եթէ երկիւղ միայն	Լեզուն ուրիշ բան կապել չի կարող, ասում է՝ բայց միայն երկիւղը.[9]
— Գուցէ թէ լուիցեն.	Գուցէ՝ ասում է՝ լսեն։
— Հազիւ ոք թէ մեռանիցի	Հազիւ՝ ասում է՝ մէկը մեռնի։
— Լաւ է ինձ մեռանել քան թէ իցեմ կենդանի	Աւելի լաւ է մեռնեմ, ասում է՝ քան կենդանի լինեմ։
— Գնասցուք կամ թէ յաջ կամ թէ յահեակ.	Ասում է. գնանք կամ աջ, կամ ասում է՝ ձախ.
— Միայն թէ ի չարեացն հեռանայցեմք	Միայն, ասում է՝ չարիքներից հեռանանք.
— Զի թէ բիւր չար իցէ՝ սակայն աստուածապաշտ է	Որովհետև՝ ասում է՝ հազար վատ լինի՝ սակայն աստուածապաշտ է։
— Եւ թէ բիւր աճապարեցին հայքն, սակայն ...	Եւ ասում է՝ հայերը շատ աճապարեցին, բայց ...
— Գոնեայ թէ ստուերն անկանիցի ի վերայ նոցա	Գոնէ՝ ասում է՝ ըստուերն ընկնի նրանց վրայ.

Եւ այլն, և այլն.

Թէ մինչև ո՞ր աստիճան խամրած է այդ հին բայի բուն իմաստը այսօր, երևում է այն խօսքերից, ուր թէ-ն կիրարկւում է առաջին դէմքի համար. «Ասում է. ո՞նց եւ։ Ես թէ՝ լաւ եմ, փառք Աստծու», ուր թէ կիրարկուած է «ասում եմ» իմաստով։ Զարմանալի չէ

---

[9]) Նրան ուրիշ կերպ խելքի չես բերի. ասում է միայն պատժելով։

այս պարագան, եթէ նկատի ունենանք, որ դեռ դասական շրջանի հայը չէր զգում այդ բառի բուն իմաստը և չէր տարբերում թէ-ն ու եթէ-ն։

Վերը խօսեցի թայ և թու ձևերի մասին։ Թու ունի նաև վրաց լեզուն, ուր այդ բառը նշանակում է թէ, եթէ, որ ինչպէս մեր լեզուում։ *) Մեր բարբառական թու ձևը պէտք չէ սակայն փոխառութիւն համարուի, քանի որ ունինք թողու բայաձևը։ Այս բառը պէտք է համարուի հայաստանի հին բնակչութեան մի ժառանգութիւն, որ պահած է մեզ հետ նաև Վրացին։ Կարծում եմ մեր «թուել» բայը իր «ասել» իմաստով այդ բառերին արմատակից է, բայց չուզենալով շեղուիլ մեր նիւթից՝ այդ խնդրի քննութեան մէջ չեմ մտնում։

Ինձ թւում է, որ թէ և եթէ բառերին ազգակից են նաև մեր միթոմ (Թիֆլիս) և մթամ (Երևան) բառերը. վերջինը կարծում եմ մի հին *միթա՛մ է, ուր անշեշտ ի-ն սղած է։ Այս բառերը նշանակում են «իբր թէ» [1]։ Թւում է թէ սրանք մեր թէ բայի Սահմ. ներկայ առաջին դէմքերն են մի հին ու չքացած պարսկաձև խոնարհումով, հմ. պրսկ. մի դանամ, մի թաւանամ = դիտեմ, կարող եմ։ Հմ. տամ, գոմ և իբր զուգահեռ ձև. միթամ, միթոմ։ Սրանք նոյնպէս թւում է թէ ունեցած են «ասել» նշանակութիւն. «Մթամ չե՛ս իմանում» = ասում եմ. չե՛ս իմանում։ Մթամ որ դաս՝ ինչդ կը պակսի = ասում եմ. որ դաս՝ ինչդ կը պակսի։ Տեսանք, որ այդ բառերի իմաստն էր «իբր

---

*) N. Marr et M. Brière. La langue georgienne, էջ 221 § 254

[1]) Մթամ չես տեսել (Երևան) = իբր թէ չես տեսել։ Միթոմ չի՛ս գիդի (Թիֆլիս) = իբր թէ չգիտես։

թէ». այստեղ բառերի իմաստն արտայայտւում է 3-դ դէմքով. «իբր թէ» = իբր ասում է. իսկ մթամ և միթոմ բառերը նոյն միտքն արտայայտում են առաջին դէմքով: Այս պարսկաձև խոնարհման հետևելով թայ և թու ձևերը պիտի տային *միթայ, *միթու իսկ թէ ձևը պիտի տար միթէ, որ դասական բառ է. հմ. պրսկ. մի դանադ, մի թանանադ = դիտէ, կարող է: Եթէ կարենայինք ցոյց տալ, որ մեր «աղէ՛» միջարկութիւնը հրամայական մի հին ձև է. հմ. գրէ՛ և նմանները, այն ժամանակ գուցէ կարենայինք միթէ բառը համարել մի արդելական, իբր մի՛ թէ, այսինքն՝ մի՛ ասեր: Գրէ՛ ձևը Սահմ. ներկայ եզ. 3-դ դէմք է, բայց միաժամանակ և հրամայական է. այդպէս կը լինէր և թէ-ն, որ ինչպէս տեսանք ներկայ 3-դ դէմք է: Բայց այս կէտի վրայ դժուար է պնդել: Ցամենայն դէպս «միթէ» ձևը նոյնպէս ներկայի իմաստ ունի և կարող է «ասել» բայի ներկայով փոխարինուիլ. Միթէ ե՞ս ի-ցեմ = ասում է. ե՞ս եմ: Աւելորդ է ասել, որ այս բառը նոյնպէս սնամէջ դարձած էր դասական լեզուից շատ առաջ:

Եզրափակենք.

Թէ և եթէ բառերը մի հին բայի եզ. 3-դ դէմքեր են: Նրանց իմաստն եղած է «ասել»: Այդ իմաստը չքացած է դասական շրջանից շատ առաջ և բառերը սնամէջ դառնալով՝ կիրարկուած են իբր շաղկապ:

ԲՈՒԿ, ԲՈՒԾ, ԲՈՒՏ
(Կ — Տ — Ծ)

Իմ ԺԲ Յուշագրի մէջ անուղղակի յիշատակած եմ մեր պագ և պաչ բառերը, (էջ 225) որ նոյնիմաստ են և համարած եմ միևնոյն նախաւոր բառը։ Պագ բառին զուգահեռ ենթադրած եմ մի *պակ բառ, որի կ-ը թլուատաբար հնչուած է s։ Ջ + u վախճանով այդ բառը պիտի լինէր պաs + Ջ + u։ Այս ձևն ունեցած է իր լծորդական կշիռն իբր պաs + Ջ + c, որ ձայնաւորի կորուստով և եղերական s և c ձայների ձուլումով տուած է պաչ։ Նկատելով, որ պագ բառն արտաբերում են նաև իբր պաf. հմ. գաւառ. պաfնել, պէտք է կարծել, որ եղած է երբեմն մի պակ + Ջ + հ ձև, որ զուգահեռը պիտի լինէր պաs + Ջ + u կազմութեան։ Մենք այսպիսով կարող ենք վերականգնել միևնոյն բառի բարբառական հին տարբերակները։

*պագհ → պագ.	գհ. անցած է գ հնչման։[1]
պակհ → պաք.	կհ ձուլումով տուած է f
պատչ → պաչ.	կ-ն թլուատաբար հնչուած է s և մի նախաւոր u ձայն, որ հ ի կշիռն է՝ անցած է c հնչման, իսկ sc ձուլումով տուած են չ։

Գրաբարն ասում է պագանել, որի բարբառական ամփոփումն է պագնել, ուր ա-ը սղած ու չքացած է։ Բարբառն ասում է. պա՛չ անել, թիւրաբար արտհելով հին բառը և ստեղծելով մի նոր բայ — անել, հմ. գա-

---

[1]) Յայտնի է որ հնդեւրոպ. gh ձայնը, որի արտաբերութիւնը որոշապէս յայտնի չէ, հայոց լեզուի մէջ տուած է g. A. Meillet. Esquisse, §7, էջ 8։

սական կործանել և բարբառական կո՛րծ անել, այսինքն շրջել երեսի վրայ: Նոյն բառն ունենք և կործել ձևով. հմ. «ամանը կո՛րծիր», այսինքն շրջիր երեսի վրայ. սրան զուգահեռ ունենք պաչել, որ զոյգն է երկրպագել ձևի:

Այս կարգի կազմութիւն են կարծում եմ այն բառերը, որ գրած եմ իբր գրութեանս վերնագիր: Բուկ նշանակում է որկոր. վիզը յետևից առնելով՝ — ծոծրակ է, իսկ առջևից առնելով՝ — բուկ: «Շարկի բուկը» նշանակում է օձիքը: Այս արմատից է բկլիկ բառը, որ կիրարկում են երեխաների մասին խօսելու ժամանակ. նշանակում է ուտել չատ սիրող, ուտելիքի հանդէպ աչքածակ, ժամանակ-անժամանակ և չատ ուտող: Այս բառի կ-ի թլուատ կշիռը պէտք է լինէր s (ատամնային) կամ l (քմային): Ինձ թւում է, որ ինչպէս ենթադրելի է թէ ունեցած ենք երկու տեսակ s — ատամնային ու քմային, նոյնպէս պէտք է որ ունեցած լինենք երկու տեսակ կ — մէկը միւսից աւելի կոկորդային, որոնցից մէկի թլուատ կշիռն եղած է ատամնային s-ը, իսկ միւսի թլուատ կշիռն եղած է քմային s-ը, որով առաջին կ-ը թլուատաբար պիտի հնչէր s և պիտի հիմքը դառնար չ ձայնի (չ = sչ հմ. ռուս. վեկ — դար և վե՛չնիյ — յաւերժական), իսկ երկրորդը թլուատաբար պիտի հնչէր l և հիմքը դառնար ծ ձայնի (lu → ծ. հմ. յուն. α'iks և հայ. այծ):

Արդ՝ բուկ թլուատաբար պիտի հնչէր բուs կամ բուl. իր Ջ + u վախճանով վերջին բառը պէտք է լինէր բուl + Ջ + u. իսկ Ջ-ի չքացումով՝ բուlu. ուր lu ձուլումով պիտի տային ծ և բառը հնչէր բուծ: Այսպիսով բուծ և բուs միևնոյն բառերն են, մէկի վախճանը, որ է Ջ + u՝ ընկած է, իսկ միւսը, երբ վախճանի Ջ-ն չքացած է՝ ձուլած է նոյն վախճանի

ա. Ն իր վերջին բաղաձայնի հետ, որ էր է: Բուծել նըշանակում է յաւ կերակրել. իր նախատոր իմաստն ունեցած է արկղել, բուկել, այսինքն՝ բուկը լցնել: Այսպէս բուծում են այն սչխարներին, որոնց պիրկնում են՝ աչնան վերջը մսրթելու համար: Ոչխարի մեռը ձարպի մէջ յաւ տապկելուց յետոյ՝ հալուած ձարպի հետ մեռնին լցնում են կաւէ տոպաննների մէջ և բնտանը կաչէ կապոցով յաւ պոցկելուց ու կապկելուց յետոյ՝ պահում են մառանում, ձմեռը մատ-մատ ուտելու համար: Սա մեր պիւղացիների դասական է: Լիբանանի մէջ տատիկները ոչխարի պլուխը պրած իր ծունկին՝ ձախ ձեռքով բաց է անում կննդանու բերանը և աջով նրա կերը ուժով ճխտում է ոչխարի բուկը: Շատ տարիներ առաջ կարդացած եմ Գերմանացի նշանաւոր բնագէտ Բրէմի մի դիրքը, որ կոչւում է «կնեանքը հիւսիսում և հարաւում». այնտեղ նա պատմում է թէ Թուրքեստանի տափաստաններում խաշնարած հօտաւէրները ձագին փորները յաւ լցնելուց յետոյ, իրր այլ ևս անկարող են նոտած չարունակել իրենց ուտելը՝ պատկում են (որ փորը նոր ուտեստին տեղ անի) և նրանց ծառանները մսի մեծ-մեծ կտորներ իրենց բերնի մէջ ճխտում են տիրոջ բուկը: Այս է բուծելը, որ ինչպէս տեսանք բուկել է, այսինքն բուկը լցնել: Բուկ արմատի զուգահեռ և թէլատ ձևն է բուծ բառը. իսկ բուս արմատը քոյքայուն ձևն է բուծ բառի. հմ. խոնարհուս, որ նշանակում է խոտով չտացող, խոտակեր, խոտով իր անձը բուծող. հմ. նաև բարբառական բսել բայը, որ է բուսել և նշանակում է կուշտ ու կուռ կերցնել, այսինքն՝ բուծել:

Բուկ ու բուծ հակադիր ձևեր են, ինչպէս վիկ ու վիցօ (գէմք, երես) բառերը առաջ լեզուի մէջ. պարզ է, որ սրանք միևնոյն միջավայրի բառեր չեն, այլ

մէկը միւսի թլուատ կշիռն է։ Իսկ բուծ և բուs միևնոյն լեզուական ընտանիքի բառեր են, նկատելով որ բուկ բառի կ-ին երկուսը միապէս տալիս են s կշիռ։ Նոյն լեզուական ընտանիքի, բայց ոչ նոյն բարբառի բառեր են գրանք, որովհետև մէկը կ-ին տալիս է ատամնային s կշիռ, իսկ միւսը քմային t, որ հին Զ + u վախճանի ձայնաւորի չքացումից յետոյ՝ եզերական u ձայնը ձուլուած է իր քմային t-ի հետ և հնչած է ծ (բուt + Զ + u → բուtu → բուծ)։

Բուծ և բուs բառերի տարբեր կերպարանքը ես այնպէս մեկնեցի վերը թէ մէկը ձգած է իր վախճանը. իսկ միւսը՝ ձուլած՝ այսպէս.

բուտ + Զ + u → բուտ (Զ + u նետուած)

բուt + Զ + u → բուtu → բուծ (Զ — չքացած, tu — ձուլուած և տուած ծ)։

Անհնարին չէ, որ միևնոյն բառի այս տարատեսակ ձևերը միևնոյն բարբառի մէջ տարատեսակ իմաստաբանական արժէք ունենային, բայց այս վարկածը հիմնաւորելու համար բաւականաչափ հիմքեր չունիմ դեռ ևս։ Նշմարում եմ ինչ որ ազօտ լոյսեր, բայց դեռ պայծառ չեմ տեսնում, որ կարենամ ձևակերպել և ցուցադրել մեկին։ Առ այժմ կարծում եմ պէտք է պարզուած համարել բուկ, բուs և բուծ արմատների վաղնջական նոյնութիւնը. իսկ բուծ և բուs արմատների իմաստական մերձութիւնը շատերն են նկատած և մատնանշած, թէև առանց մեկնելու դրա պատճառը։

Բուկ բառի բոկ ձևը լսած եմ Մշեցիների բերնից հայհոյանքի ժամանակ. .... բոկsի՛, որ է բոկդ ի՛, այսինքն՝ 'ի բոկդ, որ է՝ բուկիդ մէջ։ Այս ձևը բուն կշիռն է սնսկ. bho'gah ձևի, որ գիտունները համարած

են մեր բոյծ բառի կշիռը։ Մեր ԺԲ Յուշագրի մէջ պարզած ենք թէ ինչպէս է, որ g և ծ լծորդ են։ Մեր մեկնութեան հիման վրայ պէտք է ենթադրել մի *bho'kah ձև, որ վախճանի — ah — ը ձգելով՝ պիտի տար Մշեցու բոկ բառը bo'k(ah) → bok։

Հետաքրքրական է 'ի նախդիրի այս յետադիր գործածութիւնը։ Այս առիթով յիշատակեմ այստեղ և գ նախդիրի մի վերջադիր գործածութիւն «այն» իմաստով, որ սովորական է Քեսաբի բարբառի մէջ։ Քեսաբցի՞ մի պառաւից գրի առած եմ հին պարերգի մի երկտող, որ ասում է.

Դօ', դօ'. — Զի'դօ զը.
Դանկեն զօրօն ի'դօ զը։

Այսինքն.

Տո'ւր, տու'ր. — Ո'չ ետ զայն. (չտուեց այն)
Դանակի զօրով ետ զայն։ (տուեց այն).

Ուշադրութեան առնել նաև կատարեալի հին յաւելուկը ե (հմ. ես, որ այստեղ երևում է ի կերպարանքով. իդօ = ետ։ Այս հիման վրայ գուցէ պէտք է հաւանական համարել Ն. Մառի այն վարկածը, թէ մեր գ նախդիրը հնչուած է գը և ոչ ըգ. գըհաց և ոչ ըգհաց։ Նոյն հիմքով կարող ենք ասել, որ գ նախդիրի նախաւոր իմաստն եղած է ցուցական և այդ է պատճառը, որ գ-ն կազմում է որոշեալ հայցական, գ-ն ցուցումով որոշում է առարկան. զհաց = այն հացը, զմարդ = այն մարդը և այլն։ Բայց այս մասին մի ուրիշ անգամ։

28813

Յուշագրիս տպագրութեան ծախքերը գոցելու
համար շնորհակալութեամբ ստացած եմ՝

Ամերիկայէն՝ Խ. Մեղրիկեանէ	5 տոլ.	9.50
« Յ. Յ. Չագմագչեանէ	5 տոլ.	9.50
	գումար՝	19.
Մնացորդ ԺԲ պրակից		148.29
	մնացորդ՝	167.29

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են տասնըերեք պրակ Ա — ԺԴ

Ամէն պրակի գինն է 1 ֆրանք

ԳԻՆ 1 ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԺԴ.



1939

ՊԼՅՈՒՐՈՒԹ

Տպարան «ՑՈՑԻ» Պլյուր

Լեզուասէր բարեկամներիս և ընկերներիս

«Յուշագրիս» նման գրութիւններ կարդացող շատ քիչ մարդ կայ մեզանում. հազիւ մի քանի տասնեակ. հետևապէս ոչ մէկ յոյս կայ տպագրութեան ծախքն իսկ գոցելու։ Ձևի համար զին նշանակած եմ մէկ ֆրանք։ Ասում եմ «ձևի համար», որովհետև եթէ քիչ է կարդացողը, շատ աւելի քիչ է գնորդը։ Ընկերներս ու բարեկամները գիտեն իմ նիւթական կացութիւնը, գիտեն նաև, որ այս տեսակ ծախքերի տակ մանելու ես հնար չունեմ։ Եթէ նրանք ինձ նման այն կարծիքին [illegible]ինեն թէ Յուշագրերս կարող են պիտանի [illegible]ալ մեր լեզուի քննութեան համար՝ կը խնդրեմ նիւթապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ։ Յուշագրերս տպագրելու եմ պրակ առ պրակ։ Ամեն պրակի ծախքն է մօտ 200 ֆր. 500 օրինակի համար։ Ստացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ։ Աւելորդ է ասել թէ աշ[illegible]րիս համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ [illegible]ց։ Հրատարակուած պրակների ամբողջ [illegible] ու մեացորդ գումարը պիտի մեայ Հա[illegible] Ընկերութեան։

Սիրով Ն. Աղբալեան

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒԾԱԳԻՐԸ

ԳՈՄ
(Ո = ԻԱԻ)

Հին խոնարհման կարգի մի հնամաչ մնացորդ է գոմ բայը, որ պակասաւոր էր դեռ դասական շրջանին։ Գրով վկայուած են իր Սահմ. ներկան. գոմ, գոս, գոյ, գոմք, գոյք, գոն. իր անկատ. 3-դ դէմքերը. գոյր, գոյին. իր Ստորադ. ներկայ 3-դ դէմքերը. գուցէ, գուցեն և իր աներևոյթը՝ գոլ։ Այս բայի իմաստն է. կա՛մ, գոյութիւն ունիմ [1]։ Իր ներկայ 1. դէմքը միակ ձևն է, որ կարող է լրիւ կշռի դալ սլաւ խոնարհման կարգին. հմ. սլաւ. բերոմ, որ նշանակում է «առնում եմ» և մեր գոմ։ Նպատակս է պարզել այս բայի ծագումը և ցուցադրել մի հնչական օրէնք, որ գործած է մեր լեզուի հնագոյն շրջանին։

Մեր հին լեզուի հոլովական կարգը բազմազան է։ Այդ կարգի ութից չորս հոլովումը իրենց յոգնակի սեռականը կազմում են այս տարազով. եզակի սեռական + ց, այսպէս՝

---

[1]) Կարծում եմ այս բառի կշիռն է հին ռուս. goy միջարկութիւնը, որ նշանակում է. «ապրի՛ր, կեցցե՛ս»։ goy esi çar = ապրած ես (լինես), թագա՛ւոր. հմ. մեր հէքիաթների բացաստութիւնը. «թա՛գաւոր, ա՛պրած կենաս»։

եզակի սեռական	յոգնակի սեռական
բանի	բանի + ց
դասու	դասու + ց
հիման	հիման + ց
ոսկեր	ոսկեր + ց

Այս կարգով է դնում նաև «օր» բառի անկանոն համարուած հոլովումը. հմ. եզ. սեռ. աւո՛ւր. յոգն. սեռ. աւո՛ւր + ց։ «Եղն, դառն» և նման բառերը գրաբարի մէջ սեռակ. տալիս են. «եղին, դառին», իսկ յոգ. սեռ. «եղանց, դառանց»։ Բայց բարբառների մէջ այդ բառերի եզ. սեռականն է. «եղան, դառան», որով գրաբարի յոգն. սեռականը օրինաւոր յոգնակին է գաւառական եզակի ձևերի, և ոչ գրաբարի. հմ. մի կողմից «հիմն, հիման — և յոգ. սեռ. հիմանց» միւս կողմից. «եղն, դառն — գաւառ. եղան, դառան — և գրաբ. յոգ. սեռ. եղանց, դառանց»։ Կարող ենք ասել, թէ բարբառները պահած են եզ. սեռ. կանոնաւոր ձևերը, իսկ գրաբարը պահած է նրանց կանոնաւոր յոգ. սեռականը։ Այսպիսով հոլովական մի կարգ խանգարուած է գրաբար լեզուի մէջ։

Մենք տեսնում ենք, որ մեր հին լեզուի մէջ մի զօրեղ հակում է նկատւում յոգ. սեռականները կազմելու եզակի սեռական ձևերից՝ նրանց տալով մի ց։ Այս կարգից չեզւում են հայր և մայր բառերը, որոնց եզ. սեռ. է հօր, մօր (հաւր, մաւր), իսկ յոգ. սեռականը՝ հարց, մարց։ Թւում է թէ հին հայի լեզուական գիտակցութիւնը *հար և *մար անաւանդ ձևերը համարած է եզ. սեռական և նրանց ց տալով՝ կազմած է իր յոգ. սեռականը — հար + ց, մար + ց։

Ի՞նչպէս մեկնել այս զարտուղի ընթացքը. և յետոյ՝ զարտուղի՞ է այս ընթացքը։

Հօր ձևը մի հին հաւր է. իր չեշտը իր միակ ձայնաւորի վրան է։ Նոյն ձայնաւորի վրան է և ուղղա-

կան ձևի չեշտը, որ է հա՛յր։ Ես բազմիցս առիթ ունեցայ ցոյց տալու, որ մեր եզ. սեռականը մեր վաղեմի ուղղականն է, բայց տարբեր չեշտառութեամբ. այսպէս՝ հին ուղղական. *սե՛րմաճ, որ հետագային հնչած է սե՛րմճ (ա-ն սղած). և եզ. սեռ. սերմա՛ճ, (հին ուղղական ձևի տարբեր չեշտառութիւն)։ Հաւր ձևի ւր խմբի մէջ սղած ու չքացած է մի հին ձայնաւոր. հմ. օրինակ՝ աւր, որ երբեմն եղած է ա՛ւուր, ինչ որ պարզ տեսնում ենք սեռական ձևից, ուր չեշտն անցնում է միւս ձայնաւորին և մենք ունենք իբր եզ. սեռ. աւո՛ւր։ Կարծում եմ, որ այդ հին ու կորած ձայնաւորը մի հին ա է. որով հաւր դասական ձևը երբեմն հնչած է իբր *հա՛ւար. հմ. գոթ. *fadar*, պարսկ. փադար [1]) սնսկ. *pita'r* (= հայր)։ Եթէ այդ ձևից կազմուէր «հայր» բառի յոգ. սեռականը մեր վերը նիչած տարազով՝ պիտի լինէր. *հաւարց, բայց մենք ունենք հարց։ Եթէ հաւարց ձևի չեշտն առաջին վանկին զարկէր՝ երկրորդ ա-ը պիտի սղէր ու չքանար և բառը դառնար հա՛ւրց, որ է-հօ՛րց։ Բայց մենք տեսանք թէ սեռականի չեշտը վերջին վանկին է զարկում, հետևապէս *հաւարց ձևը պիտի հնչէր իբր *հաւա՛րց, իսկ եզ. սեռ. *հաւա՛ր։ Ես կարծում եմ. աւա՛ խմբի այս չեշտառութեան հետևանքով է, որ նա դարձած է աա՛ և ապա երկու ա-ի ձուլումով՝ մի երկար ա՛, որով ծագած է հա՛րց ձևը, ուր ա-ը կարճացած է հետագային։ Այսպիսով կարծում եմ. *հաւա՛րց, *մաւա՛րց հին ձևերը նախ հնչած են իբր *հաա՛րց, *մաա՛րց և ապա ա-երի ձուլումով՝ հա՛րց, մա՛րց։ Այս հաչուով հին *հաւար ձևը պիտի հնչէր հա՛ւար և երկրորդ ա-ի սղումով պիտի դառնար հա՛ւր → հօ՛ր, իսկ չեշտուելով

---

[1]) Շրջուած ա-ը նշանակում է չեզ ա։

իբր հաւա՛ր, պիտի ձուլէր երկու ա-ը և դառնար հաա՛ր → հա՛ր։ Այս կարգը մեր հին հոլովական կարգն էր, որով եզ. սեռ. շեշտում էր երկրորդ ձայնաւորը. հմ. վերը՝ սե՛րման — սերմա՛ն, որով *հա՛ւար — հաւա՛ր։ Այս հաշուով *հա՛ւար պէտք է լինէր ուղղական, իսկ հաւա՛ր — եզ. սեռական։ Կարծում եմ, որ իրօք եղած է այդպէս։ Հայր բառի նախաձևը ենթադրում են թէ եղած է *pate´r։ Այս ձևի մէջ երկու ձայնաւորի միջև և շեշտից յետոյ եկող t ձայնը մեր լեզուի մէջ սղած է յ ուղղութեամբ (մեր տեսութեամբ՝ փոխարինուած է յ ձայնով, որ t ձայնի սղման հնչական հետքն է). իսկ p-ն մեր լեզուում տուած է հ, որով մի (*patar ձև հնչած է ha´tar → ha´yar և ա-ի սղումով՝ ha´yr, որ է հայր: Բայց մեր տեսութեամբը յ և ւ ձայնների լծորդութեան մասին՝ միևնոյն նախաւոր ձայնը իր սղման պարագային իբր սղման ծիր թողնում է կամ յ կամ ւ, որոնք այդ իսկ պատճառով լծորդ են, այնպէս որ *patar ենթադրական նախաձևը իր t-ը շեշտից յետոյ և երկու ձայնաւորի միջև կարող էր սղել և ւ ուղղութեամբ, որով բառը պիտի ընթանար սղման այս ծիրով. pa´tar → ha´tar → ha´war և a-ի սղումով ha´wr, որ է հա՛ւր, այսինքն հօր: Ձայնական այս տարբեր փոխարինումը յ-ով ու ւ-ով չէր կարող միևնոյն բարբառի մէջ պատահել, բայց երկու տարբեր ձևերը կարող էին հետագային միևնոյն լեզուի բառամթերքը կազմել իբր արդէն պատրաստի ձևեր։ Այս կացութեան հետքը ես գտնում եմ մեր բարբառական հերանց և հօրանց վաղաւանդ ձևերի մէջ, որոնք հին յոգն. սեռականներ են. հմ. գրաբար «հայր» բառի երկրորդ յոգն. սեռականը, որ է հարա՛նց։ Հերանց ձևը մի հին *հայրանց է հմ. հայր և դաւառ. հեր, ուր այ տուած է է. իսկ հօրանց ձևը մի հին *հաւրանց է։ Ահաւասիկ երկու յոգն. սեռա-

կան, որոնց եղակի ձևերը պիտի լինէին հայր և հաւր, որով տեսնում ենք թէ հայր, որ գրաբար ուղղական է, դաւառական «հէրանց» (*հայրանց) ձևի մէջ սեռական նկատուած է. իսկ «հօրանց» ձևի մէջ, որ հին հաւրանց ձևի ամփոփումն է, հաւր գրաբար եզ. սեռ. է։ «Հէրանց և հօրանց» նոյն իմաստն ունին և նոյն կիրարկութիւնը. մի տեղ ասում են. «Հարսը գնաց հէրանց տուն», մի ուրիշ տեղ՝ «հօրանց» տուն։ Այս կարգի բառերի կազմութեան տարազն է. եզ. ուղղական + անց. այսպէս «Վարդան + անց տունը», «Գառնակեր + անց այդին». պարզ է, որ հօրանց կազմութիւնն ստեղծող բարբառը հօր ձևը համարած է ուղղական և կանոնաւոր կերպով կազմած է իր բառաձևը, կցելով մի — անց. հօր + անց։

Այս հաշուով հայր և հաւր զուգահեռ ձևեր են, միևնոյն նախաւոր ձևի ձևափոխութիւնը, միևնոյն շեշտառական օրէնքով և այն տարբերութեամբ, որ վաղեմի է ձայնը երկու ձայնաւորի միջև և շեշտից յետոյ մի տեղ փոխարինուած է ազման յ հետքով, մի ուրիշ միջավայրում ւ հետքով։ Այդ երկու ձևերի նախաւոր կերպարանքն եղած է *հա՛ւար և *հա՛յար և այս ձևով նրանք եղած են ուղղական։ Իրենց սեռականը պէտք է շեշտէր իրենց երկրորդ ձայնաւորը և հնչէր իբր հայա՛ր, հաւա՛ր: Արդ՝ ես ասում եմ. այա՛ և աւա՛ խմբերն այս շեշտառութեամբ իրենց շեշտական ընթացքի մէջ սքողած են յ և ւ կիսաձայները և տուած են երկու ա, որ հետագային ձուլուած են իրար և հնչած են երկար՝ իբր ա՛ և ապա մեր բոլոր երկար ձայնաւորների հետ կարճանալով՝ դարձած են պարզ ա. այս հաշուով հայա՛ր և հաւա՛ր եզ. սեռական ձևերը պիտի հնչէին նախ՝ հաա՛ր, ապա՝ հա՛ր և վերջը հար, որով նախաւոր ուղղական ձևերը հա՛յար և հա՛ւար (շեշտն առաջին վանկին) եզ. սեռականի մէջ

միապէս պիտի դառնային հա՛ր և յոգն. սեռականը կանոնաւոր ձևով պիտի տար հար + ց, այսինքն՝ հարց, ինչ որ ունի դրաբար լեզուն։ Այսպիսով հայր բառի յոգն. սեռականը ոչ թէ անկանոն կամ զարտուղի, այլ շատ կանոնաւոր և օրինական կազմութիւն է մեր հին հոլովական կարգի համաձայն, ուր սեռական և ուղղական հոլովները նոյն ձևերն էին, միայն տարբեր շեշտառութեամբ և ուր մի զօրաւոր միտում կար յոգ. սեռականը կազմելու եզ. սեռական ձևից, տայով նրան մի ց։ Հայր և հաւր հին ուղղականներ են. նրանց եզ. օրինական սեռականը եղած է հար, ուստի և յոգ. սեռականը հար + ց է, համաձայն հոլովների կազմութեան վազեմի կարգի։

Բայց ի՞նչպէս է, որ վազեմի եզ. սեռ. հար ձևը առ միշտ չքացած է և իր հետքը միմիայն 'յոգ. սեռ. հոլովի մէջ է մնացած, որ է հար + ց։ Հայր և հաւր եզ. ուղղական ձև են եղած երկու տարբեր միջավայրերի մէջ. բայց իրենց յոգն. սեռականը միապէս եղած է հարց, որովհետև եզ. սեռականը միապէս հար էր։ Յեղերի խառնուրդից յետոյ է, որ այդ երկու ձևերը, որ լծորդ ձայներով են ամփոփուած (յ, ւ)՝ ստացած են տարբեր իմաստ։ Հայր և հաւր ձևերը երկար ձայնաւոր ունէին իրենց երկրորդ ձայնաւորի ազման հետևանքով. այդ բառերը դեռ հնչում էին իրր հա՛յր, հա՛ւր, ուր սուղ ը-ը մի խուսափուկ հնչիւն էր և այդ արտարերութիւնը չատ մօտ էր հա՛ր եզ. սեռականին, որի չձուլուած երկու ա-երը դեռ երկար էին, որով դիւրութեամբ կարող էր չփոթ ստեղծուել երկու տարբեր դաղափարների միջև, որ արտայայտում էին եզ. ուղղականն ու սեռականը։ Այս չփոթի պատճառով հար եզ. սեռականի բախտը նախորդուած էր արդէն. նա պիտի չքանար իրր ոչ բաւարար չափով տարբերացած ձև. և չքացած է, իր պաշտօնը թող-

նելով երկու հին ուղղականներից մէկին, որ ապրում էին միևնոյն խառն ցեղախմբի խառն լեզուի մէջ։ Լեզուն ձգտում է տարբերացման։ Այս ձգտումը տիեզերական է [1]։ Լեզուական գիտակցութիւնը իր տարբեր գաղափարները կախում է տարբերացած ձևերի կարթին։ Տարբերացումը կարևոր է չփոթից խուսափելու համար։ Այս տիրական ձգտումը մինչև իսկ անտեսում է հնչական օրէնքները. այն բարբառների մէջ, ուր-բոլոր այ խմբերը է դարձած են. տէրունական աղօթքի անունը մնացած է «Հայր մեր» և մինչև իսկ «Հայրը մեր», որ վաղեմի արտաբերութիւն է։ Բացատրութեան յատուկ իմաստը պաշտպանած է բառի հնագոյն կերպարանքը համատարած ամփոփումի հեղեղի մէջ իբրև մի կղզի։ Այդ նոյն պատճառով «արամբի» բառը մնացած է գործիական հոլովի շատ հին ձևով, հակառակ այն օրէնքին, որով վախճանական ի-երը ընկած են գործ. հոլովի մէջ։ Հայր և հաւր ձևերը մի շատ նկատելի հակադրութիւն են կազմում սեռականի և ուղղականի տարբեր գաղափարները նիշելու համար և միօրինակ հար նախաւոր սեռականից ուղղական ձևը տարբերելու համար։ Ուստի երկու ձևերի մէջ կատարուած է աշխատանքի բաժանում։ Այսպիսի կարկատաններ անսովոր չեն լեզուների պատմութեան մէջ. մեր «պաշտօն» բառն ու իր սեռականը, որ է «պաշտաման» այդ կարգի երևոյթ է։ Նա չունի իր օրինական սեռականը, ինչպէս միւսն իր օրինական ուղղականը։ Լեզուն օգտագործած է վերապ-

---

[1]) «Ինչպէս ասած են. ամէն ինչ լեզուի մէջ այլ բան չէ, քան հակադրութիւն. ձայները, քերականական ձևերը, բառերը իրենց արժէքը ստանում են իրար հակադրուելով միայն»։ Տես. A. Meillet. Les langues dans l'Europe nouvelle. էջ 121

բան ձևերը, ինչպէս քար չեզած անգը մարդ վայ-ում է կուտ կամ հակառակը։ Լեզուական դիտակ-ցութեան համար կարևոր է, որ ուղղական և անա-կան իրար նման չլինեն և իրար հետ չշփոթուեն, իսկ թէ ի՞նչ ճամբով կը հասնի այդ նպատակին՝ նրա համար կարևոր չէ։ Գաղական լեզուի մի ուղղական ձև — պատասխանի — այսօր մեզ համար անական է, իսկ նոյն բառի ի-ն կորցրած ձևը դարձած է ուղղա-կան — պատասխան։ Լեզուական գիտակցութեան համար բաւ է այս տարբերակումը. նրա հողը չէ, թէ լեզ-ուաբանը ի՞նչ մեկնութիւն կը տայ ի ձայնի կո-րուստին ուղղական ձևի մէջ, երբ ուրիշ ի-երը կո-րած չեն. բարի, տարի, խնամի և այլն։

Մենք կարող ենք տարածել մեր դիտած հնչական երևոյթը և ասել՝

ա՛ւա → ա՛ւ (ա) → օ՛
ա՛յա → ա՛յ (ա) → ա՛յ, հետագային՝ է.
աւա՛ → աա՛ → ա՛ → ա՛
այա՛ → աա՛ → ա՛ → ա՛ [1])

*Այս տեսութեամբ կարելի է մեկնել Ուզդ. ապ-բիւր — Մեռ. ապեր հոլովական կոլոը։ Ապբիւր հները գրած են նաև իրր ապբեւր։ Այս տարբերութեան պատճառը բացատրած եմ արդէն (ԲՁ. Ը. 130)։ Մեր տեսութեամբ ե ձայնը մի հին իա է, որ ձուլուած է հետագային ու տուած է ե. հետևապէս ապբեւր բառի հին ձևն եղած է *ապբիա՛ւր, որի չնչաը վերջին ա-ի վրայ էր։ Այս բառի ւր լծին խոսքի մէջ աղած ու չքացած*

---

[1]) *Այսպիսի մի երևոյթ մենք հանդիպում ենք լատին լեզուի մէջ, ուր lavā́trīna առած է laˊtrīna, այսինքն* ava՛ *առած է ā՛. ս ձայն այստեղ ծագում է մեր ւ-ին համաբժիշկ մի ձայնից։ Տես. K. Brugmann. Abrégé de gramm. comparée. էջ 108 § 158, 2)։*

է մի վաղեմի ա, որով այդ բառի աւելի հին ձևն եղած է *աղբիա՛ւար։ Մենք այստեղ տեսնում ենք ա՛ւա խումբը։ Սեռականի մէջ չեչտը պիտի անցնէր այս ձևի երկրորդ ա-ին և բառը հնչէր իբր աղբիաւա՛ր։ Այստեղ մենք տեսնում ենք աւա՛ խումբը, որ մեր վերը պարզած օրէնքով պիտի տար աա՛ → ա՛ → ա՛ ևբառաձևը պիտի դառնար աղբիաւա՛ր → աղբիաա՛ր → աղբիա՛ր → աղբիա՛ր, ուր իա ձուլումով պիտի տար ե և բառը դառնար աղբե՛ր։

Բաւարար համարելով այս խնդրի պարզաբանութիւնն ու լուծումը՝ դառնանք գոմ բային։

Մեր տեսութեամբ, որի մասին խօսած եմ այլուր, [1]) մեր օ և ո ձայնները նախնական չեն. ո-ն մի հին waw է, իսկ օ-ն մի հին aw։ Waw խմբի մէջ aw հնչած է օ, որով waw դարձած է wo, որ մեր ո ձայնն է։ Նոյն տեղը ես ասած եմ, որ waw խմբի առաջին w ձայնը կարող էր ծագել մի հին i ձայնից։ Գիտենք թէ i ձայնը կարող է ոգել և՛ w(ւ) և՛ y(յ) ուղղութեամբ, որով wo և yo պէտք է լծորդ լինեն և լծորդ են իրօք. հմ. յօրանջել և որոնջել։ Այսպիսով մեր ո-ն (waw) կարող էր ծագել և մեծ մասամբ ծագած է մի նախաւոր iaw խմբից, ուր ձայնական հոլովոյթն սկսած է aw խմբից, որ հնչած է o և խումբը դարձած է io, այս նոր խմբի մէջ i-ին ընթացած է երկու տարբեր ուղղութեամբ՝ տալով wo և yo։ Այս է պատճառը, որ մեր յօ և ո լծորդ են. նրանք ամփոփում են նոյն և լծորդ ձայներով կազմուած վաղեմի խմբեր։

Արդ՝ լուծելով գոմ բայի ո ձայնաւորն իբր մի վաղեմի իաւ այդ բառի նախաւոր ձևը մեզ կ՚երևայ

---

[1]) Տես Հանդ. Ամսօր. 1932, էջ 289 և 434.

իբր *գիա՛ւմ, ու ւմ լռիւ խմբի մէջ ողած ու չքացած է մի հին ա, [1]) որով այդ բառի աւելի հին ձևը պիտի լինէր *գիա՛ւամ, որի վերջին ա ը ողած ու չքացած է առաջին ա-ի զօրաւոր շեշտի պատճառով: Այստեղ մենք տեսնում ենք մի ա՛ւա խումբ, որ շեշտում էր իր առաջին ա-ը: Բայց սա կարող էր շեշտել և իր երկրորդ ա-ը և հնչել իբր *գիաւա՛մ. այս դէպքում աւա՛ խումբն իր տարբեր շեշտով՝ վերը պարզած տեսութեամբ՝ պիտի տար աա՛ և երկու ա-ի ձուլումով մի երկար ա՛, որ կարող էր հետագային կարճանալ: Այն ժամանակ այս երկրորդ ձևը հոլովոյթի այս ծիրով գիաւա՛մ → գիաա՛մ → գիա՛մ. պիտի տար կարճ ա-ով գիամ: Այսպիսով միևնոյն նախաւոր բառաձևը իր տարբեր շեշտառութեամբ տարբեր լեզուական միջավայրերի մէջ մի կողմից պիտի դառնար գոմ, միւս կողմից՝ գիամ: Պայթուցիկների լծորդութեան հիման վրայ այս վերջին ձևի լծորդական կշիռը պիտի լինէր կիա՛մ (կ — գ): Այս բառն ունի մեր գրաբարը իբր կեա՛մ, ուր նա ճիշտ նոյն իմաստն ունի, ինչ որ գոմ բայը և նշանակում է կա՛մ, գոյութիւն ունեմ: Այսպիսով գոմ և կեամ միևնոյն հին բայերն են, որ տարբերացած են տարբեր լեզուական միջավայրերի մէջ, տարբեր շեշտառութեան և պայթուցիկների լծորդութեան հետևանքով: Բարբառներ կան, որ արտաբերում են գեանք փոխանակ ասելու կեանք և ուրեմն դեռ շարունակում են ա՛յն տարբեր արտաբերութիւնը, որի հետևանքով տարբերացած են գոմ և կեամ բայերի գ-ն ու կ-ը: *Գիաւամ վազեմի ձևը լուծելով իբր

---

[1]) Ասում ենք մի ա, որովհետև եթէ այդ չքացած ա-ի տեղ լինէր մի ի, այն ժամանակ իաւի խումբը կամփոփուէր իբր ւօյ → ոյ կամ ւօւ → ու և ոչ թէ ո կը տար:

գի — աւ — ամ, մենք կը գտնենք գի արմատը, որ պահած է վրաց լեզուն, ուր գի-էս, գի-ա նշանակում է «նա կա՛յ, գոյութիւն ունի, նա է՛»։ [2])

Մեր լուծումը վերջացնելու համար պէտք է մեկնել եա խմբի ներկայութիւնը կեամ ձևի մէջ։ Ուրիշ տեղ ցոյց եմ տուած, որ իա խումբը, ա-ը շեշտ ունենար թէ ո՛չ՝ միապէս տուած է ե, հետևապէս գիամ նախաւոր ձևը իա խմբի ձուլումով պէտք է տար գեմ և ոչ գեամ, որ բուն լծորդական կշիռը պիտի լինէր կեամ ձևի։ Մեր տեսութեամբ եա խումբը կարող էր ծագել այն դէպքում միայն, երբ նախաւոր իա խմբի ի-ն երկար լինէր, հոգ չէ թէ այդ երկարութիւնը ստացական լինէր թէ բնաբոյս։ Այսպէս մրջիմն բառի մ-ը շեշտից յետոյ և երկու ձայնաւորի միջև (մն խմբի մէջ հնչում է մի ը — միջիմըն, որ մի նախաւոր ա է, հետևապէս մ-ը եղած է երկու ձայնաւորի միջև) սղած է ւ ուղղութեամբ և բառը դարձած է մրջի՛ւն (մրջի՛ւըն)։ Բայց սեռականի մէջ շեշտն անցնելով նա-

---

[2]) Տես N. Marr. La langue georgienne. էջ 620։ Դուցէ այս բառի կ-ով տարբերակը պէտք է համարել վրաց կի բառը, որ կիրարկւում է պատկառոտ խօսակցութեան մէջ «ա՛յդպէս» «այո՛» իմաստով. «կի բատօնօ» = այո՛, տէր։ Հմ. նոյն ձևի մի կիրարկութիւն ռուս «եստ!» բառի, որ նշանակում է կայ, գոյութիւն ունի, է՛։ Այսպէս նաւերի մէջ բեռամբարձ գործիքի շղթան իջեցնելու ժամանակ, ամբարի մէջ նայողը երբ տեսնում է թէ շղթայի ծայրը հասած է ամբարի յատակին՝ կանչում է. ե՛us, որ մեքենավարը դադրեցնէ շղթայի էջքը։

Վրաց կի բառը հաւանօրէն նախապէս նոյնարժէք էր գի արմատին, որ ինչպէս տեսանք նշանակում է կա՛յ, գո՛յ, է՛։

խաւար մրջի՛ւան ձևի ա֊ին՝ ւ֊ը փոխարինուած է լը֊ ծորդ յ ձայնով և բառը հնչած է մրջի՛յ֊ին, որ և ստացարձուած է մրջեա՛ն։ [1]) *Այսպիսով իյա (կարճ ի֊ով), որ նոյն է իէ (երկար ի֊ով, յ֊ն ձուլուած), տուած է եա՛։ Արդ՝ ոչ կիամ և ոչ գիամ ձևերի մէջ ի֊ն երկար չէր։ Եթէ երկար լինէր՝ նա չէր կարող ունել ւ ուղղագիտեամբ և կազմել ո (wo) ձայնէ ա֊ն։ Բայց մենք անսանք, որ առա խաւարը չեչամելով իր երկրորդ ա֊ը, տուած է մի երկար ա՛, որով խաւա՛ խաւարը պիտի ստար ոչ իէ իա (այսինքն կարճ ի և կարճ ա) այլ իա՛, այսինքն մի կարճ ի և մի երկար ա՛ և այս իսկ պատճառով նա հնչած է յա՛ և ոչ իէ ա՛ և ստացարձուած է իրր եա, որով գիա՛մ, կիա՛մ հնչած են իրր գեամ, կեամ։ Մեր կարծիք՝ այն չէքա֊ նեն երբ այս բայանձները մէջէն ւ֊ի վերացուելով գեո լեամէն ձուլած չէին երկու ա֊ը և բառերը հնչում էին իրր կիաա՛մ, գիաա՛մ՝ կարճ ի֊ն և առաջին կարճ ա֊ը կարող էին ձուլուել իրար ու տալ մի ե, որով բառե֊ րը կարող էին գոռնալ կիա՛մ, գիա՛մ և հնչել իրր kea՛m, gea՛m, բայց այս արտաբերութիւնն ևս ժա֊ մանակի ընթացքին պիտի փոխուէր և հնչէր իրր kyam, gyam։* [2]) *Այսպէս ուրեմն եա (ya) խաւարն*

---

[1]) *Լիթ. մեկնութիւնն այդ երևոյթի տուած եմ այլուր։ (Հանդ. Ամս. 1932, էջ 274)։ Իսկապէս բա֊ ռի նախաւար ձևն եղած է մուրջիաման հմ. Արցա֊ խնցու մրջեանք, ուր իա տուած են ե։ Ծեչամելով ի֊ն, հետևարդ ա֊ը ստած է յ ուղղագիտեամբ և երկարացած է ի֊ն, մրջի՛աման, մրջի՛յան, որ գրածած է մրջի֊ մէն՝ վերջին ա֊ի ազդեցով։ Ի֊ի այս երկարութիւնը ոչ իէ բնաբոյս, այլ ստացական է։*

[2]) *Ասկիով արխագիների երկար ա֊ի մասին՝ ն֊ Մաո տուած է իէ ակտ է տարբերել երկձայնաւոր և*

այս ձևերի մէջ երևցած է այն պատճառով, որ նրանց մէջ ա-ն նախապէս ստացական երկարութիւն ունեցած է։

Այս լուծումից կարելի է մի քանի հետևանքների հասնել։

1. Հայոց լեզուի մէջ անհետ կորած է *գեամ ձևը։

2. Նախաւոր *կիաւամ և *գիաւամ ձևերը միօրինակ հոլովոյթ չեն ունեցած։ Դրա պատճառն եղած է նրանց տարբեր շեշտառութիւնը։ Կիաւա՛մ ձևը վերը գծած հոլովոյթի ծիրով գարձած է կեա՛մ, շեշտած լինելով իր երկրորդ ա-ը։ իսկ գիա՛ւամ ձևը, շեշտելով իր առաջին ա-ը գարձած է գամ։

3. Զայնաւոր տարրի այս տարատեսակ հոլովոյթն է, որ լեզուների մէջ ստեղծած է երկար ա-ի և երկար օ-ի ձայնաչրջումը։ Ես տուած եմ այդ փոխանցումի ուրուագիծը միայն։ Յոյս ունեմ յատուկ յուշագիր նուիրելու այս շատ կարևոր և հիմնական խնդրի քննութեան։

4. Գ և կ ձայնները տարբերացած էին այն ժամանակ, երբ դեռ կազմուած չէին ո ձայնը և եա երկրաբրառը։

5. Մի անգամ ևս հաստատուում է, որ ո-ն պարզ ձայն չէ, այլ մի որոշ ձայնական խմբի ձուլման հե-

---

երկար ա-ը. երբ աա խումբը շեշտուում է իբր ա՛ա, այն ժամանակ ա-ն երկար է. երբ նոյն խումբը շեշտուում է իբր աա՛, այն ժամանակ նրանք երկու ա են։ Արդ՝ մեր օրինակի մէջ երկու ա-ը շեշտուած են իբր աա՛, որով այս երկու ա-երից առաջինը ձուլուած է նախորդ ի-ի հետ և առաջ է ե, որով իաա՛ խումբը գարձած է եա՛։ Տես. Աբխազական վերլուծական այբուբէն. (ռուսերէն). Լենինգրաղ 1926. էջ 37։

տեւանք (իաւ → իօ → ւօ → ո)։

6. Նախապատմական շրջանին բառերն ու ձևերն ունեցած են տարատեսակ շեշտառութիւն և շեշտն է, որ ստեղծած է ձայնաւորների տարբերացումն ու փոխանցման երևոյթը լեզուների մէջ (ե — ի. ա — օ և այլն)։

7. Հետագային տարբերացած խոնարհման կարգը նախնական շրջանին եղած է միօրինակ և շեշտի ազդեցութեան տակ է, որ առաջ եկած է տարբերացումը։

8. Խոնարհման կարգի մէջ — ami վախճանն աւելի հին է, քան — om (ռնդային օ) վախճանը և ուրեմն կեամ ձևն աւելի հին է քան գոմ ձևը։

Այս լուծումներով կարելի է բաւարար և բանական մեկնութիւն տալ թէ ինչո՞ւ սանսկ. լեզուի մէջ Սահմ. ներկայ 1. դէմքը երկար ά ունի, իսկ երկրորդ դէմքը կարճ a. հմ. bhά'rά'mi — bhά'rasi. թէ ինչո՞ւ յոյն ու լատին լեզուի մէջ նոյն դէմքերը երկար ό ունեն. feró'. թէ ինչո՞ւ սլաւ լեզուի մէջ այդ դէմքը — om է վերջանում, իսկ ռուս լեզուի մէջ u. բերոմ — բերու:

Փորձենք մեկնել վերջին երևոյթը։ Անկասկած սլաւ բերոմ ձևը սնսկ. ձևի պէս վերջանում էր ի. *բերոմի հմ. սնսկ. bhά'rά'mi։ Այս ձևի մէջ մ ձայնը շեշտից յետոյ և երկու ձայնաւորի միջև կարող էր անցնել և կարծում եմ անցած է իրօք w (ւ) հնչման. հմ. նոյնը մեր լեզուի մէջ. *անո'ման → անո'ւ(ա)ն և սեռ. անուա'ն։ Այս անցումից յետոյ բերո'մի հին ձևը պիտի դառնար բերո'ւի։ Այս փոխանցումից յետոյ վերջին ի ձայնը կամ պիտի չքանար կամ անցնէր ւ հնչման և ձուլուէր նախորդ ւ-ի հետ, և բառը դառնար բերու, ինչ որ ռուս ձևն է։ Մեր լեզուի մէջ այդ վախճանական ի-ն ընկած է. երբեմնի *բերե'մի ձևը դարձած է բերե'մ։

*Այս լուծումից երևում է, որ ռուսի ու ձայնը միևնոյն պէս մի բաղադիր հնչիւն է եղած, այսինքն մի ո և մի ւ, որ միասին հնչուած են իբր պարզ ու: Ռուս բայի եզ. 2-ր դէմքն է բերե՛ս. հմ. հայ բերես (ս և ս յոգով ձայնեալ են), այս ձևն երթեմն եղած է բերե՛ի. հմ. անակ. bha'rasi: Նկատելով, որ մեր առասպելամբ ե ձայնը մի հին իա խառնդ է, որ ձուլուած է՝ մենք կարող ենք բերեի ձևը վերականդնել իբր բերիա՛ի և ասել, որ սյս berom ձևի օ-ն մի հին լրկացած ո է, ինչպէս ո ձայնը մեր գոմ բառի մէջ, որ հնչում է օ: Այդ հին ո-ն նոյն ծագումն ունի, ինչ որ ո ձայնը մեր գոմ բառի մէջ և վերականդնելի է իբր մի վաղեմի իաւ, որով բերո՛մ ձևը լուծել կարող ենք իբր մի հին *բերիա՛ւմ: Այս ձևի ւմ բար. խմբի մէջ չքացած է մի հին ա, որով իր հնագոյն ձևն եղած է *բերիա՛ւամ, իսկ իր անվերջ վիճակի մէջ, այսինքն երբ վախճանի ի-ն չկա՛ր այդ ձևն եղած է *բերիա՛ւամի:

Այս լեզուի մէջ այդ ձևը չհետուած է իբր *բերիա՛ւամի. չնչին յետոյ եկող ա-ը ազատ ու չքացած է և բառը գրկած է *բերիա՛ւմի, այս ձևի մէջ ու խառնդն անցած է օ հնչման, իսկ իր նախորդ ի ձայնը ազատ է ւ ուղղագիծամբ, որով ձևը գրկած է *բերւօմի, այսինքն՝ *բերոմի (ւօ = օ): Այդ նոյն ի-ն կարող էր տալ և յ (յ) ուղղագիծամբ և բառը գտնուար բերյօմի: Այս ազգի իր արտասանութիւն (և ոչ իր գրութիւն) մենք տեսնում ենք ռուս ձևի եզ. 2, 3-ր և յոգ. 1 և 2-ր դէմքերի մէջ. հմ. բերյո՛ջ, բերյո՛ս, բերյո՛մ, բերյո՛տ: Այդ յոգով չէր կարող հետևապես առասպելաբանի մէջ, երբ նախադաս ձևը կորած ի չհնչուած և չմնացած բերիաչ՛, բերիա՛տ հայն, որ գրկած են բերյա՛չ՛, բերյա՛տ, այսինքն՝ բերյո՛չ՛, բերյո՛տ (ա = օ): Նաև այս 2-ր դէմքը չէր կարող

բերե՛ալ լինել, եթէ առաջին դէմքի մէջ չլինէր մի նախատար իա խոստք, որ ձուլումով ասր է. և միր լուծանելով անոնք թէ այդ առաջին դէմքը, որ է բերամ, նախապէս եղած է բերիամ, այսինքն՝ ունեցած է մի իա խոստք, որով 2-դ դէմքն եղած է բերիա՛ալ, երրորդը՝ բերիա՛տ, որ ամփոփելով իա խոստքն իրր ի՛ գործած են բերե՛ալ, բերե՛տ: Այսպէս եղած է նաև միր բայի ձևը. նախապէս՝ բերիա՛ալ և ապա՝ ամփոփումով՝ բերե՛ալ և վերձանեալ՝ ի-է կրաւսով՝ բերե՛ս: Իսկ թէ ինչ ծիրով այս բերամի ձևը առաջ լեզուի մէջ գործած է բերս՝ այդ մասին խօսած եմ վերը: Գալով այն հանդամանքին, որ առաջ գրած է բերե՛ց և կարդացած է բերյօ՛ց — գրա միևնոյնն այն է, ինչ որ կարդալ ենք ասել միր իւ (iw) գրութեան մէջ արտասանութեան համար. հմ. գիւղ, չիւղ. գրութիւնն արտասանութեան պատկերը չէ այս դէպքում: Լեզուն արտասանութիւնն է և ոչ գրութիւնը և միևնոյն հնաոճութ եղանդ արտասանութիւնը միևնոյն, ցոյց տալով նրա վարկի ծագումը:

Գալով հայ ձևին՝ նա կարող էր առնուել երկու ծագում. 1) ածանցաւոր բերի արմատից իրր *բերի — ա՛մի, ուր իա ձուլումով պիտի տայիր ե և բայածանր գառնար բերե՛մի և վերձանեալ՝ ի-է անկատարով՝ բերե՛մ: 2) Նոյն ածանցաւոր արմատով կազմուած բերիատամի ձևից, ուր առա խոստքը չնչաւորվով իրր ա-ատա՛, պիտի ասր երկար ա՛ և բայը գառնար բերիա՛մի, որ իր երկար ա-ի պատճառով պիտի հնչէր բերեա՛մի [1] և վերձանեալ՝ ի-է կրաւսից՝ բերեա՛մ. հմ. ատեա՛մ, որ հետագային պիտի հնչէր բերե՛մ. հմ. ատե՛մ, հմ. նաև ցօղեա ցի և ցօղե՛ցի:

---

1) իա՛ → եա. սակս վերի միևնոյնութիւնը կեամ ձևի նա իմքի ծագման:

Բազմազան ձևերի այս մեկնութիւնն անհնարին կը լինէր, եթէ չընդունէինք, որ այսօրուան պարզ ձայնաւորները երբեմն եղած են բազադիր ձայներ մեր այսօրուան օ.ի նման, որ մի հին աւ է, որ հետագային անցած է պարզ օ հնչման և ԺԲ դարից սկսած՝ ստացած է նաև յատուկ գիր — օ։

Գոմ բայաձևի լուծումով և նրա զուգադրութեամբը կեամ ձևին՝ մենք տեսնում ենք նախաւոր միօրինակ խոնարհման տարբերացումը տարբեր լեզուական միջավայրերի մէջ։ Տարբերացման պատճառը հին և միօրինակ ձևերի տարբեր շեշտառութիւնն է և ձայների տարատեսակ ամփոփումը։ Տեսնում ենք նաև, որ ոլտակերպ խոնարհում ունեցող մի ցեղ լեզուապէս սուզած է հայ զանգուածի մէջ, իբր յետին յիշատակ թողնելով պակասաւոր գոմ ձևը, որ բարբառների մէջ չքացած է դասական շրջանից յետոյ։ Կեամը յաղթած է գոմին և կոշտ կ-ը մեղմ գ-ին։

ՄԱՆՐՈՒՔ

4. ԱՅՏ

(ο = aw, ո = waw)

Այտ բառը, որին ժողովուրդն ասում է «թուշ», մեկնուած է բաւարար չափով [1]: Իր նախնական նշանակութիւնն է «ուռուցք». հետևաբար այս բառը իրր երեսի աջ ու ձախ կոր մսուտք՝ մի հին փոխաբերութիւն է. բայց ո՞ր գաղափարն է որից ածանցուած. այտը ուռուցքի՞ց թէ ուռուցքը այտից՝ դժուար է ասել: Ունենք այտնալ բայը, որ նշանակում է ուռել, ուռչել:

Նպատակս է, ոչ թէ այս մեկնութիւնը յիշեցնել, այլ մեկնութեան կերպը քննութեան առնել: Այդ բառը համարում են մի նախնական *oid արմատի ձևափոխութիւնը. նոյն արմատից է յուն. oide'o' — ուռչում եմ. oi'dema — այտոց. oidos — ուռուցք:

Այս հաշուով հին արմատի oi խումբը ա՛յն լեզուական միջավայրի մէջ, ուր կազմաւորուած է հայ լեզուն՝ արտաբերուած է ո՛չ թէ oi, այլ ai, որով oid = aid, իսկ այս վերջին ձևից ծագած է այտ բառը ուր նախաւոր i ձայնը ոգած է j ուղղութեամբ, իսկ d ձայնը երանգափոխ է եղած և հնչած է s: Մեր բառը միավանկ է և ենթադրական բուն արմատն է: Իր չեշտը իր միակ ձայնաւորի վրան է, հետևապէս oid ենթադրական արմատը մեր նախնիքների բերանում հնչած է o'id, ապա a'id և վերջը a'it և այդ չեշտի պատճառով է, որ հին i ձայնը յովտացած է և բառը դարձած է a'yt: Այսպիսով հին oi խմբի և մեր ay խմբի տարբերացումը համարում են հին o ձայնի տարբեր արտաբերութեան արդիւնք:

---

[1]) Տես Հ. Աճառեան. Արմատ. բառ. Ա. 261.

Ինձ թւում է, որ ոչինչ չէ ձայնափոխութիւնն այս բնագաւառը: Մեր տեսութիւնը՝ պարզ ձայները բարդ ծագում ունենալ: Հնդեւրոպ. ḫeu-ներից ō է, այսինքն մի հին aw կամ մի հին u է, այսինքն՝ մի հին waw: Այս հաշւով *oid արմատ մի հին awid է, որի չեզոք գոյական է ա-ին — a'wid: Մեր տեսութիւնը w և y, որ յետոյ են, նախնական ձայներ չեն, նրանք հին ձայնների ազդեցութեան հետքեր են: Այդ ազդեցութիւնը պատճառ են եղել ձայնների և այդ չեզոքի պատճառով. և ազդիչները եղած են երկու տեսակ իմաստով և թողած են երկու հետք. կամ w, կամ y և այս է պատճառը, որ w և y յետոյ են, որովհետև մինչեռ նախատիպ ձայնի ազդեցութիւն են:

Այդ՝ *awid ձևը իր զարգացման կարող էր ունենալ և ունեցած է *a'yid մի ձև: Մինչեռ նախատիպ ձայնը գանուելով երկու ձայնաւորի միջև և գրեթէ չեզոքից յետոյ՝ ազդ է տարբեր ազդեցութեամբ իրր w և y: Երեքտարեայ *a'yid ձևի մէջ i-ին չեզոքից յետոյ յօդուածացած է և ձուլուած նախորդ յօդափն և բառն այս ձևով՝ a'yid → a'yyd' հնչած է a'yd և պարզուցի երանգափոխութեամբ a'yl, որ մեր այս-ն է: Այս է կարծում եմ բուն մեկնութիւնը մեր «այս» բառի: Այս հեմբով է, որ ես միևնոյն հին բառն եմ համարում մեր «ուր»-ը, որ անգ է նշանակում հմ. այլուր և մեր «վայր»-ը որ նոյն իմաստն ունի: Նկատելով, որ ո՞ւր մի հին waw է, իսկ w և y կարող են ծագիլ մի նախատիպ i-ի ազդեցութեամբ ես լուծում ուրդպարսիկ եմ.

վա՛յր — ← va'yr ← wa'yr [1]) ← wa'yir [2]).
wa'wir [3]) → wo'ir [4]) → wo'wr [5]) → n'ur [6])

---

[1]) վայր բառի վ ձայնը ծագած է նախատիպ w ձայնից: [2]) Մի նախատիպ i յօդափոխած է և ձուլուած է

Երկու բառերի նախաւոր կազմութիւնը եղած է նոյն. մի հին ձայն սղած է տարբեր ուղղութեամբ իբր w և y։ Տարբեր միջավայրերի մէջ նրանք ամփոփուած են տարբեր ձևով, ուստի տուած են այլակերպ արդիւնք, որ իրար նման չեն. — ուր, վայր։ Պարզ է, որ «ուր» բառը փոխառութիւն է այն բարբառի մէջ, որ միևնոյն բանին տուած էր «վայր»։

նախորդ յովտին ինչպէս ail բառի մէջ. տես վերը։ [3]) Ու ձայնը մի հին wawi խմբի ամփոփում է. n = waw, ւ = i։ [4]) Հոլովոյթն սկսած է aw խմբից, որ դարձած է o։ [5]) Aw խմբի o գառնալուց յետոյ հետևորդ i-ն սղած է w ուղղութեամբ։ [6]) wo = ո, w = ւ, հետևապէս՝ wow = ու։

Ցուցագրիս տպագրութեան ծախքերը հոգալու
համար ընտրականութեամբ ստացած եմ՝

Գերմանիայից՝ Ե. Տէր Միքայելեանից	20 մարկ	15.—
« Դ. Դաւիթեանցից	14,5 մարկ	10.88
		25.88
Մնացորդ ԺԴ պրակից		167.29
	գումար՝	193.17
Երեք պրակների տպագրութեան (ԺՒ. ԺԴ. ԺԴ.)		36.—
	մնացորդ՝	157.17



Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են տասնըչորս պրակ Ա — ԺԴ

Ամէն պրակի գինն է 1 ֆրանք

ԳԻՆ Ի ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԺԵ.



1939

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՅԱՌԱՋ» Պէյրութ

Լեզուասէր բարեկամներիս և ընկերներիս «Յուշագրիս» նման գրութիւններ կարդացող շատ քիչ մարդ կայ մեզանում. հազիւ մի քանի տասնեակ. հետևապէս ոչ մէկ յոյս կայ տպագրութեան ծախքն իսկ զոցելու։ Ձևի համար գին նշանակած եմ մէկ ֆրանք։ Ասում եմ «ձևի համար», որովհետև եթէ քիչ է կարդացողը, շատ աւելի քիչ է գնորդը։ Ընկերներս ու բարեկամները գիտեն իմ նիւթական կացութիւնը, գիտեն նաև, որ այս տեսակ ծախքերի տակ մտնելու ես հնար չունեմ։ Եթէ նրանք ինձ նման այն կարծիքին լինեն թէ Յուշագրերս կարող են պիտանի լինել մեր լեզուի քննութեան համար՝ կը խնդրեմ նիւթապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ։ Յուշագրերս տպագրելու եմ պրակ առ պրակ։ Ամեն պրակի ծախքն է մօտ 200 ֆր. 500 օրինակի համար։ Ստացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ։ Աւելորդ է ասել թէ աշխատանքիս համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ գումարից։ Հրատարակուած պրակների ամբողջ [illegible]ն ու մնացորդ գումարը պիտի մնայ Հա[illegible]ին Ընկերութեան։

Սիրով Ն. Ազբալեան

հասցէ. *Collège Arménien,*
Rue Wadi Abou Djémil, No. 127
Beyrouth, Liban

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

PIC, PETIT

Ֆրանսերէնը բառեր ունի, որոնց ծագումն անյայտ է։ Դրանցից մէկն է pic, որի մասին Լ. Կլեգա գրում է. «ծագումն անյայտ է. գուցէ մի բնաձայն բառ է»։ Միւս բառն է petit, որի համար նոյն հեղինակը գրում է, թէ ծագումն անյայտ է. «գուցէ կելտական ծագում ունի»։ Աւելի նորագոյն մի հեղինակ O. Bloch, աւելին չի ասում քան նախորդը։ Pic բառն իբր գործիք նրան թւում է փոխարերութիւն այդ բառի առաջին նշանակութեան, որ է փայտփոր թռչունը, կացարը. իսկ pique բառը համարում է piquer բայից ածանցուած, իսկ pioche (բրիչ) բառը ենթադրում է թէ եղած լինի մի նախաւոր pic-oche. ուր սակայն pic հնչուած լինի իբր pi։ Գալով petit բառին, նա նոյնպէս այդ բառի ստուգաբանութիւնը համարում է մթին. կարծում է թէ կարող է կազմուած լինել մանկական լեզուի մի ենթադրական *pitt արմատից և յարում է թէ ռոմանական միւս լեզուների «փոքրիկ» նշանակող բառերը նոյնպէս մթին ծագում ունեն ինչպէս իտ. piccolo [1])

Pic նշանակում է լերան սրածայր գլուխ. նշանակում է նաև սրածայր մի գործիք, որով գետին են փորում. դա մեր քլունդն է։ Pic նաև փայտփոր

---

[1]) Տես. L. Cledat. Diction. étymol. de la langue française. էջ 491 և 497. և O. Bloch. Diction. étym. de la langue française. pic և pique և petit բառերի տակ:



թռչունն է, որին հայերն ուրիշ բառով ասում են «կացար». նա իր սրածայր և ամուր կտուցով ծակում է ծառերի կեղևները և նրանց տակ եղած որդերն ուտում։ Picoté նշանակում է երեսը ծաղկատար մարդ, չոփուռ. picotin որի ծագումը նոյնպէս անյայտ է, բայց որ անկասկած pic արմատից է գալիս՝ նշանակում է ձիուն տալիք վարսակի մի չափ։ Pic արմատից է piquet, որ նշանակում է վրանի ցից. իսկ piquer — ծակել, խայթել, ձին խթանել, կծել, խոցել, ծակծըկել, կսկըծեցնել։ Picoter նշանակում է կտուցով վիրաւորել պտուղը, կացել, կծոտել, խայթել ու նաև ծակծակ կարել։ Ինչպէս տեսնում էք բոլոր գաղափարները մերձիմաստ են և խմբուած են սրածայր մի առարկայի, նրա կատարած գործի և նրա թողած հետևանքների շուրջը [1]։ Իսկ petit բառը նշանակում է փոքր, փոքրիկ։

Նպատակս է այս անոք արմատներին ազգականներ տալ մեր լեզուից, հիմնուելով մեր տեսութեանց վրայ։

Pic արմատը թլուատ արտաբերութեամբ պիտի հնչէր pit։ Այս բառի t ձայնը կարող էր լինել քմա-

---

[1]) Հմ. նաև անգլոսաքս pic — սուր ծայր. picaian — ծակել։ Ռուսերէն. պիկալօ — կերակրափող (և ուրեմն՝ ծակ. հմ. հայ. «բերանի ծակը», «ծակբերան»). պիկո՛ւլիա — թռչունի կտուց (և ուրեմն՝ ծակող). պի՛կա — մարդու քիթ ու մասութը. պիկվի՛ցա և պիկովի՛ցա — քիթ կամ քթի ծայր (ուրեմն ծայր, սրածայր). պի՛կա — ճիպոտ (ցաքու բարակ և սրածայր սստ, որով քշում են կենդանիներին՝ եզ, կով, ոչխար, որով թակում են բուրդն ու բամբակը, որից շինում են մարակի կոթ)։

յին կամ ատամնային, նայելով լեզուական միջավայրին: Ենթադրում են թէ pic բառն արտաբերուած է picc, այսինքն չատ զօրաւոր մի c-ով և գրանով են մեկնում c-ի ներկայութիւնը ֆրանսերէն pic բառի մէջ: Այդ զօրաւոր c-ի կչիռը կարող էր լինել քմային l-ը, որ մի զօրաւոր և խստօրէն լերկ l է: Քոյր լեզուների սովորական վախճաններով, որ են is, as, os, us, այս բառը կարող էր ստանալ այսպիսի կերպարանք pil + Qs, որ իր ձայնաւորի կորուստից յետոյ պիտի դառնար pils (քմային l-ով) և մեր միջավայրում ls ձուլումով իրր ծ՝ պիտի դառնար պիծ: Այս արմատից մենք ունենք պիծակ բառը, որ մի խայթող միջատ է: Այս բառը նոյն կազմութիւնն ունի ինչ որ գիտակ բառը, որ նշանակում է «գիտցող» և ուրեմն «ակ» վախճանը համարժէք ու համանիշ է, «ող» վախճանին, որով պիծակ պիտի նշակէր պիծող: Նոյն վախճանի համար հմ. սուս. եդ-ակ, որ նշանակում է ուտող: Պարզ է կարծում եմ pic և պիծ արմատների նոյնութիւնը բառ ծագման և բառ իմաստի:

Ֆր. pique բառի q ձայնը կարող էր գալ լատ. c կամ q ձայնից, իսկ pic բառի c ձայնը՝ լատ. c, q կամ sc ձայներից: [1]) Բայց նախ՝ — ic կամ որա լծորդ — ig վախճանով միայն մի քանի արմատ ունի լատին լեզուն. յետոյ՝ չունի մի բառ ա՛յդ վախճանով, որ նոյն իմաստն ունենայ ինչ որ piq բառը. վերջապէս՝ հազար անգամ ինձանից հմուտներն այս խնդրում եկած են այն եզրակացութեան, որ pic, ուրեմն նաև pique անյայտ ծագում ունեն: Հետևապէս pique բառի q ձայնը լատինական ծագում չունի. նա մի օ-

---

[1]) Տես. F. Brunot. Gramm. historique de la langue française. էջ 132, 124.

*ատ ձայնի ատոտպարձակությունն է։ Այդ՝ Ֆ-ն մեր տեսակետից մի վատնիմի կն է, որ ձայնատած է հետագայում։ Այս երկձայնի ճշն կարող էր ծագել մի վատնիմի ա-ից, ինչպես ատնակրիա լեզուում. որով ենթադրելի է մի վատնիմի կա խոսքը և ուրեմն մի վատնիմի pics։ Այս բառը ֆրանսատարած պիտի հնչուէր pils (l-ը քսմայինն) և պիտի սեմփոխուէր իբր պինձ (is → s). իսկ նոյն նահատակ pics բառի s-ը հանդէս անցնելով՝ պիտի ատ ճ և բառը դառնար պիկճ. ուր կն ձայնատով պիտի դառնար f և բառը՝ պիֆ (*piq*), որ և piquer բառի արմատն է։ Այսպիսով pic և piq բարբառական վատնիմի տարբերացումներ են ինչպես մեր կամար և ֆամար բառերը։*

*Petit բառի e ձայնը արտաբերում է իբր մի ա-նման ե կամ մի խառնափակ ը և այդ ը-ի տատադարձումն է նա։ Այդ e-ն ոչ մէկ կապ ունի բառ. e կամ a ձայնների հետ, որոնցից նա կարող էր ծագել որոշ պայմաններում. եթէ բառը յաճախ ծագում ատ նեղառ։ Այդ e-ն, որ իր արմէքով մի ը է, կարծում եմ մի հին ու ազատ ի է, հետևապէս այդ բառի նահատակ ձևը ենթադրում եմ, որ եղած է *pitit և որ արտահում եմ իբր pit-it և գտնում եմ pit արմատը։ Այս արմատի t ձայնը քմայլին արտաբերութեամբ և հին as, is և այլ վախճաններից մէկով պիտի կազմէր պիտ + Ջ + ու մի բառ, որ ձայնատարի սպառմամբ պիտի դառնար պիտու և ձևը էր իբր պինձ։ Մենք ունենք բարբառական պինձի և պինձիկ բառերը, որ նշանակում են «փոքր, քիչ»։ «Մեն պինձ» նշանակում է «մի փոքր, մի քիչ» (Ալցախ, Գանձակ)։ Մեր պինձի բառը մի ժամանակ եղած է ուրեմն պիտիճ։ Պէտք է ենթադրել, որ ինչպես եղած է *pit-it բառ, որ հնչած է պըտի (ֆրանսերէն բառի աչագրաւած հնչումը), այն-*

պէս և եղած է նոյն ածանցով մի *պիևս-ի թոռ (հմ. նոյն ածանցով մեր թառերը կոչիս, կրկիս, վաչիս եայլեր)։ Երան զուգահեռ ենթադրում եմ, որ եղած է և մի պիևսիկ բառաձև (հմ. մեր պիծի և պիծիկ բառերը)։ Այդ լեզուական մի միջոցառը, որ ապրի առջև ենթասում էր պատիւ ցուցնելը, պէտք է այս ենթադրական բառերը հնչէր ա՛չ թէ թամային է-ները ձուլելով հետևորդ ս ձայնի հետ և ծ կազմելով, այլ նեանելով այդ է-ները, որով բառերը պիտի դառնային.

պիևսեաի → պի(է)սեաի → պիսեաի.

պիևսեաիկ → պի(է)սեաիկ → պիսեաիկ.

Եռամանկ այս ձևերը կարող էին չեչառնել հետևանկ բառերի այս տարատիպ —՝ ո —՝, այսինքն լրիւ չեչառը վերջին և թիերի չեչառը առաջին վանկի վրայ, որով միջին ի-երը պիտի ապէին և չքանային և բառերը դառնային պիսի՛ և պիսի՛կ այս ձևերով՝

պի՛սեաի՛ → պի՛ս(է)սի՛ → պի՛սաի՛.

պի՛սեաի՛կ → պի՛ս(է)սի՛կ → պի՛սաի՛կ.

Իսկ այս ձևերը երկվանկ դառնալուց յետոյ պիտի չեչառէին այս տարատիպ ո —՝ և ապէին առաջին ի-երը և դառնային պրսի՛, պրսի՛կ, որ մեր բարբառներում նշանակում են «փոքրիկ»։ Ժողովրդական պատիրդն ասում է.

պսի ապչիկ զալում ես. (հնարամիտ և բուռն).

Մատիրդ սազալում ես. (յարդարում ես).

Նոյն պիս արմատից մենք ունեցած ենք և ուրիշ կազմութիւն, որ պահած է լեզուն. այսպէս՝ պիս — իս — իկ, որ գործած է պրսիկի և նշանակում է փոքրիկ։ Այս բառն առանց — իկ ածանցի, իր նախաձև մէջ, որ էր *պիս — իս ձիշդ նոյն բառն է, որ պահած է Ֆրանսացին՝ կարճ և սպաս ի՛ն (պրա՛ս) առաստաձևով իր e-ով (petit)։

Մեր նախորդ յուշագրերից մեկում անդրադարձ (Լ, էջ 106-118), որ ի կազմաբխեան բառերն ունեն իմաստ ու կազմաբխեան գոյականները, որ կամ նոյնիմաստ են կամ մերձիմաստ (հմ. կիմ — կուիմ, բիմ — բուիմ եւայլն)։

Այդ՝ հին pil արմատը առած է իր բուն գոյացութեան։ Այս ձեւի մէջ ես վախճանի l ձայնն եղած է բոլորին տ։ Լեզուականն մի այլ միջավայրի մէջ, ուր վախճանական ս ձայնը հնչում էր շ՝ մեր ենթադրած պուս ձեւը վախճանական as, is եւայլն վերջաւորութեանց տ-ը շ-ի վերածով պիտի ձեւացնէր պուշ կազմաբխեան մի բառ — պուլ — Շ, որ ձայնաւորի ազատման ու երկարացման միտումով պիտի դառնար պուշ և ես ձայնները ձուլելով իրար՝ պիտի հնչէր իրր պուշ։ Այս ձեւը մեզ գտնում ենք գաւառական պուշ-ուր բառի մէջ, որ նշանակում է «փոքրիկ»։ Վերը բերած պարբերքի մի տարբերակն է.

Պուճուր ախչիկ, գալում ես.
Մարիկը տղաքում ես։

Պուճուր բառի կազմութեան համար հմ. մեր վիճ բառը, որի ուղղականն է վիճու։ Նկատելի, որ եզականի ձեւը հին ուղղականն է տարբեր չնչաւորութեամբ՝ վիճու ձեւը պէտք է բնորոշել իբ եզականի մէջ կորցրած է իր վախճանական ս ձայնը (հմ. գաւառ. «մի՛ր կաց» = եղի՛ր, որ արտասանում են նաեւ «մի՛ կաց»). այդպիսով ինչպէս եղած է մի *ա՛ուր, որ գրված է ա՛ւր(օր). բայց ուղղականի մէջ գտնում է աւո՛ւր, պահելով իր վախճանի ր-ն, այնպէս և եղած է մի նախաւոր *վի՛ճուր, որ գրված է վի՛ճր (ու-ն ապաց), որի ուղղականը պիտի լինէր *վիճո՛ւր, բայց ձգած է ր-ն և գրված է վիճո՛ւ։ Ուղղական ձեւի վազելի կերպարանքը լուսին զուգա-

հեռ է «պուճուր» բառի կազմութեան. *փոք՛ուր ‖ պո՛ւճ — ուր, որանց արմատներն են՝ փոք — և պուճ —։ Այս միջավայրի մէջ նաև հին պիւս արմատը փոխած է վերջին ա-ն ը-ի և տուած է պիւը, որ ամփոփուած է իբր պիճ և պիճ-իկ բարբառների մէջ միևնոյն արժէքն ունի ինչ որ պիծիկ բառը և նշանակում է թէ՛ փոքր, թէ՛ քիչ։

Տեսանք թէ մեր պիծ արմատը թէ՛ խայթել ու կծել է նշանակում (պիծակ) և թէ փոքր ու քիչ (պիծի)։ (Հհ. «օձի կծած, մժեղի կծած», այսինքն՝ խայթած)։ Այս հանգամանքը պէտք չէ չփոթեցնէ ընթերցողին։ Ռուսն ունի կուս արմատը, որից կուս-ա՛ — նշանակում է կծել և կուս-ոկ՝ նշանակում է կտոր, պատառ։ Մէկը գործողութեան անունն է նիշում, միւսը՝ գործողութեան արդիւնքը, այսինքն՝ կծելու արդիւնքը. այն մասը, որ կծուած ու զատուած է։ Այսպէս է նաև մեր կծել բայի արմատը, որ է կիծ, այսինքն մի հին կիւս և ուելի հին կիւ — Ձս, որով լուն արմատն է կիտ, որից կազմուած է կտոր բառը իբր *կիտ-որ։ Մտածման այս ընթացքը, որով գործողութիւնն ու իր արդիւնքը նոյն արմատն ունեցող բառերով են նիշուած՝ լեզուաշինութեան հիմնական եղանակն է եղած և է՛ մինչև այսօր. հմ. հեռագիր և հեռագրել։

Պիծ արմատը կարող էր ունենալ և ունեցած է իրօք իր լծորդական կշիռները պ — բ — փ լծորդութեամբ։ Այսպէս են բիծ և փիծ, որ ունենք թէ անկախ վիճակով և թէ փծուն բառի մէջ, որ մի հին *փիծ — ուն է և նոյն կազմութիւնն ունի ինչ որ գիտ — ուն, խօս — ուն և նման բառերը։ Բիծր, որ մի նկատելի կէտ է միօրինակ մակերեսի վրայ, նախապէս պիտի նշանակէր խայթուածի տեղը, վէրքի հետ-

*քը (ֆայլ ապին։ Պնդ, բիծ և փիճ իրրև յոգոպական կչռոներ պէտք է նայեմատա կամ մերձմատա լինէին։ Պնդ արմատը նչանակում էր խոյլիկ և ուռնիլ ծաղկել, կծել և պռանել խակ վչացնել, ուռել։ Փիճ արմատի գոյացնեն է փիճ, որով անուանում ենք մէկ հատ իսկ արմատի կ ձայնը արտաբերած է մըլուատատար մէկ՝ քանդին և մէկ տառանիայնն տ-ով, ունչաչա տարրեր մէջտավարների մէջ, որով էս առած է ծ (փիճ) և տս առած է ց (փից)։ Երկու արմատն էս նոյն բաներն են նչանակում, այսինքն մանրիկ պիղծ, որ ասել է փչացած։ Հետագային փոխարերութեամբ այդ նոյն բաները նչանակած են նաև հագած պիղծ։ Փոկիկ բառը, որ *փիճիկ նախածանից է ծագում, նչանակում է ուռել, ապականել, պղծել։ Նոյն բառն ունենք և փցիկիկ ձևով, որ *փիցիկի բառից է ծագում և ձևով ու իմաստով նոյնութիւն ու զուգահեռ է փիճիկ բառին։ Այս հայեացք անիւիծ (=մրիծ) բառը նախապէս ոչ միայն պիտի նչանակէր խոցոտածքի հետք չունեցող, այլ և չծակուած, չխոցուած և ուռնիլ չսպասիանուած, չպղծուած։ Տե՛ս «անրիծ կուսաբիծն»։*

Մեր պիճ արմատին զուգահեռ, որ ինչպէս անուանք նչանակում է նաև «քիչ» (պիճի), վրացին ունի նոյն բնոյ բառը, որ նչանակում է «քիչ»։ Այսուհետև մենք անհնարին ենք պ և բ ձայնների յոգոպութիւնը լեզուից լեզու, ինչպէս պիճ և բիճ արմատների մէջ նոյն յոգոպութիւնն ենք անհնարին, բայց միևնոյն լեզուի մէջ, որ ասել է՝ միևնոյն լեզուի ինչ ու չգացած բարբառների մէջ։ Մեր յուծաւիների ճամբով վրաց բառի հչիռ պէտք է լինէր նաև [1]), որ նչանակում է

---

[1]) *Կեղտական ծագում ունի այս բառը, որով կարող ենք ասել մէկ նաև որ կեղտական է, նրանք*

ֆր. կաուց։ Ձայն ձայնաւորների և յոգնական կչխանների տեսակէտից pic և bec նոյնիսկ տառեր են և հիմա պէտք չէ զարմանալ, որ փայտափորը կամ կացարը կոչուում է pic, որ նոյն է ինչ *bic — bec, թռչունն իր անունը պարտական է իր երկար, սուր և ամուր կտուցին. հմ. մեր «կացար» բառը, որ մի հին *կտուց-ար ձևից է ծագում։ Վրաց բառի մէջ և ձայնը մի և է իրօք և ոչ մի։ 1) Իսկ ե ձայնը պահանջ ինչ մի հին իա խմբի ձուլում է, որով բիձ և բեձ-օ բառերը առաջնեցած են իրենց չհնչող հետևանքով, մէկն իբր բի՛ած → բիյձ → բիձ. մէսն իբր բիա՛ձ → բեձ։ Իսկ օ ձայնը մեր սեռականի ոյ վախճանն է. հմ. բժ-ոյ, ժժ-ոյ, հետևապէս վրացու օ-ն այս դէպքում մեր հին ուղղականի ձևի ոյ-ի տառադարձումն է։ Վրացին պահած է այդ վաղեմի վախճանը, իսկ մենք ձգած ենք և այդ է պատճառը, որ նրա ուղղականը մեր սեռականն է։ Այդ սեռականը հետզհետէ մեր վաղեմի ուղղականը, բայց տարբեր շնչառութեամբ, որի հետևանքով բնկած է այդ վախճանը։ Այս օրինակը յստակ հաստատում է մեր տեսու-

---

այնպէս են յարաբերում իրար ինչպէս մեր պիձ-ի (քիչ) և վրաց բեձ-օ (քիչ) բառերը։

1) Վրացին մէ՛կ պրի ունի իր ե հնչունով ձայնը նիշելու համար, բայց այդ պրի նիշած ձայնը ե չէ միշտ, բոլոր ե-երն այնտեղ լրիվացած են ինչպէս ե-բևանի բարբառում. հմ. էբևան, էրէս, էրկու — ե-բևան, երես, երկու, եայլն։ Բարբառների մէջ առկայն (ինչպէս իմերէթիայում) բառասկզբի ե-ը հնչում է մերինի պէս ye։ Համեմատաբար ժամանակ միայն պէտք է նկատի ունենալ այս պարագան. բևրի բառի մէջ որ մեր բեւր բառն է, ե-ը անչուշտ մի և է և ոչ է։

նը մեր եզ. ուղղական և սեռական ձևերի ծագման մասին: Այսպէս՝

Նախաւոր ուղղական, չեշտը առաջին վանկի վրայ.	եզ. սեռ. — նոյն հին ուղղ. տարբեր չեշտառութեամբ.
բի՛ծ — ոյ, փի՛ծ — ոյ →	բիծո՛յ, փիծո՛յ. → [3])
բի՛ծ(ոյ), փի՛ծ(ոյ) → [1])	բրծո՛յ, փրծո՛յ. → [4])
բի՛ծ, փի՛ծ. [2])	բծո՛յ, փծո՛յ. [5])
չեշտառական տարաղ	չեշտառական տարաղ
—՛ ο	ο —՛

Տեսանք թէ պիծ-ակ նշանակած է «խայթող», «ծակող»: Այս հիման վրայ մեկնելի են գաղափարների այն լծորդութիւնները, որ ցուցադրում են մեր արմատի վաղեմի կշիռը — pic և սրա լծորդական կշիռը՝ piq իրենց պարզ և ածանցաւոր կազմութեամբ: Picotin — վարսակի մի որոշ չափ է նշանակում. (Փարիզի մէջ երկու լիդր ու կէս). անշուշտ նկատի առնուած է վարսակի բրդաձև կոյտը, որ յիշեցնում է սրագլուխ մի սար: Հմ. հայերէն «մի բլուլ խոտ», որ թարմ խոտի չափ է [6]): «Բլուլ»-ը բլուր բառի լծորդական տարբերակն է (լ — ր): Նոր հնձած խոտը լաս-լաս թողնում են, որ տեղը ցամաքի. յետոյ հաւաքում են բլուլ-բլուլ, այսինքն թմբաձև, բլբաձև,

---

[1]) Շեշտից յետոյ ոյ-ն ոդած: [2]) Ոյ-ն չքացած: [3]) Շեշտը երկրորդ վանկի վրայ: [4]) Անշեշտ ի-երը ոդած: [5]) Մեր հները ոուղ ձայնաւորն արտաբերում էին, բայց չէին գրում. Մինչև այսօր մենք հետևում ենք նրանց օրինակին:

[6]) Ուրիշ տեղեր ասում են «մի խոտիտ խոտ», այսինքն՝ մի գիրկ խոտ. խոտքել նշանակում է գրկել: Մեր գիւղացին եւրոպական պարը ծաղրելով ասում է. «խաքտի՛ պաքտի՛» այսինքն՝ գրկի՛ր և պաքտուի՛ր:

որ լաւ չգրանայ. այնուհետև սոյլով կամ պրասաով փոխադրում են պիզ և պիզաւ, պէկ կազմում: Ինչպէս մեր ֆիգրածև կիսաձայն խոսքն մերոնք ասած են «բլալ», որ է «բլաւ». այնպէս բրգածև կիսաձայն վարսակին ասած են picolin: Դազափարի մեծ տարբերութիւնները պարզ են. բլունդը նման է փայտիսրի աւազ և ամուր կաուչին — pic. կացինը նման է բլունդի կատարած գործին, որ աւազ ծայրով ծակում և բրդոտում է քարի և կոչտ հողի կաթներ — picoter: Մազկատար երեսը ծուռում է ծակ-ծակ, սրածայր գործիքով փորփրած — picoté: Ցիցը սրածայր փայտ է՝ կատուի նման — piquet: Սրածայր լեռան գլուխը նման է ցիցի — pic: Սրածայր իրը պէտք է ուժով հրել, որ ծակով կանցնայ, որով ծագում է խիճանեղաւ դազափարը: Խիճանեղը կարող է և ծակով և ուրիշ ձևով լինել: Մակոյն ու խոցոյը աւազ ցաւ են պատճառում, որից ծագում է կսկծացնելու դազափարը: Մակոյն ու խոցոյը կարող են և մաներ փրցնել. որից ծագում է «կտոր» դազափարը. իսկ կաթը, որ միշտ ածիլի փոքր է, քան այն իրը, որից կտրում են՝ ծնունդ է տալիս «փոքր» և «քիչ» դազափարներին: Մակ-ծակ կարն իր մէջ ունի արդէն ծակուածի դազափարը. եւայլն:

Մենք համեմատութեան եղրեր գտանք pic և petit բառերի համար, որոնց ծագումն ու տղդակցութիւնն անհայտ էր: Փոխատութիւն են այս բառերը: Անշուշտ՝ ոչ: Բայց «ո՛չ», եթէ պատմական գարերը նկատի առնենք: Գիտունները ասում են թէ հայերն եկած են արևմուտքից, անցնելով Թրակիան: Իսկ հնագէտները ասում են թէ հնգեբտական ցեղն եղած ցեղերն իրենց չուն սկսած են կենդրոնական Եւրոպայից: Այդ ցեղի տուներն, որ հասած են մինչև Հնդկաստան և Հայաստան, դիւրութեամբ կարդ էին

և մինչև Ապլանտեանի ափերը հասնել։ Ես ենթադրած եմ (ԲՅ. ԺԲ), որ այդ հին ցեղերը խօսած են k լեզու և որ եւրոպական միջավայրում է ստեղծուած կ ձայնը։ Pic և bec այս կ ցեղի բառ պէտք է համարել։ Pic-ը մի հին pich է, որ լերկացած է (այսինքն՝ որի h-ն ցնդած է)։ իսկ piq-ը նոյն ձևն է, ուր սակայն ձուլուած է ch իբր q (կհ — f)։ Այս ձևի մի թլուատ արտաբերումն է պիծ բառը, որ մի հին պիտ է, ուր քմային t-ը c-ի (կ) համարժէքն է, իսկ u-ն հ-ի մայրն ու կշիռը, որով դուգահեռ են pich ‖ pits, այսինքն՝ piq և պիծ։ Այսպիսով ո՛չ թէ փոխառութիւն, այլ հանուր ժառանգութեան մի օրինական ձևափոխութիւն։ Այս ձևափոխութեան ո՛չ տեղը և ոչ ժամանակը հնարաւոր է որոշել. արդեօք հին հայ ցեղերի վաղեմի բնավայրո՞ւմ թէ գաղթի ճամբաներին. արդեօք փոխառարա՞ր թէ անկախ ձևափոխութեամբ։ Որոշ չէ տեղն ու ժամանակը, բայց որոշ է խնամութիւնն ու ընդհանուր ծագումը։

ՑԱԽ, ՑԱՔԻ
(*KH* — Ք)

Մենք ունենք ցախ բառը, որ նշանակում է ճիւղ, ոստ. իսկ բարբառների մէջ նաև վառելափայտ։ Նրա կշիռն է պարսկ. շա՛խ, որ նշանակում է ճիւղ և սնակ. շա՛՛կհա, որ նոյն իմաստն ունի։ Թէ՛ մեր և թէ պարսիկ բառը ծագած են համարում ենթադրական *ksa´kha´ ձևից և այդ հիման վրայ այն եզրակացութեան եկած են թէ հնդեւրոպ. kh ձայնին մեր լեզուն տալիս է խ կշիռ։ Պատճառը համարում են այն, որ կոկորդային ձայներ նուազ զօրաւոր են իրր պայթուցիկ քան ատամնային ձայները և ընդհանրապէս աւելի ենթակայ են իրենց պայթուցիկ հանգամանքը կորցնելու (A. Meillet, Esquisse, էջ 16, § 12)։ Այստեղ մենք տեսնում ենք մի կողմից ks, որ առաջ է g։ Այս պարագան մեկնելի է մեր համատարած թլուատութեան տեսութեամբ. մի նախաւոր ks թլուատաբար պիտի հընչէր ts, որ ձուլումով պիտի տար g, ինչպէս մեկնած եմ իմ Ա և ԺԲ Յուշագրերի մէջ։ Պարսկի պահած ձևը կարելի է մեկնել պայթուցիկի անկումով սոյլի առջև, որ հետագային անցած է c հնչման, այսպէս՝ ks → (k)s → c։ Բայց ի՞նչպէս պէտք է գծել kh — խ փոխանցման ծիրը։ Կարծում եմ ա՛յսպէս. kh → (k)h → խ. այսինքն k-ն ընկած է h-ի առջև, իսկ մնացորդ h-ն անցած է խ հնչման։ Յայտնի է, որ խ և ճ լծորդ են. հմ. խաղ — հաղ. հաղող — խաղող եւայլն։ Այս երկու փոխանցումն եւս ձայնական խմբերի քայքայման արդիւնք են. k ձայնի անկումով մնացած են հետևորդ s և h ձայները, որ հետագային անցած են մէկը c հնչման, իսկ միւսը՝ խ հնչման, որով լծորդ են դառնում c, ճ, խ։

Մենք ունենք ցաքի բառը, որ նշանակում է ճիւղառատ և փշալից թուփ, մացառ։ Նրա ճիւղերից են շինում ցաքանը, որ կարծում եմ մի հին յոգնակի ձև է և նշանակում է ցաքեր. հմ. իշ-ան, ձի-ան եւայլն։[1]) Սերմը ցանելուց յետոյ արտը ցաքանում են, այսինքն ցաքի ճիւղերը քաշ տալով հերկի վրայ՝ փշրում ու հարթում են վարած արտի փուխր հողը և լաւ ծածկում են սերմը, որ թռչունները չուտեն կամ ձմեռը չմրսի։ Ցաքին կտրում են մի կեռակտուց և թանձրամարմին գանակաձև գործիքով, որին ասում են ցաքաս, այսինքն ցաքի կտրող։ Նոյն գործիքով են կտրտում և ծառերի ճիւղերն ու ոստերը, որով տեսնում ենք թէ ցաք արմատը նոյն իմաստն ունի ինչ որ ցախ բառը և ցաքաս ուրիշ բան չէ քան ցախաս, այսինքն ցախ կտրող, որ է ոստ ու ճիւղ կտրող։ Ցաքատով կտրած այդ ճիւղերին է, որ ասում են «ցախ» և հասկանում են «վառելափայտ»։ Նախ ծառը կըտրում են կացնով և ապա ճիւղերը վերհատում ցաքատով։ Թոնիրը ցախով են վառում։ Ցաքին կտրում են միմիայն ցաքատով (կացնի կարիք չկայ, քանի որ ոստերը թէև չատ ամուր են, բայց բարակ են) և նը-

---

[1]) Նկատելով «ցաք ու ցրիւ» բացատրութիւնը՝ զուցէ կարելի էր «ցաքան» բառը մեկնել իբր ցաք-ա-նող. հմ. հաջ-ան, կծ-ան. բայց կարծում եմ ցաքան գործիքի հոգ չաղ տալուց է ծագում «ցաք» բառի «ցրիւ» իմաստը. «ցաք-ան»ն իբր ցաք-եր ռամկական մեկնութեամբ համարուած է ցաք-ան, իբր «ցաք ա-նող», այսինքն չաղ տուող, որով «ցաք» ստացած է «չաղ» իմաստը։ Այս «չաղ» բառը կարծում եմ զուգահեռ է մի կողմից մեր «ցաք» արմատին, միւս կողմից պարսկ. «չախ» (ճիւղ) բառին։

բանով ցանկապատում են այդիները։ Սրածայր ցիցեր են խրում գետնի մէջ և նրանց վրայ հագցնում են ցաքու ճիւղերը, որի փուչերը պահում են այդին զող ու գազանից։

Արդ՝ ես կարծում եմ ցախն ու ցաքին միևնոյն բառերն են, ըստ էութեան նրանք նոյնիմաստ են, թէև ցաքին թուփ է, իսկ ցախը նշանակում է ճիւղեր, ոստեր, բայց ցաքան բառը կազմողի մտածումը ոչ թէ թուփն է նկատի ունեցած, այլ այդ թուփի ճիւղերը և այդ ճիւղերի պատճառով է, որ այդ թուփը կոչուած է ցաքի, հմ. խնձորի, տանձի, որ նշանակում են խնձորենի, տանձենի, որով՝ ցաքի — ցաքենի։ Դրանցից մէկը պահած է իր վախճա ի-ին — ցաք-ի, իսկ միւսը նետած է — ցախ-(ի), որ երևում է սեռականի մէջ, որ է ցախի՛։ Ցախացքար հին տեղանունը ցոյց է տալիս, որ այդ բառն ունեցած է ի — ա խառն հոլովում, իբր եզ. սեռ. ցախի. յոգն. սեռ. ցախաց։ Բառը գնում է նաև ոյ և ի (պարզ) հոլովման վրայ։

Ընդունելով ցախ և ցաքի բառերի նշանակութեան նոյնութիւնը՝ մենք կարող ենք ասել, որ ցաքի և ցախ միևնոյն նախաւոր բառերն են, որ սակայն ձևափոխուած են տարբեր լեզուական միջավայրերի մէջ և հետագային միևնոյն հայոց լեզուի բառագանձի մասն են կազմած։ Այդ միջավայրերից մէկը ֆայմայում էր նախնական kh ձայնախումբը և նեանելով k-ն՝ պահում էր h-ն, որ հետագային անցած է խ հնչման, որով հոլովոյթն ընթացած է այս ծիրով. kh — (k)h — խ։ Միւս միջավայրը ձուլում էր kh ձայնախումբը և դարձնում f։ Այսպիսով մենք կարող ենք ասել, որ հնդեւրոպ. kh ձայնախումբը հ ոյց լեզուի մէջ ունեցած է երկու տարբեր արդիւնք խ և f։ Եւ այդ է

պատճառը, որ այդ երկու ձայները լծորդ են. նրանք նոյն նախաւոր ձայնախմբից են ծագում, որ էր kh, թէև տարբերացած են տարբեր ուղիներով, տարբեր միջավայրերի մէջ, տարբեր հնչական օրէնքների ազդեցութեան տակ։

Այս արդիւնքը սպասելի էր տեսականօրէն։ Քանի որ մեր տեսութեամբ sh խումբը ձուլումով տուած է p, իսկ պh խումբը — ф, ինքնին հետևում է, որ kh խումբը պիտի տար f, ինչ որ պայծառօրէն տեսնում ենք ցաfի բառի մէջ։

Յիշենք ուրեմն, որ հնդեւրոպ. kh ձայնախումբին հայերէնը տալիս է ո՛չ միայն խ, այլ և f կչիռ և որ ուրեմն kh ունեցող օտար բառերի կչիռները մեր լեզուի մէջ կարող ենք որոնել ո՛չ միայն խ, այլ և f ունեցող բառերի չարքում։

Ցուշագրիս տպագրութեան ծախքերը հոգալու
համար շնորհակալութեամբ ստացած եմ՝

	ս. ոսկի
Ամերիկայեն – Համասեղեն	9.43
Մնացորդ ԺԴ պրակեն	157.17
	166.60

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են տասնըհինգ պրակ և — ժե

Ամէն պրակի գինն է 1 ֆրանք

ԳԻՆ Ի ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԺԶ.



1939

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՅՈՅՍ» Պէյրութ

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՑԵՐԵԿ — ՑՈՐԵԿ
(Ե = ԻԱ, Ո = ԻԱԻ)

Այս բառերն ունենք նաև գաւառ. ցիրեկ և հին ցերեակ ձևերով: Ցերեկ բառը տրոհում են իբր ց-երեկ և մեկնում են իբր «մինչև երեկոյ», որով ց-ն համարում են նախդիր. հմ. ցարքայ. ցԵրիքով Լայլն: [1]) *Այս մեկնութիւնը նպաստ է ստանում* ցայգ *բառից, որ տրոհում են իբր* ց-այգ *և հասկանում են իբր «մինչև առաւօտ, մինչև լուսաբաց» և ուրեմն՝ գիշեր. հմ. ցայգ և ցերեկ = օր ու գիշեր: Այս մեկնութեան չի վնասում* ցիրեկ *գաւառ. ձևը, նկատելով որ ունենք* իրիկուն *բառը իբր «երեկոյ», ուր տեսնում ենք ի՝ ե-ի փոխարէն: Բայց այս մեկնութեան բաւական վնասում է* ցորեկ *ձևը, որ եթէ տրոհենք իբր* ց-որեկ՝ *կ'ըստանանք մի բառ —* որեկ, *որ չունենք և որ պիտի նշանակէր «երեկոյ»:*

Այս բառերի տարատեսակ ձայնաւորները յիշեցնում են մի կողմից գերման լեզուի e/o ձայնափոխութիւնը. հմ. brechen — *բեկանել, կոտրել և* ge-brochen — *բեկուած, կոտրած. միւս կողմից՝ i/o ձայնափոխութիւնը հմ.* hielfe (*ի-ն երկար*) — *օգնութիւն.* ge-holfen — *օգնած. զուգահեռ՝ ցերեկ — ցորեկ. — ցիրեկ — ցորեկ: Եթէ մենք ց-ն չհամարենք նախդիր, կարող էինք ասել, թէ* ցորեկ *և* ցերեկ *երբեմն եղած են տարիմաստ, ինչպէս գերմանացու ձևերը, բայց*

---

1) *Տես Հ. Աճառեան, Արմատական բառարան հատ. Զ, էջ* 1060.

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

նրանց իմաստի տարբերութիւնը չքացած է ժամանակի ընթացքին և այսօր մենք ունենք տարատեսակ, բայց նոյնիմաստ երկու բառ։

Պիտի փորձեմ նոր մեկնութիւն տալ այս ձևերին, հիմնուելով մեր տեսութեանց վրայ։

Յայտնի չէ ո՛չ «ցերեկ» և ոչ «ցորեկ» բառերի հին հոլովումը։ Երեկոյ ձևը թւում է ինքնին մի հին բայց քարացած սեռ. հոլով. հմ. գործոյ, որի ուղղականը պիտի լինէր «երեկ»։ Ունենք երեակ, որի սեռ. կարող է համարուել քարացած երեկոյ ձևը։ Հետևապէս ցերեկ բառը գուցէ իբր սեռական ունէր «*ցերեկոյ»։ Այս «երեկոյ» ձևը նկատուած է ուղղական և ընթացած է -եան հոլուական կարգով. հմ. ժողովուրդ — ժողովրդեան ‖ երկոյ — երեկոյեան։ Բայց այս ձևը նոյնպէս քարացած է։ Բարբառների մէջ ունենք «իրիկուայ, իրիկուան» ձևերը. վերջին ձևը «իրիկուն» բառինն է. հմ. անուն-անուան ‖ իրիկուն-իրիկուան։ [1]

---

[1] Կարող ենք ասել, որ երեկոյեան և իրիկուան (երեկուան) ձևերը տարբերացած են յ և ւ լծորդ ձայներով և տարբեր շեշտառութեամբ։ Իրիկուան ձևը շեշտւում է իբր իրի՛կուան (երե՛կուան). իսկ միւսն իբր երեկոյա՛ն։ Որով կարող ենք զուգադրել առանց ժանրամասն մեկնութեան։

երե՛կոw(ան) — երեկոy(yա՛ն) → երեկոյեա՛ն.

հմ. մրջի՛w(ան) — մրջիy(ա՛ն) → մրջեա՛ն.

Թէ ինչ ազդեցութիւն ունի հոգեբանական տարրը լեզուի հոլովոյթի վրայ՝ ապստամբելով հնչական օրէնքների դէմ՝ կարելի է տեսնել «երեկուան» և «իրիկուան» ձևերից, որ գտնւում են միեւնոյն բարբառի մէջ, բայց մնացած են տարբեր հնչական կերպարանքով, որովհետև ստացած են տարբեր իմաստ և կի-

Իսկ «իրիկուայ» ձևը յիշեցնում է մեր յատուկ անուն-ների հոլովական կարգը. հմ. Սահակ-Սահակայ, բայց ո՞րն է եղած այդ բառի ուղղական ձևը։ Այս խնդիրը հետազօտուած չէ։ Այդպէս են բոլոր ժամանակ ցոյց տուող բառերը. գիշերուայ, օրուայ, ամսուայ, տարուայ, շաբաթուայ եւայլն, որ ունեն իրենց զուգահեռը իբր օրուան, տարուան, ցերեկուան եւայլն։ Սրանց մասին ես առիթ կ'ունենամ խօսելու։ Գուցէ կարելի լինէր հիմք առնել «աներեկ» և «աներեակ» (= երեկոյ չունեցող, մշտալոյս) բառերի հոլովումը, նրանց սեռականն ունի ի. հմ. «յաւուրն աներեկի»։ Բայց այստեղ խանդարում է մի պարագայ. բարդ և ածանցաւոր բառերը փոխում են իրենց հոլովական կարգը. այսպէս՝ գործ-գործոյ, բայց բարեգործ-բարեգործի։ Միւս կողմից թէև բարբառն ասում է «ժամուան», «ցերեկուան», բայց ունի նաև «ցերեկին» ձևը. հմ. «գիշերը ցերեկին խառնել» բացատրութիւնը, որ նշանակում է «շտապ և անընդհատ»։ «Ցերեկին» այստեղ տրական է, որով իր սեռականը պիտի լինէր «ցերեկի»։ Թւում է թէ ա՛յս է եղած «ցերեկ» բառի հին հոլովումը։ Այս վարկածի մի ուրիշ հիմքը պիտի տեսնենք քիչ յետոյ։

Անդամատենք մեր ունեցած այն ձևերը, որ աւանդաբար հասած են մեզ։ Նկատելով, որ մեր տեսութեամբ ե ձայնը նախնական չէ, այլ մի վաղեմի իա խմբի ձուլման հետևանք է՝ մենք կարող ենք ցերեկ և ցորեկ բառերի վերջին ե-երը լուծել իբր իա։ Մենք կ'ըստանանք. ցերի-ակ և ցորի-ակ։ Մեզ աւան-

---

բարկութիւն. երե՛կուան (արտաբերւում է էրե՛գուան) նշանակում է անցած օրուան, նախորդ օրուան. իսկ իրի՛կուան (իրի՛գուան) — երեկոյի. հմ. «էրե՛գուան օրը» և «իրի՛գուան հովը»։

դուած է «ցերեկ» բառի ամբլի հին ձեւն իբր ցերեակ։ Նա խոլբի նեղկայութիւնն այս ձեւի մէջ միայն տեսութեամբ ապացոյց է, որ այդ ձեւը իւն երկար է եղած և այդ երկար ի՞ն է, որ ճեղքուած է չեչոից առաջ և տուած է իյ, որ հետեւապէս ա-ի հետ կազմած է իյա խոլբը և հնչուած է յա և տառապարձուած ենա, ցերի՛ակ → ցերիյա՛կ → ցերեա՛կ։ Այս վերջին ձեւն արտաբերուած է նաև իբր ցե՛րեակ և նա խոլբին ունչչնչա ձեւով՝ սմխոփուած է իբր ե և բառը դարձած է ցե՛րեկ. հմ. «ցորեա՛ն» և «ցո՛րենն»։ [1]) Եթէ «ցերեակ» ձեւի մէջ վերջին իւն կարճ լինէր, այն ժամանակ բառը կը դառնար «ցերի՛կ» և ոչ «ցերեակ», որովհետեւ կարճ ե + ա տալիս են ե. հմ. բարիպարձ → բարեպարձ։

Այս լուծումով մեր բառերը դառնում են ածանցաւոր. ցերի-ակ, ցորի-ակ։ Իբր կազմութիւն՝ այս ձեւերին մենք կարող ենք զուգադրել մեր գիտակ բառը, որ է գիտ-ակ և նշանակում է «գիտացող, գիտող»։ Այս բառի սեռականն է «գիտակի»։ Ինչպէս տեսնում էք այստեղ ակ ածանցը նոյնպիսին է ող ածանցին։ կարծում եմ, որ այս հիման վրայ մեր բառերի սեռական ձեւերը պէտք է լինէին «ցերեկի», «ցորեկի», նկատելով որ նրանք նոյնպէս կազմուած են ակ ածանցով, թէև այդ ածանցի ա-ը ձուլուած է բառավերջի ի-ի հետ և տուած է ե. ցորիակ → ցորեկ։ Ցերեկ և ցորեկ բառերի նախաձեւերն այսպիսով եղած են *ցերեկի *ցորեկի և այս ձեւի մէջ նրանք եղած են ուղղական և իրենց չեչոը զարկած է առաջին վանկին, իբր ցե՛րեկի, ցո՛րեկի որի հետեւանքով նրանց վերջին ձայ-

---

[1]) Նա խոլբը չեչոի առկ ինչպիսով չէր կարող ե դառնալ, որով արեւելահան չեչոատպութիւնն ու արտաբերութիւնը հին են. «ցո՛րենն» և ոչ «ցորե՛ն», քայց «ցորեա՛ն»։

նաւորը ոգած և կորած է, և մենք ունենք ցե՛ռեկ, ցո՛ռեկ։ Մենք կարող ենք ասել թէ ակ ածանցի նախաւոր ձևն եղած է -ակի։ Հմ. ռուս. եդ-ա՛կ, որ նշանակում է ուտող. իսկ եդ-ա՛ նշանակում է ուտեստ, կերակուր։ Հմ. նաև ռուս. ousrեա՛կ (զուգահեռ՝ «ցորեա՛կ»), որ ծագում է ousr — արմատից. o՛usrրիյ նշանակում է սուր, իսկ ousrեա՛կ — սրաբան, սրախօս։ Հին ժամանակ սլաւ լեզուն այս ձևերի վերջում արտաբերում էր մի անորոշ ձայնաւոր, որ արտայայտում էր մի գրով, որ կոչւում է «կոչտ նշան»։ Դա մի խուլ ձայնաւոր էր, մեր ը-ին համարժէք։ Հետագային ձայնը չքացաւ, բայց գիրը մնաց. իսկ վերջին յեղափոխութիւնից յետոյ ռուսերէնի մէջ չքացաւ նաև գիրը։ [1]) Կարծում եմ այդ ձայնը -ակի ածանցի վերջին ի-ին համարժէք էր, որ մեր լեզուում նոյնպէս չքացած էր վաղուց։ Սլաւոնն իբրև նուազ ենթակայ լեզուական վերիվայրումի՝ երկար ժամանակ պահած էր այդ ձայնաւորը, թէև շատ սուղ վիճակում, իբր բառավերջի և անշեշտ ձայնաւոր։

Լեզուների պատմութիւնից յայտնի է, որ երբ որևէ ածանց կորցնում է իր նիշարար կարողութիւնը, ինչպէս օրինակ f ածանցը «ձեռք» բառի մէջ մեր այսօրուան հայ մարդու համար՝ այն ժամանակ խօ-

---

[1]) Ա. Մէյէն ասում է, որ այդ ձայնը չի պահած ոչ մէկն այսօրուան սլաւ լեզուներից. իսկ նրա հին արտաբերութեան մասին չի մնացած ոչ մէկ նկարագրութիւն։ Ապահովաբար դա մի շատ կարճ ձայնաւոր էր, ասում է նա, որի երանգը շատ որոշ չէր։ Տես Le slave commun. էջ 15. Ա. Լեսկիէն, այդ ձայնը համարում է կարճ o-ի տեսակ մի ձայն, ինչպէս ունեն այսօրուան Բուլգար բարբառները. Տես. Handbuch der altbulgarishen Sprache. էջ 15.

առղների իմացութիւնը կարկառում է հինգից և անթերագիր գրած ձևը մի նոր ածանցով՝ բառի հին արժէքը պահելու համար, ինչպէս նոր հայը եր առած է հին «ձևով» ձևին՝ երբ յոլնակի իմաստը չդիտելով այլ ևս ի վաճառին մէջ։

Այսպէս օրինակ մեր «արակառ» բառը, որ նշանակում է «արարիչ» և որի հին և անամփոփ ձևն է «արառակոռ»։ Այս հին ձևը կարող ենք արտնել իբր արառակ-ոռ, ուր «արա»՝ բառի բուն արմատն է։ Այս բառի արառակ մասը զուգադրութեամբ «պիտակ» բառին՝ ինքնին արդէն պիտի նշանակէր «արարիչ, որս անող»։ Բայց արառակ ձևը գոյրած են պիտակցնել իբր «արս անող» և նրա իմաստը փոյլեցնելու համար կարկառած են մի նոր ածանցով, որ է առ և որ նշանակում է անող. հմ. խաղ-առ, ջնջ-առ և այլն։ Թէ՛ առ և թէ՛ առ ածանցները նոյնարժէք են և նոյնիմաստ, միայն թէ մէկը եկած է մեծ ի վրայ և մեծից յետոյ, երբ առաջինը կորցրած է իր նեչարար կարողութիւնը, և գրած է անամէջ։ Այսպէս նաև գրակ պիտի նշանակէր «գրող», բայց այս ձևը անթերագիր գտնելով՝ կարկառած է և գրած գրակ-առ, իսկ սա իր տեղը զիջած է առար գրիր բառին և մնացած է «գրականութիւն» բառի մէջ, որի հնագոյն իմաստն եղած է գրելու արհեստ. հմ. «արակառութիւն», որ նշանակում է «արարչութիւն», այսինքն արարի արհեստ։

*Նեանելով մեր երկու բառերի նոր ածանցը, որ էր առ՝ մենք կ'ըստանանք երկու բառ *գեր և *գոր, որ մեր լեզուն չի պահած այդ ձևով։ Լուծելով այս բառերից առաջինի և-ը իբր մի հին յա՝ մենք կ'ըստանանք գիարի, որ արտնելով իբր գի-արի մենք կը ստանանք, որ այս բառի արմատն է գի, իսկ արի մի ածանց է։ Այս ածանցը մեր առնել բայի պարզ արմատն է հմ. գաւառ. արի և գրաբար՝ կրկնաւոր ար-*

ար-ի։ Ար-ի նախապէս պիտի նշանակէր «անող»։ Այսպէս օրինակ՝ մեր բերրի բառը, ուր երկու r-ն իրար չեն ձուլուած և ռ չեն տուած, որովհետև բառն արտաբերւում է բեր-րի, այսինքն՝ երկու r-ն միևնոյն վանկի մաս չեն կազմում. իսկ գիտենք թէ ա՛յդ է պայմանը երկու r-երի ձուլման և ռ դառնալու (տես Յուշագիր Բ, էջ 35)։ Այս երկու r-երի միջև սղած ու կորած է մի հին ա, որով «բերրի» բառի նախաւոր ձևն եղած է *բեր-արի, ուր բեր-ը «բերք» բառի եղակին է, իսկ արի նշանակում է «անող», որով՝ բերրի նշանակած է «բեր անող», այսինքն՝ «բերք տուող, բերքատու»։ Կարող ենք ուրեմն ասել թէ «ցերեկ» բառը մի հին կրկնածանց և նորոգուած բառ է. իր առաջին կազմութեամբ նա եղած է ցի-արի, այսինքն՝ «ցի անող». երբ այս ձևը դարձած է անթելագիր, այսինքն՝ երբ արի ածանցը դադրած են ըմբռնել իբր «անող», հին խօսողները կարկատելով նորոգած են վաղեմի բառաձևը և նրան տուած են մի նոր ածանց -ակ(ի), որ այն ժամանակ կենդանի եղած է և նշանակած է «անող», որով կարկատած բառաձևը դարձած է ցի-արի-ակ(ի), որ ամփոփումով և վախճանի ի-ն կորցնելով՝ հնչած է «ցերեկ»։

Գալով «ցորեկ» բառին՝ նախորդ Յուշագրերի մէջ մի քանի անգամ առիթ ունեցայ յիշատակելու մեր տեսութիւնը ո ձայնի մասին և ասելու թէ ո-ն նախնական ձայն չէ, այլ մի հին իաւ խմբի հետագայ ամփոփում է իբր իօ(աւ = օ), որ տուած է ւօ (ի-ն սղումով մի կողմից տալիս է ւ, միւս կողմից յ, որ լծորդ են). այդ հին ւօ-ն է մեր այսօրուան ո ձայնը։ Այս հիման վրայ՝ վերականգնելով «ցորեկ» բառի ո ձայնը իբր մի վաղեմի իաւ, մենք ցորի ձևի լուծումով կ՚ըստանանք նրա հին կերպարանքը իբր ցի-աւրի, ուր ւր լոին խմբի մէջ սղած ու չքացած է մի

հին ա, որով այս վերականգնած ձևի անվիճայի կերպարանքը պիտի լինէր գի-ա՛ւ-աւ-ի։ (Եթէ ենթադրենք, որ ւր լծին համբի մէջ ազատ է ոչ թէ մի հին ա, այլ մի վաղեմի ի, այն ժամանակ բառն ամենայն ամբողջութեամբ կը տար «գաւբ» և ոչ «գաբ», որովհետև հին իաւի յուսերը ամբողջութեամբ տարբ է ա և ոչ ո)։

Մենք հիմա կարող ենք գուշակել մեր անդամահատութեան վերջին արդիւնքը։

գաւեակ ← գի-ա՛ւ-ի-ակ(ի)։

գաւեակ ← գի-ա՛ւ-աւ-ի-ակ(ի)։

Այս գուշակութեան պայծառօրէն կը տեսնենք թէ՝ 1) մեր երկու բառերը հետագային միապէս կարկատած են -ակ(ի) ածանցով, որ նշանակում է թէ հին ձևերը միանամանակ և միևնոյն ըզգացական միջավայրում գտնուած են անթիւ դարեր։ 2) որ այդ կարկատանից առաջ մեր բառերը միապէս ածանցուած էին աւ բառով, որ նշանակում էր «առնող»։ 3) որ այդ երկու բառերը միևնոյն արմատն ունէին, որ է գի։ 4) որ նախաւոր կազմութեան մէջ նրանք տարբերուած էին ա ածանցով, որ անշուշտ մի տարբեր երանգ էր տալիս նրանց իմաստին՝ լինելով մէկը գի-աւ-ի, միւսը՝ գի-ա-աւ-ի։ 5) վերջապէս նկատելով, որ երկու ձևերի արմատն է միևնոյն գի-ն, այդ բառերը պէտք է միանմանօրէն լինէին։ Այսօր «գաւեակ» և «գաբեակ» նոյնմանօրէն են և մէկը նրանցից պատառակն է, բայց մեր լուծումից երևում է, որ նրանք նախապրակներ չէին իրենց կառուցով տարբեր բառեր են եղած ինչպէս մեր «կնաւել» և «կռատել» բառերը, որ այսօր նոյնմանօրէն են և մէկը պատառակն է։ Այս օրինակի միջոց միանգամ ևս տեսնում ենք թէ՝ ոչ միայն, որ պիտակներով համաձայնում են ձայնաբանական թիւրը (մեր օրինակների մէջ ը/ո.) այլև նրանք ըմբռնում են իրր արտաբերականն տարբերութիւն, իրար տրիւ բան

չէ, քան հին բառակազմութեան մի մնացորդ, որ ժամանակի ընթացքին ձայնական հոլովոյթի մի որոշ ծիրով տուած է մի որոշ արդիւնք՝ տարատեսակ դարձնելով հին բառերը:

Մենք սոխի պէս կեղևահան և չերտահան անելով հնաւանդ բառաձևերը՝ հասանք նրանց միջուկին և գրատանք ցի արմատը: Ի՞նչ է նշանակում այս արմատը և որո՞նք են նրա կշիռները, եթէ մնացած են մեր կամ օտար լեզուների մէջ: Մեր տեսութեամբ ց-ն մի հին su խմբի ամփոփում է. հետևապէս՝ ցի = suի: Իսկ su խումբը մի հին լիաձայն վանկի եղերական բաղաձայներն են, որ ձայնաւորի կորուստով եկած են անմիջօրէն իրար մօտ և միևնոյն վանկի մաս կազմելով՝ ձուլուած են իրար, տալով մի ց: Առանց աւելի հեռուն գնալու և լեզուական անցեալի մշուշների մէջ գեգերելու, որոնելով այդ վաղեմի սղած ու չքացած ձայնաւորը, որին իրենց գրկի մէջ էին առած երբեմն s և u ձայները՝ մենք քննութեան առնենք su խմբի ճակատագիրը: [1])

---

[1]) Յի կարելի է նկատել իբր մի վաղեմի ածանցաւոր բառ, իբր մի ց-ի, ուր ց արմատ է, իսկ ի-ն ձևաբար մասնիկ: Մեր տեսութեամբ բաղաձայնը արմատ լինել չի կարող, բայց ց-ն ձոյլ բաղաձայն է, այսինքն մի վաղեմի լիաձայն վանկ է, մի s + Ձ + u, որի եղերական ձայները ձուլուած են իրար ու տուած մի ց, երբ միջի ձայնաւորը սղած ու չքացած է: Ի վախճանի համար հմ. բար-ի, առիւծա-բար և բար-ք. մարդա-վար-ի, կառա-վար և վար-ք: Քիչ յետոյ պիտի տեսնենք թէ ցի, որ է ց-ի նշանակած է նաև երկինք. նոյն արմատը այլ կազմութեամբ իբր ց-ա ես գտնում եմ վրաց լեզուի մէջ, ուր ցա նշանակում է երկինք: Բայց այսքան խորերը գնալ՝ մեզ կը չեզի

Յի արմատի տսի կազմութեան մէջ նրա բազաձայն տարրերը — տ-ը և ս-ն — կարող էին ունենալ բազմատեսակ լծորդական կշիռներ, նկատելով, որ տ լծորդ է դ ձայնին, իսկ ս-ն լծորդ է հ, գ, ժ, ծ ձայներին իբր միևնոյն ոյժ ընտանիքի անդամ: Այնուհետև կայ տս կցորդ ձայնափոքի քայքայման պարագան, այդ կցորդութեան տ-ը ոյժի առջև չդանալով պիտի արմատը դառնար սի. տսի → (տ)սի → սի. իսկ նոյն կցորդութեան ս-ն հանդէպ անցնելով ու ցնդելով արմատը պիտի դառնար տի. տսի → տհի → տ(հ)ի → տի: Առաջին փոփոխութեան հետևանքով, որ էր տսի → (տ)սի → սի, «ցնծեկ» բառը պիտի դառնար սեռեկ, որ զօրեղապէս չնչաւորվով իբր սե՛ռեկ, պիտի ազէր իր անչնչա ե-ը և դառնար սե՛րկ: Մեր լեզուն պահած է հնչական այդ հոլովոյթի արդիւնքը և սերկ նշանակում է «այօր»: Այս բունից ունինք «սերկեան», որ նշանակում է «այօր, այօրուան» և սերկածին, որ նշանակում է «այօր ծնուած»: Այսպիսով տեսնում ենք թէ սերկ մի տարրեակն է ցերեկ բառի, որ տարրեր ճակատագիրներ ունեցած է տարրեր լեզուական միջավայրի մէջ, բայց յետոյ անցած է դրական լեզուին. և սերկեան և սերկածին ուրիշ բան չեն քան «ցերեկեան» և «ցերեկածին», որ այդ կերպարանքն առած են ց-ի քայքայման հետևանքով: Հին տսի արմատի քայքայուն միացորդը -սի- անհետանալ թէ «սերկեան» և «սերկ» բառերի մէջ նշանակած է «օր». հաւանական է ենթադրել, որ այդ արմատի նախատիպ և անվթար ձևը, որ է ցի, նո՛յնպէս նշանակած է «օր» և այդ է պատ-

---

մեր բուն նախնիքից: Եթէ մեր Ծատուր յատուկ անունը չհամարենք (Աստուա)ծատուր բառի պերապոյն ամփոփում՝ կարող էինք այդ բառը տրոհել իբր ծա-տուր և մեկնել իբր «երկնատուր» (ծա = ցա = երկինք):

ճառը, որ «ցերեկ» նշանակում է «օր». հմ. «օր-ցերեկ» բացատրութիւնը։

Ցի արմատի երկրորդ քայքայուն մնացորդը պիտի լինէր տի, իսկ իր հնչեղ կշիռը դի։ Այս երկու արմատները տարբեր ածանցներով նշանակած են «օր». այսպէս՝ սլաւ. դի-նի — օր. ռուս. դի-ան-ի → դենի — օր։ Տի-աւ, չեշտուելով իբր տի՛-աւ, հետևորդ ա-ը սըզած է յ ուղղութեամբ և ձուլուած է նախորդ և նոյներագ ի-ին ու բառը դարձած է տիւ, որ նշանակում է «օր», «ցերեկ». հմ. «տիւ և դիշեր» բացատրութիւնը։ Տեսնելով թէ միևնոյն ցի արմատի քայքայուն ձևերը սի և տի նշանակում են «օր», մենք կարող ենք ասել, որ նրանց մայր ձևը -ցի- նոյնպէս նշանակած է «օր»։ Հին ցի-ար-ի կազմութիւնը հին տի՛աւ կազմութեան պէս չեշտուելով իբր ցի՛արի, պիտի տար ցի՛րի, որ -ակ ածանցով պիտի տար ցի՛րիակ և ամփոփուէր իբր ցի՛րեկ, որ մեր դաւառական ձևերից մէկն է և մինչև այսօր արտաբերւում է նոյն չեշտառութեամբ։

Բայց ի՞նչ է եղած «օր» բառի նախաւոր դաղափարը. ի՞նչ էր հասկանում հին մարդը իր տի, դի և ուրեմն ցի արմատի տակ։ Գիտունները ենթադրում են, որ երբեմն եղած է մի արմատ *dei, [1]) որ նշանակած է փայլել. այդ արմատն ունեցած է երկու ընդլայնում *eu և *en ածանցներով. *eu ածանցով այդ արմատը նշանակած է լուսաւոր երկինք, օր. իսկ *eu ընդլայնումով նոյն արմատը նշանակած է միմիայն «օր» և ոչ նաև «լուսաւոր երկինք»։ Ենթադրական *dei, արմատը մեր լուծումով ուրիշ բան չէ քան մի հին դի-ա (ե = իա)։ Թողնելով մի կողմ

---

[1]) Տես. A. Ernout և A. Meillet. Dict. etymol. de la langue latine. die's բառի տակ։

ընդլայնման գաղափարը, որ չատ ջուր կը վերցնի, մենք նկատի ունենանք այն հանդամանքը, որ հին dei, արմատը նշանակած է «լուսաւոր երկինք»։ Տեսանք թէ այդ արմատի հիմքն է դի, որ մեր լեզուում պիտի տար տի։ Միւս կողմից միևնոյն արմատը, որ նշանակած է «լուսաւոր երկինք», պիտի նշանակէր միաժամանակ և՛ լուսաւոր և՛ երկինք, նայած թէ խօսողը իր իմաստի չեշտը այս կից գաղափարներից որին էր զարկում. այսպէս է որ «մտիկ անել» նշանակում է և՛ նայել և՛ լսել. քանի որ լսողը միաժամանակ նայում է խօսողին՝ արևելահայը այդ համամանակ գործողութեան «նայել» բաժնի վրայ է դրած իր մտքի չեշտը և «մտիկ անել» ասելով՝ հասկանում է «նայել». ժողովրդական երգն ասում է՝

Մտիկ արա էն դշին
Ոտը դրել ա փշին.

Այսինքն՝ նայիր այն թռչունին, ոտը դրել է փուշի վրայ։ Իսկ արևմտահայը նոյն կցորդ գործողութեան «լսել» բաժնին է զարկած իր մտքի չեշտը և նրա համար «մտիկ անել» նշանակում է լսել։ 1) Արդ՝ քանի որ դի ‖ տի նշանակում են «երկինք, լուսաւոր և լուսաւոր երկինք», ուրեմն՝ տի-եզերք ուրիշ բան չէ քան «երկնքի եզերք», այսինքն հորիզոնի ծիրը, որ սահման է դնում տեսած աշխարհին։ Ու քանի որ

---

1) Իրօք «մտիկ անել» և «մտիկ տալ», իբր «լսել» ու «տեսնել», ածանցուած գաղափարներ են. այդ ասութեանց բուն իմաստն է «մի քիչ միտ տալ, մի փոքր միտ անել, մի միտ-իկ դարձնել» և ուրեմն ուշադիր լինել հմ. հին «մտադիր, մտադիւր». ասողին ուշադիրը և՛ նայում է և՛ լսում, որով «ուշադիր» գաղափարից ինքնին ածանցւում են «նայել» ու «լսել» գաղափարները։

հին մարդը ասելին չէր տեսնում քան թռչլատում էր հոգիների ծիրը, ուստի նրա համար «սիներկը» առաջած է «բովանդակ աշխարհ» իմաստը։ Բանի որ դի, տի արմատներն ունեն նաև «լուսատար» և «փայլուն» իմաստը, նրանց զուգահեռը, որ է սի պիտի ունենար միևնոյն կամ մերձաւոր իմաստ. այսպէս՝ ասս. սիյանիե նշանակում է փայլուն, փայլ, իսկ սի-յաս՝ — փայլիլ. և մենք տեսանք թէ նախատար դի արմատը նշանակած է «փայլուն»։ Նոյն սի արմատից *si-al → sel, որից յատն. sel-as – փայլուն, և գոթ. sel-a՛ma՛, ասս. sel-ē՛mē՛ – լուսին։ Այս նոյն արմատի ս ձայնը հանդէպ անցնելով պիտի ասր ին, և ալ աժանցով՝ ին-ա՛լ (որ պիտի ամփոփուէր իբր ին՛լ) որից կազմուած է գերմ. hell բառը, որ նշանակում է «լուսատար, պայծառ»։ Սրան զուգահեռ դի արմատից նոյն ալ աժանցով պիտի ծագէր դի-ալ, որ չէզոքանալով իբր դի՛-ալ, պիտի գտնուր դի՛լ. դի՛լ-ա վրացերէն նշանակում է «աստուած, աչք»։ իսկ այս արմատը լ-ի չեզոքացմամբ պիտի ասր դի՛ղ. դղ-ի՛, որ է մեր վազեմի *դիղ-ի՛ վրացերէն նշանակում է «օր»։

Նկատելով, որ ց = տս. միւս կողմից նկատելով որ դ-ն յաճախ է տ-ի և ս ն յաճախ է գ-ի՝ ցի արմատի յաճախական կշիռը պիտի լինէր ձի, (տսի ‖ դգի. սմփոխանելով = ցի ‖ ձի), որ քննարկելով պիտի ասր դի, որ տեսանք, և գի, որ պիտի նշանակէր «փայլուն, լուսատար». այս արմատի կրկնաւորը, որ է գիգի հանգէրէն նշանակում է «փայլուն, շողշողուն»։ Մանկտկան հին երգը, որ մեր ասլամանների նման արտասանում են թէ՛, և ար նկատելի է հեմանատարհան խորին հետք՝ ասում է.

Ա՛րև, ա՛րև, է՛կ, է՛կ,
Զիպի քարին վէր եկ։ [1])
Այսինքն փայլուն քարին էջը (վայր եկ)։

Նոյն արմատը զանազան կազմելով մեր գուսանները գի-աւ արմատին՝ պիտի ասէ ձի-աւ, որ քայքայումով մի կազմից պիտի ասէ դի-աւ միւս կազմից զի-աւ, որ իւր խառնվը ձուլելով իրր է՝ պիտի գառնային դեւ և զեւ։ Իսկ դի-աւ չնչաւորելով իրր դի՛աւ, պիտի ասէ դի՛ւ։ Մենք այս փոխանցումները անենում ենք մի կազմից յուն։ *Zeu՛s* բառի մէջ, որ «աստուածների հայր» նշանակելուց առաջ ունեցած է «երկինք» իմաստը [2]) և այդ բառի սեռականի մէջ, որ է *Dio՛s*, նախապէս *Di(F)o՛s*, այսինքն *Diwo՛s*. (պայմանական *F* (դիգամմա) դիրը դիտենում ենք յունարէնի նախնական w ձայնը, որ կորած է համարեա. հայոց լեզուի մէջ այդ w ձայնը հետևորդ o-ի հետ պիտի կազմէր wo, այսինքն մեր ո ձայնը. այնպէս որ դրելով «դիոս» մենք ունենք հաւատարիմ ենք յոյն անցեալին գան բուն իսկ յոյնը)։ *Zeu՛s*, որ նոյն է լիտ. *Zi-aws* և *Di(F)o՛s* նոյն է *Di-wo՛s*, որ առել է մի հին **Di՛-awos*, բայց չնչաւոր i-ի վրայ (*ի՛աւ → ի՛յս → ի՛ւ*). հմ. մեր դի ա՛ւ → դեւ. և յոյ.

---

[1]) Դ. Այսինքն ունի մի մանկական առասպել, որ նոյն երկասողով է պատմած. երկասողը իրր չէ. ժողովրդից է առնուած։

[2]) Մեր ժողովուրդը կանչում է. «է՛յ, կապոյտ (կապոյտ) աստուած», որ անհետ ենք հին երկինք-աստուծու վիճակումը։ Մարդս աչքին ու ձեռքերը երկինք ուղղելով այդպէս էր կանչում, երբ անհետ էր մի անթափար գոյն և խնդրում էր, որ «կապոյտ աստուածը» անհետ մեզ արեւուրի գառասպանը։

անա. *դի՛-աւ-աց → դի՛ւաց, *որ անցած է դիւա՛ց արտասանութեան: կարծում եմ այդպէս չհաւասարեց եղած է նաև յայն բառը: Իսկ թէ ինչ դեր խաղցած է ձին առասպելների յօրինման մէջ, բաւական է յիշել արև. առաւած Ապոլլոնին, որ իր հրեղէն ձիերով երևում է լուսաբացին: Այս խնդիրներին անցնելը մեզ կը չհղէր մեր նպատակից:

Տեսանք ցի արմատը և իր յծորդական կշիռը ձի: Նոյն ցի արմատին յծորդ է նաև ձի արմատը իբր մի բազագիր ձայն, որի հիմքի լ-ն տարբերացած է իբր քմային լ, իսկ երկրորդ բազագրիչը մի ևնդոյն ս ձայնն է, որով տսի → ցի և խսի → ձի: Ու քանի որ տի արմատը նշանակած է վայրկեան և ուրեմն՝ լուսատու, հանապազորեայ պայծառ, ուստի ձի-ած-ան պիտի նշանակէր ձի ածող, այսինքն ձի բերող. հմ. «ածան հաւ», որ նշանակում է հաւկիթի բերող. «ձու ածել», որ նշանակում է հաւկիթի բերել. «մատածել», որ է «մխա ածել», այսինքն մխա բերել ու նաև՝ յիշել, միտքը բերել: Հին մարդու համար մշուշը, ամպն ու անձրևը բերում էին չիմի ու խաւար. անձրևի դադարը և երկնքի պարզելը համազօր էր լոյսի և պայծառութեան երևալուն. ծիածանը համարուած է այդ լոյս բերողը: Փոխարկի, անձրևի և ամպրոպի չիմիր, որ մի կոխ է և մի ինոն ու բոն՝ ծիածանի երևումով խաղաղում է և պայրացած երկինքը հաչտւում է և հանդարտում. այս բարեհոտութից ծնունդ առած է Ս. Գրքի պատմութիւնը Նոյի, ծիածանի և Աստծու հաչտութեան մասին:

Մեր տեսութեամբ նախատառ տս խառնը, որ տափատած է իբր ց՝ երկ իր երկրորդ բազագրիչը հունչի վերածէլ՝ պիտի ծագէր տճ խառնը, որ ձուլուելով պիտի տար ր հնաձայնը ցի արմատին զուգահեռ պիտի ծագէր րի արմատ:

Մենք այս արմատը գտնում ենք վրաց Նաթելի բառի մէջ որ նշանակում է «լոյս» և որ պէտք է լուծել իբր Նա-թի-ալի, ուր Նա նշանակում է «վերին, երկինք» [1]) հմ. ռուս. na մասնիկը, որ նշանակում է «վրայ». իսկ ալի մի տարբերակն է արի բառի՝ լ-ր լծորդութեամբ, իսկ իա ձուլումով տուած են մի ե: Այս հաշուով (նա)թելի զուգահեռ է մեր ցերի(ակ) կազմութեան (թ ‖ ց. ր ‖ լ): Կարծում եմ այս արմատից է և վրաց. Թինաթին բառը, (հմ. սլաւ. dini — «օր») որ կնոջական անուն է և պիտի նշանակէր լուսաւոր, լուսերեսս, պայծառ, հմ. մեր կնոջական անունները Պայծառ, Շողեր:

Մենք ընդհատում ենք. նպատակ չունենք ոպառել բոլոր բառաձևերը, որոնց պարզ արմատն եղած է ցի-ն կամ նրա լծորդական համարժէքները՝ լինեն ձայլ, ինչպէս ծի. թէ քայքայուն՝ ինչպէս տի, դի, զի կամ սի: Իմ նպատակն էր լուծելով մեր ցորեկ և ցերեկ բառերը ցոյց տալ թէ ց-ն նախդիր չէ, այլ արմատին է պատկանում, որ է ցի և որ «ցորեկ» ու «ցերեկ» նոյնարմատ բառեր են, որ տարատեսակ դարձած են որոշ հնչական հոլովոյթի հետևանքով և տարբեր լեզուական միջավայրերի մէջ: Նրանց ցի արմատը երբեմն նշանակած է «լոյս, փայլ», և ուրեմն ցերեկ և ցորեկ նշանակած են «լոյս, փայլ տնող» և հետևապէս «օր»:

Այս արմատի բոլոր համարժէքները թուարկել, նրանց կցումով բազադրուած բոլոր բառաձևերը համախմբել և նրանց իմաստական կապերը ցուցադրել՝ երկար և համբերատար աշխատանքի գործ է. կարելի էր մի հատոր գրել այդ մասին: Մեր նպա-

---

1) Տես N. Marr et M. Brière. La langue georgienne, էջ 659.

տակը համհատ է եղած. երկու բառի վրայ կիրարկել մեր տեսութիւնը ձոյլ բաղաձայնների և ձոյլ ձայնաւորների մասին, միաժամանակ ցուցադրելով վերլուծական աշխատանքի մեր գործադրած եղանակը։[1])

Տանք այստեղ ամփոփ պատկերը մեր գտած հին բառակազմութիւնն.

արմատ. gի. gի-ա՛բ-ի → gի՛բի. gի՛բի-ակ → gի՛բիկ։
արմատ. gի. gի-ա՛ւ-արի → gա՛բի. gա՛բի-ակ → gա՛բիկ։
քայքայուն արմատ. (s)սի — սի. սի-ա՛բի — սա՛բի. սա՛բի-ակ — սա՛բիկ — սա՛բիկ։
քայքայուն արմատ s(ի)ի — տի. ա՛ի-աւ — ա՛ւ. — ա՛ւ-ա՛ւ — ա՛ւ. ‖ դև։

---

[1]) *Բայց և այնպէս սոյա մի քանի բառեր կան, առանց համեմատական վերլուծութեան. լատ. deus, որ մեր լուծումով այլ բան չէ քան diaus — Աստուած. diu՛ — մակբայ = վաղուց. հմ. մեր «առևէր» բայը, որ է տի-աւ-ել։ Անակ. devaՙh — Աստուած. հմ. մեր դի բառը, որի յոգ. սեռ. դից. և տի բառը, որ նշանակում է կեանք. հմ. դեռատի, ածանցուած է «օր» գաղափարից, որ նշանակում է նաև կեանք հմ. «օր ու արև չտեսայ», այսինքն կեանք ու արև։ Յուն. diՙos, ուր ի-ն երկար է. նշանակում է Զեւոսին = «երկնային», «աստուածային», ծագած է համեմատում *dit-ios մի ձևից որ կարծում եմ զուգահեռն է մի diwos ձևի ուր նախնական w ձայնը ազած է յ ուղղութեամբ և ձուլուած է նախորդ նոյնեհանգ ի-ին, երկարելով նրա տեղութիւնը, հմ. diՙus — աստուածային։ Լատ. dieՙs, որ նշանակում է օր. լատ. DiaՙNa, որ աստուածուհու անուն է և նախապէս նշանակած է «լուսաւոր»։ Իրլ. diu — օր, in-diu — այսօր. հմ. մեր տի. հայկ. հայկն։*

Բազմաստեակ կշռութիւնը տեսնել նաև E. Boisaq. Dict. etymol. de la langue grecque, համապատասխան բառերի տակ։

ՄԱՆՐՈՒՔ

5. ՀՈՌՈՄԵԼ [1]

Արտասահմանի մէջ լսած եմ, որ երգում են.

Հոռոմ հոռոմ հոռոմել ա եարս,

Վարդը ձեռին թոռոմել ա եարս.

և երգում են այսպէս, որովհետև չեն հասկանում երգի բառերն ու իմաստը։

Այդ երկտողը մի կրկնակ է, որ երգւում է ամեն երկտողից յետոյ։ Նրա երկրորդ տողի բուն ձևն է՝

Մարդի ձեռին թոռոմել ա եարս։

«Թոռոմել» նշանակում է թօշնել, թառամել. իսկ «մարդ» նշանակում է ամուսին։ Երգ յօրինողը կամ ինչպէս ասում են երգի «կապողն» ուզում է ասել թէ իր եարը ամուսնու ձեռքին թառամել է ինչպէս մի ծաղիկ։ Հետևապէս երգի հեղինակը մի երիտասարդ է, որ չի հասել իր մուրազին. նրա սիրածը գնացել է ուրիշ մարդու և հիմա հին սիրողը տեսնում է դառնութեամբ թէ իր եարը թառամել է մարդի ձեռին։ Աղջիկը կամովին թողած է իր շէկ եարին և գնացած ուրիշին, որի ձեռքին և թառամել է։ Երգն ասում է՝

Աղջի Հոռոմ, բաղդադին կապել ես.

Նշանուել ես՝ շէկ եարին խաբել ես.

Բաղդադին մետաքսէ ծաղկաւոր թաշկինակ է անձեռոցի մեծութեամբ, որ նշանուած աղջիկները երկտակելով եռանկիւն՝ կապում են գլխին։ Դա նոյնն է ինչ որ արևմտահայ կանանց եազման, բայց աւելի թանձր գործուած և թանկարժէք։ Նշանած աղաները նոյնը նոյն ձևով կապում են իրենց վզին, իսկ պարի

---

[1]) *Այս բառը չունի Հ. Աճառեանի Գաւառական բառարանը։*

ժամանակ պարբաչին, այսինքն պարի վարիչը մի ծայրից բռնած՝ ծածանում է իր ձեռքին։ Իր լրիւ անունն է «բաղդադի աղլուխ» (Թաչկինակ), այսինքն՝ Բաղդադից բերուած։ Խաբուած չէկ եարի խօսքերի մէջ ոչ միայն ցաւ կայ սիրուն եարի Թօշնելու հանդէպ, այլ և մի Թեթև քէն. — «Ինձ խաբեցիր ու գընացիր ուրիշի և ահա մարդիդ ձեռին Թոռոմել ես...»։

Բայց եարը Թոռոմել է, որովհետև հոռոմել է։ Ի՞նչ է նշանակում «հոռոմել» և ինչ է նշանակում «հոռոմ հոռոմ»։ Աղջկայ անունը Հոռոմ է, որ Հռիփսիմէ անուան ռամկական և կրճատ ձևն է։ Գիւղացին ասում է Հռիփսիմէին Հոռոմսիմ և կրճատում է իբր Հոռոմ կամ Բիմսօ։ Հոռոմ հոռոմ բառերը կարելի է հասկանալ իբր կոչական, այսինքն իբր Հո՛ռոմ, Հո՛ռոմ, բայց այն ժամանակ տողն իմաստ չէր ունենայ, քանի որ սիրածը նոյն ինքը Հոռոմն է և ոչ ուրիշ մէկը։ Այստեղ այդ բառերը յատուկ անուն չեն, այլ կրկնաւոր մակբայ և հոռոմել բայի արմատն են. ինչպէս ասում են «սև սև մրջիւններ», «մեծ մեծ խօսել» այնպէս և ասում են. «հոռոմ-հոռոմ հոռոմել»։

Կորկոտ պատրաստելու համար ցորենը նախ Թըրջում են ջրի մէջ, ուր հատիկներն ուռչում են, լցւում։ Այդ ուռչելուն է, որ ասում են «հոռոմել»։ Ցորենը ջրի մէջ հոռոմում է։ «Հոռոմ-հոռոմ հոռոմել» — նշանակում է լաւ լցուել, նկատելի չափով ուռչել։ Գիւղական չուրջպարին մասնակցում են ոչ միայն աղջիկներն ու երիտասարդները, այլ և նոր հարսներն ու նորափեսաները, յիշելով իրենց մի երկու տարի առաջուան աղափ (այսինքն չամուսնացած) վիճակը։ Երգը հնարոգի սուր աչքը կարօտով նայած է իր եարին ու նկատած է, որ նա յղի է արդէն և չունի իր երբեմնի Թարմութիւնը. աղջիկը «հոռոմել է»՝ ջրի մէջ Թրջուած ցորենի հատիկի նման։ Նա Թառամել է իր

մարդու ձեռին, ինչպէս ցորենի հատիկը կորցնում է իր փայլը ջրի մէջ և ուռչում, նոյն եարի այս վիճակին է, որ արտայայտում է երգի հեղինակը այնքան յաջող համեմատութեամբ և այնքան նրբօրէն։ Ուրեմն ոչ թէ՝

Վարդը ձեռին թոռոմել ա եարս,

որ ոչ մէկ իմաստ ունի իբր չարագրութիւն, այլ՝

Մարդի ձեռին թոռոմել ա եարս.

այսինքն յղանալով ուռել է և կորցրել իր թարմութիւնն ու բարեձևութիւնը։



Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են տասնըվեց պրակ Ա — ԺԶ

Ամէն պրակի գինն է 1 ֆրանք

ԳԻՆ 1 ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԺԷ.



1939

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՁԱՁՈՒ» Պէյրութ

0011 5

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒԾԱԳԻՐԸ

ՇԵՐՏ, ՇՈԼՏԻ

(Ե — Ո)

1218 թուին Վրաց Եպիփան կաթողիկոսը գնում է Անի, վրացիների նորաչէն եկեղեցին օծելու։ Անի ապրող վրացիները նրա դատաստանին են թողնում իրենց վէճը իրենց քահանաների հետ, որոնք հարստահարում էին ժողովուրդին մեծաքանակ ժամոց ու վարձ պահանջելով և բռնութեամբ գանձելով։ Կաթողիկոսը կարգադրում է վէճը ժողովուրդի օգտին և իր վճիռն արձանագրել տալիս եկեղեցու որմերի վրայ։ Այդ վճիռներից մէկն այն է, թէ ժողովուրդը այնուհետև իրրև ժամոց պէտք է տայ ոչ թէ կովի ամբողջ կաշին, այլ միայն մի շերտ։ Այս վրացերէն արձանագրութեան մէջ «շերտ» գաղափարը նիշելու համար կիրարկուած է «շոլտի» բառը, որ վրացերէն նշանակում է «կաշու երկար կտոր», ինչպէս մեկնում է վրացի բառագիր Սաբա Օրբելեանին իր բառգրքի մէջ։ Նպատակս է քննութեան առնել հայերէն «շերտ» և վրացերէն «շոլտի» բառերը՝ հիմնուելով մեր տեսութեանց վրայ։ [1])

---

[1]) Տես Պրոֆ. Դ-ր. Իվ. Ջաւախիշվիլի.— Նիւթեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմութեան համար. թարգ. պրոֆ. Է. Մելիքսէթ-բեկի. 1937. Երևան, էջ 36, 38.

Վրաց «չոլտի» բառը մենք տառադարձած ենք մեր n գրով։ Վրացին մէկ գիր ունի օ երանգով ձայնը նիշելու համար, թէև այդ օ-ն բարբառների մէջ և բառասկզբին հնչում է wo. այսպէս բազմիցս լսած եմ, որ Իմերէլներն արտաբերում են worի այն բառը, որին գրական լեզուն և Քարթուէլը ասում են orի (երկու)։ Բառամիջին օ-ն միշտ o է, ինչպէս մեր լեզուում, հմ. ns (վօտ) և կոթ (կօթ)։ Ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք վրաց «չոլտի» բառի օ-ն մի լերկացած n է, մեր կոթ բառի n-ի նման։

Շոլտի բառն ունի և՛ Թիֆլիսի հայոց բարբառը, ուր նա նշանակում է «մտրակ»։ Բայց մտրակները տարբեր կազմութիւն ունեն։ Ռուսի «կնուտ»ը նոյնպէս մտրակ է, բայց «չոլտի» չէ, եթէ նայինք նրա կազմութեան։ «Շոլտի» ասում են ա՛յն մտրակին, որի ծածանուտ մասը եղան կաշու մի բարակ երիզ է՝ մի մատ լայնութեամբ և տարբեր երկարութեամբ։ Գրաստ կամ երիվար քշելու «չոլտին»՝ երկար երիզ ունի, իսկ հոլ դարձնող «չոլտին»՝ կարճ երիզ, որ շատ յաճախ ոչ թէ եղան, այլ ոչխարի կամ այծի կաշուց են կտրում։ Այսպիսով վրաց բառադրի բացատրութիւնը պէտք է լրացնել ու ճշտել. «չոլտին» ոչ միայն կաշու «երկար» կտոր է, այլ և նեղ կտոր, այսինքն մի երիզ։ Մտրակի կաշին մի մատնաչափ լայնութիւն ունի, որի ծայրին երբեմն կցում են աւելի հաստ կաշու մի եռանկիւնի կտոր, որի գագաթը կարուած է կաշուէ նեղ երիզի ծայրին, իսկ մակերեսը լայնօրէն զարկում է գրաստի կողին ու գաւակին։ Եղան կաշին կտրում են երկայնքով և մօտ մի թաթի լայնութեամբ և նրանից տրեխ են շինում։ Այդ լայնութեամբ կաշու շերտն է, որ իբր ժամոց պիտի ըստանային Անի քաղաքի վրացի քահանաները։ Նոյն տուրքն եղած է և Վրաստանում և կոչուած է «չոլ-

տի-քալամանի», այսինքն «շերտ-տրեխ», որ ասել է՝ մի տրխացու, մի զոյգ տրեխ պատրաստելու կաշի։ Այսպիսով «շոլտին» մի կաշուէ երիզ է, աւելի կամ պակաս լայնութեամբ և երկարութեամբ և Թիֆլիսեցի հայը մտրակին «շոլտի» ասելով, նկատի ունեցած է ոչ թէ մտրակի կոթը, այլ նրա կաշուէ երիզը։

Մեր «շերտ» բառը, որի սեռականն է «շերտի», նշանակում է ջարդած փայտ, կտոր, պատառ, ցանկի ցից, ցանկ. «շերտակոտոր առնել» նշանակում է ջարդել, կոտրել. «շերտաւոր» նշանակում է տապարաւոր, տիգաւոր. «շերտափակ» նշանակում է ցցափակ։ Իսկ այսօրուան հայի համար «շերտը» մի խաւ է, խաւի մի կտոր. իր մէջ ունի հարթութեան և բարակութեան գաղափարը. հմ. երկրի շերտերը, մի շերտ հաց։ Այս ըմբռնումը նո՞ր է թէ հին։ Տեսանք թէ «շերտ» նշանակում է ջարդած փայտ, կտոր, պատառ, բայց ի՞նչպէս ջարդած, ի՞նչ տեսակ կտոր կամ պատառ։ Միևնոյն գերանը եթէ երկայնքին և բարակ սղոցենք՝ կ՚ըստանանք շերտեր, որոնց ասում են «տախտակ», իսկ եթէ լայնքին սղոցենք՝ կ՚ըստանանք գերանի հաստ կտորներ. եթէ լայնքին սղոցենք բայց բարակ-բարակ՝ կ՚ըստանանք պնակաձև շերտեր։ Թէ՛ տախտակը և թէ՛ պնակաձև կտրուածքը «շերտեր» են և «կտորներ», «պատառներ», բայց նրանք նոյն չեն ոչ իրենց ձևով և ոչ նշանակութեամբ։ Եթէ գերանը իր երկայնքին հաստ-հաստ և խաչաձև սղոցենք կ՚ըստանանք աւելի կամ պակաս հաստութեամբ ձողեր, որ նոյնպէս «կտորներ» ու «պատառներ» են և եթէ կ՚ուղէք՝ նաև շերտեր են։ Արդ՝ այս երկայնքին և երիզաձև կտրուածքն է, որ կոչուած է «շերտ» և ոչ թէ լայնքին ու հաստ կտրուածքը։ Նոյն մտածումն է, որ տեսնում ենք «շերտաւոր» բառի մէջ, որ ինչպէս տեսանք նշանակում է «տապարաւոր»։ Այստեղ

նկատի առնուած է տապարի կամ կացնի թէ՛ կոթը և թէ մետաղէ գլուխը, որ մի «շերտ» է, այսինքն մետաղի մի տափակ կտոր։ Նոյն բառը իր «տիգաւոր» նշանակութեամբ մի կողմից նկատի առած է տէգի մետաղէ գլուխը, որ մի սրածայր շերտ է և տէգի կոթը, որ մի երկար ձող է, փայտի մի երկար շերտ։ Կարծում եմ աւելի հին շրջանին, երբ մետաղ չկար, փայտէ երկար ու սրածայր ձողն էր շերտը, այսինքն «բիրը», մեր գիւղացու «բհիրը»։ Բայց երբ այդ ձողի ծայրին մետաղ անցրին՝ դարձաւ տէգ, որ գիտունները համարում են պարսկ. թիղ բառը և որ մենք ունենք թեղ ձևով և «շեղբ» նշանակութեամբ. այս անունն ունի հիւսնի հարթիչի (ռանդայի) մետաղէ բերանը։ Այսպիսով կաշուց կտրած երկար ու նեղ երիզը և երկար փայտէ նեղ ձողը միապէս համարուած են «շերտ»։ Սոյլերի և պայթուցիկների լծորդութեամբ (շ-ժ, տ-դ) մեր բառի կշիռն է ռուս. ժերդ, որ նշանակում է բիր, ցից և կիրարկւում է նոյն նպատակով իբր ցանկապատի ցից, ձող ևայլն։ Նոյն բառը նշանակում է նաև երկաթէ երիզ, որ ծառայում է իբր յեցան՝ ծանրութիւն բարձրացնելու համար։ Այս նոյն արմատն երևում է նաև ժորդ ձևով. հմ. ռուս. ժորդ-կա, որ նոյն է թէ ժերդ-կա և նշանակում է ձողիկ։ Ձևի և նշանակութեան այս մերձեցումը ցոյց է տալիս, որ մեր «շերտը» իրօք նշանակած է երկար ձող, բիր, ցից։

Տեսանք թէ վրացերէն «շոլտի» նշանակում է կաշուէ լայն երիզ, որից տրեխ են շինում։ Սոյլերի և նայերի լծորդութեամբ (շ-զ, լ-ր), այս բառի կշիռն եմ համարում մեր զորտի բառը, որ նշանակում է կանանց վարտիկի այն չորս երիզները, որով կանայք իրենց վարտիկը կապում են առջևից և յետևից փորին ու մէջքին։ Այսպիսով հայ. շերտ և ռուս. ժեր և վրաց. շոլտի և հայ. զորտի միևնոյն բառերն են,

որ տարբերացած են իրենց լծորդ ձայներով։

Բայց մենք ունենք զոլ բառը, որ նշանակում է շերտ։ Եղան կաշին կտրում են զոլ-զոլ, այսինքն՝ շերտ-շերտ՝ տրեխ շինելու համար։ Կերպասներ կան, որ ծաղկաւոր են, կան նաև, որ զոլաւոր են, այսինքն զոլ-զոլ են, տարբեր գոյնի բայց երիզաձև երկար ակօսներ ունեն իբր նկար։ Յովազի մորթին զոլ-զոլ է, այսինքն՝ երիզաձև, շերտաձև զուգադրումներ ունի սև ու ճերմակին մօտ գոյնով։ Զորտի ստանալու համար քաթանը կտրում են զոլ-զոլ, այսինքն՝ շերտ-շերտ, և յետոյ եզերքներն իրար բերելով՝ կարում են և ստանում երկուտակ մի երիզ, որ ամուր է իբր կապ։ Մտրակի հարուածի ուժը ցոյց տալու համար ասում են. «մէջքի զոլը հանեց», այսինքն իր զարկածի երկարութեամբ մէջքի մորթը երիզաձև դուրս հանեց, ինչպէս հանում են եզան կաշու զոլը տրեխի համար։ Այս արմատից է կազմուած զորտի բառն իբր զոր-տի, որի զոր արմատը կշիռն է զոլ բառի՝ ր-լ լծորդութեան հիման վրայ։ Նոյն հիմքով միևնոյն արմատն է նաև վրաց շոլտի բառի մէջ, որ միևնոյն կազմութիւնն ունի իբր շոլ-տի (շ-զ)։ Մինչև առիթ ունենամ մանրամասն խօսելու մեր քերականական թուի մասին՝ արժամապէս կարող ենք ընդունել, որ զոր-տի բառի մէջ տի վախճանը յոգնակի թուի նշան է, հմ. մանկ-տի, կնկ-տի (կանայք) և այլն և ուրեմն զորտի նշանակում է զոր-եր, այսինքն՝ զոլ-եր, որ նոյն է թէ երիզներ։ Եւ իսկապէս զորտին երիզ է. իր բարբառական յոգնակին է զորտի-ք. հմ. մանկտիք, ոսկերոտիք և այլն։ Երիզ է նաև շոլտի-մտրակը։ Աղքատ երեխաները, երբ կաշի չեն գտնում, հին վարտիկի զորտիներ են կապում փայտի ծայրին և դրանով ըստանում են շոլտի. այսինքն՝ մտրակ, իրենց հոլը

դարձնելու համար։ Այս հաշուով պէտք է, որ յոգնակի իմաստ ունենար և ոլ-ն բառը և ուրիշն ոլն նշանակէր երիվարներ։

Այս խնդրի քննութեան մէջ չեմ մտնում՝ պահելով ուրիշ առիթի։ Թէ՛ ոլն և թէ զորն բառերը ունեն լոյն իմաստը լs և rs, որոնց միջև՝ մեր տեսութեամբ՝ ազատ ու չքացած է մի վաղեմի ձայնաւոր, որի արձագանքը նոյնպէս յետաձգում եմ, նկատելով, որ նման ձևերն ինքնին իրենց ոլն և զորն կերպարանքով լիովին կշռում են իրար։

Ինդիր է հիմա թէ ebrs և ոլն բառերը, որ երկուսն էլ կարուածք են նշանակում, արեւ ծագողական առնչութիւն ունի՞ն իրար հետ։ Սրանց կարող էինք կցել և ուրս բառի երկու տարբերակները — ժերդ և ժորդ, որոնցից մէկը ebrն կշիռն է, միւսը ոլտու կշիռը (ե-ժ)։ Բազմիցս առիթ ունեցայ ասելու, թէ մեր տեսութեամբ ո ձայնը մի վաղեմի իաւ է, որ հնչուած է իօ և անցած է ւօ հնչման, որ մեր ո՞ն է։ Յարաբերով տի ձևարար վախճանը՝ ոլտի բառից կը մնայ ոլ արմատը, որի ո՞ն լուծելով իր իաւ՝ մենք կ՚ստանանք ելաւլ։ Այստեղ մենք ունենք ել լոյն հատուածը, որի մէջ ազատ ու չքացած է մի հին ա։ Եթէ այդ չքացած ձայնը լինէր ի, բառը կ՚ամփոփուէր ոչ թէ իբր ոլ, այլ իբր ուլ (իաւի → ւօի → ւօւ → ու)։ Այսպիսով այդ արմատի աւելի հին ձևն եղած է ելա՛ւալ, որ կարող ենք արտնել իբր ելաւ-ալ և տեսնել, որ բառի հին արմատն է ելաւ։ Լեզուական տարբեր միջավայրերի մէջ այս արմատը կարող էր ունենալ և ունեցած է տարբեր չնչառութիւն և ձայնների ամփոփում. վրացերէնի մէջ նա չնչառուած է ել-ա՛ւ, բայց ամփոփած է աւ-ն իբր օ և հնչելով ելօ՝ անցած է ւօ հնչման, որ է ոլ (ոլ-լ)։ Նոյն չնչառով բայց տարբեր ամփոփումով այսինքն կարճ ի-ին և

ա-ն ձուլելով՝ միևնոյն արմատը պիտի դառնար շեւ (իա-ե). իսկ շեշտելով ոչ թէ ա-ը, այլ ի-ն իբր շի՛աւ՝ շեշտից յետոյ եկող ա-ը պիտի յովտանար և ձուլուելով նախորդ նոյներանգ ի-ին, բառը պիտի դառնար շի՛ւ, ա՛յս ծիրով՝ շի՛աւ → շի՛յւ → շի՛ւ։ Այստեղ ի-ն պիտի երկարէր ստացական երկարութեամբ, որ յետագային կարող էր կարճանալ, ինչպէս շատ լեզուների և մեր լեզուին պատահած է։ Արդ՝ շիւ նշանակում է թարմ, երկար և ուղղաձիգ ոստ, բարունակ, որ երբ մեծանում ու հաստանում է և կտրուելով ու կեղևահան լինելով չորանում՝ դառնում է բիր, ցից, այսինքն շերտ՝ հին իմաստով և ՝ժերդ՝ ռուսերէն։ Ժողովրդական երգն ասում է.

Մեր բաղումը բազմանչի՝.
Շիւ կայ շուի նման չի.
Թոբուն-թոբուն դուրս եկան՝
Մէկն իմ եարի նման չի։

Երգ հնարող աղջիկն ուզում է ասել. այգու մէջ շատ շիւեր կան, այսինքն ուղիղ ու թարմ բարունակներ, բայց իրար նման չեն, ինչպէս խումբ-խումբ դուրս եկողների մէջ շատ երիտասարդներ կան թարմ և ուղղաձիգ, բայց նման չեն իմ սիրածին. իմ բարունակին (թոբուն = խումբ. հմ. ռուս տաբուն = ձիերի երամակ)։ Երգի աղաջին տողը ոմանց կարող է պնիմաստ և անտեղի երևալ, ուստի ներում եմ ինձ վայրկենական մի շեղում իմ նիւթից։ Աղջիկը սիրում է իրենց այգեպանին, բազմանչուն. ինքն ունևոր է, քանի որ յատուկ այգեպան ունեն։ Այգեպանութիւնը ծառայութիւն է և այգետիրոջ աղջկան վայել չէ սիրել ու կին դնալ իրենց բազմանչուն։ Բայց թէև տղան այգեպան է, սակայն շիւերն իրար նման չեն. կան այգեպաններ, որ այգետէրի հաւասար են։ Ահա խմբերով այդուց դուրս են գալիս երիտասարդները,

բայց ոչ մէկը նման չէ իր սերած այգեպանին, թէև դիւրով ազգակայ գասից են և նրանց այգին են մաած իբր հաւասար և համարժէք ունեցոր տան գաւակներ։ Առաջին երկու տոգի խնամքը լիովին կը պարզուի և թէ որձակով ասենք. «թէև իմ հարը մեր բազումը այգեպան է՝ բայց չիւ կայ, որ չաւի նման չէ, այլ պէս և իմ հարը սովորական պարզ այգեպան չէ»։ հետևապէս անհայիլ ու ամօթ չէ սիրել ա՛յգեհասակ այգեպանին։ Փոգովուրդը առնչծագործում է դերագոյն համարդրութեամբ, ուսոի տոգերը յաճախ թեւում են անկապ. պէտք է խորամուխ լինել՝ գտնելու համար մոքի զեղչած կապերը։

Տեսանք թէ ծոյի և զոհի բառերի մէջ տի մասնիկը մի ձևաբոր ածանց է։ Այդ նոյն ածանցը պէտք է ունենար և մեր ծհrs բառը, որի սեռականն է ծհrsու քանի որ մեր սեռութեամբ եզ. սեռականը մեր հին ուղղականն է միայն տարրեր չնչաւորութեամբ, ուսոի ծհrsի ձևը մեր հին ուղղականն է, որ չնչաւած է իբր ծե՛rsի և այդ իսկ պատճառով ազած ու կորած է նրա ի վախճանը, որ երևում է սեռականի մէջ անկորուստ, որովհետև չնչուն իր վրան է.— ծհrsի՛։ Այդ հին ուղղականը արտնելով իբր ծհ՛r-տի, մենք կը տեսնենք միևնոյն հին ածանցը տի, որ ունեն ծո՛լ-տի և զո՛r-տի բառերը։ Տեսնում ենք նաև մի արմատ-ծհr-, որ պիտի լծորդը լինի ծոr, ծոլ, զոլ լծորդ արմատներին։ Լուծելով ծհr արմատի ե՞ն իբր մի վազեմի իա, որի ձուլումն է այդ ե՞ը, մենք կ՚ըստանանք ծիար և արտնելով իբր ծի-ար՝ կը տեսնենք թէ այդ բառերի բուն արմատն է ծի, որ ունեցած է իր լծորդ կչիոը զի։ Այս հիման վրայ մեր գտած ձևը, որ էր ծիաւ ինքնին կ՚երևայ իբր մի չատ հին ածանցաւոր կազմութիւն, իբր մի ծի-աւ, ուր ծի՞ն հին արմատ է, իսկ աւ մի հին ածանց, որին ասիթ ունեցանք մի

քանի անգամ հանդիպելու։ Զուգադրենք հիմա մեր վերլուծութեան վերջին արդիւնքները.

ϲbrs(ի) ← ϲի-ա՛r-sի.

ϲnլsի ← ϲի-ա՛ւ-ալ-sի.

Այս ցուցադրութիւնից պարզ երևում է, որ այս բառերի բուն արմատը նոյն է, որ է ϲի. որ նրանց երկու յաջորդական ածանցները նոյն են և գալիս են նոյն կարգով ար-sի ‖ ալ-sի. (լ-ը լծորդ է r-ին). որ այդ երկու բառերն իրարից տարբերւում են աւ ածանցով, որ անմիջապէս գալիս է արմատից յետոյ։ Այս աւ ածանցն է պատճառ, որ մենք ունենք մի կողմից ϲbrs միւս կողմից ϲnլs։ Արմատի և ածանցների այս նոյնութիւնն է պատճառ, որ այդ բառերը նոյնիմաստ են և նրանցից ածանցուած ձևերը մերձիմաստ են։ Նկատի ունենալով այս լուծումներն ու հանգիտութիւնները մենք կարող ենք ասել, որ վրացու ο-ն ϲnլsի բառի մէջ իրօք մի հին և լերկացած n է, այսինքն մի հին իաւ։

Մեր տեսութեամբ միևնոյն արմատների լծորդական կշիռները պէտք է կամ նոյնիմաստ կամ մերձիմաստ լինեն. եթէ նոյնիմաստ են՝ ապա փոխառութիւն են լեզուից լեզու կամ բարբառից բարբառ, որովհետև եթէ մի լեզու կամ մի բարբառ ϲnլsի բառին լծորդապէս ասում էր qnrsի և նոյն բանն էր հասկանում, կարիք չունէր իր q-ն ϲ-ի փոխելու և մի նոր բառ հնարելու։ Իսկ եթէ այդ բառերը մերձիմաստ են՝ ապա նրանք կարող են թէ՛ փոխառութիւն լինել և թէ բնաբոյս։ Եթէ փոխառութիւն են, ապա մտած են փոխառու լեզուի մէջ իրենց ա՛յն հնչական կերպարանքով և տարիմաստ արժէքով, որ ստացած են իրենց բնիկ բարբառի մէջ. իսկ եթէ բնաբոյս են, այսինքն արդիւք են արտաբերական մի արկածի, ինչպէս chaise բառը chaire բառի հանդէպ (ԲՅ. Ե.

71) այն ժամանակ նրանք տարիմաստ դարձած ՝ն այն նո՛յն լեզուի և բարբառի մէջ, որի բնաբոյս ծընունդն են այդ տարբեր ձևերը։

Դանելով շերտի և շոլտի ձևերի առընչութիւնը հետևապէս շեր և շոլ արմատների ազգակցութիւնը, մենք կարող ենք որոնել նրանց լծորդական կշիռները մեր և օտար լեզուների մէջ և աշխատել ու գըտնել իմաստական այն առընչութիւնները, որով նրանք տարիմաստ դարձած են, եթէ տարիմաստ լինեն։

Տեսանք թէ շեր մի հին շիար է, որ շեշտուելով իբր շի՛ար պիտի դառնար շիր։ Այս արմատը ձայնաւորի ուրիշ փոփոխութիւն չէր կարող ունենալ, որովհետև իա խումբը կամ ե կարող է տալ կամ ի; նայելով իր շեշտին։ Միւս արմատը, որ է շոլ, լուծելով իբր շիաւլ, կարող ենք ասել, որ իաւ խումբը կարող էր ունենալ բազմատեսակ ճակատագիր։ Դրանցից մէկն այն է, որ ունեցած է արդէն այդ խումբը վրացերէնի մէջ, դառնալով ո, այս ծիրով. իաւ, իօ → ւօ → ո։ Նոյն խումբի ի-ն և ա-ն իրար ձուլուելով կարող էին տալ եւ, այս ծիրով. իաւ → եւ։ Նոյն խումբը կարող էր տալ յօ իր ի-ն ոգելով ո՛չ թէ ւ, այլ յ ուղղութեամբ այս ծիրով. իաւ → իօ → յօ։ Միևնոյն իաւ խումբը շեշտելով իր ի-ն, պիտի տար իւ, յովտի վերածելով և նախորդ ի-ին ձուլելով իր ա-ը՝ այս ծիրով. ի՛աւ → ի՛՛յւ → ի՛՛ւ։ Այս կազմութեան մէջ ի-ն պիտի երկարէր ստացապէս (յետագային կարող էր կարճանալ)։ Այս տարբերացումները կարող էին պատահել միեւնոյն բարբառի մէջ. այն ժամանակ նրանց իմաստն ու արժէքը պէտք է տարբեր լինէր իրենց տարատեսակ շեշտի հետևանքով. բայց շատ աւելի հաւանական է, որ նրանք տարատեսակ դառնային տարբեր լեզուական միջավայրերի մէջ թէև հետագային կարող էին միևնոյն

լեզուի մէջ երևալ, բայց ոչ իբր քնարերգ կազմուածքներ, այլ իբր փոխառութիւններ։

Այսպիսով ով արմատը մեզ կարող է երևալ իբր եիւլ, եե՛լ, ելօլ. իսկ եիւլ արմատը կարող էր երևալ նաև իբր եիլ, եիէ հին եիաւլ արմատի ետ զօրեղացած ժամանակ մ՚չ մնայն իր անմիջական յաջորդ ա-ը ազէր յ ուղղութեամբ, այլ և նրանից ետոյ սկսող և յ-ին լծորդ ձայնը թևքէր նոյն ուղղութեամբ այս ձևով. ի՛աւ → ի՛յ՚յ → ի՛՛ → ի՛՛։

Սրանք են այն բոլոր հնարաւոր ձևերը, որ չեշտի կամ տարաստեսակ ոճերի հետևանքով կարող էին առաջանալ եիր և ով արմատների ձայնաւոր տարրերը, այսինքն՝ ի-ն ու ո-ն։

Բայց այդ բառերն ունեն և բազաձայն տարրեր — ե- ր, լ. իսկ այս ձայնների ունեն իրենց լծորդական կշիռները. այսպէս ե-ին լծորդ են ս, ժ, հ, զ. լ-ին լծորդ են ր և ղ. որով այս երկու արմատները մեզ կարող են երևալ հետևեալ ձևերով՝ մեր կամ քոյր լեզուների մէջ.

եիր — հեր, զեր, սեր, ժեր. հէլ, զէլ, սէլ, ժէլ. (ի՛աւ — ի՛՛յ — ի՛՛ր)
հիր, զիր, սիր, ժիր. հիլ, զիլ, սիլ, ժիլ, (ի՛աւ — ի՛՛յ — ի՛՛ր)
հեղ. զեղ, սեղ, ժեղ. հիղ, զիղ, սիղ, ժիղ. (լ-ղ)
ովլ — հոլ, զոլ, սոլ, ժոլ. հոր, զոր, սոր, ժոր. (լ-ղ)։

Նոյն ձևերը նաև իւ, եւ, յօ ձայնաւոր տարրով և ղ բազաձայնով։

Նոյն բառի ծայրանիզ ափոփումը իբր եիլ (ե՛աւլ + ե՛՛յլ + ե՛՛լ) պիտի նոյնանար եիր արմատի եիլ տարրերակի եիլ արտարերութեան հետ. իսկ իր նախաստաւոր կերպարանքը, որ ինչպէս տեսանք ե-ա՛ւ-ալ էր, եիէ չեշտէր իբր եիաւ՛լ, պիտի տար աւա՛խտումը, որ մեր տեսութեամբ պիտի ամփոփուէր իբր ժի երկար ա՛ (ՔՑ. ԺԴ, 24) և քառն իր արտաքին ձևով նոյնանար եիր արմատի եիլ տարրերակի հետ այս ձևով. եիաւ՛լ + եիաա՛լ + եիա՛լ, որ պիտի

տար շեալ և ամփոփուէր իբր շել։

Օտար լեզուներին հմուտ մէկը կարող է որոնել ու գտնել այս արմատների ներկայութիւնը օտար բառերի մէջ և աշխատել որոշելու այն անցումները, որով բառերի նիշած գաղափարները ածանցուած են մէկը միւսից [1]։ Մենք կը գոհանանք մի երկու մեկնութեամբ և մերձեցումով։

Շոլ արմատի r-ով կշիռն է շոր, որ նշանակում է հագուստ։ Տակի շոր նշանակում է շապիկ ու վարտիկ։ Թաթաշոր և ոտաշոր նշանակում են այն երիզաձև կտորները, որով փաթաթում են երեխայի ձեռն ու ոտը և բարուրելով՝ դնում են օրօրոցի մէջ։ Լսած եմ, որ Պոլսեցի տիկինները անյարմար են զգում իրենց, երբ Կովկասցի կանանց բերնից լսում են. «շորս նեղ է. շորս լաւ չեն կարած» և նման խօսքեր, որովհետև Պոլսեցի կնոջ համար շոր-ն այն երիզաձև լաթն է, որ գործ է ածում դաշտանի օրերին։ Կարող ենք մակաբերել, որ շորն իբր հագուստ շատ հին ժամանակ այլ բան չէ եղած, քան հիւսուածքի երկու երիզաձև կտոր՝ պարկաձև կցուած իրար։ Այրաբնակ մարդու թողած որմանկարների մէջ կանայք այդ տեսակ պարկեր են հագած։

Նոյն շոլ արմատի ղ-ով կշիռն է շող։ Ինչո՞ւ պէտք է արևի ճառագայթը «շող» կոչուէր և ո՞րն է մտքի այն ընթացքը որով շոլ արմատի լծորդական կշռին տուած է «շող» իմաստը։ Եւ ի՞նչ է եղած «շող»

---

[1]) Օտար կշիռներից յիշատակեմ ռուս. շո՛ռ-ը (յոգնակի), որ նշա՛ ա-ում է բեռնակիր ձիու սարք՝ առանց վզնոցի. այդ սարքը կաշուէ երկար ու բարակ երիզներ են իրար կցուած։ Նոյն բառը նշանակում է և մարգարտաշար երիզ, որ կանանց քունքերիս այտի վրայով իջնում է վար։

բառի բուն և հին իմաստը. առ հասարակ ճառագա՞յթ, թէ մի որոշ տեսակի ճառագայթ։ Կարծում եմ, որոշ տեսակի։ Հերթիկից ներս ընկած լոյսը սովորաբար կազմում է երիզներ, որոնց մէջ կարելի է տեսնել փոշու հատիկների խաղը։ Նոյնը կարող ենք ասել և այրերի մէջ մտած լոյսի շողերի մասին։ Վերջալուսին և արշալուսին արևի շողերը կազմում են լայնացող երիզներ, որ բռնում են երկնքի երեսը. այդ երիզները չատ որոշ ու պայծառ երևում են մանաւանդ այն ժամանակ, երբ նրանց նպաստում են ամպի խմբերը։ Լոյսի այս երիզներն են, կարծում եմ, որ կոչուած են ծով։ այս երիզներին նման են և կաշուէ երիզները, բայց ոչ իրր լուսաւոր չառաւիղներ, այլ իրր ներքեւ, երիզներ։ Համեմատութեան նպատը «երիզ» գաղափարն է, երիզաձև լինելու հանգամանքը։ Լոյսի այդ երիզները ծագում են մի կենդրոնից և փռուում են երկնքի երեսին միշտ աւելի լայն շրջանակ գրկելով։ Ներանք տարածւում են ծով։ որ կարող ենք համարել ծեր արմատի ղ-ով տարբերակը։ Այստեղ նկատի առնուած է ոչ թէ լոյսն ու նրա երիզաձև ճառագայթումը, այլ երիզների չեզոքիւնը։ Սրա ընկերն է մեր ծիլ բառը, որ նշանակում է «չեզ» ու նաև չիլ։ նայող, հմ. ծլդիկ, ուր տեսնում ենք ծիլ արմատը։ Ծլդիկ նշանակում է աչքիկը չեզ մարդ; որի աչքերը ուղիղ չեն նայում, այլ չեզուած են աջ ու ձախ։ Ծիլ-արմատի լծորդական կշիռը պիտի լինէր *ծելդ, (ե-ի), իսկ սրա լծորդական կշիռը պիտի լինէր ծեռs (լ-ր, s-դ), որ ինչպէս տեսանք նշանակած է երիզաձև կտրած ուռենին կամ ոսկի ճառագայթաձև բանալի։ Նակներ են արձակում, որ միևնոյն կենդրոնից չլինի բայց ձիգ բարձրանում են վեր։ Այսպէս են եղկայր ձակնահար կաղնիները, հացիները եւայլն։ Ոչ թափուած է խուլ անատոնիում տեսած կը լինի։ Անմա-

նուիրեան այս եզրով է, որ ehrեր «ցիւղ» է համարուած, այսինքն ձիգ ու երկար բայց ամրացած բարուձակ։ Շերտի կշիռը՝ ոոյսի ձևով մեր գիւղացին հասկանում է ոչ միայն իբր երիզ, այլ և իբր ցից՝ իր անպատկառ խօսքի մէջ, որ ասում է նորապսակ աղջկայ մասին. «Մէկ էլ է՛ն ա տեսնում՝ չոլումն փորն ընկաւ»։

Հին տէզերը, երբ մետաղ չկար, սրածայր բիրեր էին անշուշտ, այսինքն՝ հին իմաստով ehrեր, ցիւղեր։ Եւ արևի երիզաձև չողերը նման են մի խորտակուած ծառաբունից թարմ ու ձիգ երկարող բարուձակների։ Այսպէս է որ ehr, որ մի հին ehr՛աւ է (չնչան ի-ի վրայ) նոյնանում է իբր արմատական կազմութիւն մի ևնդունի ehի արմատն ունեցող բառերի հետ, որ երիզ են նշանակում։

Մի ևնդունի ehեղ արմատից է, կարծում եմ և մեր ehեղբ բառը, որ նշանակում է առուի, գաշտի և դաշտակի մետաղէ մասը։ Այդ բառը պէտք է արտնել իբր ehեղ-բ։ Այդ ձևի մէջ նա մի հին գործիական է. հմ. ձեռ-բ (=ականել)։ Ehեղբը մետաղ է, բայց ի՞նչ տեսակ։ Նախ բոլոր չեզրերը երիզաձև են, այսինքն՝ տափակ, նեղ ու երկար չերտեր են։ Բայց այդ ժամանակ պէտք չկար գործիական ձև կերարկելու. ehեղ-ն ինքնին երիզ էր նշանակում։ Ինձ թւում է, որ ehեղբ կոչուած է չեզրի մի nrոc տեսակը, որ հետագային ընդհանրացած է բոլոր չեզրերի համար իբր հասարակ անուն, երբ խօսողի գիտակցութիւնը գագրած է ehեղբ ձևն ըմբռնել իբր գործիական հոլով. ճիշտ այսօրուան հայի նման, որոնցից շատ քիչերը գիտեն թէ ձեռբ գործիական հոլով է և նշանակում է «ձեռքով»։ Հնադիտական պեղումները երեան հանած են բազմատեսակ հին մետաղէ զէնքեր, որոնց շատերի կոթերը փթած ու չքացած են և մնացած են չեզրերը միայն։ Այդ երիզաձև մետաղները կա՛մ հարթ երես ունեն, կամ

վերից վար ակօսաձև երիզներ՝ մէկ կամ երեք հատ, որ ձգւում են իրար մօտ։ Ա դպէս են և Կովկասի այսօրուան դաշոյնները և սուրերն ու թուրերը։ Կեռ սուրերն անգամ ունեն այդ երիզաձև փոսացումները, որ գնում են բութ կողմին մօտ ու զուգահեռ՝ եթէ սուրը երկսայրի չէ և սուրի մէջտեղից՝ եթէ երկսայրի է։ Այդ ակօսների շնորհիւ սուր ու դաշոյն թեթևանում են, որովհետև մետաղի մի նկատելի ծանրութիւն պակասում է։ Կարծում եմ ա՛յդ տեսակ մետաղէ սուրերն են, որ կոչուած են շեղբ, այսինքն «երիզաւոր», «երիզով» ու քանի որ շեղբ եզակի գործիական է, հետևապէս շեղբ նշանակած է միայն մի՛ երիզ, մէ՛կ ակօս ունեցող սուրի կամ դաշոյնի մետաղէ մաս։ [1])

---

[1]) Այդպիսի շեղբերի պատկերներ կարելի է գտնել հնագիտական գրքերի մէջ։ Մատնանչեմ մատչելի հատորներից մէկը. L. Capitan. La préhistoire, 1931. էջ 187 նկար 7, էջ 198, նկ. 7. էջ 205, նկ. 9։

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են տասներեքը պրակ Ա — ԺԷ

Ամէն պրակի գինն է 1 ֆրանք

ԳԻՆ 1 ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԺԸ.



1940

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՅՈՅՍ» Պէյրութ



✚

ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԵԱՆԻ

ՍԻՐԵԼԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Առաջինն էր նա, որ իբր հին ընկեր ու բարեկամ՝ արձագանգ տուաւ իմ կոչին, ուղարկելով իր նպաստը այս ձեռնարկութեան։

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԼԾՈՐԴԱԿԱՆ ԿՇԻՌՆԵՐ

(Բ — Պ — Փ)

Մենք ունենք բիլ բառը, որ Հայկազեան բառգրքի կազմողները համարած են «կապոյտ» և այդ արմատով մեկնած են մեր պլուզ բառը, համարելով «կապոյտ»։ Մ. Աբեղեան և նրան ձայնակցելով Հ. Աճառեան այս մեկնութիւնը համարում են թիւր իմացութեան արդիւնք։[1]) Այդ բառը մի անգամ միայն կիրարկուած է մեր հին մատենագրութեան մէջ և կիրարկուած է ձկների անունների շարքում։ Ստեփաննոս Սիւնեցին գրում է. «... գլփին, սղոցն, լոքն, բիլն, կապոյտն, ովկեանն», որով տեսնում ենք թէ Մխիթարեան հայրերը թիւր իմացութեամբ ձկան անունը համարած են գոյնի անուն։ Բայց նրանց սխալանքից դեռ չի հետեւում, որ բիլ բառը չէր կարող նաեւ «կապոյտ» նշանակել և պլուզ բառը իր արմատով նրան ցեղակից լինել։ Ահաւասիկ նոյն շարքի մէջ է և «կապոյտ» բառը, որ Սեւանայ ձկներից մի տեսակի անունն է, բայց նոյն «կապոյտ» բառը նաև մի որոշ գոյն է նշանակում։ Եթէ նկատի ունենանք ֆր. bleu, գերմ. blau, հին իռլանդ. blar բառերը, որ կապոյտ են նշանակում՝ դուցէ անհիմն չնկատուի

1) Տես Հ. Աճառեան. Արմատական Բառարան, բիլ բառի տակ։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մխիթարեան հայրերի թիւը ըմբռնումը համարել մի կոահում առոյգ եղելութեան Բիլ լիաձայն արմատը առաջ վիճակում պիտի տար բն որ կարող ենք կշիռը համարել վերը բերած օտար բառերի արմատի, որ է *bl— (bˡ-eu, bl-au, bl-ar)*[1]։

Լծորդական կշիռների մասին մեր ունեցած տեսութեան համաձայն՝ քանի որ ունինք բիլ բառը, կարող էինք ունենալ նաեւ պիլ և փիլ արմատները։ Այս հիման վրայ մեր պլուզ բառը արտասանելով իբր պլուզ և նրա պըլ առաջ արմատի ձայնաւորը վերականգնելով իբր ի, մենք կըստանանք մի նախաձեւ *պիլ-ուզ։ Նկատելով, որ պ և փ ինչպէս նաեւ լ և ր լծորդ ձայներ են, պիլ արմատն իր հերթական ձայնների լծորդ կշիռներով պիտի տար մի տարբերակ փիր ձեւով և *պիլուզ վերականգնած ձեւն իբր լծորդական կշիռ պիտի ունենար փիրուզ, որ մի թանկագին քար է և ունի կապոյտ գոյն։ Փիրուզ բառը կարող ենք արտասանել իբր փիր-ուզ։ Պարզ է, որ այս բառի նշած գաղափարը ո՛չ թէ ուզ վանճանի մէջ է, այլ փիր արմատի մէջ, իսկ այս արմատը նկատի ունեցած է ոչ թէ փիրուզ առարկայի քար լինելու հանգամանքը, այլ նրա գոյնը։ Այդպէս նաեւ հայը ձկան մի տեսակին «կապոյտ» անունը տալով՝ նկատի ունեցած է ոչ թէ նրա ձուկ լինելու հանգամանքը, այլ նրա գոյնը։ Եւ իսկապէս այդ ձուկը շատ բաց կապոյտ գոյն ունի, կամ ինչպէս ասում են՝ «կապտին է տալիս»։ Այդպէս է, որ մերոնք մինչեւ դարերից մինչեւ այսօր

---

1) Տես այս բառերը F. Kluge-ի և O. Bloch-ի գերմանեան և ֆրանսական լեզուի ստուգաբանական բառարաններում. իսկ իտալ. bl-ar բառը A. Ernou և A. Meillet-ի լատին լեզուի ստուգաբանական բառարանի մէջ՝ flavus բառի տակ։

ասում են «կարմիր» կամ «գեղին» և հասկանում են ոսկեգրամ. հմ. «յիսուն կարմիր» կամ «յիսուն գեղին» բացատրութիւնը։ Արդ՝ փիր լծորդական կշիռն է պիլ և բիլ արմատների, որով անհնարին չէ, որ բիլ նշանակէր «կապոյտ»։ Հակադարձ դատումով կարող ենք ասել՝ քանի որ ձուկն իր գոյնի պատճառով կոչուած է կապոյտ, անհնարին չէ, որ կապոյտ քարն եւս իր գոյնի պատճառով կոչուած լինի «փիրուզ» և ուրեմն իր արմատը — փիր — նշանակած լինի կապոյտ։ Իրենց դարաւոր կեանքի ընթացքին արմատները յաճախ կորցնում են իրենց նախաւոր իմաստը։

Այսպիսով՝ եթէ Մխիթարեան հայրերը պլուզ բառը մտովին վերականգնած են իբր *պիլուզ և այս ձեւի մէջ տեսած են պիլ արմատը և այս արմատը լծորդ համարած են բիլ արմատին՝ այս սահմանների մէջ նրանք հակառակ չեն ընթացած մեր լեզուի հընչական օրէնքներին, ուր անշեշտ ի-ն սղելով դառնում է ը և հետեւապէս պիլ արմատը կարող էր դառնալ պըլ (պլ-ո՛ւզ)։ Գալով պ և բ ձայների լծորդութեան՝ այս մասին ոչ ոք տարակոյս ունի, որով պիլ համարձակ կարելի է նկատել բիլ արմատի լծորդական կշիռն ու տարբերակը։ Մնում է բիլ բառի «կապոյտ» իմաստը։ Այդ իմաստը չի տալիս Ստ. Սիւնեցու վկայութիւնը[1]. բայց բիլ ու պիլ համարելով մէկը միւսի լծորդական կշիռը, և ուրեմն համարելով նոյնիմաստ կամ մերձիմաստ բառեր, միւս կողմից նկատելով, որ Երեւանցին ասելով պլիզ և Գողթնեցին՝ պլոզ հասկանում են «կապոյտ»[2], մենք կարող ենք այս բառերի սուզ արմատները վերականգնել իբր վաղեմի պիլ(իզ) և պիլ

---

1 Բայց չգիտենք թէ «բիլ» ասելով ո՞ր մէկ ձուկն էին հասկանում. գուցէ նա՛ նոյնպէս մի կապտաւուն ձուկ էր։

2) Հ. Աճառեան. Արմատ. բառ. հատ. Ե. էջ 1072։

-(ոգ) և տեսնել թէ պիլ նշանակած է «կապոյտ», որին պիտի մերձիմաստ կամ նոյնիմաստ լինէին նաեւ բիլ և փիր արմատները։ Այս արմատը ը հնչիւն ունի նաեւ ռուս բիրիւզա՛ բառի մէջ, որ նշանակում է «փիրուզ»։ Աւելորդ է ասել, թէ գաւառական այդ երկու բառերի «կապոյտ» իմաստը չենք կարող թիւր իմացութեան արդիւնք համարել։ Ինչ վերաբերում է -ուզ վախճանին՝ մենք նրանով բաւական բառեր ունինք, այսպէս՝ տ՛ուս-ուզ (տուս = պոչ, ծայր), որ նշանակում է երեխայի յետոյք։ պո՛ւպ-ուզ, որ «անել» բայով նշանակում է ծուխկերը ծալելով՝ յետոյքն իջցնել, առանց սակայն նստելու։ Նոյն բունից ուղ նինք նաեւ պպեզիլ բայը, որ նոյն իմաստն ունի։ Ինչպէս ունինք պլուզ և գաւառ. պլիգ, որ նոյնիմաստ են, այնպէս և ունինք պուպուզ և պիպլիզ, որ նոյնիմաստ են, որով պլիզ և պիպլիզ համարժէք են իրրև բառաձեւ և ուրեմն՝ պլուզ-ը և պլիզ-ը ձեւով տարբեր, բայց իմաստով նոյն բառերն են և նշանակում են «կապոյտ»։ Պիպլիզ բառից է ջրապիպիզ բարդ բառը, որ մի գունագեղ և վտքրիկ թռչունի անուն է։ Նա սիրում է ջրամիջի կամ ջրամօտ քարերի վրայ իջնել և իր պոչն արագ-արագ վեր ու վար չարժել։

Այս դատողութեանց և մերձեցումների հիման վրայ մենք կարող ենք հաւանական համարել, որ բիլ նշանակած է «կապոյտ»։

Բիլ, պիլ, փիլ չծոլդական արմատները ես առած եմ սակայն ուրիշ խնդիր քննելու համար, որ չատ աւելի մեծ կարեւորութիւն ունի թէ՛ մեր և թէ օտար լեզուների հետազօտութեան համար։ Ես կարող էի առնել ուրիշ բառեր և արմատներ. օրինակ՝ եղբայր, ախպէր, ախպար, որ նոյնիմաստ են և ուր տեսնում

ենք միեւնոյն բ–պ–փ լծորդութիւնը։ Բննելի խնդիրը փ ձայնի արժէքն է։

Ծուշապրիս հետեւողները գիտեն մեր տեսակէտը փ–ի մասին, որ կարելի է այսպէս տարազել.

պ + Զ + հ → պհ → փ { —պ=հ / —հ=պ

Այս տարազն ասում է. մի լիաձայն վանկ, որի եղերական ձայներն եղած են պ և հ, սղելով ու կորցնելով իր ձայնաւորը (Զ), եղերական ձայներն անմիջօրէն կցուած են իրար (պհ) և ծնունդ տուած են փ ձայնին։ Այս ձայնը իր կազմութիւնից յետոյ կարող էր քայքայուել և իր բազադրիչ պ–ն կորցնելով դառնալ հ, կամ իր հ–ն ցնդելով դառնալ պ։

Այս տարազի առաջին և անմիջական եղրակացութիւնն այն է, որ պ և հ նախնական ձայներ են։ Երկրորդ եղրակացութիւնն այն է, թէ կան պ և հ, որ բնաբոյս են և կան պ և հ, որ արդիւնք են փ–ի քայքայման, բայց լինեն նախածին թէ վերջածին՝ այդ ձայները նախնական են, որովհետեւ առանց պ և հ ձայների չէր կարող փ ծագել։

Պհ կցորդութեան մէջ պ–ն կարող էր յատուկ ճակատագիր ունենալ. նա կարող էր անցնել w (ւ) հնչման, իսկ սա v (վ) արտաբերութեան։ հմ. սիպատակ և սիվատակ գաւառական բառերը։ Այս դէպքում պհ խումբը պիտի հնչէր վհ և անցնէր ֆ արտաբերութեան, որով ֆ ձայնը նոյնպէս նախնական չէ. հմ. պարակ. սիֆիղ = սպիտակ։

Այն նախալեզուն, որի հետագայ ձեւափոխութիւնն են համաբեւում հնդեւրոպական կոչուած լեզուները, ունեցած է ոչ միայն b և p, այլ և bh և ph։ Սրանցից bh, որ պահած է սանսկրիտը, մեր լեզուում տուած է b (բ), որ նշանակում է թէ իր

հունչը — h-ն — ցնդած է ժամանակի ընթացքին։ Նոյն վախճանին հասած են և միւս հնչեղները gh, dh, որ դարձած են գ, դ: Այսպիսով ընդհանուր առմամբ bh, dh, ձայնների h-ն ցնդած է մեր լեզուում, իսկ th, ph ձայների h-ն ձուլուած և տուած է բ, փ:

Բայց այսանդ կայ մի ուշագրաւ պարագայ։ Լեզուներ կան, որ լերկ պայթուցիկ չունեն. այսպէս պարսկերէնը, որ ունի բ և փ, բայց չունի պ. ունի դ և թ, բայց չունի տ. ունի գ և ֆ, բայց չունի կ: Մեր «պատիւ» բառը պարսիկը կարող է առանդարձել կամ «բադիւ» կամ «փաթիւ»։ Այսպէս նաեւ ռուսը, որ փ չունի, մեր «փափագ» բառը կամ պէտք է առանդարձէ իբր «բաբագ» կամ իբր «պապակ» և այս վերջինս արտաբերութեամբ մեղ բերէ այն եզրակացութեան, թէ մեր փափագ և պապակ նոյն բառերն են և «փափագ» նախապէս պիտի նշանակէր «պապակ», այսինքն՝ «խիստ ծարաւ», որ հետագային առացած է մերձաւոր իմաստ, իբր «ունչ», «բուռն ցանկութիւն»։ Այն՝ ինչ որ անանում ենք հայերէնի և ռուսերէնի մէջ, որ երկու տարբեր լեզուներ են, կատարուած է միևնոյն հայոց լեզուի երկու բարբառների մէջ, մէկի «պապակը» միւսն արտաբերած է «փափագ» և հիմա մեր լեզուն ունի երկու բառ, որ երբեմն միևնոյն իմաստը ունէին երկու տարբեր բարբառների մէջ, իսկ այսօր զարձած են տարբեմատ միևնոյն լեզուի մէջ, որովհետեւ լեզուական տնտեսութիւնն այդ երկու բառերից ամէն մէկի կարթին կախած է մի տարբեր գաղափար, որ սակայն մերձիմաստ են։ Այդպէս նաև պարսկի փիրուզին հայն ասում է փիրուզ իսկ ռուսը՝ բիրիւզա։

Երբ կացութիւնն այսպէս է՝ այն ժամանակ հարց է ծագում թէ ո՞ր մէկն է նախնական ձեւը. պապակն ու *պիւ՞ւզը (պլուզ) թէ փափագն ու փիրուզը: Նայե-

լով «պապակ» և «փափագ» բառերին՝ մենք կարող ենք ասել, որ «պապակ» արտաբերող հին բարբառն է, որ արտաբերած է պիրուզ, որ յետոյ դարձած է պլուզ. իսկ «փափագ» արտաբերող բարբառը արտաբերած է փիրուզ. որով այս երկու բառերը դառնում են նոյնաբժէք և նոյնիմաստ իրենց հին կիրարկութեամբ, երբ նրանք տարբեր բարբառների բառեր էին, իսկ հիմա դարձած են միևնոյնմաստ, երբ նոյն լեզուի բառ են դարձած: Մենք չգիտենք բառերի փոխառութեան և ծագման ժամանակագրութիւնը: Նայելով պարսկ. «ֆիրուզ» և հայ «փիրուզ» բառերին, կարող ենք կշռորդութեան այսպիսի տարազ մշակել. հայ. փ — պարսկ. ֆ: Բայց այս տարազը՝ այսպէս ասենք՝ հորիզոնական է և համամանակ. նա բանաձևւում է այսօրուան կացութիւնը: Բայց պարսկի ֆ-ն ֆիրուզ բառի մէջ միշտ ֆ՞ եղած է. և յետոյ ֆ ուղեցած ժամանակ է այդ բառն անցած հայերէնին: Տեսանք, որ ֆ-ն հետագայ ձայն է, հետևապէս նա ինքը ժամանակի ծնունդ է[1]: Քանի որ պարսկի ֆ-ն ծագում է մի հին pi խմբից, այն ժամանակ մեր փ-ը այդ հին pi խմբի ձուլումը կ'երեւայ մեզ, իսկ պարսկի ֆ նոյն pi խմբի հետագայ հնչափոխումը, որով անցեալի համար կարող ենք կշռորդութեան նոր տարազ մշակել հայ. փ — պարսկ pi և ուրեմն մեր «փիրուզ»բառը ոչ թէ նոր փոխառութիւն, այլ հին ժառանգութիւն համարել կամ առնուազն հին փոխառութիւն, նկատելով որ փիրուզի հանքերը Պարսկաստանի հիւսիսային արեւելեան կողմերն են (Բաղդչեան): Սոյն հիմքով նաեւ ռուսի «բիրիւզա՛» բառը պէտք է

---

1) Արիական pi ձայնը Զենդ Աւեստայի լեզուի մէջ տուած է f. ուրեմն այս անցումը չա՞տ հին է: Տես. Dr. H. Reichelt. Avestisches elementarbuch. էջ 40, § 46:

հին փոխառութիւն կամ հանուր ժառանգութեան ձեւափոխութիւնը համարել ռուս միջավայրի մէջ. նրա բ ձայնը կարող էր ծագել նախաւոր bh ձայնից, որովհետեւ ռուս լեզուի մէջ bh և իր ցեղակից ձայնները նոյնպէս լերկացած են, այսինքն՝ ցնդած է նրանց հունչը — ի–նչ: Ռուսի բ–ն կարող էր նաեւ ոչ թէ bh, այլ պարզապէս բ ձայնի հաւատարիմ արտաբերութիւնը լինել, նկատելով, որ պարսկերէնի մէջ b ձայնը անցնում է ֆ–ի. համ. եաֆթան — բռնել, որի արմատն է եա՛բ, որ միաժամանակ նաեւ հրամայական է. համ. մեր «հատանել» և «հա՛տ»: Այս դէպքում մեր «*պիլուզ» բառը կը համեմատէր «բիրուզ» ձեւին իբր լծորդական տարբերակ, իսկ ռուսի «բիրիւզա» բառը կը նոյնանար ենթադրածս պարսիկ ձեւի հետ: Այս դէպքում ի՞նչ արժէք կ'ունենար մեր «փիրուզ» բառի փ–ը:

Մեր հնները յոյնի Φիլոսոφո՛ս բառը երբ չեն թարգմանած իբր «իմաստասէր», տառադարձած են իբր «փիլիսոփայ», յոյնի φ ձայնին տալով փ կշիռ[1]: Ինչո՞ւ այսպէս. որովհետեւ չեն ունեցած φ ձայնը: Մինչեւ վերջերս ունէինք բարբառներ, որ φ ձայնը չէին որդեգրած և ժԹ. դարի սկզբներին ռուսի բառանից լսելով «Φրանցուզ» (=Ֆրանսացի), արտաբերում էին «Փրանցուզ» (Թիֆլիս): Նոյն վիճակում հնացած են և հին հայերը: Արդ՝ «փիլիսոփայ» բառի մէջ փ–ը մի ճարահատ փ է. եթէ ունենայինք φ ձայնը՝ փ–ով չէինք արտաբերի «փիլիսոփան», այլ Ֆ–ով, ինչպէս ռուսը «պապակ» կամ «բաբակ» չէր ասի, այլ «փափագ», եթէ ունենար փ ձայնը:

Այստեղից պարզ է, որ կան փ–եր, որ ճարահատ

---

1) Ճոյնի φ ձայնը երբեմն եղած է ph, որ հայի բերանում պիտի հնչէր փ:

վիճակի արդիւնք են. այսինքն՝ արդէն շատ վաղուց կազմուած և լեզուի ձայնաշարի մէջ տեղ գրաւած մի հին ձայնի կիրարկութիւն են մի նոր և անծանօթ հնչիւն ձայնադարձելու համար։ Հետեւապէս կան փ-եր, որ պիտանի չեն լեզուական վաղեմի անցեալը հետազօտելու համար. նրանց լուծումովը պհ առադրութեան և սրա վերականգնումովը իբր մի նախաւոր լիաձայն վանկ, իբր մի վաղեմի պ+Ձ+հ՝ մենք արդիւնքի չենք հասնի։ Բաւական է յիշել, որ կան պ չունեցող լեզուներ, որ մեր եզրակացութիւնը ստանայ իր բովանդակ արժէքը։ Եթէ պարսկերէնը հնդեւրոպական լեզու է, այսինքն՝ հնդեւրոպական կոչուած լեզուի մի ձեւափոխութիւնն է, ապա իր նախնական վիճակում նա պէտք է ունենար պ, ֆ, կ ձայները և եթէ այսօր չունի՝ դրանից մենք կարող ենք հետեւցնել թէ նա իր հին բառերը, որ ունէին բնաբոյս պ, ֆ, կ, ժամանակի ընթացքին արտաբերած է փ, բ, ֆ հնչումով, հետեւապէս ոչ ամեն բառ, որ պարսկերէնում ունի փ, բ, ֆ նախապէս այդ ձայներն է ունեցած։

Բայց միւս կողմից՝ նկատելով, որ փ-ը ձոյլ ձայն է և կարող է քայքայուիլ՝ ինքնին հետեւում է, որ ոչ ամեն պ նախնական է. նա կարող է լինել փ-ի քայքայման հետեւանք։ Այսպէս՝ առնենք մեր փոր և հոր բառերը։ Մեր տեսութեամբ փոր բառը մի հին պհոր է, այսինքն՝ նրա փ ձայնը ձոյլ է, նա ծագած է պհ խմբից։ Արդ՝ այս խմբի մէջ փ-ը քայքայումով պիտի տար կամ պ և բառը դառնար պոր կամ հ և բառը դառնար հոր. մի դէպքում պ-ն պիտի ընկնէր հ-ի առջեւ, միւս դէպքում հ-ն պէտք է ցնգէր։ Այս լուծումով կարող ենք ասել որ փոր և հոր միեւնոյն բառերն են. նախաւոր ձեւն է փոր, որովհետեւ հ ձայնը չի կարող փ հնչել. և հետագայ ձեւն է հոր, ո-

թովհաննէս վ–ը կարող է քայքայուել և տալ պ և ի համ. ժողովուրդի խօսքը չատակեր մարդու մասին. «անասքանդինը հօ փո՛ր չի, հո՛ր ա»: Այս փոխանցումը կարող ենք տարրալել այսպէս.

$$\text{վ} \begin{cases} \text{—պ} = \text{հ} \\ \text{—հ} = \text{պ} \end{cases}$$

Մեր լեզուն պահած է հնչիւնափոխուած վ–ը, այսինքն՝ այս արմատն ունինք և լերկ պ–ով. համ. պոռել, որ է «փորել»: Այդ նոյն արմատն է և ռուս. por–a բառի մէջ, որ նշանակում «ծակ» և միեւնոյնատ է «հոր» և «փոր» բառերին: Եթէ ասենք, որ մեր վ–ը ռուսի p ձայնի հայ արտաբերութիւնն է կամ հակառակը՝ ռուսի p–ն հայոց վ ձայնի ռուս արտաբերութիւնը՝ մենք միայն բանաձեւում ենք այդ երեւոյթը. մենք չենք բացատրում. ինչպէս կը լինեին վ — պ առընչութիւնները և «հոր» բառը դուրս կը նետուի այս շարքից: Միմիայն ընդունելով թէ վ–ը մի ձայն պիտի է, մենք կարող ենք թէ՛ ձայնների և թէ բառերի առընչութիւնը բաւարար մեկնել:

Մի ուրիշ օրինակի վրայ չատապէս կարող ենք դիտել միեւնոյն երեւոյթը և տեսնել թէ վ–ին է նախնական ձայնը և ոչ պ–ն: «Հայր» բառի համար գիտաւնիները տալիս են մի նախաձեւ — pater. պարսկերէն ասում է «փեդար», ուր երկու ա–ն էլ չեղ են. կարող էինք գրել «փէդէր», եթէ չվախենայինք, որ ե–ն իրօք ե կը համարի ընթերցողը: Գերմաներէնին ասում է. Vater, որով տեսնում ենք՝

Հայ. հ — պարս. վ — գերմ. Վ:

Արդ՝ ի՞նչպէս կարող է լերկ p–ն Վ դառնալ կամ հ, կամ վ: Համամանուկ հնչողութեանն տարրալը մեզ ասում է, որ ասւասիկ պարզ տեսնում ենք թէ իրականի մէջ կատարուած է այդ ձայնափոխութիւնը: Այս կրկին անվիճելի է: Բայց ի՞նչ ճամբով, ա՛յս է

ֆոնդիրը։ Մեր ձոյլ ձայների տեսությունը փորձում է մեկնել այս երեւոյթը։ Եթէ գոհանանք համամանակ կշիռներով և եթէ չփորձենք այսօրուան իրականից այն կողմն անցնել և ձայներն իրենց հոլովոյթի մէջ դիտել՝ մենք շատ մեծ բան շահած չենք լինի, իմանալով, որ օրինակ՝ գերմ. Ֆ-ին հայը տալիս է հ կըշիռ։ Բայց եթէ ենթադրենք, որ այդ բառերի մէջ փ-ն է նախնականը և բոլոր բ-երը լերկացած փ են, այսինքն՝ հունչը կորցրած պհ խմբեր են, իսկ մեր ձեւը — «հայր» — պայթուցիկ պ-ն նետած մի հին *պհաsար է[1]), այն ժամանակ մեկնած կը լինենք դիտունների դիտած կշռորդութեան բուն պատճառը։ Այսօր փ-ի ծագումն այնպէս են տրամագիր մեկնելու թէ պ ձայնի և հետեւորդ ձայնաւորի միջեւ ծագած է մի հ, հետեւապէս արտաբերական մի որոշ եղանակի արդիւնք են համարում փ-ը և ոչ մի ձոյլ ձայն։ Բայց մենք տեսանք մեր տեսութեան բացատրական կարողութիւնը և մեկնութեան բնական և բանական հանգամանքը։ Եթէ մտածենք, որ ամեն ինչ այս աշշարհում պատմութիւն ունի. որ ամեն ներկայ մի անցեալի արդիւնք է. որ ասեղի ծայրի մէջ խտացած է տիեզերական հոլովոյթը և որ ուրեմն ձայները նոյնպէս իրենց պատմութիւնն ու հոլովոյթն ունեն, այն ժամանակ ըմբռնելի կը դառնայ մեր տարակոյսը գոյութիւն ունեցող լծորդական տարազների և նրանց հիման վրայ տրուած մեկնութիւնների մասին։ Այսպիսով՝ դիտուած կշռորդութիւնը մնում է իր ուժի մէջ, միայն նրա մեկնութիւնն է տարբերում, երբ

---

1) Հետագային շեշտից յետոյ և երկու ձայնաւորի միջեւ գտնուած ո ձայնը սղած է յ ուղղութեամբ և շեշտից յետոյ եկող վերջին ձայնաւորը սղած ու կորած է. հատար— հա՛յար — հա՛յր։

ընդունում ենք թէ փ-ը մի ձայն է։

Մենք տեսանք սակայն թէ կան ճարահատ փ-եր։ Երբ Գամառ-Քաթիպան գրում է.

Ձրանգի փափիր չատ փողուր է.
վեհարանը փառաւոր է —

նա պապ բառը գրում է իր մայրենի բարբառի առանձնահատկութեամբ։ Այստեղ փ-ը պատահական հանգամանք ունի, բանաստեղծը կարող էր և «պապ» գրել։ Երբ հին հայը գրած է փիլիսոփայ, նա ճարահատ է եղած. ձ չունենալով իր ձայնաչարի մէջ՝ մերձաւոր փ-ով է տառադարձած օտար բառը. և ուրիշ կերպ նա չէր կարող գրել։ Երկու դէպքում էլ փ-ի ծագման խնդիր յարուցելու պէտք չկայ։ Երկու դէպքում էլ մենք գործ ունենք փոխառական երեւոյթի հետ։ Այսպէս չէ սակայն փոր ու հոր բառերի պարագան։ Այստեղ մէկը ծագում է մերսից և հետեւապէս այս երեւոյթի բաւարար մեկնութեան համար անհրաժեշտ է, որ փ-ը լուծուի, իբր պի, այլապէս երեւոյթն անմեկնելի կը մնայ։ Պարզ է, որ փոր ու հոր բառերը չէին կարող միեւնոյն միջավայրի բառեր լինել, թէեւ այսօր միեւնոյն հայոց լեզուի բառեր են. Նրանք տարբեր լեզուական միջավայրի բառեր են, որոնցից մէկը ձեւում էր պի խումբն իբր փ, իսկ միւսը քայքայում էր նոյն խումբն իբր (պ)ի և հետեւով պ-ն՝ պահում էր ի-ն։ Այստեղից հետեւում է, որ փ-երի լուծումով մենք կարող ենք բաղմաթիւ լեզուական երեւոյթներ մեկնել և իմաստական հին առընչութիւններ գտնել։ Այս աշխատանքը երկու աստիճան ունի. Նախ պէտք է փ-երը լուծուին իբր պի. և ապա՝ պի խմբերը վերականգնուին իբր պ+ձ+ի։ Այս վերջին վերականգնումով մենք կը մտնենք մի աշխարհ, ուր չկար փ ձայնը։ Առաջին աշխատանքը չատ աւելի դիւրին է

քան երկրորդը, որովհետև փ-ը մի հին պի լինելով լուծուելուն պէս մեզ տալիս է իր բազադրիչ տարրերի ամբողջութիւնը։ Մինչդեռ պի խումբը լինելով մի վաղեմի լիաձայն վանկի եզերական ձայների առաջութիւն՝ մեզ ոչինչ չի տալիս այդ ձայնաւորի մասին, որ նախ սղած և ապա չքացած է նրանց միջեւ։ Այդ ձայնաւորի գտնելը չափազանց դժուար է. պէտք է խուզարկուի քոյր լեզուների բովանդակ բառամբարը, ինչ որ ամեն մարդու գործ չէ։

Ինչ որ ասած եմ փ-ի մասին, վերաբերում է նաև բոլոր մեղմ ձայներին — p, f, d, g, d, ճ։ Առնենք այս անգամ f-ի պարագան։ Գիտուններն ասում են, որ հնդեւրոպ. kh ձայնին հայերէնը տալիս է խ և իբր ապացոյց բերում են մի կողմից սանսկ. *khakhati* միւս կողմից հայ. խախանիճ, որ նշանակում է բարձրաձայն ծիծաղ. հմ. ռուս. խո՛խոs,— ծիծաղ, ևայլն։ Համեմատութիւնը պարզ է և վճռական. բայց նա վերաբերում է հայոց լեզուի մի շերտին միայն, որ ասել է՝ միմիայն մի հին բարբառի, որի «խախանիք» բառը մտած է մեր լեզուի չանմարանը։ Ժողովուրդն ասում է. խահխահ ծիծաղել. ուր տեսնում ենք թէ kh ձուլուած ու դարձած է f, մինչդեռ խախանիճ բառի մէջ նոյն հին kh խումբը տարբեր հոլովոյթի է ենթացած, անշուշտ՝ տարբեր լեզուական միջավայրի մէջ։

Այս երեւոյթը զուգահեռ է վոr և ճոr բառերի համապատկերութեան։ Բայց նոյն ձայնը մեր լեզուում ունեցած է մի ուրիշ արդիւնք. kh խումբը տուած է ճ. «ճահ», միջարկութիւնը պարզ կամ եզակի ձեւն է «քահքահ» ասութեան. մի տեսակ՝ ծիծաղի սկսուածք է դա. այդ արմատն են կիրարկում, երբ քմծիծաղ են տալիս։ Այդ արմատն այսօր ձայնարկութիւն է։ Նոյն արմա-

---

1) A. Meillet. Introduction, էջ 64.

տըն է և իր յաճախական ձեւի մէջ, ուր սակայն վերջին հ-ն ցնդած է. հմ. «հա՛ հա՛ հա՛» որ ծիծաղի միջակութիւն է և որ կարծում եմ մի հին «հահ հահ» է[1]։ Այս օրինակները ցոյց են տալիս, որ դիտուններ մշակած լծորդական կշիռները վերաքննելու կարիք ունին։ Մեր ձոյլ ձայների տեսութիւնն ընձեռում է այդ վերաքննութեան հիմքերը։

Լծորդական կշիռների այս քննութիւնից հետեւում է, որ պայթուցիկ և հնչեղ ձայներն աւելի հին են, քան թաւ ձայները, ինչպէս և պարզ ձայներն աւելի հին են, քան ձոյլ ձայները։ Բ-ն և պ-ն, s-ն ու դ-ն շատ աւելի հին են քան փ-ն ու p-ն. այդպէս նաեւ գ-ն ու կ-ն շատ աւելի հին են քան f-ն։ Այդպէս նաեւ՝ նկատելով՝ որ u-ն մայրն է բոլոր ձոյլ ձայների և հ-ի՝ մենք կարող ենք ասել, որ ձ, ծ, ճ, չ, ց, ջ ձայները շատ աւելի նոր են քան պարզ ձայները, որովհետեւ առանց u, հ, զ, ժ ձայների, որ սոյլ են, չէին կարող կազմուիլ վերի ձոյլ ձայները։

Այս հիմքով՝ բառերի և ձեւերի քննութիւնը պէտք է սկսել բաղադիր ձայների լուծումով և այնուհետեւ քննութիւնը շարունակել ստացուած արդիւնքի վրայ։ Անդամահատական այս առաջին գործողութիւնն արդէն կը բանայ լայն հորիզոններ և նոր հետազօտութեան ընդարձակ դաշտ։ Այնուհետեւ պէտք է մտովին տարբաղադրել խմբերը և մտովին կառուցել լծորդական կշիռներ՝ բաղադիր ձայների մէկ կամ միւս տարրով. այսպէս օրինակ՝ Առաջին գործողութիւն.

---

1) Այդպէս ունենք նաեւ. «պա՛հ, պա՛հ, պա՛հ» և «պա՛ պա՛ պա՛»։ «Պա՛հ, պա՛հ, պա՛հ, ի՛նչ ձուկն է՛, մարդ ուտելով չի կշտանայ։ — Պա՛ պա՛ պա՛ պա՛, Ա՛ստուած ազատի նրա ձեռից։ Երկուսն եւս արտաբերւում են նուազող ուժգնութեամբ։

փոր ← պոր (փ-ը լուծուած)։ Երկրորդ գործողութիւն. պոր և որ (մասային կառուցում փ-ի բաղադրիչ պ և ո ձայնների)։ Հետազօտութիւնն այս ասպիճանի վրայ մենք կը գտնենք բազմաթիւ ձևական և իմաստական առնչութիւններ։ Երրորդ գործողութիւնը, որ ինչպէս ասի, ամենից գժուարինն է, պի խումբի վերականգնումն է իր լիաձայն վանկ։ Այս աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ է ընդարձակ համոզութիւն, բայց մանաւանդ մտերմութիւն բազմաթիւ լեզուների։ Այս աշխատանքը յաճախ չօշափելի արդիւնքի չի հասցնում և զարմանալի չէ. ինչպէս բուսական և կենդանական աշխարհում, այնպէս և լեզուների մէջ մայր ձևերը շատ յաճախ մեռած են լինում. նրանք ապրում են իրենց զաւակների մէջ. փ-ը պի է. բայց ի՞նչ է եղած պի խումբն իր լիաձայն վանկ. պի՞ն, պա՞ն, թէ պո՛ւն. և ի՞նչ է եղած նախապէս այս ինքնապրական ձևերի ն ձայն — ա՞ թէ՞ մի հին ձայնախմբի կամ ձոյլ ձայնի քայքայման հետեւանք։ Այստեղ ծագում են բազմաւեռակ և կնճռոտ հարցեր, որ պէտք է համբերութեամբ ու մանրը քննութեան մի համոզիչ արդիւնքի հասնելու համար։

Ես դեռ ասելիք կունենամ վերադառնալու այս խնդիրներին։

Ինչպէս վերն ասի, նախապէս եղած են հնչեղ և պայթուցիկ ձայներ և ձայնների այս տարբերացումը գաւառային է եղած ինչպէս մեր այսօրուան բերեմը և պիրեմը (Արցախ)։ Հ ձայնի հետ լիաձայն խմբեր կազմելով և հետագային վանկային ձայնաւորը սղելով ու կորցնելով նրանք առած են պայթուցիկ +ի և հընչեղ +ի ձայնախմբեր, որ հետագային կամ ձուլուած են տալով կէս պայթուցիկ ձայներ, կամ քայքայուած են, այսինքն՝ ի-ն ցնդած են և առած դուռ հնչեղներ

և զուտ պայթուցիկներ, կա՛մ այս ձայները նետած են և դարձած են պարզ հ-եր։ Այսպէս՝ կարծում եմ նախապէս եղած են շրթնային պ և բ: Վաղեմի մարդն այդ ձայներով և հունչով կազմած է վանկեր իբր պ+Ձ+հ և բ+Ձ+հ (Ձ-ն նշանակում է ձայնաւոր)։ Այս վանկերը ձայնաւորի կորուստով դարձած են պհ և բհ: Այս նոր խմբերն ունեցած են այլազան հոլովոյթ։ Կամ լերկացած են. այսինքն՝ նրանց հ-ն ցնդած է և մնացած են պարզ պ և բ: Այսպէս եղած է յատկապէս bh խումբը, որ ձուլում չի տուած. նա մնացած է սանսկրիտ լեզուի մէջ իբր գրութիւն, նրա բուն հնչումը յայտնի չէ։ Կամ պհ խումբը ձուլումով ստեղծած է մի ձայն, որ մեր փ-ն է։ Կամ պ և բ ձայներն անցած են վ հնչման և հետեւորդ հ-ի հետ կազմած են մի նոր խումբ վհ, որ անցած է Ֆ հնչման։ Կամ հ-ի առջեւ ձգած են պ-ն և տուած են հ: Ընդհանուր առմամբ այս ուղիներով ընթացած է ձայնաշրջումը։ Իր ընթացքի մէջ պատահած են մի քանի ուրիշ հնչափոխումներ, որոնց մանր քննութեան մէջ չեմ մտնում։ Նկատեմ միայն, որ պ և բ ձայները նախքան լիակատար վ ձայնին հասնելը՝ անցած են ւ (w) ձայնի փուլով։ Այսպէս կարելի է մի բանաւոր մեկնութիւն տալ մեր nsն և հեs բառերի ծագման, որ նոյն իմաստն ունին և նշանակում են «ոտն»[1])։ Այս բառերից մէկի կշիռն է յուն. po'da և միւսինը՝ յուն. pédon։ Մեր կարծիքով միեւնոյն ձայնն է, որ մի տեղ տուած է w, միւս տեղ՝ հ: Դիտունները կարծում են, որ միեւնոյն p ձայնը միապէս տուած է հ, բայց մի տեղ այդ հ-ն ցնդած է (podn→hotn→otn.

---

1) Եւ ասէ Եղիա. Մինչեւ ցե՞րբ կաղայք յերկուս հեsս. Գ. Աագ. ԺԸ. 21. այսինքն՝ մինչեւ ե՞րբ կաղաք երկու ոտքով։

այսպէս են տառադարձում մեր ոտն բառը, համաբերելով մեր ո–ն մի օ, միւս դէպքում կարծում են, որ ն–ն պահուած է. (péd → het[1])

Ձոյլ բաղաձայների տեսութեան հիման վրայ ես կարծում եմ այս երեւոյթին պիտի տալ ուրիշ մեկնութիւն: Նախաւոր ձեւ համարելով մի phod և phet — մենք պայթուցիկի անկումով ն–ի առջեւ կ'ունենանք ոtն (phed — (p)hed — hed. Հնդեւրոպական դ-ին մեր լեզուն տալիս է տ. որով hed — ոtն): Իսկ հունչի ցնդումով, մենք կ'ունենանք pod. (phod→p(h)od → pod): Այս լերկ ձեւի p ձայնը շուրթերի անբաւարար պրկումով, այսինքն՝ շուրթերի մօտեցումով, բայց ոչ միացումով ու դիրքի անջատումով՝ պիտի անցնէր w հնչման և բառը դառնար wotn, իսկ w–ի անցումով v (վ) հնչման՝ նոյն բառը պիտի հնչէր votn, որ մեր այսօրուան ոտն է: Գալով օտն արտաբերութեան, որ ունեն մեր մի քանի բարբառները, այստեղ օ–ն մի լերկացած ո պէտք է համարել. հմ. օսկի, օչով — ոսկի, ոչ ով հւայլն: Այս դէպքում pի խումբը նախնական է, օտարի պ (p)–ն և մեր վ–ն (վօտն) ու ն–ն (ոtն) այդ նախաւոր խմբի քայքայման հետեւանք են: Ինքնին հասկանալի է, որ ոտն ու ոtն բառերը թէեւ այսօր միեւնոյն դասական հայերէնի մէջ են, բայց միեւնոյն լեզուական միջավայրի ծնունդ չեն. որով հետեւ եթէ լեզուական մի միջավայր ձեւում էր pի խումբն իբր վ՝ նա չէր կարող քայքայել. իսկ եթէ մի միջավայր քայքայում էր այդ խումբն ու նետելով ն–ն պահում էր պ–ն՝ նա չէր կարող միաժամանակ նետել պ–ն և պահել ն–ն: «Ոտին» պարսիկն ասում է վայ (վ–այ). իսկ սանսկրիտը ոտքի հետքին ասում է pada´m: Ի՞նչ է պարսկի վ–ը և սանսկ. p–ն: Վ–ը p

---

[1]) A. Meillet. Esquisse. էջ 11.

ձայնի պարսկաձեւ մի արտաբերութիւնն է։ Կարծում եմ՝ ո՛չ. սանսկ. p. մի լերկացած ph խումբ է, իսկ պարսկի փ-ը այդ խմբի ձուլումը։

Բայց պի խումբը ձուլած ենք նաեւ մենք։

Եթէ այդ բառերի նախաւոր ձեւերը phod և phed լինէին՝ այն ժամանակ մեր բառերը պէտք է լինէին փոտ և փետ, ինչո՞ւ ուրեմն մենք ունենք ոտն և հետ։ Այստեղ է, որ պէտք է յիշել թէ հնչական օրէնքները յաւերժական չեն և փոփոխւում են ժամանակի և տարածութեան մէջ։ Մի որոշ ժամանակ տիրող հընչական օրէնքները անզօր են դառնում մի ուրիշ ժամանակ և մի տեղ իշխող ձայնադարձումները մի ուրիշ տեղ բնաւ չեն պատահում։ Եւ այս է պատճառը, որ հնդեւրոպական լեզուները միեւնոյն ակից բխելով՝ դարաւոր հոլովոյթի ընթացքին այնքան տարաստեսակ դարձած են, որ հայն ու գերմանացին իրար չեն հասկանում. նրանց լեզուները թէեւ նոյն ծագումն ունեն, բայց այսօր իրար նման չեն։ Մենք հիմա չենք կարող ասել թէ ո՛ր հնչական օրէնքը ո՛րբ և ո՛ւր է տիրած։ Ուստի բոլոր հնչական օրէնքները, որ դիտուած են մեր և քոյր լեզուների կեանքի մէջ՝ սիւտանի են մեր լեզուի մեկնութեան համար։ Ինչ որ պատահած է այդ լեզուներից մէկի մէջ, կարող էր պատահել և միւս քոյր լեզուի մէջ։ Թողնելով ո՛ւրն ու ե՛րբը հետագային ճշդել, մենք կարող ենք գոնանալ լեզուական երեւոյթների մեկնութեամբ լեզուական օրէնքներով։ Եթէ մի տեղ մենք նկատում ենք պայթուցիկի անկում հունչի առջեւ, իսկ մի ուրիշ տեղ շրթնային պայթուցիկի անցում վ հնչման՝ մենք կարող ենք այդ հնչական օրէնքներով մեկնել նաեւ մեր լեզուական երեւոյթները, առանց մոռանալու թէ այդ օրէնքները ո՞ր լեզուի մէջ են գործում և ե՞րբ են գործած։ Բաւական է, որ գրանք իրօք հնչական

օրէնքներ լինեն, այսինքն մարդկային լեզուին յատուկ օրէնքներ։ Նրանք կարող էին գործել նաեւ մե՛ր լեզուի մէջ։ Եթէ նրանց օգնութեամբ մեր լեզուական երեւոյթները մեկնուին՝ նրանք կը դառնան նաեւ մեր լեզուի օրէնքները։ Երբ յաջողինք այսպէս բաւական մեծ քանակութեամբ լեզուական երեւոյթներ մեկնել և բաւական հարուստ ատաղձ հաւաքուի, այն ժամանակ կարելի է խմբել այդ մեկնութիւնները, դասակարգել և որոշել օրէնքների տիրապետութեան յաջորդական ժամանակաշրջանները և միջավայրերը, որ անշուշտ թուականներով և շատ անգամ յատուկ վայրանուններով չեն լինի սահմանուած, բայց մի գաղափար կը տան թէ ո՛ր օրէնքները որից յետոյ տիրած ու վարած են մեր լեզուի ճակատագիրը։ Պէտք է միշտ նկատի ունենալ, որ լեզուները շեղջազօղեր են (conglomérat), այսինքն տարբեր ժամանակ և տարբեր վայրերի մէջ ձեւացած արդիւնքների խառնուրդ են, որ պահւում են մի քանի հիմնական կապերով — հոլովում, խոնարհում, շարադասութիւն. իսկ այս կապերը իրենց բազմազանութեամբ վկայում են թէ նոյնպէս տարբեր ծագումներ ունեն և գալիս են տարբեր վայրերից ու ժամանակներից, թէեւ այսօր միեւնոյն լեզուի զօղերն են կազմում։ Երբ տեսնում ենք մի ph, որ լերկացած է (*պիլուզ → պլուզ), մի ուրիշ ph, որի p-ն անցած է վ հնչման (ոտն), մի երրորդ ph, որ ձուլումով տուած է փ (փիրուզ) մի չորրորդ ph, որ նետած է p-ն և պահած է հ-ն (հետ)՝ մենք չենք կարող մեր լեզուի համար ձայնաշրջման մեկ օրէնք միայն բանաձեւել։ Այդ բոլոր երեւոյթները լեզուապէս հնարաւոր էին, ու թէեւ այդ բոլորը միեւնոյն հայոց լեզուի մէջ են երեւում, բայց այդ տարատեսակ հնչադարձութեանց գոյութիւնն ինքնին ցոյց է տալիս, որ նրանք տարբեր ժամանակ և տար-

բեր վայրերի մէջ են կատարուած, թէեւ նրանց արդիւնքները իբրեւ բազադրիչ տարրեր այսօր մեր լեզուի չեզոքամբի մէջ են զօդուած։ Ե՞րբ եւ ո՞ւր են գործած այդ լեզուական օրէնքները — չգիտենք եւ ասել չենք կարող, բայց եղած է մի «ուր» եւ եղած է մի «երբ», ուր գործած են այդ օրէնքները։ Այս ոգով պիտի դիտուին ու քննուին լեզուական երեւոյթները՝ բանական մեկնութեան եւ արդիւնաւոր հետեւանքների հասնելու համար։

Յուշագրիս տպագրական ծախքերը հոգալու համար 1939 թ. ամրան շնորհակալութեամբ ստացած եմ՝

	ս. ոսկի
Ստ. Նսայեանէ, (Եգիպտոս)	10.—
Տիկ. Ն. Երկանեանէ (Ամերիկա) 20 տոլ.	45.—
	55.—
Մնացորդ ժԵ. պրակէն	166.60
	221.60
ժԵ, ժԶ եւ ժԷ յուշագրի տպագրութեան	31.50
Մնացորդ	190.10



Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած Ա — Ժէ պրակներէն
գինը բողած ենք անփոփոխ.

Առէջ պրակի գինն է 1 ֆրանք

Թուղթի տարապայմանութեան պատճառով այս
եւ յաջորդ պրակներէն գինը որոշած ենք 2 *ֆրանք*.

ԳԻՆ 2 ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԺԹ.



1940

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՅՈՅՍ» Պէյրութ

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒԾԱԳԻՐԸ

ՄԻԵԻՆՈՅՆ ՀՈԼՈՎԻ ՏԱՐԱՏԵՍԱԿ ՁԵԻԵՐԸ

Մեր կտուր բառը տարատեսակ սեռական ունի։ Ծիծեռնակի հեղինակը գրում է.

ախ, թռիր, ծիծեռնակ,
ծնած տեղս Աշտարակ,
անգ շինիր քո բունը
հայրենի կտուրի տակ։

Ժողովրդական ծաղրերգը հեգնում է.

փեսայ, փեսայ, փստացնեմ,
կտեր ծէրին նստացնեմ...

Ղ. Աղայեանի ծոյլ աղջիկն ասում է.

կտրանը տիտիկ անեմ, (նստեմ)։
անցնողին մտիկ անեմ. (նայեմ)։

Երեք ձեւ. կտրան, կտուրի, կտեր: Ո՞րն է այս երեւոյթի պատճառը և ի՞նչ է նրա արժէքը։ Եթէ լեզուն մեկ է՝ պէտք է որ միեւնոյն բառը մեկ սեռական ունենար. ինչո՞ւ երեքն ունի։ Ահա մի պարզ հարցում։

Առաջին մեկնութիւնը, որ գալիս է մարդու գլուխն այն է, թէ գրանցից երկուսը նմանական կազմութիւն են, այսինքն հետեւած են լեզուի մէջ գոյութիւն ունեցող ուրիչ հոլովական կարգի, քան իրենց նախնականն ու սեփականը։ Բայց ո՞ր երկուսն են նմանական և ո՞ր մէկը նախնական։ Նմանօրէն ծագելու համար պէտք է մի հին օրինակ լինի, որին

նմանեն։ Արդ՝ գրաբարն ունի աղբեր, սերման և քաղաքի ձեւով սեռականներ, որ նման ու զուգահեռ են կտեր, կտրան և կտուրի ձեւերին։ Քանի որ այսպէս է՝ ապա ուրեմն «կտուր» բառի երեք սեռականները կարող էին նմանօրէն ծագել թէ գրերի գիւտից յետոյ թէ առաջ և ոչ ոք այսօր կարող է ասել թէ իսկապէս ե՞րբ են ծագած. յետո՞յ թէ առաջ։ Երբ թոթովախօս փոքրիկն ասում է «ուտեցի» փոխանակ ասելու «կերայ»՝ նա հետեւում է գրեցի, նստեցի, և և նման ձեւերին։ Բայց ինչո՞ւ ասում է «ուտեցի» և ոչ «ուտացի» քանի որ լեզուն ունի մնացի, գնացի և նման ձեւեր. կամ ինչո՞ւ ոչ «ուտացայ», քանի որ ունենք իմացայ, լաւացայ եւայլն։ Կարծում եմ նըմանական կազմութիւնները հետեւում են այն օրինակներին, որ յաճախ են պատահում լեզուի մէջ։ Նորն ստեղծողը քայլում է բառակազմութեան բանուկ ճամբաներով։ Մեր բայերի մօտ չորս հինգերորդը պատկանում են ել լծորդութեան, ուստի երեխան շատ աւելի յաճախ լսում է լսեցի, խօսեցի, գրեցի եւայլն քան իմացայ, մօտեցայ եւայլն, ուստի երբ ուզում է «ուտել» բայի կատարեալը կազմել՝ ասում է «ուտեցի» և ոչ «ուտեցայ»։ Այսպիսով եթէ հոլովական այս կամ այն ձեւը նմանօրէն կազմուած համարենք՝ նրա գոյութիւնն ինքնին վկայում է թէ հոլովական այս կամ այն ձեւը երբեմն տիրող է եղած։ Բայց մենք ուղիղ դատած չենք լինի եթէ ասենք, օրինակ, թէ կտրան ձեւն է նմանական կազմութիւնը, որովհետեւ աղբեր ձեւով հոլովում մեր բառերից շատ քչերն ունեն. կտեր ձեւով սեռականը վերի դատողութեանց հիման վրայ կարող էր մի տարածուն ձեւի հետեւել և ոչ թէ մի նուազած ձեւի։ Եւ յետոյ՝ ա՛յն ինչ որ նուազած էր դասական շրջանին, ինչպէս աղբիր-աղբեր հոլովական կարգը, կարող էր շատ առատ լինել նա-

խագրական շրջանին, իսկ հոլովական այն կարգը որ փարթամօրէն գործում է դասական շրջանին, վաղեմի նմանական կազմութեանց արդիւնք նկատուել, ինչպէս մեր այսօրուան -ի սեռականը, որ նմանաբար ճարակած է աշխարհաբար լեզուի բովանդակ բառամբարքը և ուր հին լեզուի «գործոյ, գանձու, աստեղ» եւայլ ձեւերը միապէս դարձած են գործի, գանձի, աստղի եւայլն։

Ես պիտի փորձեմ դուրս գալ նմանական կազմութեանց տեսութեան շրջանակից և խնդրին նայել տարբեր տեսակէտից։ Ես ասում եմ. ինչ որ չենք տեսնում՝ դեռ չի նշանակում որ չկայ կամ չի եղած։ Գրաբարի մէջ չենք տեսնում գործի ձեւով սեռական, բայց ունենք բարեգործի ձեւը. ո՞ր տեղից կարող էր ծագել այսպիսի սեռական, եթէ չլինէր գործի մի ձեւ։ Մենք այսօր ասում ենք գործ — գործի, արդ՝ նմանակա՞ն է այս սեռականը թէ հին դարերից է գալիս։ Գրաբարն ասում է գործոյ, բայց և բարեգործի. արդեօք մեր գործի ձեւը չկա՞ր դասական շրջանին բայց ոչ այն բարբառի մէջ, որ դարձաւ «գրաբար», այլ ուրիշ բարբառների մէջ, որ հաւատարմօրէն բերած ու մեզ հասցրած են այդ ձեւը։ Մեր տեսութեամբ մեր ե ձայնը մի հին իա խումբ է, որ ձուլուած է ժամանակի ընթացքին։ «Գործել» բայի ե-ը լուծելով մենք կըստանանք գործի-ալ։ Նոյն արդիւնքին կը հասնենք լուծելով բոլոր ել վերջացող աներեւոյթ ձեւերը և կըստանանք անհամար թուով բառեր որ ի վախճան ունեն։ Մեր տեսութեամբ մեր սեռականները հին ուղղականներ են տարբեր շեշտառութեամբ. այս հաշուով մեր այսօրուան գործի սեռականը կարող ենք նկատել իբր մի վաղեմի ուղղական, որ պահած է իր ի-ին և «գործ» չի դարձած։ Այդ վաղեմի ուղղականն ու այսօրուան սեռականը չէ՞ որ տեսնում ենք գործի-

ալ ձեւի մէջ և հետեւապէս իրաւունք չունենք ասելու թէ գործի ձեւը՝ իբր ձեւ՝ նախագրական է։ Եւ այն երեւոյթը, որ նախապէս համարեցինք նմանական կազմութեանց հետեւանք՝ իրաւունք չունենք նախնական վիճակ նկատելու։ Իբր բայարմատ «գործ» և «դաս» բառերը մեզ երեւում են գործի, դասի կերպարանքով, երբ լուծում ենք «գործել» ու «դասել» բայերը, թէեւ նրանց դասական սեռականն է գործոյ, դասու։ Մենք այսպիսով տեսնում ենք թէ միեւնոյն բառի տարատեսակ սեռականները՝ իբր ձեւեր՝ նախագրական են, քանի որ միեւնոյն բառն երեւում է և ոյ և ի վախճանով. իբր գործոյ և իբր գործի (բայի մէջ)։

Մանր քննութեան առնենք կտուր բառի սեռական ձեւերը։ Ահաւասիկ կտեր ձեւը։ Սա գնացած է աղբիւր – աղբեր հոլովական կարգով։ Սա մի պարզ նմանութի՞ւն է թէ մի հին հոլովական կարգի մնացորդ։ Ժողովուրդն ասում է «ախպուր», հետեւապէս հին իւ ձայնը արտաբերում է իբր ու։ Արդ՝ լսելով կտուր բառը չե՞նք կարող իրաւապէս ենթադրել, որ դա մի հին կտիւր ձեւից է ծագում ինչպէս «ախպուր» ձեւն է դասական «աղբիւր» ձեւի համեմատութեամբ։ Եթէ ընդունենք այս վարկածը, այն ժամանակ կարող ենք ասել, որ կտեր ձեւը ո՛չ թէ նմանական կազմութիւն է, այլ հին *կտիւր ձեւի օրինական սեռականն է նոյն չափով, ինչ չափով օրինական սեռական ենք համարում «աղբիւր» բառի աղբեր ձեւը։[1]) Առնենք կտրան ձեւը։ Ժողովուրդը «բուռ» (հին՝ «բուռն») բառին տալիս է «բռան» սեռական և դրաբարը «սերմն» բառին՝ «սերման» սեռական, որոնք զուգահեռ են կտրան ձեւին։

---

1) Հոլովական այս կարգի ծագումը մենք մեկնած ենք մեր Յուշագրի մէջ. (Բ. Ց. ԺԴ).

Այս հիման վրայ կարող ենք ասել թէ եղած է մի նախաւոր *կտուրց ուղղական, որի սեռականը պէտք է լինէր կտուրա՛ց և ամփոփումով՝ կտրա՛ց, ինչ որ մնացած է մինչեւ այսօր։ Երբ այսպէս նայինք իրերին՝ այն ժամանակ պէտք է ասենք թէ հին ուղղական ձեւերից, որ եռատեսակ էին կտիւր, կտուրց, կտուր՝ միայն մէկին է մնացել, իսկ սեռական երեք ձեւերը վերապրած են մինչեւ այսօր։ Եւ ուրեմն մենք ոչ թէ նմանական կազմութեանց հետ գործ ունենք, այլ պատկասաւոր ձեւերի հետ։ Եթէ այս համբաներով մէկն ուզենայ ընթանալ՝ բաղմաթիւ հին ու կորած ձեւեր կարող է գտնել ու վերականգնել։ Գրաբարն ունի «քար», բայց սեռական fարաց. պարզ չէ՞ ինքնին, որ եղած է մի նախաւոր *fարց ձեւ, որ չքացած է դասական շրջանից առաջ. որով կարող ենք ասել թէ ց–երի անկումը մեր նոր լեզուի մէջ (հմ. հին՝ հարան, մաան և նոր՝ հարս, մաա), նոր երեւոյթ չէ. գրաբարըն առում է «ծաղիկ», բայց կայ ծաղկաց ձեւով սեռական, որ կարող էր ծագել *ծաղիկն ձեւից և որ չքացած էր դեռ դասական շրջանին։

Բանալով այստեղ մի փակագիծ՝ ես առում եմ, որ այս կարգի հետազօտութեամբ մենք կարող ենք հաստատել, որ ոչ միայն մեր ունեցած հին բառերը տարատեսակ կերպարանք են ունեցած, այլ և տարատեսակ չեչառով են հնչուած, ինչ որ ապացոյց է թէ դեռ նախադրական շրջանին մենք ունեցած ենք լեզուական տարբեր միջավայրեր։ Այսպէս Ա. ապտման առում է. Եւ եղիցի նա որպէս ծառ, որ անկեալ է ի գնացս ջուրց։ Իսկ Ծննդոց գրքի մէջ կարդում ենք (Ա, 6). Եւ ասաց Աստուած. Եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ և եղեցի մեկնել ի մէջ ջուրցդ և ջուրց։ «Ջուր» բառի դասական սեռականն է «ջրոյ», հետեւապէս իր օրինական յողնակին՝ «ջրոց». բայց միեւնոյն խօսքի

մէջ մենք տեսնում ենք երկու տեսակ յոգ. սեռական ջրոց և ջուրց. նոյն ջուրց ձևն է նաև Սաղմոսի մէջ։ Թէև ձևերը տարբեր են, բայց իմաստի տարբերութիւն չունենն. երկուսն էլ յոգ. սեռական են։ Այս ձևերն անշուշտ թարգմանիչը չէ որ հնարած է. նա լսած է իր միջավայրի մէջ թէ՛ ջուրց և թէ ջրոց, որ չէինք կարող միևնոյն լեզուական միջավայրի ծնունդ լինել, թէև դանուած են միևնոյն լեզուի մէջ։

Ընթերցողիս ներողամտութիւնը հայցելով չեմ կարող մի նոր փակագիծ չբանալ, հիանալու համար Ծննդոց գրքի թարգմանչի ճաշակի վրայ։ Նա կարող էր անշուշտ իր սեփական բարբառի սեռական ձևը գործ ածել և գրել.

Եղեցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ և եղեցի մեկնել ի մէջ ջրոցդ և ջրոց։

Կամ թէ գրել. Եղեցի հաստատութիւն ի մէջ ջուրցդ և եղեցի մեկնել ի մէջ ջուրցդ և ջուրցդ։

Բայց նա գրած է օգտագործելով լեզուի մէջ եղած ուրիշ հոլովական ձևեր, հնազանդելով իր գեղագէտ ականջին.

Եղեցի հաստատութիւն ի մէջ ջրո՛ցդ և եղեցի մեկնել ի մէջ ջո՛ւրցդ և ջո՛ւրց։

Կարդացեք իրար յետևից կանոնաւոր և միօրինակ ձևով շարադրածը և խառն ձևերով յօրինուածը և պիտի տեսնէք թէ ո՛րքան առաջինը տաղտուկ է բերում իր միօրինակ ջրոցներով կամ ջուրցներով և որքան միւսը աշխոյժ ու թեթև է իր բազմազանութեամբ։ Մանաւանդ համեմատէք վերջին հատուածը.

ի մէջ ջրո՛ցդ և ջրո՛ց.
ի մէջ ջո՛ւրցդ և ջո՛ւրց.

Թարգմանիչը ունի կշռոյթի նուրբ զգացում և խօսքի մէջ առած է տարատեսակ սեռականներ՝ համաչափ

խօսք կերտելու համար, համաչափ վանկերով և համաչափ շեշտերով, այսպէս՝

եւ եղեցի՛ մեկնե՛լ	ի մէջ ջո՛ւրցդ և ջո՛ւրց
6 վանկ, երկու շեշտ	6 վանկ երկու շեշտ.

և խուսափելու համար տաղտուկ միաչափութիւնից նաեւ ա՛յս համաչափութեան մէջ՝ իր շեշտ ու անշեշտ վանկերը դասաւորած է թեթեւ տարբերացումով, որ առանց խանդարելու գլխաւոր կշռոյթը՝ նրա ամանակները դարձում են այլազան։ Առաջին մասի տարազն է — — — ∸ — ∸ = 3 ∸ 1 ∸
երկրորդի տարազն է — — ∸ — — ∸ = 2 ∸ 2 ∸

Բայց թողնենք մեր հին կշռոյթի խնդիրը, որ սիրելի նիւթ է և արժանի մանրակրկիտ հետազօտութեան։ Կշռոյթի տեսակէտից մեծարժէք են Եղնիկ, բայց մանաւանդ «Ի վկայսն արեւելից» գրքի աննման թարգմանիչը։ Դառնանք մեր նիւթին։

Ջուրց և ջրոց ձեւերի գոյութիւնը միեւնոյն խօսքի մէջ՝ ինչպէս տեսանք՝ գրական արուեստի արդիւնք է, բայց նրանց գոյութիւնը լեզուի մէջ՝ պայծառօրէն ցոյց է տալիս, որ եղած են նախագրական տարբեր լեզուական միջավայրեր, ուր իշխած է տարատեսակ շեշտառութիւն և տուած է տարաձեւ բառեր, այս դէպքում՝ երկու տարբեր ձեւի յոգ. սեռական։ Այդ երկու ձեւերը միեւնոյն հին ձեւից են ծագած՝ տարբեր շեշտառութեան հետեւանքով, այսպէս՝

Նախաւոր ձեւ – ջուրոց.

շեշտն առաջին վանկին, ջո՛ւրոց. ո–ն սղած և չքացած՝ ջո՛ւրց.

շեշտը երկրորդ վանկին՝ ջուրո՛ց. ու–ն սղած՝ ջրո՛ց–ջրոց:

Պարզ է նաեւ, որ ո–ն, որ գրաբար լեզուի կանոններով չի սղում, երբ անշեշտ է մնում, նախագ-

բական շրջանին սղած ու չքացած է անշեշտ մնալով։ Այն լեզուական միջավայրը, որ հնչած է ջո՛ւրոց, սեռականի շեշտը չէր տեղափոխում, ինչպէս չի տեղափոխում արեւելեան հայերէնը, որ ասում է հա՛ցի և ոչ՝ հացի՛. իսկ նա, որ շեշտած է ջուրո՛ց, շեշտած է գրաբարի սովորական կարգով։ Ինձ թւում է, որ շեշտադրութեան առաջին տարազը բնիկ էր, քանի որ նոյն կարգով է գնում նաեւ Կովկասի մի ուրիշ հին ազգ — Վրացին. իսկ երկրորդ տարազը եկամուտ էր։ Ջուրց ձեւը կարծում եմ ռամկինն էր, իսկ ջրո՛ց ձեւը աղնուականն էր կիրարկում։ Սա եկուոր հայն էր, իսկ նա հայացած բնիկը, որ սովրած էր հայերէն, բայց արտաբերած էր իր բնիկ շեշտառութեամբ։ Այսպիսով մենք տեսնում ենք թէ շեշտառութիւնը և հոլովական այլազան ձեւերը վաղեմի ընկերական յարաբերութեանց լեզուական արտայայտութիւն են և նրանց ուշադիր քննութեամբ կարող ենք ենք մի գաղափար կազմել այն լեզուական միջավայրերի մասին, որ եղած են հայ ժողովուրդի մէջ և որոնց հետքերը մնացած են մեր թէ՛ հին և թէ նոր լեզուի մէջ։ Վերջին կէտը թող զարմանք չազդէ։ Նոր լեզուն պահած է այնպիսի հին հետքեր, որ գրաբարը չունի։ Այսպէս օրինակ առնենք ինչ բառը։ Իր դասական սեռականն է ընչի: Այս բառի սեռականները դարձած են հարցական անուններ և մենք ունենք. ընչի՞, որ դասականի վերապրումն է. բայց ունենք նաեւ ինչո՞ւ, որ զուգահեռ է «զարդու, դասու» ձեւերին. ունեցած ենք և *ինչոյ մի ձեւ, որի յոգ. սեռականն է մնացած ժողովուրդի բերանում «ինչ ընչոց» ասութեան մէջ։ «Մի տե՛ս թէ ինչ ընչոց է», այսինքն՝ ստուգի՛ր իրողութիւնը և գտի՛ր բուն իսկութիւնը։ Այս դիտողութիւնները կարող են մի լաւ ներածութիւն համարուել մեր հոլովական կարգի հետազօտութեան, որին

անցնելու առիթ կունենանք։ Տարատեսակ հոլովական կարգը անվիճելի ապացոյց է տարատեսակ լեզուական միջավայրերի գոյութեան։ Այսպիսով մեծապէս պէտք է զեղջել նմանական կազմութեանց տեսութեան արժէքը և լայն տեղ բանալ լեզուական երեւոյթների ընկերական ծագումի տեսութեան։ Տարատեսակ հոլովները պակասաւոր հոլովական կարգի մնացորդներ են. ինչ որ պակասաւոր է այսօր կամ էր դասական շրջանում՝ մի ժամանակ լրիւ է եղած մի լեզուական միջավայրի մէջ նախագրական շրջանին։ Այդ միջավայրերի բնոյթը կարելի է ուրուագծել տարատեսակ հոլովական ձեւերի մանր քննութեամբ։ Մեր տուածը մի նմուշ էր միայն։

Մի քանի խօսք եւս կտուր բառի մասին։ Կտուր նշանակում է տափարակ հողէ տանիք։ Գրաբարը մեզ չի աւանդած «կտուր» բառն ա՛յս իմաստով։ Բառն արտաբերւում է իբր կըտո՛ւր, հետեւապէս մի սուզ վանկով, որ է կը և որի սուզ ձայնաւորը մեր տեսութեամբ երբեմն եղած է լիաձայն։ Ո՞րն էր այդ ձայնաւորը։ Կարծում եմ՝ ու և ուրեմն բառի հին ձեւն եղած է կուտուր, ուր ու-ն շեշտից առաջ դարձած է ը — կըտո՛ւր: Նկատելով որ մեր երկբարբառ ոյ-ն անշեշտ մնալով՝ հնչում է ու. հմ. բոյն և բունկա՛լ, և իր զուգահեռը՝ բնա՛կալ. (այս երկու բառերը նշանակում են այն հաւկիթը, որ թողնում են հաւաբնի մէջ ածան հաւի տակ՝ նոր հաւկիթ առնելու համար), թոյն — թունաւոր եւայլն՝ մենք կարող ենք ենթադրել, որ կուտո՛ւր ձեւի անշեշտ ու-ն մի նախաւոր ոյ է և որ ուրեմն այդ ձեւը ծագում է մի *կոյտո՛ւր ձեւից։ Այս նոր ձեւը արտհելով իբր կոյտ-ո՛ւր, մենք կը գըտնենք կոյտ բառը։ Ուր վախճանի համար հմ. բարուր,

խանձարուր, ասղարուր (ասեղնագործուած) եւայլն։ Այսպիսով կտուր բառի արմատն է «կոյտ»։ Բայց կը-տուրը տափակ տանիք է նշանակում, իսկ կոյտը կոնաձեւ է։ Մեր գիւղական կտուրները բոլորը տափակ չեն։ Խուլ գիւղերի մէջ, ուր տները դեռ գետնափոր են, տանիքները կոյտի ձեւ ունեն. իսկ ուր տանիքը հարթ է՝ երդիկը կտրած կոնից է բացւում։ Ինձ թւում է, որ Քսենոֆոնի տեսած հայ գիւղերում, ուր երդի-կից էին ել ու մուտ անում՝ տանիքները կոնաձեւ էին։ Հաւանօրէն կոնաձեւ տանիքը շատ աւելի դիւ-րութիւն էր տալիս թանձր ձիւնի հալուելուն, մանա-ւանդ որ երդիկի տակ էր վառւում թոնիրը, և կտու-րը շուտ էր ցամաքում։ Տափակ կտուր ունեցող տը-ները սովորաբար կաթում են և ստիպուած են շա-րունակ լողել լողքարով։ Սրանից քառասուն և հինգ տարի առաջ Ալեքսանդրապոլ քաղաքի մէջ դիտած եմ հին տների շէնքը ներսից. երկ-երկու գերան աստի-ճանաբար բարակելով՝ դրուած են իրար վրայ խաչա-ձեւ, որով կազմւում է մի նեղացող չեղջ. բաց մնացած և սանդղաձեւ տեղերը դրուած են հորիզոնական մար-դակներ, որով ներսից թւում է թէ քառակուսի և փոքրացող շրջանակներ են իրար վրայ բարդուած. բարձրանալով ու փոքրանալով նրանք կազմում են վերջին քառակուսին, որ երդիկի անցքն է։ Դրսից այդ բրգաձեւ կազմածը ծածկուած է հողով, որ թող-նում է կոյտի տպաւորութիւն և նման է մեր գմբէթ-ների վերի սուր կոնին, միայն թէ ծայրը կտրած։ Կարծում եմ, մեր հին տների այս ձեւից է ծնունդ առած մեր գմբէթների սուր կոնը։ Այդ կոնը կտրած գլուխ ու բացուածք ունի, երբ կազմում է տաճարին կից դաւիթի տանիքը։ Այդպէս է Սանահին վանքի դաւիթի տանիքը, եթէ յիշողութիւնս ինձ չի խարում։ Կոյտաձեւ տանիքներն այսպիսով կարծում

եմ թէ հնուց են գալիս։ Ասորեստանի թողած մի որմաքանդակի վրայ մենք տեսնում ենք ուրարտական մի քաղաքի գրաւում։[1]) Այնտեղ տեսնում ենք տան ծածքերի տարբեր ձեւեր. ե՛ւ տափարակ ե՛ւ հատուածակող. վերջին ձեւը ենթագրելի է տաճարի շէնքից, որ եռանկիւնի ճակատ ունի։ Մի բազմայարկ շէնքի տափարակ տանիքի վրայ մի նաժիշտ իր տիրուհուն մատուցանում է պատուաւոր մահուան երկու միջոց. մի թաս՝ կարծում եմ թոյնով և մի փոքրիկ դաշոյն։ Այսպիսով տափակ տանիքը Հայաստանի մէջ նոյնպէս շատ հին է։ Նկատենք նաեւ, որ այն գիւղերում, ուր քակոր են վառում, չորցած քակորից կազմում են բրգաձեւ կոյտեր, որոնց վարի մասը յաճախ ձեւացնում է մի խուց, որ ծառայում է իբր հաւաբուն։ Քակորի այդ կոյտերին, որ նման են երդիկ ունեցող գլխատ կոների, ասում են ամրոց, իսկ Սասունցիք՝ կուտոց, որ ծագում է «կոյտ» բառից։ Ինչ որ քակորի կոյտ ու հաւաբուն է մեզ համար, Սուրիա, Հոմսի շրջանում տուն է տեղացիների համար, որ շինուած է կաւից և իր ձեւով յիշեցնում է թաթարական կամ կիրգիզական վրան։ Երկու մարգաչափ բարձրութեամբ և բոլորակ հիմքով կաւէ կոներ են այդ տները, որ ունեն ցածլիկ դուռ և փոքրիկ լուսանցոյց իրենց կողի վրայ։ Այդ տներից կազմուած գիւղերը տարօրինակ տպաւորութիւն են թողնում և յիշեցնում են տերմիտների բները։[2]) Մօտաւորապէս նոյն տպաւորութիւնն են թողնում մեր այն գիւղերը, ուր տները գետնափոր են, բայց ունեն կոնաձեւ երդիկներ։

---

1) Տես G. Maspero. *Histoire ancienne des peuples de l'Orient classique.* հատ. 3-րդ. էջ 59.

2) Այդ գիւղերից մէկի պատկերը կարելի է տեսնել Մասպերոյի նոյն գործի նոյն 3-րդ հատորի մէջ, էջ 35։

Գրաբարն ունի «կտուր» բառը, բայց նա ծագում է կիs արմատից և նշանակում է կտոր, կտրած. իր յոգնակին — «կտուրք» նշանակում է ոչխարի բուրդը խուզելը. հմ. մազը կտրել։ «Կտուր» բառն այսօր ընդլայնած է իր իմաստը և նշանակում է տափակ տանիք. խօսողների լեզուական գիտակցութիւնը «կտուր» բառի մէջ այլեւս չզգալով «կոյտ» գաղափարի ներկայութիւնը, կառչած է բառի նիշած ընդհանուր իմաստին, որ է տան ծածք և հիմա մեր գիւղացու համար միապէս «կտուր» է թէ՛ այն տանիքը, որ իր ձեւով մօտենում է կոյտին է թէ այն, որ տափարակ է։ Կոյտաձեւ կտուրի հետքն է, որ տեսնում ենք վերը բերած ծաղրերգի մէջ, որ ասում է. «կտեր ծէրին նստացնեմ»։ Տափարակ կտուրը ծայր չի ունենայ. կոյտաձեւ տանիքն է, որ ծայր ունի. և իսկապէս ծիծաղիլի է այն փեսայի վիճակը, որին նըստացրած են կոյտաձեւ տանիքի ծայրին...

Մեթոդական ցուցում. Միեւնոյն բառի միեւնոյն հոլովի տարատեսակ կերպարանքները ապացոյց են հին և տարբեր բարբառների գոյութեան։ Աւանդուած ձեւերի հիման վրայ կարելի է վերականգնել հոլովական չղթայի պակսած օղակները և նրանց օգնութեամբ ուրուագծել նախագրական հայերէնի ձեւաբանական կազմը։

ՀԱՒԱՏԱՐԻՄ, ՈՒԽԵՐԻՄ, ՄՏԵՐԻՄ

Որքան դիտեմ այս կազմութեամբ միայն վերի երեք բառն ունենք։ Ժողովուրդի բերանում չեմ հանդիպած «ուխերիմ» և «մտերիմ» բառերին. գրական բառեր են դրանք։ Բայց նա ունի «հաւատարիմ» բառը և նրա մի տարբերակը — հաւատար — , որ արտաբերում է իբր հաւադար։ Այս բառը նշանակում է թէ՛ հաւատարիմ, թէ՛ հաւատարմատար։ «Մի հաւատար չունեմ, որ գործս թողնեմ՝ գնամ, հեռանամ»։ «Ո՛վ է նրա հաւատարը», այսինքն մէկին փոխարինողը, բացակայի փոխարէնն խօսողը, առորագրողը, վճարողը։ Դժուար է առաջապէս որոշել թէ «հաւատար» բառը անկախ կազմութի՞ւն է, թէ «հաւատարիմ» բառի մէկ ամփոփումը –իմ վախճանի կորուստով։ Բայց այդ ձեւը մեզ կարող է մնծապէս նպաստել թափանցելու վերը բերած բառերի ներքին կազմութեան և իմաստին։

Լուծելով «հաւատար» բառն իբր հաւաս–ար, մենք կը տանանք երկու բառ, որոնցից մէկը ծանօթ է — հաւաս. իսկ միւսը, որ է ար՝ կարծում եմ մեր առնել բայի պարզ արմատն է, որի կրկնաւոր ձեւն է ար–ար։ Այս հաշուով «հաւատար» պիտի նշանակէր «հաւատ անող», այսինքն հաւատ ներշնչող, վստահելի։ Այս բառը նոյն կազմութիւնն ունի ինչ որ «ներկարար» բառը. միայն թէ մի տեղ բարդուած է առնել բայի պարզ արմատը — ար, միւս տեղ կրկնաւոր արմատը՝ արար։ Այս արդիւնքին հասնելով՝ մենք կարող ենք լուծել հաւատարիմ բառն իբր հաւաս–ար–իմ, ուր ար նոյն արմատն է, որ տեսանք վերը, իսկ –իմ մի նոր ու անծանօթ ածանց է, որի նիշարար արժէքը յայտնի չէ։ Կարծում եմ, որ նոյն –իմ ածանցն է, որ տեսնում ենք նաև «ուխերիմ» և «մտերիմ» բառերի մէջ։

Մեր տեսութեամբ մեր ե ձայնը մի վաղեմի իա խումբ է, որ ձուլուած է ժամանակին։ Լուծելով մեր երկու բառերի ե–երը՝ մենք կստանանք.

ոխերիմ ← ոխիարիմ

մտերիմ ← մտիարիմ

և տրոհելով արդիւնքը՝ մենք կունենանք.

ոխի–ար–իմ, մտի–ար–իմ.

որով կը տեսնենք թէ վերը բերած երեք բառերը միօրինակ կազմութիւն ունեն։ Ինչ է սակայն տարբերութիւնը հաւաս–ար–իմ և ոխի–ար–իմ կազմութեանց միջեւ։ Մի տեղ բարդութեան առաջին մասը ուղղական ձեւ է, միւս տեղ սեռական ձեւ, որ ասել է՝ վաղեմի ուղղական։ Մտի բառի մէջ սղած է մի ձայնաւոր և դարձած է ը։ Այս ը–ը կարող էր ծագել ա–ից, բայց շատ աւելի հաւանական է, որ նա մի նախաւոր ի կամ ու սղած է, որ սղած է, մնալով անշեշտ։ Արդ՝ «միտ» բառի սեռականն է մտի. «մուտ» բառի սեռականն է նոյնպէս մտի։ Բայց «ոխ» բառն ունի և «ոխոյ» ձեւով սեռական, ինչպէս և «մուտ» բառը «մտոյ» ձեւով. սակայն յոգ. սեռականը աւանդուած է իբր մտից և ոխից, այսինքն վերապրած է մտի և ոխի ձեւերի օրինական յոգ. սեռականը։ Անշուշտ այս հանգամանքը դեռ չի նշանակում, որ չի եղած «ոխոց» և «մտոց» ձեւով յոգ. սեռական։ Կարող էր լինել, բայց չի աւանդուած։ Մուտք իմաստով «մուտ» բառի յոգ. սեռականը պահպանած է ժողովուրդը արեւմտց բառի մէջ, որ նշանակում է արեւամուտ, արեւմտք։ Բայց կարծում եմ, որ «մտերիմ» բառի մէջ՝ առաջին բաղադրիչը «մուտ» լինի թէ «միտ»՝ երկուսն էլ նոյն իմաստն ունին և «մուտը» «միտի» ու–ով տարբերակն է։ Այս կազմութեանց մասին խօսած եմ արդէն. հմ. կիթ և կութ, կիտ և կուտ եւայլն (ԲԳ. է.)։ Այդ իմաստով միևնոյն «մուտ» բառն է և մեր «հմուտ» բառի մէջ, որ

է հու-մուs և ուր հու նշանակում է շատ։[1]) Մեր բառերը յաճախ տալիս են տարատեսակ սեռական. այսպէս՝ Երեւանայ, Երեւանու, Երեւանի։ Յաճախ երբ անջատ են՝ գնում են հոլովական մի կարգով, իսկ երբ բարդութեան մէջ են՝ մի ուրիշ կարգով. «հաւատ» բառի սեռականն է «հաւատոյ», բայց «անհաւատ» բառը տալիս է «անհաւատի» եւայլն։ Այս երեւոյթին առիթ կունենամ անդրադառնալու։ Այսպէս թէ այնպէս մեր վերը բերած բառերի մէջ մենք տեսնում ենք ոխի և մsի ձեւեր, որ սեռական են։ Այդ բառերի երկրորդ և երրորդ բաղադրիչները նոյն են. այսինքն՝ ար-իմ: Հաշուի առնելով ար արմատի ներկայութիւնը՝ մենք կարող ենք ասել. որ ոխերիմ (ոխի-ար-իմ) պէտք է նշանակէր ոխ անող. իսկ մsերիմ (միտի-ար-իմ կամ մուտի-ար-իմ) պիտի նշանակէր միտ անող, այսինքն միտ տուող, խորհուրդ տուող. այդ բառի երկրորդ իմաստն է «մsադիր», այսինքն՝ միտ դնող. որ հակառակ չէ առաջին իմաստին հմ. «խեղճ աղջկայ» մտքումը դրին թէ այն տղան առնելու է իրան»։ «Մտքումս» դրի հեռանամ տանից։

Այս լուծումների մէջ մութ է մնում -իմ ածանցը, որ թոյլ չի տալիս պայծառօրէն ըմբռնելու -ար-՛իմ վախճանի նիշարար արժէքը։ Անցեալները երբ տուի

---

1) Առանձին առած հու բառն այսօր ձայնարկութիւն է, բայց պահած է իր վաղեմի իմաստը։ Այն հարցին թէ՝ շա՞տ մարդ կար այն ինչ տեղը, գիւղացին պատասխանում է ծոր տալով. հո՛ւ. այսինքն՝ շա՛տ շատ, անթիւ, անհամար։ Այդ բառի ու-ն կարճ է եղած, ուստի սղած է և դարձած է ը. հմ. հրմուs: Նոյն հու արմատն է նաեւ հուժկու բառի մէջ, ուր տեսնում ենք ու. բայց այդ ու-ն երկու ու-երի ձուլման հետեւանք է, որով երկարած է, ուստի և չի սղած. այսպէս՝ հու-ուժկու — հուժկու: Նոյն արմատն է կարծում եմ նաեւ հսկայ բառի մէջ, որ պէտք է լուծել իրը հու-սկայ: Խորենացին գրում է սկայ, որ բուն բառը պէտք է համարել։

«ոսկերիչ» բառի լուծումը և գտայ նրա երկրորդ բաղադրիչն իբր ար-իչ՝ այդ վախճանի իմաստը պայծառ էր, որովհետեւ մենք ունենք արարիչ, փրկիչ և նման բառեր, որով ար-իչ բառը դառնում էր հասկանալի (ԲՅ. Զ.)։ Բայց մեր լեզուն չի պահած այնպիսի կազմութիւններ, ուր -իմ ածանցի նիշարար արժէքը երեւար պայծառ։ Միմիայն մի բառ ունենք ճղճիմ, ուր կարելի է գտնել այդ ածանցը, բայց նա ոչ մէկ նըպաստ է բերում։ Այս ածանցն արգասաւոր չի եղած և իր կազմած բառերն ինչպէս տեսանք երեք-չորս հատ են։ Վերի բառերին գործողի իմաստ տալիս է ար արմատը, իսկ թէ ինչ երանգ է տալիս այդ իմաստին -իմ անծանօթ ածանցը դժուար է ասել։ Իբր համեմատութեան եզր կարող եմ յիշել, որ նոյն ածանցն ունի և ռուս լեզուն, ուր նա նոյնպէս անարգասիք է եղած։ Հազիւ կարող եմ յիշել մի բառ. ne-lud-im ուր ne ժխտական է և lud նշանակում է մարդիկ. բառի իմաստն է՝ մարդկանց ընկերութիւնից խորշող, մռայլ, մենասէր։ Հին սլաւերէնը և ռուս լեզուն im վախճանով շատ բառեր ունեն, որ կրաւորական դերբայներ են, բայց այնտեղ m-ն է ածանցը և ոչ im-ը։ Ռուս neludim բառի մէջ նոյնպէս՝ im ածանցի նիշարար արժէքը պայծառ չէ։

Իբր դրական արդիւնք այս լուծմանց կարող ենք արձանագրել, որ ճաւաsարիմ, ոխերիմ և մsերիմ միեւնոյն կազմութիւնն ունին. նրանց երկրորդ բաղադրիչն է -ար-իմ. երկու բառի մէջ այս բաղադրիչի ա-ը ձուլուած է նախորդ ի վախճանին և տուած է ե. ոխի -ար, մsի-ար → ոխեր — մsեր —։

Մի անգամ եւս հաստատւում է մեր տեսութիւնն այն մասին, թէ մեր ե-ը մի հին իա խումբ է, որ ձուլուած է ժամանակի ընթացքին։

Լեզուասէր բարեկամներիս և բնկերներիս

«Յուշագրիս» նման գրութիւններ կարդացող շատ քիչ մարդ կայ մեզանում. հազիւ մի քանի տասնեակ. հետեւապէս ոչ մէկ յոյս կայ տպագրութեան ծախքն իսկ գոցելու։ Ձեւի համար պիտի նշանակած եմ երկու ֆրանք։ Ասում եմ «ձեւի համար», որովհետեւ եթէ քիչ է կարդացողը, շատ աւելի քիչ է գնորդը։ Ընկերներս ու բարեկամներս գիտեն իմ նիւթական կացութիւնը, գիտեն նաեւ, որ այս տեսակ ծախքերի տակ մտնելու ես հնար չունեմ։ Եթէ նրանք ինձ նման այն կարծիքին լինեն թէ Յուշագրերս կարող են պիտանի լինել մեր լեզուի քննութեան համար՝ կը խնդրեմ նիւթապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ։ Յուշագրերս տպագրելու եմ պրակ առ պրակ։ Ամեն պրակի ծախքն է մօտ 300 ֆր. 500 օրինակի համար։ Առացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ։ Աւելորդ է ասել թէ աշխատանքիս համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ գումարից։ Հրատարակուած պրակների ամբողջ պահեստն ու ծնացորդ գումարը պիտի մնայ Համազգային Ընկերութեան։

Սիրով Ն. Աղբալեան

Հասցէ.

Collège Arménien
127, Wadi Abou Djemil
BEYROUTH. Liban

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են Ա — ԺՐ պրակներ

Ամէն պրակի գինն է 2 ֆրանք

Թուղթի տարապայման սղութեան պատճառով այս եւ յաջորդ պրակներուն գինը որոշած ենք **2** *ֆրանք*.

ԳԻՆ 2 ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

Ի.



1940

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՕՈՀՕ» Պէյրութ

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒԾԱԳԻՐԸ

ԺԱՄԱՆԱԿ

Նորից լեզուագիտական է զրոյցս, բայց այս անգամ իմաստասիրական երանգով, որից կարծում եմ դժգոհ չի մնայ ընթերցողս։

Հ. Բերգսոն ասում է թէ «Տեւումը միշտ արտայայտւում է տարածքով։ Ժամանակ նիշող եզրերը փոխ են առնուած տարածութեան լեզուից։ Երբ կանչում ենք ժամանակը, տարածութիւնն է, որ պատասխան է տալիս մեր կանչին»[1]։ Նպատակս է մեծ իմաստասէրի այս պնդումը ստուգել մեր լեզուական նիւթերի վրայ։

Մեր որակումները իմացական են կամ յուզական. մէկը մեզ տանում է դէպի գիտութիւն, միւսը՝ դէպի արուեստ. Երբ ասում ենք «երկար ժամանակ»՝ մենք մի պիտակ ենք տալիս ժամանակի գաղափարին, որ որակում է նրան։ Այդ պիտակն իր մէջ յուզական տարր չունի։ Բայց երբ ասում ենք «տխուր ժամանակ», մենք թէեւ նորից մի պիտակ ենք տալիս ժամանակի գաղափարին, բայց այս անգամ մեր որակումը թուխ երանգով է ներկում ժամանակի գաղափարը. «երկարը» իմացութեան արդիւնք է, «տխուրը»՝ յորդի։ Իբրեւ դատողական ձեւ (քերականօրէն՝ իբրեւ

---

1) A. Bergson. La pensée et la mouvent. 5-րդ. հրատ. էջ 12.

ՀՈՍՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

նախադասութիւն) այդ երկու որակումները համարժէք են. բայց նրանց ծագումը տարբեր է. մի տեղ մենք որակում ենք իմացաբար, միւս տեղը՝ յուզաբար։ Արդ՝ ժամանակի բոլոր իմացական որակումները տարածական են մեր լեզուի մէջ։

Բայց նախ առնենք մի երկու բառ, որով նիշում ենք ժամանակը. այսպէս՝ ասում ենք, «այն միջոցին հայրը ներս մտաւ»։ «Միջոց» բառը «մէջ» բառի յոդ. սեռականն է, որ առած է նոր իմաստ, իսկ «մէջ» գաղափարը տարածական է և նիշում է կա՛մ խորութիւն կամ երկարութիւն՝ երկու կէտերի միջեւ, հմ. «այրի մէջ, փոսի մէջ», և «երկու սուրի մէջ», այսինքն՝ միջեւ։ — «Վայրկեան», որ «վայրիկ» բառից է ածանցուած. հմ. գրաբար «առ վայր մի», այսինքն՝ «մի առժամանակ». «վայր»՝ որից «վայրիկ»՝ տարածական գաղափար է։

Անցնենք հիմա ժամանակի որակումներին։ Ասում ենք. «երկար ժամանակ», «կարճ ժամանակ»։ «Երկար ու կարճ» բառերը տարածական գաղափարներ են նիշում։ Ասում ենք. «գանգաղ ժամանակ», «արագ ժամանակ». «գանգաղն ու արագը» նիշում են որեւէ շարժուն կէտի տեղափոխութիւն ընթածիրի վրայ, իսկ ընթածիրը մի վերացական դիծ է, այսինքն մի տարածք երկու կէտերի միջեւ։ Ասում ենք. «անվախճան, անեզր, անսահման, անվերջ ժամանակ». «վախճանը, եզրը, սահմանը, վերջը» տարածական գաղափարներ են. «վախճանն ու վերջը» այն կէտերն են, ուր դադրում է որեւէ շարժում. «սահմանն ու եզրը» այն ծիրերն են, որ դատում են տարածութեան մի մասը միւսից։ Ասում ենք. «հաւասար ժամանակ». «հաւասար» բառը որ *համասար բառի հնչափոխուած մէկ ձեւն է (մ → ւ)՝ նշանակում է համազլուխ (սար=զլուխ), այսինքն՝ «նոյն բարձրութեան». մենք նո-

բից տեսնում ենք այստեղ մի տարածութիւն, որ չափուած է վերից վար կամ հակառակը։ Ասում ենք. «շատ ժամանակ, քիչ ժամանակ». այս «շատ ու քիչը» որ քանակական որակումներ են, իրենց խորքի մէջ տարածական են, որովհետեւ եթէ «շատ ու քիչը» համրանք է՝ համրած ամէն միաւոր մի որոշ տեղ է գրաւում և որքան շատ միաւոր, այնքան աւելի շատ տեղ, որ նոյն է թէ շատ տարածութիւն։ Եթէ ժամն է միաւորը՝ նրանց շատութիւնը չափւում է ոլաքի շարժումով ժամացոյցի ցուցատախտակի վրայ կէտից կէտ։ Ասում ենք. «մի որոշ ժամանակ, անորոշ ժամանակ». նորից տարածութիւնն է դալիս մեր կանչին. այստեղ «որոշն ու անորոշը» մատնանշում են մի տեւում. տեւումն անբաժան շարժում է, իսկ շարժումը չափւում է ընթածիրով, այսինքն՝ տարածութեամբ։

Տարածութիւն են նիշում և ժամանակի մակբայները։ Ասում ենք. «Առաջին ժամանակ. — Վերջին ժամանակ. — Վերջերս նա հիւանդ էր. — Նախ մերժեց, յետոյ ընդունեց. — Առաջ բարկանում էր, վերջը թշնամացաւ Ուշ եկաւ, շուտ գնաց» եւայլն։ «Առաջին ու վերջին» բառերը նիշում են իրերի տեղը մի շարքի մէջ. «վերջերս», որ «վերջ բառի յոգն. ուղղականն է u յոգով (հին իմաստով յոգ. ներգոյական) տարածութեան մի որոշ կէտ է նիշում։ «Նախ և յետոյ» նոյնպէս նիշում են որեւէ շարժման սկիզբը և յաջորդութիւնը ծիրի վրայ և ուրեմն՝ տարածութեան մէջ։ Այդպէս են նաեւ «առաջ» ու «յետոյ» բառերը, որ «տեղ» են ցոյց տալիս։ «Ուշն ու կանուխը» նիշում են իրերի երեւումը տեսադաշտի վրայ։ Չգիտենք «ուշ, կանուխ և շուտ» բառերի ներքին կազմութիւնը. հաւանական է, որ առընչութիւն ունենան տարածութեան գաղափարի հետ։ Ասում ենք այս

ինչ դէպքը ժամանակից «դուրս» կատարուեց, այսինքն՝ ո՛չ այն ժամանակ երբ սպասում էինք. «դուրս»ը տարածական գաղափար է և նիշում է գոց տարածութեան ծիրի այն կողմը։

Նաեւ բոլոր բայերը, որ կիրարկում ենք ժամանակի ընթացքը ցոյց տալու համար իրենց բուն իմաստով տարածական են։ Ասում ենք. «ժամանակն եկաւ, հասաւ, անցաւ, հոսեց. վազում է, թռչում է, կորչում է, սպառուում է» եւայլն։ «Գալն ու հասնելը» ցոյց են տալիս երեւոյթի երեւումը մեր տեսադաշտի մէջ և շարժումի դադարը նոյն դաշտի մի կէտում. «անցնելն ու հոսելը» տեղափոխութիւն են մի կէտից միւսը. այդպէս են նաեւ «վազելն ու թռչելը». «սպառուելը» իրերի մաս մաս փոքրանալն է և վերջնական չքացումը տեսադաշտից. նոյն չքացումն է նաեւ «կորչելը»։ Բոլորը նիշում են տարածութիւն։ Ուրիշ օրինակներ դանելու հաճոյքը թողնելով ընթերցողին՝ կարող ենք ասել թէ նաեւ մեր լեզուի տուիքներով հաստատուում է մեծ իմաստասէրի պնդումը։

Ես կուզեմ հիմա խորանալ մեր երկու մակբայների կիրարկութեան մէջ, ցոյց տալու համար թէ լեզուն ոչ միայն մի ազգի մթամած պատմութեան շտեմարանն է, այլ և նրա նկարագրի հայելին։ Երբ մենք ուզում ենք որոշել որեւէ պատահարի գիրքը ժամանակի մէջ՝ ասում ենք. «այս ինչ դէպքը պատահեց այս ինչից առաջ կամ յետոյ»։ Երբ ուզում ենք մի բան պատմել՝ ասում ենք. «սրանից մի քանի տարի առաջ... կամ՝ դրանից մի ամիս յետոյ...»։ Ասութեան այս կերպը յատուկ է մեր լեզուին. մենք չունենք ուրիշ մտաձեւ այս կարգի երեւոյթ. արտա-

յայտնելու համար: Մեր լեզուական ըմբռնումով որևէ դէպք պատահում է մի որոշ կէտից «առաջ» կամ «յետոյ»: Ո՞րն է այս աստիճանից մէջ խօսողի դրաւած դիրքը, նրա դիտակէտը: Նա իրան դնում է համապատասխան դէպքերի ընթացքից. դէպքերն ու երևոյթները անցնում են նրա առջևից և նա տեսնում է ու յիշում, որ նախ անցաւ մի դէպք և նրանից յետոյ մի ուրիշ դէպք. ինքը դիտող է միայն, նա նայում է դէպքերի թաւալումին և նայում է առանձնացած դիտարանից: Նա կանգնած է, իսկ կեանքն անցնում է նրա առջևից, և նա որոշում է թէ ո՞րն առաջ անցաւ և ո՞րը յետոյ:

Երբ ռուսն ուզում է մի բան պատմել՝ ասում է. néskolko let tomo'u naya'd, այսինքն՝ «մի քանի տարի սրանից դեպի յետ. ուզում է ասել — «սրանից առաջ»... Զարմանալի ըմբռնում... Աստիճան այս կերպը յատուկ է ռուս լեզուին: Ինչ որ մեզ համար «առաջ» է, նրա համար «յետ է»: Ո՞րն է իր տեղը, որից նայում է իրարագանչութեանց ընթացքին, ո՞րն է իր դիտակէտը: Նա կայուն դիտակէտ չունի: Նա ինքն է, որ շարժում է առաջ և ետևի սրտով քան ընթանում են իրերը. նա ընթանում է իրերի միջից և իր ընթացքով է որոշում իրերի դիրքը ժամանակի ձիրի վրայ: Ինքն անցնում է առաջ և իր տեսած դէպքերը մնում են նրա յետևը և երբ ուզում է խօսել անցած իրերի մասին՝ նա դառնում է դէպի յետ այն կէտից, ուր հասած է արդէն: «Ես անցած եմ առաջ մի քանի տարի յետ պիտի գնաս, որ գտնես այս ինչ դէպքը» ասում է ռուսը: «Ես կեցած եմ տեղը. արդէն մի քանի տարի է, որ անցաւ այս ինչ դէպքը» ասում է հայը: Իր բարբարիւն Մասիսի կատարից հայը նայում է աշխարհի անց ու դարձին և տեսնում է թէ ինչպէս մէկն անցնում է առաջ, նրա-

Նից յետոյ անցնում է մի ուրիշը և այսպէս անվերջ թաւալում. ապրած ու վաթնուած մարդու մի հանդարտ հայեացք։ Թարմ ու աշխոյժ պատանի՝ բոլորը հնաոճրքրութեամբ ուսան անցնում է առաջ, իր յուսերը թաղնելով աչխարհի անց ու դարձերը. և երբ հարցնում ես այս ինչ դէպքը ե՞րբ է պատահել. — «յետնում մեզ» ասում է նա։

Հայը ժամանակը չափում է դէպքերի ընթացքով, իսկ ուսան՝ իր ընթացքի տեւողութով։ Մէկը վաղուց ապրած է և անսած աչխարհի չարն ու բարին և դարձած է դիտող, միւսը լողում է դէպքերի գետի մէջ հոսանքին հակառակ և զօրեղ ոտքի հարուածով դէպքերի ալիքները մզում է յետ և անցնում առաջ։ Նըստած մարդ է հայը, վարձ ու խոհուն, որ ապրուստի համար նայում է աչխարհի հոլովոյթին՝ աւելի դիտող ու հայեցող, քան մասնակից։ Աչխոյժ ու զուարթ է ուսը, աչխարհն իր աչքին գեռ չատ հմայք ունի և նա առաջ է վազում զուարթ ու կայտառ։ «Աչխարհը մի հիւրանոց է, մարդիկը՝ հիւրեր. վտիտ ոտքերը զանազան կողմեր ու կիրճեր» (Չիւանի) երգում է հայը։ «Ինչ՝ լա՛ւ կը խմենք, թէ՝ լա՛ւ քէֆ կանենք, իսկ երբ մահը գայ՝ կը մեռնենք»[1]) երգում է ուսը անփոյթ ու աչխոյժ։ Նոյն նկարագիրը մնաք տեսնում ենք նաեւ ուս ու հայ պատմութեան և գրականութեան մէջ։ Պատմենիկեան վատահութեամբ խորասկում է ուսն իր միտագործութեան դարաւոր չէնքը և վազում է անյայտին. կառչած է հայն իր իշխանութեան աղքատիկ մնացորդին և զգում է կորուստի ահից։ Մէկն զգում է իր մէջ անհուն ուժեր նոր կառուցուածների, միւսը աչքը վախեցած է մնծակառոյց պետութիւնների կործանման վկայ լինելուց։

---

1) Ուս ժողովրդական երգի բառերը են։

Այս զուգահեռը կարելի էր շատ խորացնել ու լայնացնել, բայց ժամանակ է, որ վերջ տանք ասելով թէ լեզուի մէջ պայծառօրէն ցոլանում է ազգի ոգին ու նկարագիրը։ Ասութեանց մանր քննութիւնը համակիր ներապրումով կարող է շատ հատու զէնք դառնալ լեզուական հետազօտութեան և ընդարձակ ու նոր հորիզոններ բանալ հարցասէր մտքի առջեւ։ Մեր կատարածը մի ակար փորձ էր միայն։

ՀՈՏԱԻԷՏ, ՑԵԽՈՏ, ՏԱՆՁՈՒՏ

(— ԻԷՏ, — ԻՈՏ, — ՈՒՏ)

Վերը բերած բառերի կազմութեամբ մենք շատ ուրիշ բառ ունենք։ «Հոտաւէտ» նշանակում է շատ հոտ ունեցող, բուրեան, «ընչաւէտ», շատ ինչք ունեցող եւայլն։ «Ցե՛խոտ» նշանակում է վրան բաւական ցեխ ունեցող. երբ ցեխը շատ-շատ է՝ ասում են «ցեխաթաթախ, ցեխակոլոլ, ցեխաշաղախ»։ Այս բառն ունենք և «ցխո՛տ» ձեւով, որ արդիւնք է տարբեր շեշտառութեան և տարբեր լեզուական միջավայրի. այսպէս՝ ցե՛խոտ. շեշտն առաջին վանկին՝ արեւելեան շեշտադրութեամբ, որ չի սղում հետեւորդ ձայնաւորը. և «ցեխո՛տ → ցխո՛տ», ուր շեշտը վերջին վանկին է զարկում, ուստի առաջին ձայնաւորը սղած է։ «Տանձուտ» նշանակում է անտառի մէջ մի վայր, ուր շատ վայրի տանձենիներ խմբուած կան. հմ. նաեւ Տղմուտ (գետ) ուր շատ տիզմ կայ, որ շատ տիզմ ունի։ Այսպիսով — ԷԷՏ, — ՈՏ և — ՈՒՏ վախճաններին կառչած է շատի և հաւաքի գաղափարը։

Ինչպէս ասած եմ մի տեղ, բառերի քննութեան ժամանակ կարելի է մեկնել ե՛ւ հնչական կայանից ե՛ւ

իմաստական կայսրանից (ԲՑ·Լ, 144)։ Այս անգամ ևս մնկնում եմ իմաստական կայսրանից և ասում եմ. նրբէ այս վախճաններով բառերը միևնույնաստ են, այսինքն նիշում են չատի և հաւաքի զաղափար՝ պէտք է կարծել, որ նրանք հնչական ևս մերձակազմ են և ուրեմն –ւks, –ns, –nւs վախճանները մի նախաւոր վախճանի հնչափոխուած տարբերակներն են, որ ծագած են տարաւոտակ պայմանների հետևանքով։ Տեսնենք այդպէ՞ս է։

Նախ նկատենք, որ այդ բառերի անուականները ի վախճան ունեն—հաւաւէսի, ցնհոսի, տանձաւի։ Հետևապէս այս ձևերն են այդ բառերի նախագրական ուղղականները քան մեր տեսութեան, որով անուական և ուղղական նոյն ձևերն են, միայն տարբեր չնչառութեամբ, որի հետևանքով և մի հոլովի մէջ պահած և միևս հոլովիի մէջ նետած են վախճանական ի–ն։

Մեր տեսութեամբ մեր ո–ն մի հին ւօ է, այսինքն մի ասելի հին ւաւ (աւ=օ)։ Այս կազմութեան մէջ առաջին ւ–ը մեծ մասամբ մի հին ի ձայնից է ծագած, որով ւաւ–ը զուգահեռ է իաւ կազմութեան։ Այս հիման վրայ մեր ու–ն ծագած է մի նախաւոր իաւի խմբից։ Այդ երկու ձայնների ծագման հոլովոյթի ծիրը ևս գծած եմ այսպէս՝

Ո = իաւ → իօ → ւօ → ո։ ու քանի որ ի ձայնը կարող է սղել և յ ուղղութեամբ, ուստի հոլովոյթի այդ ծիրին զուգահեռ ընթացած է մի ուրիշ ծիր այսպէս՝ իաւ → իօ → յօ։ հմ. յօթանջկել = որոնջկել։ յօնք — ունք։

Իսկ ու ձայնի հոլովոյթին նման է այսպէս՝

Ու = ← իաւի → իօի → ւօի → ոի → ու։ Այս հոլովոյթը նոյնպէս ունեցած է իր զուգահեռը յ–ով, այսպէս՝

Ու = իաւի → իօի → ւօի → ոի → ոյ։

և այս է պատճառը, որ oյ և ու լծորդ են. նրանք ծագում են միևնույն լծորդ ձայնախմբերի ամփոփման հետևանքով։

Կիրարկելով այս տեսութիւնը մեր ունեցած վախճանների վրայ՝ մենք կըստանանք.

gեhո՛տի ← gեhիա՛ւտի.

տաճձո՛ւտի ← տաճձիա՛ւիտի.

Ջուգադրելով մեր լուծած վախճանները, մենք կունենանք՝

— իա՛ւտի, իա՛ւիտի.

Առաջին վախճանի մէջ մենք ունենք մի լոյն խումբ՝ ւտ. նրանց միջևը չգացած է մի ձայնաւոր։ Ո՞րն է այդ ձայնաւորը։ Նա կարող էր լինել կամ ա կամ ի, քանի որ բառակազմական այս վազեմի շրջանում դեռ գոյութիւն չունէին ե, ո, ե և ու ձայնները, որոնք ձոյլ են և ուրիշն հետագային ծագած են հայնական պարզ խմբերի ամփոփումով։ Առժամապար ենթադրելով թէ այդ չգացած ձայնը եղած է ի՝ կարող ենք վարկածօրէն ասել, թէ այդ երկու վախճանները ոտ և ուտ միևնոյն նախաւոր վախճանից են ծագում, որ էր իաւիտի, միայն թէ մէկ միջավայրում չնչտից յետոյ գալով ի–ն սպած է և կորած, որով իա՛ւիտի տուած է իա՛ւտի և սա ամփոփուած է իրր — ոտի՝ հոդվոյթի վերը բերած ձևով, իսկ միւս դէպքում ի–ն անցած է յ կամ ւ կիսաձայն վիճակին և ամփոփումով տուած է oյ կամ ու. հմ. չոյտ և չուտ։

Նոյն տեսութիւնը կիրարկենք «հոտաւէտ» բառի վրայ և նախ նկատենք, որ մեր ի ձայնը համեմատաբար նոր է. նա ծագում է այ կամ իայ խմբերի ամփոփման հետևանքով. այսպէս՝ գրաբար — գնայր. լօռեցին ասում է «գնէր ոչ», այսինքն՝ «ոչ գնայր». ու նաև հայր, մայր → ճեր, մեր։ Ինչպէս նաև՝ *տեսանիա՛յր → *տեսանեյր → տեսաներ և *տեսանիա՛ւր

— *տեսանե՛ւր և միւս կողմից՝ *տեսանի՛աւր → տեսանի՛ւր: Այս հիման վրայ հոտաւէա բառի ե ձայնը կարող էր ծագել կամ այ խմբից կամ իայ խմբից, որ պիտի դառնար էյ, իսկ սա պիտի ասար է, որով այդ բառի նախաւար կերպարանքը պէտք է լինէր

կամ՝ հոտաւա՛յտի
կամ՝ հոտաւիա՛յտի

Ջուգադրելով այս երկրորդ ձևին «ցեխոտ» բառի լուծումը՝ մենք կըստանանք.

հոտաւիայտի
ցեխիաւտի

և կը տեսնենք, որ սրանք միևնոյն նախաւար կազմութիւնն ունին, միայն թէ մի դէպքի ւ–ը փոխարինուած է միւս դէպքի յ–ով, որ նրա լծորդն է; կը տեսնենք նաև, որ «հոտաւէա» բառի է–ն ծագում է իայ խմբից: Նկատենք անմիջապէս, որ պիտուենները ենթադրում են թէ հնդեւրոպական նախալեզուի մէջ եղած են յ և ւ ձայնները և ուրիմն նրանց լծորդութիւնը մենք կարող ենք չատ հին համարել:[1])

Եթէ հիմա զուգադրենք «տանձուտ» ձևի լուծումը «հոտաւէա» ձևի լուծման՝ մենք կըստանանք.

տանձիաւիտի
հոտաւիայտի

և կը տեսնենք թէ երկրորդ ձևի մէջ մենք ունենք մի լրիւ խումբ յտ, որի միջեւ ադած է մի ձայնաւոր: Իր զուգահեռին նայելով կարող ենք ասել, որ այդ ձայնաւորն եղած է մի ի, որ յօդասցած է և ձուլուած նախորդ յօդի հետ. և ուրիմն այդ վաճառնի անվրիպ ձևն եղած է *հոտաւիայիտի, որի լրիւ զուգա-

---

[1]) տես A. Meillet. Introduction. էջ 76—9. կամ՝ K. Brugmann. Gramm. comp. էջ 94.

հետն է *տաճնիաւիսի և որոնց միակ տարբերութիւնն տեղծուած է յ և ւ լծորդ ձայնների։ Մենք հիմա կա-րող ենք զուգադրել մեր լուծման արդիւնքները.

ցեխաա	—	ցեխիաւ(ի)տի
տանձուա	—	տաճնիաւիսի
հոտաւէա	—	հոտաւիայիսի

Տրոհելով այս ձևերը մենք կըստանանք՝

ցեխ	—	աւ–իս–ի
տանձ	—	աւ–իս–ի
հոտաւ	—	այ–իս–ի

Նեանելով միօրինակ և զուգահեռ ածանցները, որ են — աւ–իս–ի ‖ այ–իս–ի՝ մենք կունենանք. ցեխի, տաճնի, հոտաւի: Առաջին երկուսը մեր բառերի նախատիպ ուղ-ղականն են և հետագայ սեռականը. երրորդ ձևը հոտ բառի գործիականը կարող ենք համարել, իբր սեռ. հոտի (որ պահած է աչխարհաբարը) և գործ. հոտ–աւ–ի հմ. կամ(ի), կամաւ(ի): «Հոտաւ»ն գործիական հին ձև է, Այդ բառն ունեցած է և մի տարբեր գործիա-կան ձև, որ գտնում ենք հոտեւաճ բառի մէջ, որ նը-շանակում է «բուրել, հոտաւէա» և որ կարող ենք լուծել և արտնել իբր հոտիաւ–աճ, ուր հոտիաւ կարող ենք համարել գործիական ձև. հմ. բարեւ, որ է բարիաւ։[1]) Մենք այսպիսով անանում ենք, որ մեր ե-

---

1) «Աճ» ածանցը նշանակում է գանդող. նա զուգահեռն է անակ. ant ածանցի, որ եզ. ուղղակ. արական ձևի մէջ երեւում է իբր an, իսկ եզակի ուղղական չեզոք ձևի մէջ երեւում է իբր at. va'dan և va'dat — խօսող։ Ֆ.Կնաուա-էր, Դասագիրք առնակրիտ լեզուի, էջ 30 ; 70 (ռուսերէն)։ Այս հաշուով հոտեւ-աճ պիտի նշանակէր «հոտով անող». հմ. «ձեռքով անել, գլխով անել» — համաձայնել եւայլն։

Մեր լեզուն պահած է և ant ձևը, l–ին տալով d կը-շիռ. այսպէս՝ «մարմանդ», որ պէտք է վերականգնել իբր մա-

բեք բառաձեւերը միատեսակ ածանց ունեն, որ սակայն միօրինակ ճակատագիր չեն ունեցած։ Հետեւենք հիմա այդ ճակատագրին։

1) *Ցեխոտ.*— ցեխի ա՛ւ(ի)տի.— *Այս կազմութեան վերջընթեր* ի-ն *չեշտից յետոյ գալով կարող էր սղել ու կորչել. այդպէս պատահած պէտք է ենթադրել «ցեխոտ» բառի* -ns *ածանցի հետ, որով հին ձեւը պիտի դառնար* ցեխի-ա՛ւ-տի: *Այս նոր ձեւի մէջ* աւ *խումբը անցած է* օ *հնչման, որով ձեւը դարձած է* ցեխի-օ՛տի. *այս ձեւի մէջ* ի-ն *սղած է* ւ *ուղղութեամբ և ձեւը դարձած է* ցեխւօ՛տի. *այս ձեւի* ւօ *հնչիւնն է, որ Ս. Մեսրոպ տառադարձած է իբր* n *և մենք ունենք ցեխոտ(ի) ձեւը։*

2.— *Տանձուտի.*— տանձի-ա՛ւ-իտի.— *այստեղ վերջընթեր* ի-ն *սղած չէ. հոլովոյթն սկսուած է նոյն* աւ *խմբի* օ *հնչումով և ձեւը դարձած է* տանձիօ՛իտի, *ուր* օ-*ին նախորդող* ի-ն *սղելով* ւ *ուղղութեամբ՝ բառաձեւը դարձած է* տանձւօ՛իտի. *չեշտից յետոյ եկող և* օ-*ին յաջորդող* ի-ն *կարող էր սղել և իբր* յ *և իբր* ւ. *և բառը կարող էր դառնալ մի կողմից* տանձւօ՛յտի, *միւս կողմից* տանձւօ՛ւտի. ւօ *կազմութեան իր դրչական կերպարանքը տալով՝ մենք կունենանք* տանձո՛յտի *և* տանձո՛ւտի: *Այս ձեւերը զուգահեռ են և նախադրական ուղղականներ են, որ հետագային կորցրած են իրենց* ի *վախճանը և դարձած են* տանձուտ: Տանձոյտ *ձեւը չի մնացած, բայց մենք ունենք զուգահեռ կազմութիւն-*

բում-անդ. մարում ձեւը հին աներեւոյթ է և կարծում եմ հին տրական, ինչպէս հին հոլով է և սանսկրիտ աներեւոյթի վախճանը, որ է — ԼԱՌ (*հայցականի վախճանով*). *հմ. իմում: «Մարմանդ կրակ» նշանակում է մարելու մօտ կրակ, նստած կրակ, որ սկսած է մոխրի խաւ առնել. ուրեմն «մարմանդ» նշանակում է մարւող, մարում անող։*

ներ հմ. չուտ և չոյտ եւայլն։ Յատուկ հետազօտութեան նիւթ կարող է լինել այն պարզ հարցումը թէ ինչո՞ւ մեր լեզուի մէջ մնացած են – ոյս և – ուս վախճանով բառեր և ինչո՞ւ համար չեչտուած ո՛յ տալիս է անչնչա ու։ Ես չեմ մտնում այդ հարցի քննութեան մէջ, որ կարող է մեզ չեզել և հեռու տանել։

Մեր տուած լուծումները յարուցանում են մի երկու նոր խնդիր։ Միևնոյն լեզուական միջավայրը չէր կարող մի անգ ազել ու յապաւել ի–ն, միւս տեղը պահել։ Իսկ մենք տեսանք թէ իաւիսի նախաւոր ձեւը այդ ազումով ու պահպանումով միայն կարող էր իաւս և ուրիմն ւօs → ոs դառնալ և իաւիս մնալով ւօյs կամ ւօւs, այսինքն՝ ոյs կամ ուs դառնալ։ Ինքնին պարզ է, որ մենք ստիպուած ենք ընդունելու թէ ոs և ուs վախճանները տարբեր լեզուական միջավայրերի ծնունդ են։ Ստիպողաբար մենք պիտի դանք այս եզրակացութեան, եթէ ընդունենք այդ երկու ձեւերի նախնական միօրինակ կազմութիւնը։ Բայց այդ միօրինակութիւնը մենք առացանք իաւս կազմութեան ւս լոյն խմբի մէջ ենթադրելով մի վազեմի ի, որ ընկած է չեչտից յետոյ։ Այդ վերականգնած ձայնաւորը կարող էր լինել և մի ա. և ուրիմն նախաւոր կազմութիւնը կարող էր այս կերպարանքն ունենալ. ցեխիա՛ւասի, ուր ա–ը չեչտից յետոյ նոյնպէս կարող էր ազել ու չքանալ՝ տալով ցեխիա՛ւս, որ ամիփոխումով պիտի մեզ տար նոյն արդիւնքը, այսինքն – ուs վախճան։ Այս վարկածով մենք ստիպուած չենք լինի տարբեր լեզուական միջավայր ենթադրել, որովհետեւ մենք կարող ենք ասել, թէ միևնոյն միջավայրի մէջ չեչտից յետոյ եկող ա–ը ազում էր և ի–ն մնում,[1])

---

1) Ինչպէս գրաբարի մէջ անչնչա է–ն ու ո–ն մնում են անփոփոխ, իսկ ի–ն և ու–ն ազում են։

որով իա՛ւաsի տալիս էր իա՛ւsի → ns և իա՛ւիsի կազմութիւնը պահելով ի-ն՝ յաջորդական սղումներով և ամփոփումներով տալիս էր - ուs. և գուցէ պահուածքի այդ տարբերութեան պէտք է վերագրել - ns և - ուs վախճանների իմաստական թեթեւ տարբերութիւնը։ Այս խնդիրները շատ պարզ չեն. նրանք աստիճանաբար կը պարզուին, երբ բազմատեսակ ձեւեր միօրինակ սկզբունքով լուծուին և ստացած արդիւնքը դասակարգուի։ Մեր կատարածը տարրաբանի աշխատանք է, բայց առանց փորձարկութեան լայն միջոցների, որովհետեւ մեր այսօրուան լեզուն արդեն մի որոշ ձայնաշար ունի, այսինքն հոլովոյթի որոշ արդիւնքներ, և ունի մի քանի ազօտ նշմարներ միայն, որոնց օգնութեամբ ճգնում ենք ճեղքել դարերի թանձը խաւարը և վերականգնել լեզուական մի միջավայր, ուր չկային ձոյլ բաղաձայներ և ձայնաւորներ և ուր կային սակայն յ և ւ կիսաձայները, որ մեր տեսութեամբ վաղեմի ձայների չքացման հետքեր են միայն։ Նրանք որ կը լինեն ինձանից շատ աւելի հըմուտ օտար ու քոյր լեզուների գիտութեամբ և կը յօժարեն այս խուզարկութիւնները շարունակել՝ վըստահ եմ թէ պիտի հասնեն աւելի ստոյգ արդիւնքների՝ մեկնուած խստապինդ պատճառական կապակցութեամբ։ Բայց գիտեմ նաեւ, թէ վարկածներն են, որ դառնում են տեսութիւններ, ուստի շարունակենք մեր աշխատանքը։

3) Հոտաւէտ. հոsաւիա՛յիsի։ Այս կազմութիւնը համեմատած sանձիաւիsի կազմութեան հետ՝ մատնանշում է երկու տարբեր լեզուական միջավայր. ուր մի հին և չքացած ձայն մի տեղ իբր չքացման հետք թողած է ւ, միւս տեղը յ, և այս տարբերութիւնն է պատճառ, որ մենք ունենք մի կողմից - ւեs միւս կողմից - ուs, որ արժէքով նոյն են։ Այս հանգա-

մանքն ինձ ենթադրել է տալիս, որ այդ ւ-ն ու յ-ն միեւնոյն ձայնի չքացման ծիրն են, բայց թէ ի՞նչ էր այդ ձայնը — դժուար է ասել։ Նախաւոր կազմութեանց այս տարբերացումը շատ հին պէտք է համարել, նկատելով որ այդ տարբերութեան արդիւնքը մենք տեսնում ենք ամենահին բառերի մէջ. այսպէս՝ մեր ns *vol* (հին ոտն) բառը, որ Թիֆլիսի բարբառում հնչում է վուs *vut*, Գանձակի բարբառում վեs *vet*. (հմ. ցեխոs, հոտաւեs, տանձուs). այսպէս՝ ով, որ Կարին հնչում էին վեվ, Արցախն ասում է հու, իսկ Խոյը մինչեւ իսկ վաւ: Այս վերջինը մեր ո-ն է՝ մեր լուծումով (n = wo ← waw) (o = aw). և գիտենք թէ դասական լեզուի մէջ n նշանակում է ով։ Կարծում եմ թէ Արցախեցու հու (ով) բառի հ-ն մի հնչափոխուած յ է. հմ. յիմար, յեsոյ, որ այսօր հնչում ենք հիմար, հեsոյ. հետեւապէս այդ բառը նախապէս եղած է յօւ։ Այս գրութեամբ մենք ստանում ենք ով բառի օրինական և ճշմարիտ զուգահեռը։ Վերն արդէն պարզեցի թէ յo և ւo լծորդ են։ Գալով երկրորդ ւ-ին՝ Արցախի մէջ նա փոխանակ անցնելու վ հնչման՝ ձուլուած է նախորդ o-ի հետ և տուած է զուs ու (u) (մեր տեսութեամբ մեր դասական ու-ն անզուs է եղած և հնչուած է ւու և հետագային է միայն, որ նա լերկացած է. հմ. գաւառ. «վո՞ւր կերթաս», որ է՝ «ո՞ւր կերթաս»)։ Իսկ դասական լեզուի մէջ այդ երկրորդ ւ-ը հնչափոխուած է վ ուղղութեամբ և բառը դարձած է ով։ Այսպիսով գրաբարի և Արցախի ձեւերը լծորդ են հնչապէս. յoւ (yu) որ դարձած է hu) = ով (wow) որ դարձած է ov և որ տեղ-տեղ հնչում է vov. «վո՞վ եկաւ», այսինքն՝ «ո՞վ եկաւ»։ Էական բայից առաջ Արցախեցու հու-ն զգացնում է իր վախճանի ւ-ը, բայց ո՛չ միշտ և ո՛չ ամեն տեղ, «էդ հո՞ւվա».

այսինքն՝ «այդ ո՞վ էր»։

Իրեւ եղրակացութիւն այս մանր քննութեան կարող ենք ասել, որ – ns, – uks և – uts վախճաններըը նախապրական մերձաւոր կազմութեանց հետագայ ամփոփումներ են և այդ է պատճառը, որ նրանք բառերին տալիս են մերձաւոր իմաստ։ Այդ իմաստն է՝ «շատ և հաւաք»։

28822

Հեղուսկը բարեկամներիս և ընկերներիս

«Յուշագրիս» նման գրութիւններ կարդացող շատ քիչ մարդ կայ մեզմանում. հազիւ մի քանի տասնեակ. հետեւապէս ոչ մէկ յոյս կայ տպագրութեան ծախքն իսկ դոցելու։ Ձեւի համար դին նշանակած եմ երկու ֆրանք։ Ասում եմ «ձեւի համար», որովհետեւ եթէ քիչ է կարդացողը, շատ աւելի քիչ է գնորդը։ Ընկերներս ու բարեկամներս գիտեն իմ նիւթական կացութիւնը, գիտեն նաեւ, որ այս տեսակ ծախքերի տակ մանելու ես հնար չունեմ։ Եթէ նրանք ինձ նման այն կարծիքին լինեն թէ Յուշագրերս կարող են պիտանի լինել մեր լեզուի քննութեան համար՝ կը խնդրեմ նիւթապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ։ Յուշագրերս տպագրելու եմ պրակ առ պրակ։ Ամեն պրակի ծախքն է մօտ 300 ֆր. 500 օրինակի համար։ Ստացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ։ Աւելորդ է ասել թէ աշխատանքիս համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ գումարից։ Հրատարակուած պրակների ամբողջ պահեստն ու ձեռացորդ գումարը պիտի մնայ Համազգային Ընկերութեան։

Սիրով Ն. Ադրալեան

Հասցէ.

Collège Arménien
127, Wadi Abou Djemil
BEYROUTH. Liban

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են Ա — ԺԹ պրակներ

Առէն պրակի գինն է 1 ֆրանք

Թուղթի տարապայմաններ սղութեան պատճառով սկսած ԺՀ պրակէն գին որոշած ենք 2 ֆրանք.

ԳԻՆ 2 ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԻԱ.



1940

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՅՈՅՍ» Պէյրութ

Այս ցուցագրի 149 եւ 150 էջերի մէջ երջուած h գիրը y գրի արժէքն ունի:

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒԾԱԳԻՐԸ

ՄԻԵԻՆՈՅՆ ԲԱՌԻ ՏԱՐԲԵՐ ՁԵՒԵՐԸ

(ԼՈՅՍ — ԼՈՒՍ)

Մեր նոր լեզուն ունի «բուն, լուս», իսկ գրաբա-
բը՝ «բոյն, լոյս»։ Վերջին բառերի արտաբերութիւնն
է buyn. luys, թէեւ գրութիւնն է boyn. loys, որով
մեր արտաբերութիւնը իսկապէս գրութիւն չունի։ Նա
մեզ հասած է բերանացի աւանդութեամբ։ Մեր նոր
լեզուն, այսինքն մեր բարբառներն ասում են լիւս,
լուս, լիս, լոս, loys (Քեսաբ), բայց luys։ Ես
հարցնում եմ. ի՞նչն է պատճառը, որ մենք ունենք
լուս ձեւը և ինչո՞ւ համար loys գրածը մենք արտա-
բերում ենք luys: Ս. Մեսրոպ անկասկած հնչում էր
loys: Մենք ամենքս Սուրբի աշակերտների աշակերտն
ենք, բայց աւանդութիւնը մեզ բերած է ոչ թէ loys
այլ luys։ Արտաբերութեան այս փոփոխութիւնը ար-
դեօք Ս. Մեսրոպից յետո՞յ է կատարուած։ Չէ՞ր կա-
րող պատահել, որ հանրային այն խաւը, որ Ս. Մեսրո-
պի պէս արտաբերում էր loys՝ երբ չքացաւ հայոց աշ-
խարհից, հանրային ուրիշ խաւերից դուրս եկած լինեն
նոր դասատուներ, որ իրենց բնիկ արտաբերութեամբ
հնչած լինեն loys գրութիւնը, առանց սակայն փոխե-
լու այդ աւանդական գրութիւնը. ինչպէս չարունա-
կած են գրել հին ձեւով «արդեւք» ardewq, բայց
հնչած են ardeoq կամ ardyoq։ Ուրիշ խօսքով՝ luys

ԱԿԱԴԵՄԻԱ

արտաբերութիւնը գաւառական շրջանից յետո՞յ է ծագած թէ՞ կար նաեւ այդ շրջանից առաջ, բայց ոչ այն բարբառի մէջ և հանրային այն խաւի բերանում, որի խօսածը դրի առնուեցաւ ու դարձաւ «գրաբար»։

Դիտենք թէ գրաբար լեզուի մէջ չէշտուած ո՛յ-ն ասլիս է անշէշտ ու. այսպէս՝ յո՛յս — լուսո՛յ։ Բայց հին լոյս և նոր լուս բառերը միասնակ են և իրենց չէշտը իրենց միակ վանկի վրան է. հետեւապէս չէշտ և անշէշտ վանկի խնդիր չկայ այստեղ. թէ՛ ո՛յ և թէ ո՛ւ միապէս չէշտուած են։ Ի՞նչպէս մեկնել ուրեմն այս երկու ձեւերի գոյութիւնը։

Կարելի է յօրինել երկու վարկած։

1) Այս երեւոյթը կարելի է համարել թիւր արտասանի հետեւանք։ Խօսողները թէեւ ոչ անգրագէտ ու պայծառ, բայց միշտ մի գործօն պիտակցութիւն ունեն լեզուական ձեւերի իմաստաւորիչ արժէքի մասին։ Ենթագիտակցութեան պէս մի գործօն է դա, որ անմիջապէս զգացնում է իր գոյութիւնը, երբ վրիպում է լեզուի կանոնաւոր կիրարկութիւնը։ Բաւական է, որ մէկը բերնից թռցնէ. «ես խմացայ», որ իսկոյն թէ՛ ինքը և թէ ունկընդիրը նկատեն վրիպանքը և զգան թէ պէտք էր ասել. «ես իմացայ»։ Լեզուական մի որոշ ունակութիւն, որ դարձած է սովորոյթ, ըմբռնաստանում է իսկոյն աւանդական կարգի խանգարման դէմ։ Երբ լսում ենք «հացի»՝ մենք հասկանում ենք թէ խօսողն այդ ձեւին մեզ նման ասլիս է սովոական իմաստ և դիտենք թէ մեզ նման նա՛ եւս այդ բառի ուղղական ձեւը համարում է «հաց»։ Ամէն մարդ առանց քերականի կարգալու քերական է և կարիք չունի «ուղղական» և «սեռական» պիտակներն իմանալու՝ տարբերելու համար այդ հոլովական ձեւերն իրարից, որոշելու նրանց նիշատար արժէքը և կիրարկելու ճիշտ ու տեղին։ Եթէ մի ի-ով սեռական տաք

մի հայ մարդու, նա անմիջապէս կարող է գտնել նը-
րա ուղղական ձեւը, որքան և ձեր արտաբերած բառը
արտասովոր և անծանօթ լինի նրա ականջի համար։
Ասէք մեր գիւղացուն. «զուլուսի կինը», «հոտենտոտի
տունը». նա կը հարցնի. ի՞նչ բան է կամ ո՛վ է այդ
«զուլուս» կամ «հոտենտոտ» ասածդ։ Այս հարցումը
տալու համար նա կատարում է լեզուական որոշ աշ-
խատանք. «հոտենտոտի» ձեւը նա գնահատում է իբ-
րեւ սեռական. յապաւում է նրա ի վախճանը և գտ-
նում է նրա ուղղականը և այդ ուղղական ձեւով
կազմում է իր հարցումը։ Այսպիսով նա տրոհում է
լեզուական ձեւը, զատորոշում է հոլովակերտ ձայնա-
ւորը և գտնում է բառի բունը։

Լատին լեզուն երբեմն ունեցած է մի բառ *honos,
որ նշանակած է «պատիւ»։ Այդ բառի սեռականն ե-
ղած է honos-is: Դեռ ևս նախագրական շրջանին եր-
կու ձայնաւորի միջեւ ընկած s ձայնը հնչուած է z և
բառը դարձած է honoz-is: Այնուհետեւ Ք.Ա. չորրորդ
դարից սկսած՝ երկու ձայնաւորի միջեւ ընկած z ձայ-
նը անցած է r հնչման[1]) և հին սեռական ձեւը արտա-
բերուած է honor-is։ Դարերի ընթացքին լատինը իր
-is վախճանը լեզուապէս զգացած է իբր սեռական
ձեւի նիշարար, որ կցւում է ուղղական ձեւին և փո-
խում է նրա իմաստը, ուստի honor-is ձեւը համա-
րելով «պատուի», նա յապաւած է -is վախճանը և
գտած է ուղղական ձեւը — honor — պատիւ։ Հին
honos և միջանկեալ honoz չքացած են և պատմու-
թեան մէջ լատինն երեւում է honor բառով։

Կարող ենք ենթադրել, որ նոյնը պատահած է և
մեր «լոյս» բառին։ Արտաբերելով իր սեռական ձեւը,

---

[1]) A. Ernout. Morphologie historique du latin
էջ 74, Ծանօթ.

որ է «լուսոյ» և նկատելով թէ ոյ վախճանն է, որ նշուում է սեռական հոլովում, քանի որ այդ են ցոյց տալիս «գործոյ, գեղոյ» և նման ձևերը, հին հայը արտած է սեռական ձևն իբր լուս-ոյ և գուած է նրա ուղղականը — լուս: Այս արտահայտին նպատակած են լինելական ուրիշ ձևերը. համեմատելով «թագաւոր» և «լուսաւոր» կազմութիւնները, նա յայտնած է միևնոյն — աւոր վախճանը և նորից գուած է լուս բառարմատը. գուգադրելով «լուսցաւ» և «լուսացոյց» ձևերը և յայտնելով — ացաւ վախճանը, նորից գուած է լուս բայարմատը. իրար դէմ բերելով «խաւին» և «լուսին» բառերը և արտնելով իբր խաւ-ից և լուս-ից՝ նորից հանդիպած է լուս ձևին, որով լուս ձևը նա համարած է ուղղական և գտրած է լոյս ձևը կիրարկել: Այսպիսով բանուկ լեզուից վատաւած է լոյս-ը և նրա փոխարէն անրաբար իշխած է լուս ձևը:

Այսպէս կարելի է մեկնել լուս ձևի գոյութիւնը մեր նոր լեզուի մէջ, համարելով ոչ թէ լոյս ձևի մի հնչափոխուած, այլ ինքն ոյ իսկի անցած ու հնչման, այլ թէ արտահայտի հետևանք, սեռական ձևից ուղղական ձև հանելու արդիւնք:

2) Երկրորդ մեկնութեամբ այդ ձևերը կարելի է համարել նախադրական ժառանգութիւն և նկատել իբր գուգահեռ ձևեր:

Գիտենք թէ մեր լ-ն և ւ-ը լծորդ ձայներ են և փոխարինուում են իրար. հմ. coյs (մէջտեղ արևան) և cուs: կարող ենք ենթադրել, որ նախադրական հայերէնի մէջ միաժամանակ ապրում էին երկու ձև լոյս և լուս, բայց ոչ անչուշտ միևնոյն բարբառի մէջ; կարող ենք ենթադրել, որ նրանց սեռականը միապէս հնչում էր լուսո՛յ. մէկն այն հնչական օրէնքով հետևան վրայ, որով չհնչուած ո՛յ-ն ապրիս էր անհնչո

ու. միւսն այն հիման վրայ, որ մի շարք բառեր իրենց սեռականը կազմում էին ոյ վախճանով, ինչպէս «դեղ - դեղոյ, տերեւ - տերեւոյ» ուստի և՝ լուս - լուսո՛յ: Այս հաշուով լուս ձեւը ո՛չ թէ ծագած կը համարուի թիւր տրոհումի հետեւանքով, այլ կերեւայ իբր զուգահեռ մի ձեւ լոյս ձեւին, ինչպէս շուs ձեւն է շոյs ձեւի հանդէպ։

Անցնենք լոյս բառի մանր քննութեան, տեսնելու համար թէ ինչ ընչոց է։ Ա. Մէյէ գրում է (Esquisse էջ 17) «ու ձայնից յետոյ թւում է թէ հայերէնն ունեցած է միմիայն քմայիններ, որ ներկայացուած են իբր u, ծ, ջ. այսպէս դուusr, լիտ. dukter։ Այս առանձնայատկութիւնը դուցէ ծագում է հնդեւրոպական շրջանի բարբառական մի փաստից, քանի որ լոյս բառը միաժամանակ դէմ է գալիս մի կողմից սնսկ. roka'h – պայծառութիւն. միւս կողմից սնսկ. ruçant – փայլուն բառերին»[1]։ Հիւբշման մեր լոյս բառի u ձայնը համարում է ծագած նախաւոր լեզուի մէկ կամ միւս k-ից։[2]) Լոյս բառի համար յունարէնը տալիս է երկու արմատ. leuk – և luk –. այս վերջինը երեւում է amfi-luk-é բառի մէջ, որ նշանակում է կէս լուսումութ, մթնշաղ, լուսաբաց։ Այս luk արմատի համար ենթադրում են մի նախաւոր ձեւ *luq։[3]) Քանի որ մեր լոյս բառի u-ն համարում են k ձայնից ծագած, ապա մեր լուս ձեւին ամենից մօտ է յոյնի luk արմատը և նրա համար իբր ազբիւր ենթադրուած

---

1) Սանսկրիտի ç ձայնը մի նուրբ չ է։

2) H. Hubschmann. Armenische grammatik. էջ 453. Հնդեւրոպական նախալեզուի մէջ ենթադրում են թէ եղած է երկու k տարբեր երանգով։

3) E. Boisacq. Dictionnaire étymologique de la langue grecque, էջ 572.

հնդեվրոպական *luq ձևը։

Կիրարկենք մեր տեսութիւնները այս հին ձևի վրայ և տեսնենք թէ k կամ q ձայնը կարո՞ղ են s տալ, որքան և թուում է թէ այդպէս է իրօք, քանի որ luk ունի k և լոյս ունի u։ Մեր տեսութեամբ f-ն ձոյլ բաղաձայն է. նա մի վաղեմի kh է, որ ձուլուելով տուած է q. իսկ ձոյլ բաղաձայնները մեր տեսութեամբ վաղեմի լիաձայն վանկեր են, որոնց եղերական ձայնները եկած են իրար մօտ ու ձուլուելով տուած են մի նոր ձայն, երբ նրանց միջի ձայնաւորը սղած ու չքացած է։ Այս հաշուով նախաւոր kh խմբի k և h ձայնների միջեւ երբեմն հնչած է մի ձայնաւոր, որ հետագային չքացած է։ Հոլովոյթի արդիւնքին նայելով կարծում եմ, որ այդ ձայնաւորը եղած է մի i, որով kh խումբը ծագած եմ համարում մի վաղեմի kih խմբից։ Գիտենք թէ h ձայնը մի վաղեմի s ձայնից է ծագում, որով kih լիաձայն վանկի նախաւոր կերպարանքը պէտք է լինէր kis։ Այսպիսով հոլովոյթի ծիրով քայլ առ քայլ իջնելով մենք կըստանանք հետեւեալ պատկերը.

kis → kih → kh → q և ուրեմն

lukis → lukih → lukh → luq

այսինքն այն բառը, որ համարում են նախաձեւը լոյն. luk արմատի։ Մենք կարող ենք տեսնել թէ այդ լոյն արմատը պիտի առացուէր h ձայնի ցնդումով. lukh – luk։[1]) Մեր վերականգնած ձեւի հոլովոյթի մի

---

1) Ծայն լեզուի մէջ նախնական s ձայնը բառասկզբին տուած է մի հունչ, իսկ բառամիջին ցնդած է։ Luk – արմատ է. բառ կազմելու համար նրան պիտի կցուէր մի որ եւ է ածանց, որով պիտի կազմուէր բառամէջ, ուր և պիտի չքանար h-ն։ Տես. A. Meillet և J. Vendryes. Traité de gram m. Comp. des langues classiques. էջ 47, §65 և էջ 53, § 72.

փուլն է նաեւ լատ. lux բառը, որ նշանակում է լոյս, փայլ և որի սեռականն է lucis։ Այս ձեւն է, որ սըղած է իր i-ն և դարձած է lucs, որ և տառադարձուած է lux։ Ձայնաւորի սղումից և չքացումից յետոյ k և s ձայներն յարած են իրար, բայց ձուլուած չեն։ Ուղղական և սեռական հոլովների կազմութիւնը զուգահեռ է մեր սուղ վանկով վերջացող բառերի հոլովական կարգին, ուր ուղղակ. հոլովի սուղ ձայնաւորը չի չքանում, այլ մնում է սուղ վիճակում. այսպէս կարող ենք զուգադրել.

Ուղղ.	*lùkis → luks (lux)	Սեռ.	lukis (k=c)
»	*ե՛զեր → ե՛զըր	»	եզե՛ր
»	սե՛րման → սե՛րմըն	»	սերմա՛ն

Լատին հոլովական կարգը շեշտի տեսակէտով զուգահեռն է մեր արեւելեան հայերէնի կարգին, ուր ուղղ. և սեռակ. ձեւանում են ոչ թէ շեշտի շարժումով, այլ վախճանական ձայնաւորի պահպանումով սեռականի մէջ և չքացումով կամ սղումով ուղղական ձեւի մէջ։ Այսպէս՝ արեւելեան հոլովական ձեւեր և շեշտումներ.

Ուղղ.	Մա՛-տի. բաց և անշեշտ վանկ - sի. ուստի՝ ուղղակ. մա՛-տ. ի-ն ընկած.	Սեռ.	մա՛տի (ի-ն անշեշտ, բայց կայուն).
Ուղղ.	գա՛-ռան. փակ և անշեշտ վանկ-ռան ուստի գա՛ռը(ն). ա-ը սղած։	Սեռ.	գա՛ռան (ա-ն անշեշտ, բայց կայուն)։

Lu'x ուղղականի մէջ, որ էր lukis, i-ն կազմած է փակ և անշեշտ վանկ, ուստի սղած ու չքացած է. lu''cis ձեւի մէջ շեշտը նոյն տեղն է. ձեւերը տարբերացած են ձայնաւորի պահպանումով։

Մեր հոլովական կարգի մէջ այս արդիւնքը ստացւում է շեշտի տեղափոխութեամբ։ Լատինն իր ks խումբն արտաբերում է կից, առանց երկու ձայնների միջեւ սուղ ձայնաւոր զգացնելու, որ պիտի լինէր ը. մենք զգացնում ենք այդ սուղ ձայնը. ե՛զըր, սե՛ր-մըն։ Կից արտաբերութիւնն ապացոյց չէ թէ նրանց միջեւ մի ժամանակ ձայնաւոր չի եղած և չի չքացած. lucis → lucs → lux հոլովոյթը ցոյց է տալիս թէ լռին խմբերի մէջ վաղեմի ձայնաւորներ կան չքացած։

Մեր գտած lukih ձեւը կարող էր, lukh դառնալ ա՛յն պայմանով, որ երկու բաղաձայնի միջեւ գտնըւած i ձայնը սղէր և եղերական k և h ձայներն իրար մօտ գային։ Իսկ այդ ձայնաւորը կարող էր սղել ա՛յն դէպքում միայն, եթէ շեշտն իր վրայ չառնէր. հետեւապէս lukih ձեւը պէտք է հնչէր lu'kih (շեշտն u-ի վրայ), որի հետեւանքով հետեւորդ վանկը՝ ձայնաւորի չքացումով պիտի դառնար kh և հետագային ձուլուէր իբր q։

Համատարած թլուատութեան մասին մեր մշակած տեսութեամբ՝ k ձայնը որոշ լեզուական միջավայրերի մէջ պիտի հնչէր t և ուրեմն lukis ձեւը պիտի տար մի lu'tis զուգահեռ։ Այս զուգահեռ ձեւը շեշտուելով իբր lu'tis, իր անշեշտ tis վանկի ձայնաւորը պիտի սղէր և բառը հնչէր իբր lu'ts, իսկ այս ձեւի մէջ ts խումբը պիտի տար g և բառը հնչէր լուց, որ մեր լուց-աճ-ել բայի արմատն է ինչպէս և դասական լուցկի՛ բառի, որ պէտք է վերականգնել իբր լուց-ակ-ի՛։ Այս բառի մէջ ի-ն մնացած է նոյնպէս անվըթար, ինչպէս դասական «պատասխանի» բառի մէջ, որ ուղղական է. իր ի-ի անկումով նա պիտի դառնար լուց-ակ և իր ձեւով զուգահեռը կազմէր մեր գիs-ակ բառի. լուց-ակ-ի՛, որ է՝ լուցկի՛, նշանակում է վա-

ռող, լուցանող, նախապէս՝ լուսող. հմ. «ճրագը լուս արա» բացատրութիւնը, որ նշանակում է ճրագը վառիր. հմ. ճրագալոյց. նաեւ՝ լուսել, որ է՝ ճրագը վառել։ Միեւնոյն թլուատ lu'tis ձեւի s ձայնը անցնելով c հնչման՝ պիտի տար լո'ւsիc և ձայնաւորի սղումով՝ լո'ւsc և sc խումբի ձուլումով՝ լուչ, որ սլաւ լեզուի մէջ նշանակում է ճառագայթ. հմ. հին սլաւ. լուչ-ի = լոյս և լուչ-ա' – ճառագայթ. իսկ լուչ-ին-ա ռուսերէն նշանակում է խեժառատ մայրու ա'յն բարակ շերտը, որով վառում են կրակը, այսինքն նոյն իմաստն ունի, ինչ որ մեր լուցկի բառը։

Մեր լեզուի պատմութեան մէջ եղած է մի շրջան, երբ շեշտից յետոյ եկող և երկու ձայնաւորի միջեւ գտնուած l ձայնը սղած է և իբր սղման հետք թողած է y։ Այս ճամբով է ծագած մեր «հայր» բառը նախնական *patar ձեւից, ուր p անցնելով h հնչման (այս փոխանցումի մասին տարակարծիք եմ) բառը հնչած է հա'տար և s-ը սղելով իբր յ՝ այս միջանկեալ ձեւը հնչած է հա'յար և շեշտից յետոյ եկող ա-ի սղումով՝ բառը հնչած է հա'յըր, որ գեռ կենդանի արտաբերութիւն է ժողովուրդի բերանում. հմ. տէրունական աղօթքի անունը «Հայրը մեր»։ Ը-ի վերջնական չքացումով այդ բառն այսօր հնչում է միավանկ իբր հա'յր։ Զայնաշրջման այս կարգով և հոլովոյթի այս ծիրով հին lu'tis բառը շեշտից յետոյ սղելով t-ն իբր y, պիտի դառնար lu'yis, և i-ի սղումով շեշտից յետոյ՝ պիտի հնչէր lu'yəs (լո'ւյըս) և ը-ի վերջնական չքացումով՝ պիտի դառնար միավանկ լո'յս։ Lu'ys ա'յն տարբերութիւնն է, որով հնչում ենք լոյս գրութիւնը։ Մենք տեսնում ենք թէ այդ արտաբերութիւնը նախագրական է և գալիս է այն օրերից երբ կազմւում էր մեր «հայր» բառը։ Կարող ենք ասել, որ luys արտաբերութիւնը գրութեան չի

*տար lo'wyis, միւս կողմից lo'wwis: Այս վերջին ձևի մէջ երկու w ձայնները ձուլելով իրար՝ բառը պիտի դառնար lo'wis և i-ի ազդեցութեամբ lo'wɔs — այսինքն լաւրս, որ մերը ևս պարզեցնենք իրր հոլովոյթի մի միտք լուս ձևի համար: Lowɔs ձևի ը-ի չքացումով բառը պիտի հնչէր lows այսինքն lus (ow=ու): Այստեղից տեսնում ենք թէ նաև լուս բառը հին կազմութիւն է. հետեւապէս մենք կարող ենք միտքն ա-ռաջին վարկածը և պահել երկրորդը, ասելով. Loys, luys և lus արտասերութիւնները հին են: Վերջին երկուսը չեն ծագում դասական լոյս բառի loys արտասերութիւնից. երանք դալիս են նախադրական շրջանից իրր մեզնոյն նախաւոր կազմութեան տարատեսակ հոլովոյթի արդիւնք: Կարող ենք ասել նաև, որ k կամ g ձայները չեն կարող s տալ: Զուգադրութիւնները կարող են ասիկել, որ ընդունենք այդքան արտասովոր մի պնդում, բայց այդ պնդումը աւելի չէ քան փաստական կացութեան բանաձեւում: «Ասացէք է» վկայում է գիտունը. «բայց ինչո՞ւ և ի՞նչպէս» — այս հարցումը պատասխան չունի: Ինչպէ՞ս կարող է կոկորդային մի k կամ g դառնալ մի սոյլ s: Մենք փորձեցինք գոյց տալ թէ ի՞նչպէս և ո՞ր ճամբով g ձայնից կարող է s ծագել: Այս մեկնութեան մէջ մեզ օգնեց մեր տեսութիւնը ձոյլ բաղաձայների մասին: Մենք անցդակի կանգ առանք այդ փոխանցումի վրայ, մեկնելու համար ուրիշ երեւոյթ, մեր չհաւատալ լո՛յս և լո՛ւս ձեւերի գոյութիւնը մեր լեզուի մէջ: Բայց հարցի լուծման եղանակը ընդհանուր արժէք ունի: Գուցէ ես ստիպ ունենամ այս խնդիրն դառնալու ոչ թէ դիտաւածաբար, այլ մանր քննութեան համար: Համառանները եթէ յօժարին մեր տեսութիւնները կի-

բարկել, պիտի տեսնեն թէ որքան կնճիռներ պարզուում են օրուան լոյսի պէս։

Ընթերցողս կարող է տարակոյսի մատնուիլ տեսնելով թէ ինչպէս միեւնոյն lu'tis ձեւից ես հանում եմ և luys արտաբերութիւնը և լուց արմատը։ Հնարաւո՞ր է այդպիսի մի փոխանցում միեւնոյն լեզուական միջավայրի մէջ։ Եթէ շեշտից յետոյ եկող և երկու ձայնաւորի միջեւ գտնուած t ձայնը սղում էր և իբր սղման ծիր թողնում էր մի j, ի՞նչպէս կարող է նո՛յն t ձայնը նո՛յն շեշտից յետոյ և նո՛յն ձայնաւորների միջեւ մնալ անփոփոխ և հետեւորդ is խմբի հետ կազմել tis վանկը, ձայնաւորի չքացումից յետոյ զառնալ ts խումբ և ձուլումով հնչել g:

Պէտք է ճշտեմ հիմա փոխանցման մի մանրամասնութիւն, որի մասին չխօսեցի վերը՝ ցուցադրութեան պայծառութիւնը չմթագնելու համար։ Նախ դիտենք, որ մենք ունենք լուց բառական արմատ, բայց չունենք լուց ձեւով մի անջատ ու զատ բառ։ Այդ արմատը երեւում է անուանական կամ բայական կազմութեանց մէջ, ինչպէս լուց-կի՛, լուց-ան-եմ, և այլն։ Այս բոլոր ձեւերը բազմավանկ են. հետեւապէս տարբեր շեշտառական տարազներ ունեն։ Առնենք «լուցկի՛» բառը, որ երբեմն եղած է լուց-ակ-ի՛: Այս բառը պէտք է երկու շեշտ ունենար. մէկը թերի միւսը ուժալից։ Այդպէս է մեր լեզուի հնչական կշռոյթը այն բազմավանկ բառերի համար, որոնց զօրաւոր շեշտը վերջին վանկի ձայնաւորին է զարկում։ Այդ շեշտառութեան տարազն է ՝— ο ̇—. առաջին վանկը

թերաշեշտ, միջինը՝ անշեշտ և վերջինը՝ լիաշեշտ. հմ. եզակի՛, թուլակի՛ եւայլն։ Այդ թերի շեշտն է պատճառ- որ լո՝ւց-ակ-ի՛ բառը սղած է իր միջին ձայնաւորը և դարձած է լո՝ւցրկի՛ և ը-ի չքացումով՝ լուցկի: Երբ բազմավանկ բառի միջին ձայնաւորը սղում է, նրա ուժի ժառանգորդը դառնում է նախորդ վանկը, որի պատճառով և նրա ձայնաւորի տեւողութիւնը կրկարում է։ Համեմատէք սերմա՛ն և սե՛րմը բառաձեւերի ե-երի տեւողութիւնը։ Իմ կարծիքով այս հանգամանքին պիտի վերագրել, որ սանսկրիտ և յոյն լեզուների մէջ ա՛յն ձայնաւորները, որոնց յաջորդում են երկու բաղաձայն՝ տեւողութեամբ երկար են։[1]) Նըրանք երկար են, որովհետեւ երկու բաղաձայների միջեւ չքացած է մի հին ձայնաւոր։ Հոլովոյթի այն փուլի մէջ երբ սուղ ը ձայնը դեռ չէր չքացած, լուցրկի՛ ձեւն արտաբերւում էր երկար ո՛ւ ձայնով։ Փորձով կարող էք ստուգել ասածս։ Այդ ը-ի չքացումից յետոյ միայն ու ձայնը կարճացած է, բայց պահած է իր թերի շեշտի և վազեմի երկարութեան հետքը, ուստի ու-ն պահած է իր ու-ական բնոյթը և չի սղած և բառը չի դարձած լրցկի՛ = լցկի՛:

Արդ՝ թերի շեշտը՝ իբրեւ զօրութիւն՝ լրիւ շեշտի հաղիւ կէսն է և այդ իսկ պատճառով նուազ աղդեցութիւն ունի ձայներ սղելու տեսակէտից։ Արտաբերութեան մեքենական կողմն այնպէս է, որ խօսողը սովորաբար արագ անցնում է թերաշեշտ և անշեշտ վանկի վրայից, շուտով հասնելու համար լրիւ շեշտին և այս է պատճառը, որ զօրաւոր շեշտից առաջ հնչող ձայնաւորները թալկանում են և դառնում անկերպա-

---

[1]) *Տես A. Meillet. Aperçue d'une histoire de la langue grecque*, էջ 16.

բան ը-եր։ Ռուսերէն գովորի՛s բառը որ նշանակում է «խօսում է, ասում է», արտաբերւում է իբր գովը-րի՛s, իսկ երբ մէկն արագ-արագ պատմում է թէ ի՛նչ էր ասում մի երրորդ անձ՝ այդ բառը դառնում է գրrs: «Լուցկի» բառի նախաւոր ձեւը պիտի լինէր lùtisaki. արտաբերութիւնը lu՝ թերաչեշտ վանկից ti և sa անչեշտ վանկերի գլխով անցած է վերջին չեշ-տած վանկին, որ է ki, որով անչեշտ վանկերն ան-տեսուած են և այդ երկու անտեսուած և անչեշտ վանկերից առաջինը, որ մօտ է թերի չեշտին՝ ան-տեսուած է աւելի քան երկրորդը։ Այս ընթացքի հե-տեւանքով անտեսուած առաջին վանկի անչեշտ i-ն սղած է և բառը դարձած է lu՛təsaki։ Այս սղումի և ə-ի (ը-ի) չքացման հետեւանքով t և s ձայները մօ-տեցած են իրար և յարած են նախաւոր ձայնաւորին, որ թերի չեշտ ունի և նրա հետ միասին կազմած են մէկ վանկ. այսպիսով ստեղծուած է նպաստաւոր պայ-ման ts խմբի ձուլման համար, որ և կատարուած է, իբր արդիւնք տալով մի ց և բառը դարձած է լո՛ւ-ցակի՛ և միջին ա-ի հետագայ չքացումով լուցկի՛։

Մինչդեռ նոյնը չէ պարագան lu՛tis կազմութեան համար. նախ՝ նա անջատ և անկախ բառ է. իր չեշ-տը ուժայից է, հետեւապէս զօրաւոր է ձայների վրայ ազդելու տեսակէտից։ Իր անչեշտ ձայնաւորը՝ i-ն մի բաղաձայն (t-ի) միջնորմով բաժնուած է զօրաւոր չեշտից, հետեւապէս դրկից է։ Արտաբերութիւնը չեշ-տուած վանկից այդ t միջնորմի վրայով և նրան ան-տեսելով՝ ծանրօրէն իջնում է i-ի գլխին։ Այդ անտե-սումի հետեւանքով է, որ միջանկեալ t-ն չքանում է թողնելով իբր անկման ծիր մի y, որով բառը դառ-նում է lu՛ys, ուր i-ն լիարժէք չէ, այլ թերարժէք. բառը լուի՛u չէ, և ոչ իսկ լո՛ւիս, այլ շատ մօտ է

lu'ys արտաբերութեան։ Այսպէս ուրեմն եթէ *lu'tis-an-el* կամ *lu'tis-ak-i* ձեւերը չեն դարձած *bu'yis-an-el* և *lu'yis-ak-i*, պատճառն այն է, որ *lu'tis* բաղադրիչը 1) թերի շեշտ ունեցած է, 2) բաղմավանկ մի բառի մաս կազմած է և 3) բառի զօրաւոր շեշտը վերջին վանկին զարկած է։ Ահա թէ ինչո՛ւ և ի՛նչ պայմաններում միեւնոյն նախաւոր *lutis* ձեւից ծագած են թէ՛ լուց - և թէ *luys* (ոչ *loys*)։

28821

Լեզուասէր բարեկամներիս և ընկերներիս

«Յուշագրիս» նման գրութիւններ կարգացող շատ քիչ մարդ կայ մեզանում. հազիւ մի քանի տասնեակ. հետեւապէս ոչ մէկ յոյս կայ տպագրութեան ծախքն իսկ գոցելու։ Ձեւի համար գին նշանակած եմ երկու ֆրանք։ Ասում եմ «ձեւի համար», որովհետեւ եթէ քիչ է կարգացողը, շատ աւելի քիչ է գնորդը։ Ընկերներս ու բարեկամներս գիտեն իմ նիւթական կացութիւնը, գիտեն նաեւ, որ այս տեսակ ծախքերի տակ մտնելու ես հնար չունեմ։ Եթէ նրանք ինձ նման այն կարծիքին լինեն թէ Յուշագրերս կարող են պիտանի լինել մեր լեզուի քննութեան համար՝ կը խնդրեմ նիւթապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ։ Յուշագրերս տպագրելու եմ պրակ առ պրակ։ Ամեն պրակի ծախքն է մօտ 300 ֆր. 500 օրինակի համար։ Ստացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ։ Աւելորդ է ասել թէ աշխատանքիս համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ գումարից։ Հրատարակուած պրակների ամբողջ պահեստն ու մնացորդ գումարը պիտի մնայ Համազգային Ընկերութեան։

Սիրով Ն. Ադբալեան

Հասցե.

Collège Arménien
127, Wadi Abou Djenil
BEYROUTH, Liban

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լույս տեսած են Ա — ԻԱ պրակներ
Ա — ԺԸ ամեն պրակի գինն է 1 Ֆրանկ

Թուղթի տարապայմաններու պատճառով սկսած
ԺԸ — ԻԱ ամեն պրակի գինն է 2 *Ֆրանք*։

ԳԻՆ 2 ՖՐԱՆՔ

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԻԲ.



1942

ՊԷՅՐՈՒԹ

Տպարան «ՈՈԳՈ» Պէյրութ

A II 79432

ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԴԷՍ ՈՒ ԴԷՆ

Արեւելեան հայերն ունեն դէս, դէտ, դէն, որ նը-
շանակում են «այս կողմը, այդ կողմը, այն կողմը»[1].
կիրարկւում է թէ՛ յօդով, և թէ՛ առանց յօդի. «Դէսը
կա՛ց», «Դէնը գնա՛», «Դէտը մի՛ գնա»։ Երկրորդ
դէմքը ս ունի փոխանակ դ-ի. դէտը։ Այդպէս է և
ցուցական դերանուան մէջ. էտ, որ է այդ:

Գաւառական բառերի տառագարձութեան ժամա-
նակ մենք ամենքս Ս. Մեսրոպի վիճակի մէջ ենք, որ
առաջին անգամ գրի առաւ հայերէն բառեր։ Ի՞նչպէս
պէտք է գրել դե՞ս թէ դէս։ Այն բարբառները, որ
ունին «դէս ու դէն»՝ ե-երը հնչում են է. «էրէս, էր-
կու», այսինքն՝ երես, երկու, հետեւապէս դէս
ու դէն բառերի այսօրուան հնչումը մեզ չի օգնում
որոշելու թէ այդ բառերի e երանգով հնչիւնը ե՞ է
թէ է: Մինչդեռ այդ հանգամանքը մեծ նշանակութիւն
ունի բառերի ստուգաբանութեան համար։ Մեր նոր
հեղինակներն այդ բառերը գրում են է-ով։ Կարծում
եմ, որ ճիշտ են գրում։

Գիտուններն ասում են թէ մեր է ձայնը մի նա-
խաւոր եյ խմբից է ծագում, հետեւապէս «դէս, դէտ,
դէն» նախապէս հնչած են իբր դեյս, դեյտ, դեյն: Նը-

---

1) «Դէտը գնաց»= այդ կողմը գնաց։ «Շատ դէս
ու դէն ընկաւ՝ չգտաւ»= շատ այս ու այն կողմ ընկաւ՝ չգտաւ։

կատելով, որ մեր տեսութեամբ՝ մեր ե ձայնը մի նախաւոր իա խմբի յետագայ ձուլումն է՝ մենք վերի ձեւերը կարող ենք վերականգնել իբր դիայս, դիայs, դիայն (ե=իա) և տրոհել իբր դի-այս, դի-այs և դի-այն: Դի բաղադրիչն այստեղ մեր դի բառն է, որ նշանակում է կողմ, հմ. արեւմտահայ «մէկդի» բառը, որ է մէկդի = մի կողմ։ Եւ ուրեմն դի-այս, դի-այs, դի-այն ձեւերը նոյն իմաստն ունեցած են երբեմն, ինչ որ ունեն այսօր, այսինքն՝ նշանակած են «այս կողմը, այդ կողմը, այն կողմը»։ Մենք տեսնում ենք այստեղ ցուցական դերանուան մի յետադաս գործածութիւն, որ սովորական է գրաբար լեզուում, բայց նման դէպքերում գրաբարը ցուցական դերանունի դիմական յօդը դնում է ցուցուած բառի վրայ.— տունս այս, տունն այն, տունդ այդ։[1]) Կիրարկութեան վերի ձեւը սակայն պէտք է շատ հին համարել, աւելի հին քան գրաբար լեզուն, քանի որ հին ի-այ

---

[1]) Հետաքրքրական մի երեւոյթ.— ել խումբը իբր է ձուլելու ունակութիւնը, որ լայնօրէն գործած է մեր լեզուի նախագրական շրջանում՝ մասամբ դեռ պահած է իր կարողութիւնը մինչեւ այսօր։ ԺԹ դարի սկզբին ռուսի բերանից լսելով կոպե՛յկա, ուր կայ մի ել խումբ՝ մեր ժողովուրդը և մտաւորական դասը հնչադարձած են կոպէկ և կապէկ, երկուսն ևս ել խումբը ձուլելով իբր է: Ռուս լեզուի մէջ անշեշտ օ-ն կորցնում է իր երանգի պայծառութիւնը և հնչում է ա-ին մերձաւոր մի երանգով. մտաւորական հայը նայած է ռուս բառի գրութեան և ինքն ևս գրած է կոպէկ, իսկ ժողովուրդը հետեւած է իր ականջին և հնչած է կապէկ։ Բայց երկու դասն ևս հայացրած են բառի շեշտը և կոպե՛յկա-ն հնչում են՝ կա՛պէկ, կո՛պէկ։

խումբք ձուլուած է և տուած եղ, իսկ սա նոր ձուլուածով զարձած է ի: Այս ձուլուածները կատարուած են գրաբար լեզուից շատ առաջ, քանի որ գրաբարը չունի եղ զուգագրութիւն. բոլոր եղ խմբերն այստեղ բնեւում են իբր վաղուց ձուլուած ձայներ ի կերպարանքով: Ինքնին պարզ է, որ դես, դես, դեն աւելի հին բառեր են քան գրաբարը: Դի՜այս, դի՜այս, դի՜այն անջատ կազմութիւնները յաճախակի գործածութեամբ այնպէս ձուլուած են իրար, որ զգացուած են իբր մի բառ և ներքին ձուլուածներով (ի–այ→եյ→ի) այսօր մեզ ներկայանում են իբր պարզ բառեր: Այդպիսի ձուլուածներ անծանօթ չեն թէ՛ մեր և թէ՛ օտար լեզուներին թէ՛ նախագրական և թէ հետագայ շրջանից. այսպէս՝ նախագրական — յorժամ. որ այլ բան չէ քան մի վազեմի յ-որ ժամ. այսպէս՝ մեր այսօրուան դեպի նախագրութիւնը, որ այլ բան չէ քան գրաբարի դեպ՝ի:

Գրաբարի մէջ ցուցական դերանունը կիրարկուում է նաեւ գոյականից առաջ. այստեղ տեսնում ենք մ՛ե «այս տուն» և «տունս այս»: Գործածութեան այս ձեւը նոյնպէս կիրարկուած է դի բառի համար և հընչած է այս դի, այդ դի, այն դի, որ Թիֆլիսի բարբառում տուած է էսի, էնդի, էսի (այ→է), որ նշանակում են «այստեղ, այդտեղ, այնտեղ», բայց կարծում եմ թէ նախապէս նշանակած են «այս կողմ, այն կողմ, այդ կողմ»: [1]) Թիֆլիսեցին ունի նաեւ դեն բառը, որ

---

[1]) Էսաի մարիկ — էնդի համեցէք — էտաի գո՞մ, որ նշանակում են. թէ՛ ա՛յս կողմ նայիր, և թէ այս տեղ նայիր, ա՛յն կողմը համեցէք, և ա՛յնտեղ համեցէք, ա՛յդ կողմը գամ և այդտե՛ղ գամ: Բայց աւելի յաճախ կիրարկուում են իբր այս, այն, այդ տեղ, քան այս, այդ, այն կողմ իմաստով:

արտաբերում է բեն. — Խսբենը, Խնբենը, Խտբենը, որ նշանակում են այս կողմը, այն կողմը, այդ կողմը։ Ունի նոյն բառը նաեւ, n°r հարցականով. n°rբենը, այսինքն ո°ր կողմը։

Դես ու դեն ունեցող բարբառներն իրենց հերթին ունին n°r հարցականը դի բառի առջեւ, n°rդի նշանակում է «ո°ր կողմը», ու նաեւ ո°ւր, ո°ր տեղ։ Հին առ ու փախի տարիներից մնացած մի զրոյց եմ լսած մօրիցս, որ ասում էր թէ Լեզգիների արշաւանքին ժողովուրդը փախչում՝ մտնում է քար ու քոլերը (այրերն ու անտառները)։ Մի գերի բռնուած աղջիկ անցնելով թաքստոցների տակից՝ կանչում է.

«Ինձ տե՛ս՝ քեզ լաց.
Որդի որ ես՝ զայիմ կաց։

Այսինքն տես իմ վիճակը և լաց քեզ վրայ և ուr որ ես՝ ամուր կաց, (որ գերի չընկնես)։

Ժողովուրդը պահած է և դի բառի հին յոգ. սեռական ձեւը իբր դիանց: Ց. Թումանեանը գրում է թէ չունը չգիտեմ «n°rդիանց որդի՝ գտել էլ մի դառան մորթի». «որդիանց» նշանակում է, «որ տեղերից, որ կողմերից»։ «Էս ցաւը ո°ր դիանց լուս ընկաւ», այսինքն որ տեղից, որ կողմերից երևաց։ Կողմ ու տեղ գաղափարները մերձիմաստ են ժողովուրդի գիտակցութեան մէջ։ «Էն կողմերը դող չատ կայ», այսինքն «այն տեղերը»։ «Դիանց» սեռական ձեւը վերի ասութեան մէջ կիրարկուած է իբր աննախդիր բացառական. իր յոգ. ուղղականը պէտք է լինէր «դիանք», որ պահած են բարբառները. «ո°ր դիանքը ման եկար», այսինքն՝ «որ կողմերը»։ Ո°rդի բառն ունի և յօդաւոր կիրարկութիւն. «ո°rդիս ա», այսինքն՝ որ կողմս է. «ձեր տան ճամփէն ո°rդին ա», այսինքն որ կողմն է. «չես տեսնո՛ւմ ո՛rդիտ (դ) ա» = որ կողմդ է։

Ոմանք գուցէ փորձուին, «ո°rդի, էստի, էնդի» և

այլ ձևերը համարել ո՞ր տեղ, էս տեղ, էն տեղ բառերի ամփոփում՝ հիմնուելով նրանց այսօրուան իմաստի վրայ։ Թիֆլիսի բարբառն ունի և տի (ես-տի և այլն) և «տեղ» բառը, որ արտաբերում է տիղ: Սայաթ-Նովան գրում է.

Վուր տիղ հարսնիք, վուր տիղն սուք, վուր տիղ
սոյբաթ սաղ է ըլում,
Վուր տիղ ժամ, վուր տիղ պատարաք, վուր տիղ
սիրով տաղ է ըլում (լբ) [1]։

Նոյն Թիֆլիսի բարբառն ասում է. վո՞ւր-դի և վո՞ւր տիղ: Գ. Սունդուկեանի Պեպօի մէջ Գիքօն ասում է, «վո՞ւրդի ին, կո՛րել ին». այսինքն՝ «ո՞ւր են, ո՞ր կողմն են, կորել են»։ Յ. Թումանեանի «որ դիանց որդի» ասութեան զուգահեռ Թիֆլիսի բարբառն ասում է «վուրդանց վուրդի», այսինքն՝ «որտեղից որտեղ»։ Նոյն բարբառն ունի. «էսղանց, էտղանց, էնղանց» [2]), այսինքն՝ «այս տեղից, այդ տեղից, այն տեղից»։ Սրանք ամփոփուած ձևերն են «էս տեղանց, էն տեղանց, էտ տեղանց, որ տեղանց» ձևերի։ Բարբառները պահած են նաեւ հոլովոյթի միջին փուլը։ Հաւլաբարցին [3]) ասում է. «ըստղանց ընդեղ», այսին-

---

[1]) Վուր տիղ = որտեղ. իսկ այս երգի մէջ նշանակում է «մի տեղ»։ Ըլում = լինում։ «Մի տեղ» ասելու փոխարէն «վուր տիղ» ասելը վրացաբանութիւն է։

[2]) Ղ-ն այս բառերի մէջ հնչում է արաբական զայն գրի ձայնով։

[3]) Հաւլաբարը Թիֆլիսի բանորական թաղն է, որի բնակչութիւնը գաղթած է Գանձակի և Երեւանի շրջանից. նրանք խմբուած են իրենց եկեղեցիների

քըն՝ «այստեղից այնտեղ»։ Այդ ձևերը հին և քա-
րացած աննախդիր բացառականներ են։ Նոյն ձևը,
բայց առանց ն–ի, մնացած է Թիֆլիսի բարբառում,
նկատուած է եզակի և առացած է բացառականի նոր
վախճան։ Սայաթ–Նովան ասում է.

Հեռու տեղացին դալիս իմ, խելքի զարար չահ իմ
բերի.

Այսինքն՝ «հեռու տեղից եմ դալիս՝ խելքին վնասակար
չահ եմ բերել»։ Տեսանք թէ Թիֆլիսեցին ունի և՛ «վո՛ւր-
դի» և՛ «վո՛ւր տիզ», այսինքն՝ և՛ ո՞ւրդի և՛ ո՞rտեղ, որով
նա տարբերում է դի և տեղ բառերը։ Կարծում եմ այս-
քանը բաւ է ցոյց տալու համար, որ վերի ասութեանց
մէջ դի նշանակում է «կողմ» և տարբեր է «տեղ» բառից։

Ինչպէս եղած է այս դի, որ զարձած է էսի,
և եղած է դի այս, որ զարձած է դեյս → դէս. ինչպէս
եղած է նախադաս կիրարկութեամբ ո՞ր դի, որ ձուլ-
ուած է իբր ո՞ւրդի, նոյնպէս եղած է «ո՞ր» հարցական
անունի յետադաս դրձածութեան, որ հնչած է դի ո՞ր
և բառարձների մէջ ի–ի սղումով զարձած է դրուր
(արտաբերւում է իբր դըվո՞ր, և նշանակում է «ո՞ր
կողմը»)։ Դըվո՞ր գնաց», այսինքն՝ ո՞ր կողմը գը-
նաց։ Այս ձևի մէջ ո ձայնը պահած է իր ւօ արտա-
բերութիւնը հակառակ այն կանոնին, որով բառամիջի
ո–երը լրկացած են թէ հին և թէ նոր լեզուում, բայց
բարբառները պահած են և լրկացած ձևը, ուր այդ
ձուլուած բառը հնչում է դո՞ր (Մուշ). «դո՞ր կ'երթաս»,
այսինքն «ո՞ր կողմը կ'երթաս, ո՞ւր կ'երթաս»։ Այդ
բարբառների մէջ, ուր ո ձայնը դեռ հնչում է խու-
ռափուկ ու–ով, իբր ուօ՛, «դոր» բառը հնչում է
«դուո՞ր»։ «Դըվոր» բառի մէջ դի արմատն ասելի պա-

չութիւնը, որոնցից մէկը կոչւում է Շամքորեցոց, իսկ
միւսը Լիմմիածնեցոց եկեղեցի։ Շամքորը Գանձակի
շրջանում է գտնւում և հիմա թուրքախօսակ է։

հած է «կողմ» իմաստը քան «ո՞րդի» բառի մէջ։ Այս տարբերութիւնը պայծառ կ'երեւայ եթէ համեմատենք երկու խօսք.— «Ո՞րդի գնաց». — «դըվո՞րը գնաց»։ Առաջինը նշանակում է «ո՞ւր գնաց» և միմիայն բառի լուծումով կարող ենք մակաբերել, որ նա երբեմն նշանակած է «ո՞ր կողմը» գնաց. իսկ երկրորդը նշանակում է «որ կողմով» գնաց, այսինքն ցոյց է տալիս ուղղութիւն, հետեւապէս՝ կողմ է նիշում։ Նկատելով, որ լեզուն ունեցած է «որ» հարցականի թէ՛ նախադաս և թէ յետադաս կիրարկութիւն (ո՞ր դի, դի ո՞ր)՝ ժողովուրդի լեզուական դիտակցութիւնը օգտագործած է այդ հանգամանքը և «ո՞ր տեղ» գաղափարի համար կիրարկելով «ո՞րդի» զօդումը, «ո՞ր կողմ» գաղափարն արտայայտած է «դիո՞ր» զօդումով, որ ամփոփուած է իբր «դըվոր»։

Տեսանք, որ դի բառը մեզ երեւում է տի արտաբերութեամբ Թիֆլիսի բարբառում. հմ. եսի: Սրա պատճառը ս լերկ ձայնն է. միեւնոյն բարբառում ն-ից յետոյ, որ բնութեամբ միջակ է, տ-ն հնչում է դ. հմ. ենդի: Նոյն դ ձայնն է և վո՞ւրդի բառի մէջ. և նոյն ամեն տեղ, ուր ուրիշ բաղաձայնի ազդեցութեան տակ կամ բառավերջին չէ. հմ. դես, դեs, դեն։

Մեր լուծումներից երեւաց, որ մենք ունեցած ենք դի բառ, որ նշանակած է «կողմ» և որ իբր զատ բառ մեզ աւանդած չէ գրաբարը։ Առձեռն բառգիրքը դեհ բառի դիմաց գրում է. «կողմ, թեւ, դի», որով տեսնում ենք թէ բառգրքի հեղինակը ծանօթ է այդ բառին և ուրեմն կամ գտած է որեւէ գրքի մէջ կամ կռահած է «մէկդի» և նման գաւառական բառեր լուծելով։ Հ. Աճառեան ևս վկայում է, որ այդ բառն իբր զատ բառ գոյութիւն չունի [1]։ Բայց ինչ-

---

1) Տես Արմատական բառարան դեհ բառի տակ,

պէս տեսանք այդ բառը կիրարկուած է այս, այդ, այն ցուցականների և ո՞ր հարցականի հետ թէ՛ նախադաս և թէ յետադաս և երկարամեայ կիրարկումով զօդուած է նրանց հետ։ Այդ զօդումները զգացուած են իբր զատ բառեր, կրած են հնչական փոփոխութիւններ և ստացած են տարադէմ կերպարանք։ Անկարելի էր այդ հին զօդուածքը լուծել և վերի եզրակացութեանց հասնել՝ առանց ընդունելու, որ մեր ե-ը մի հին իա խումբ է և մեր ո-ն մի հին ւօ և ոչ լերկ օ: Եւ այդ է արդէն մեր տեսութիւնը ե և ո ձայների մասին։

Անցնենք դի բառին, որ գտանք լուծելով դես բառն իր ընկերներով։ Մեր դիւղացին ունի դիհ բառը, որ նշանակում է «կողմ» — «էն դհիցը մի մարդ ա գալի. տես ո՞վ ա»։— Ձիաւորը մեր դիհը ծռեց.— այսինքն՝ Այն կողմից մի մարդ է գալիս... Ձիաւորը մեր կողմը թեքեց ձիու գլուխը, մեր կողմն ուղղուեց։ Կարծում եմ մեր դիհ բառը մեր դի բառն է, բայց հունչը պահած և ուրեմն՝ դի-ն մի հունչազուրկ դիհ է։ Այս վարկածով դես ու դեհ ձեւերը պէտք է ծագած համարել դիհ-այս, դիհ-այդ հին ձեւերից, որոնց հունչը ցնդած է բառամիջին և երկու ձայնաւորի միջեւ։ Այդ ցնդումը կատարուած է նախագրական շրջանին, քանի որ այդ շրջանին է իա խումբը ե տըւած, իսկ դիհ-այս կազմութիւնը ե տալու համար պէտք է հնչէր դի-այս, այսինքն ցնդէր իր հունչը։ Այդ նոյն շրջանին և նոյն պայմանների մէջ է, որ երկի հարիւր կազմութիւնը ցնդած է իր հունչը և

ուր կարելի է գտնել նաեւ այդ բառի գաւառական տարբերակները։

գարձած է երկի արիւր, տալով մի իա խումբ, որ ձուլումով գարձած է ե և բառը՝ երկերիւր որ գասական բառ է։

«Դոր» բառը, որ նշանակում է «ո՞ւր, ո՞ր կողմը», Արցախեցու բերնում գարձած է թոռնը. «թոռնը կեամ» = ո՞ր կողմով ես գալիս։ Ինչպէս մեր «բերեմ» բառն արտաբերելով պիրեմ՝ Արցախեցին միջակ բ-ին տալիս է լերկ պ կշիռ, նոյն ձեւով անչուշտ նա դին բառն արտաբերած է տին, միջակ դ-ին տալով լերկ տ իբր կշիռ։ Տին-ո՞ր կազմութեան մէջ բառի զօրաւոր շեշտը զարկելով երկրորդ վանկին՝ տին բառի միջի ձայնաւորը սղած ու կորած է և եզերական ձայները տուած են տն, որ ձուլումով հնչած է թ, որով տին-ո՞ր գարձած է տն-ո՞ր→թո՞ր։ Արցախեցու հնչումի մէջ երևցող ռ ձայնը արդիւնք է ր և ն ձայների հարևանութեան։ Այդ բարբառի մէջ հարսն հնչում է հարսնը և մատն՝ մաննը, այսինքն բն→նը, որով տին-ո՞ր→տնո՞ր→թո՞ռն և ձայների դրափոփոխութեամբ՝ թո՞ռնը (ըն | նը)։

Նոյն մեկնութիւնը պէտք է տալ և Թիֆլիսեցու «ո՞րթէնը, էսթէնը, էնթէնը, էտթէնը» բառերի թ ձայնին։ «Թէն» բառի ե, երանգով ձայնը կարող է լինել մի բնաբոյս ե, որ Թիֆլիսը հնչում է է, (էրէս=երես), կամ մի բնաբոյս է։ Եթէ համարենք ե՝ այն ժամանակ թենը բառը պիտի լուծել իբր թի-անը (ե=իա), թ-ին իր նախաւոր կերպարանքը տալով՝ մենք կըստանանք տինի-անը, և զուգագրելով «իշ-ան, ձի-ան» ձևերին՝ կը տեսնենք, որ այդ բառը յոգնակին է տին բառի։ Այս բառն այդ ածանցուած ձեւի մէջ մտած է իր վաղեմի անվթար կերպարանքով իբր տինի. այս ձեւից է ծագում թէ բառի ուղղականը որ է դին ‖ տին (վախճանի անշեշտ ի-ն ընկած) և թէ սեռականը շեշտի շարժումով և առաջին ի-ի սղումով. դինի՛→դընի՛։ Իսկ եթէ թեն բառի է-ն համարենք մի հին է, այն ժամանակ բառը պէտք է լուծել իբր տինի-այն,

ուր իա ձուլումով տուած են ե, որով բառը դարձած է տիհեյն. եյ խումբը մեր լեզուում տալիս է է և ուրեմն՝ տիհեյն, տիհ-էն. իսկ տիհ լիաձայն վանկը տեսանք թէ ձայնաւորի սղումով ու չքացումով տալիս է տհ իսկ այս խումբը՝ թ, որով տիհեն → տհեն → թեն և ցուցականների և հարցական nr-ի կցումով՝ n°rթեն, ku-թեն, ksթեն: Տիհի-ա՛յն պիտի լինէր մակբայ. հմ. գիշեր-այն։

Ինչպէս տեսանք դիհ բառը հին է. Հ. Աճառեանի վկայութեամբ այդ ձեւը կիրարկում է Սա. Օրբելեան [1])։ Գալով դեհ ձեւին՝ նրա հնութիւնը կարող ենք հասցնել մինչեւ Ց. Թլկուրանցին.

Ով որ հեծնուր ձի բարձրավիզ
Եւ թուր քաշէր ամէն դեհաց,
Տեսայ զնա խիստ փոչիման՝
Երկու փայտի մէջ էր պարկած։

Դիհ և դեհ միեւնոյն բառերն են, որ տարբերացած են նախաւոր ձեւի տարատեսակ շեշտառութեան հետեւանքով։ Այդ հին ձեւը պէտք է լինէր դիահ. շեշտուելով իբր դի՛ահ՝ ա-ի յովտացումով և նոյնեբանգ ի-ին ձուլուելով բառը դարձած է դի՛հ, այս ծիրով դի՛ահ → դի՛յհ → դիհ։ Իսկ շեշտուելով իբր դիա՛հ՝ ի-ի յովտացումով և ա-ին ձուլուելով՝ բառը պիտի զառնար դեհ այս ծիրով. դիա՛հ → դՄ՛ահ → դե՛հ: Տեսանք թէ Թլկուրանցու բերանում դեհ նշանակում է «կողմ» նոյն իմաստն ունի իր տարբերակը՝ դիհ, մեր գիւղացու բերանում։

---

1) Տես Արմատ. բառարան դեհ բառի տակ։

Այս չարքին են պատկանում և «դըվեր» ու «դըվէր» բառերը։ Կտրանը կեցողը ձայն է տալիս բակի մէջ կեցածին. «ի՞նչ ես ասում. լա՛ւ չեմ իմանում. դըվե՛ր արի՝ տեսնեմ»։ Այսինքն՝ վեր բարձրացիր կտուրը։ Նոյն տեղ կեցածը ասում է մօտն եղած փոքրիկին. «դըվեր գնա՛, մի սառը ջուր բեր խմենք»։ Այսինքն՝ ցած գնա՛։ Կարծում եմ այս բառերը պիտի լուծուին իբր դի վեր և դի վեր (վայր), այսինքն՝ վերի կողմ և վարի կողմ։ Սրանք զուգահեռ են դըվո՞ր կազմութեան, որ ինչպէս տեսանք մի հին դի ո՞ր է. հմ. նաև «դըվեր գնաց. (վերը գնաց, բարձրացաւ երկրորդ յարկը, տանիքը, լեռը. «դըվեր գնաց». ցած իջաւ տանիքից բակը, դաշտից ձորը։ Դըվեր ընկաւ» = վար ընկաւ և այլն։

Իբր ամփոփում գնում եմ այստեղ մեր քննած բառերի հոլովոյթի ծիրը և փոխանցման փուլերը։

արմատ. դի (նահաւոր դիհ)։

ո՞ր դի → ո՞րդի (զօգուած)։
դի ո՞ր → դըո՞ր (դըվոր) — (n=ՍՕ)։
դի ո՞ր → դըո՞ր — դո՞ր (ը-ի չքացումով լուծուած է ըn յօրանջքը — (n=ԱՕ) [1])։

այս դի այն դի այդ դի	էստի էնդի էտտի	տի և դի լծորդ. յ ա→ է։

դի այս → դեյս → դէս դի այդ → դեյդ → դէդ դի այն → դեյն → դէն	իա→ե. եյ→է.

տիհ ո՞ր → տհո՞ր → թո՞ր տիհի այն → տհիայն → տհեյն → թէն	տհ → թ։

---

1) Այս խումբի մէջ Ա-ն չատ խուսափուկ ձայն ունի։

ԱՀԱԽԱՍԻԿ

Գրաբարն ունի ահաւասիկ, ահաւադիկ *և* ահաւանիկ, *ունի նաև* աւասիկ, աւադիկ, աւանիկ: *Նկատելով այս զոյգ ձևերը՝ կարող ենք ասել, որ առաջին ձևերը ծագած են երկրորդ ձևերից* ահա *բառի կցումով։ Այդ կարծիքին են Ս. Մալխասեան և Հ. Աճառեան* [1]։ Ահաւասիկ *և իր քոյր ձևերի մէջ երկու* ա *ձուլուած են իրար.* ահա + աւասիկ → ահաաւասիկ → ահաւասիկ: Ահա *բառն այսօր չեշտում ենք իբր* ահա՛: *Նոյնիսկ գաւառական ձևի մէջ, ուր այդ բառի երկու* ա-*երը միապէս սղած են, չեշտը կրկին վերջին վանկին է զարկում.* հմ. ըհը՛. — ըհը՛, ա՛ռ, կե՛ր։ *Ի՞նչպէս էին չեշտում* ահաւասիկ *և* աւասիկ *բառերը։ Կարծում են թէ առաջինը չեշտում էին իբր* ահա՛ւասիկ [2]. *իսկ երկրորդը՝* ա՛ւասիկ, *որով կարծում եմ* ահաւասիկ *բառի մէջ ոչ միայն երկու* ա, *այլև երկու չեշտ են ձուլուած.* ահա՛ + ա՛ւասիկ: *Երկու* ա-*ը պիտի տային մի երկար* ա՛ *և բառը պիտի հնչէր իբր* ահա՛՛ւասիկ: *Կարծում եմ նաև, որ հին կիրարկութիւնն եղած է անջատ իբր* ահա՛, ա՛ւասիկ *և յաճախակի կիրարկումով է, որ այդ երկու զատ բառերը ձուլուած են իրար և տուած են մէկ բառ* — ահա՛ւասիկ:

Ահաւասիկ *բառի մէջ վերջին* իկ-*ը ածանց է անշուշտ.* հմ. *հին՝* այդմ-իկ *և նոր՝* ես-իկ: *Տեսանք նաև, որ* ահա-*ն մի զատ բառ է։ Յապաւելով նախաբառն ու վերջածանցը մենք կըստանանք* (ահա) աւա-

---

[1]) *Տես Արմատ. բառարան «ահա» բառի տակ։*

[2]) *Տես Ս. Մալխասեան. Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախադիրները.* 1891. *էջ* 7. § 10։

ս(հկ)։ Մենք աւաս ձեւով բառ չունենք, բայց պէտք է ենթադրել, որ ունեցած ենք։ Բազմիցս առիթ ունեցած եմ ասելու, որ մեր տեսութեամբ յ և ւ ձայները նախնական չեն, թէեւ շատ հին են։ Նրանք որեւէ ձայնաւորի կամ բաղաձայնի սղման հետքն են նիշում և լծորդ են, որովհետեւ զուգահեռ կազմութեանց մէջ միեւնոյն ձայնի սղման հետքն են։ Այս հիման վրայ կարող ենք ասել, որ աւաս ձեւը կարող էր ունենալ և ունեցած է իրօք իր զուգահեռն իբր այաս։ Մենք կարող ենք այսպիսի մի զուգահեռ բառացանկ կազմել։

ԶՈՒԳԱՀԵՌ ՁԵՒԵՐ

ւ-ով	յ-ով
աւաս	այաս
աւագ	այագ
աւան	այան

Հին հայերէնի զօրաւոր չեշտը զարկելով այս կազմութեանց առաջին վանկերին, երկրորդ վանկի ձայնաւորները պէտք է նախ սղէին և ապա չքանային, որով այս նախնական ձեւերը պիտի ամփոփուէին և ստանային տարբեր կերպարանք. այսպէս՝

ա՛ւաս → ա՛ւս → օ՛ս	ա՛յաս → ա՛յս → է՛ս.
ա՛ւագ → ա՛ւգ → օ՛գ	ա՛յագ → ա՛յգ → է՛գ.
ա՛ւան — ա՛ւն → օ՛ն	ա՛յան → ա՛յն → է՛ն.

Այս ցուցադրումից պարզ երեւում է, որ մեր չունեցած աւաս բառը մեր ունեցած այս բառի լծորդական տարբերակն է եղած և ուրեմն գրաբարի ա՛ւասիկ ձեւին զուգահեռ երբեմն եղած է մի ա՛յասիկ ձեւ, որ երկրորդ ա-ի չքացումով հնչած է ա՛յսիկ և բարբառի մէջ այ-ը է-ի փոխ լով դարձած է էսիկ։ Այսպիսով նոր բարբառական էսիկ ձեւը գրաբար աւասիկ ձեւի զուգահեռն է։ Այս զուգահեռ ձեւերը

հասած են մինչեւ մեր օրերը։ Մարաղայի բարբառն ասում է «օսօր», այսինքն «այս օր» ուր օս մի հին ա՛ւս է և աւելի հին ա՛ւաս, որից կազմուած է ա՛ւասիկ բառը։ [1]) Ակնցիք ասում են օճրի, որ նշանակում է աճդին և ուր օճ մի հին աւճ է և աւելի հին ա՛ւաճ, որից և կազմուած է աւաճիկ բառը։ Տիկ. Լ. Սասունի, որ Բինգեանցի է, (Ակնի չրջան) վկայում է թէ իրենց բարբառում կիրարկում են օսրի, օդրի, օճրի, որ նշանակում են ասդին, ատդին, անդին։

Կարծում եմ նոյն օճ բառն է նաև մեր դասական լեզուի մէջ. հմ. «օճն և օճն արասցէ ձիս տէր» ասութիւնը (Հռութ. Ա. 17 և այլուր)։ Այդ ասութեամբ թարգմանուած է յունարէն ta'de չեզոք ցուցականը։ Յունարէն բառը յոդնակի է։ Մեր թարգմանիչը օճ բառի յոդնակին չէ դրած. գուցէ չկար իր խօսած բարբառի մէջ. բայց բնագրի իմաստն արտայայտած է կրկնելով այդ հին բառը «օճն և օճն արասցէ ձիս տէր»։ Մեր լուծումից երեւում է, որ օճ պէտք է երրորդ դէմքի ցուցական լինէր, այսինքն մեր այն ցուցականի համարժէքն ու լծորդը իրր աւճ։ Ցունարէն բառն առաջին դէմք է նիշում։ Այս հանդամանքը սակայն

---

[1]) Օս ձեւը տեսնել Հ. Աճառեանի Արմատ. բառգըրքի մէջ այս բառի տակ. իսկ օճրի ձեւը նոյն բառգըրքի մէջ դեռ բառի տակ։ Հ. Աճառեան օճրի ձեւի հետ միասին յիշատակում է օրտի ձեւը և երկուսը միապէս համարում է «անդինդ»։ Կարծում եմ օրտի ձեւը մի օսրի ձեւ է և նշանակում է ատդին։ Մենք տեսնում ենք, որ Ակն դեռ բառին տալիս է բի կշիռ, որով օրդի կարող էր ծագել ձայնների դրափոխութեամբ օդրի | օրդի։ Այսպիսով մի հին աւադդիճի դարձած է ա՛ւսդիճի՛ (s–դ) → աւսճի։→ (ճի—տի) → օսրի (աւ→օ. տի→բ) և դրափոխութեամբ՝ օրտի։

վճռական նշանակութիւն չունի. ռուս. ksо և ksos նշանակում են այս, թէեւ ածանցուած են so և sos բառերից, որ նշանակում են այն:

Կարծում եմ նաեւ, որ մեր օն բառի կշիռն է ռուս օն անձնական դերանունը, որ նշանակում է նա: Յայտնի է, որ երրորդ դէմքի անձնական դերանունները իսկապէս երրորդ դէմքի ցուցական դերանուններ են. հմ. սա, դա, նա: Սլաւ լեզուի մէջ on ցուցական դերանուն է և նշանակում է այն [1]):

Վերի լուծումների հիման վրայ կարող ենք ասել, որ նախագրական հայերէնն ունեցած է ցուցական բառերի երկու շարք, ա՛յաս, ա՛յադ, ա՛յան և ա՛ւաս, ա՛ւադ, ա՛ւան: Նայելով այս վերականգնած և անամփոփ ձեւերի կազմութեան՝ մենք տեսնում ենք, որ նրանք բարդ բառեր են. հետեւապէս կարող են լուծուիլ իբր ա՛յ-աս, ա՛յ-ադ, ա՛յ-ան. և ա՛ւ-աս, ա՛ւ-ադ, ա՛ւ-ան: Թւում է թէ ա՛յ բաղադրիչը ա՛յն ցուցական միջակութիւնն է, որ դեռ կենդանի է մեր լեզուի մէջ.— «ա՛յ, լաւ մարդ».— «ա՛յ, տե՛ս»: Այ բառն այստեղ նշանակում է ահա՛.— Ահա՛ լաւ մարդ.— Ահա՛, տե՛ս: Նոյն արժէքը պէտք է ունենար և աւ բաղադրիչը, բայց լեզուն այդ բառը չի պահած: Իսկ այդ բաղկացութեանց երկրորդ բաղադրիչները թւում է թէ արևմտահայ բարբառների աս, ադ, ան ցուցական բառերն են: Անչուշտ կարող է առարկուիլ թէ քանի որ դասական հայր, մայր տուած են գաւառական հար, մար հաւանական է, որ աս, ան ծագած լինեն այս, այն ցուցական ձեւերից: Բայց ե՞րբ և ի՞նչ ճամբով: Ա՛յաս ձեւը եթէ չեշտուէր իբր այա՛ս, պիտի տար այա՛ խումբ,

---

[1]) A. LESKIEN. *Handbuch der altbulgarischen sprache.* էջ 84. § 75.

որ մեր տեսութեամբ (տես Յուշագիր ԺԴ. էջ 24) պիտի դառնար ատ՛ և ձուլումով՝ մի երկար ա՛, որով այաս՛→ատ՝ս→ա՛ս: Նոյն արդիւնքը պիտի տար նաև ա՛ւաս ձևը եթէ չեշտուէր իբր աւա՛ս (տես նոյն Յուշագիրը)։ Կայ և մի ուրիշ ճամբայ, եթէ ենթադրենք, որ դասական շրջանից յետոյ այս բառի յ ձայնը անցած է հ հնչման և ապա ցնդած է, որով այս→ահս→աս։ Կարծում եմ այսպէս են ցնդած նաև մեր «ընծայ, տղայ» և նման բառերի վախճանական յ ձայնները։ Բառամիջի յ ձայնի հ հնչափոխութեան համար կարող ենք իբր փաստ բերել խնայում է բայաձևը, որ Լոռեցին արտաբերում է խնահում ա, յ-ին տալով հ հնչում։ Նոյն մեկնութիւնը կարելի է տալ նաև ինչ-ինչ բարբառների արքաուրին, խնաում ա արտաբերութեան, ուր ոչ յ կայ և ոչ հ, այլ լերկ յօրանջք (աու)։ Բայց անհնարին չէ, որ աս, ան, ադ շատ աւելի հին լինեն քան դասական լեզուն։ Գրաբարն ունի ասի, անի, որ կարելի է տրոհել իբր աս-տի, ան-տի և գտնել աս և ան ցուցականները։ Այս հիման վրայ աստ և անդ բառերը մեզ կ՚երևան իբր ի վախճանը նետած աստ(ի) և անտ(ի), իսկ աս-տի, ան-տի ձևերը կըստանան «այս կողմ, այն կողմ» իմաստ։ Հմ. «ո՞րդի», որ նշանակում է «ո՞ւր», բայց քիչ առաջ տեսանք թէ այդ բառի բուն իմաստն եղած է «ո՞ր կողմ»։

Տեսանք թէ աւ-ա և այ-աս լծորդ ձևեր են և ուրեմն այ և աւ կշռում են իրար։ Սրանք պէտք է որ նոյն ցուցական իմաստն ունենային. այ միջարկութիւնը այդ իմաստը պահած է մինչև այսօր և ցուցական է ընդհանրապէս։ աս, ադ, ան կցորդ բառերն են, որ որոշում են այ ցուցականի մատնանշած իրի կամ երևոյթի դիրքը խօսողի վերաբերմամբ։ Այ միջարկութեամբ կարելի է ե՛ւ մօտի իրը մատնանշել և երկնքի այս ու այն ասագը. այդ բառի մատնանշումն ընդհանուր է, առանց մօտն ու հեռուն ճշտելու։

Աւ և այ ցուցականները ամփոփումով պիտի տային օ և ի։ Ինձ թւում է, որ այս է ծագումը յունե-
րէնի արական և իգական յօդերի — ο, ε՛։ Այս յօ-
դերն արտաբերում են հունչով իբր հο և հի։ Այդ
հունչը համարում են մի նախաւոր ѕ ձայնից ծագած։
Առանց մտնելու մանրամասնութեանց մէջ, աւելորդ
չեմ համարում յիշեցնել այստեղ, որ Հոմերոսի լեզուի
մէջ յօդերը պարտադիր չեն և առանձին առած՝ ցու-
ցական իմաստ ունեն։ Հոմերոսի լեզուն յոնիական
բարբառի հնագոյն յուշարձանն է։ Երկար դարեր յե-
տոյ նոյն բարբառով գրած է իր Պատմութիւնը Հե-
րոդոտոս. Նրա լեզուի մէջ նուազ յաճախ քան Հոմե-
րոսի լեզուի մէջ, բայց շատ աւելի քան Ատտիկական
բարբառի մէջ՝ յօդերը ցուցական իմաստ ունեն։ Ցու-
ցական իմաստ ունեն և մեր աւ և այ բաղադրիչնե-
րը. Նրանք պահած են իրենց նախնական իմաստը և
յօդ չեն դարձած և այդ է կարծում եմ պատճառը, որ
մեր լեզուն յօդ չունի։ Յօդը հնդեւրոպական չէ, նա
հետագայ կազմութիւն է և բոլոր յօդ ունեցող լեզու-
ների մէջ նա ծագում է ցուցական գերանուններից և
յաճախ կատարում է ցուցական գերանուան դեր։ Այդ-
պէս է նաեւ գերմաներէն լեզուի մէջ «ուր յօդը մի
հին ցուցական է, որ հին ժամանակ նշանակում էր
«այս» և որ երբեմն նոյն նշանակութիւնն ունի նաեւ
այսօր [1])։

---

[1]) Յօդի մասին ընդհանրապէս և յատկապէս գեր-
մաներէնի յօդի մասին տես V. Henry. Précis de
gramm. comparée de l'anglais et de l'allemand. էջ
231. Իսկ յօդի դերի մասին Հոմերոսի և Հերոդոտոսի
լեզուների մէջ տես. O. Riemann et H. Goelzer.—
Gramm. grecque complète, էջ 435.

Մի երկու դիտողութիւն ևս այ միջարկութեան մասին։ Այդ միջարկութիւնն ունինք և ա ձևով, հմ. ա՛ մարդ։ Երբ միջարկութիւնը այ է և հետևորդ բառը սուղ վանկով է սկսւում՝ այդ սուղ վանկը պահում է իր սուղ բնոյթը։ Վիճակի երգն ասում է.

ա՛յ տըղայ, սե՛ւ չուխաւոր,
Սա՛զմոսը ծո՛ցիդ սովոր.

Իսկ երբ միջարկութիւնն ա՛ է, այն ժամանակ սուղ վանկը քայքայւում է և իր բաղաձայներից առաջինը կցւում է միջարկութեան, իսկ երկրորդը հետևորդ վանկին։ Պարերգն ասում է.

ա՛տ-ղայ դու կա՛մաց խօսա՛ (ա՛ տղայ).
տափած տեղը մարդ կըլի. (տափած=թագնուած)։

Այսպէս նաև ա՛կ նիկ (ա՛ կնիկ) և ա՛յ կընիկ. ա՛տնաւեր և ա՛յ տրնաւեր։ Բայց պէտք է ասեմ, որ ոչ ամեն սուղ վանկ նոյն պահուածքն ունի։ Արժէ այս երեւոյթը յատուկ հետազօտութեան նիւթ դարձնել։

Նկատելով, որ այ միջարկութիւնը անցնում է ա ձևին, դուցէ կարենայինք ասել, որ Աբխազերէնի յօդը, որ մի ա է, այ միջարկութեան մի տարբերակն է, որի յ ձայնը անցած է հ հնչման և հետագային ցնդած է։ Գիտենք թէ մեր լեզուի մէջ բառասկզբի յ-ն անցած է հ հնչման. յեs→հեs. «հեs գնա՛», այսինքն «յե՛s գնա, դէպի յետ գնա՛». և Լօռեցու և ուրիշ բարբառների՝ «եs գնա՛ց (yet) ,եs եկաւ» և այլն։ Տեսանք միջին յ ձայնի հ արտաբերութիւն. «խնայում ա → խնահում ա»։ Իսկ վերջին յ-երի չքացումը մենք մենկնեցինք նրանց անցումովը հ հնչման և այս հունչի ցնդումով։ Այդ վերջին հ-երի ցնդումը կատարւում է մեր աչքի առջեւ. «խոնարհ, աշխարհ» և նման բառերը մենք արտաբերում ենք խոնար, աշխար։

Գրիմաց մարդը երբեմն արտաբերում է հ-ով, բայց ժողովուրդի բերնում այդ բառերը հ չունեն։ Սայաթ Նովան գրում է.

Խոնարութին արա քանց քեզ դեվէրիդ.

Այսինքն խոնարհութիւն արա քեզանից ցած գըտնուածին, խոնարհների հանդէպ բարձրավիզ մի՛ լինի։

Կարող է առարկուիլ թէ Աբխազերէնն ո՛ւր, հնդեւրոպական լեզուներն ուր։ Այս առիթով պէտք է ասեմ, որ հնդեւրոպական համարուած նախալեզուն այդ լեզուն խօսած ցեղերի նախնական լեզուն չէ։ Նա մի որոշ փուլն է լեզուների փոփոխման։ Նա մի աւելի հին լեզուի հետագայ ձեւափոխութիւնն է։ Ինչպէս ենթադրական հնդեւրոպականը այն աստիճան ճիւղաւորուած ու փոփոխուած է, որ բաժան ճիւղերն իրար չեն հասկանում, այնպէս և ա՛յն հնագոյն լեզուն, որով խօսած են հնագոյն ցեղերը նոյնպէս բաժնուած է ճիւղերի և դրանցից մէկն է եղած ենթադրական և չքացած հնդեւրոպականը։ Հնդեւրոպական լեզուների յատակին նստած է մի թանձր դիրտ, որ հնդեւրոպական չէ։ Առ այս՝ այսքան։

Քանի որ վերը խօսք եղաւ ȷ ձայնի մասին՝ աւելորդ չեմ համարում արձանագրել մի երկու դիտողութիւն։ Բորչալու՝ գաւառի (հին Գուգարքի) Շուլաւէր գուղի միջով անցնում է մի ճանապարհ, որ զընալով դէպի արեւելք, այգիների վերջում կտրում է մի փոքրիկ գետակ, որին տեղացիները կեs (գետ) են ասում։ Գետի և ճանապարհի այդ խաչաձեւ կտրուածքին ասում են ցանց։ Ոտաւորն այդ տեղից անցնում է քարվաղի վրայով (քարվաղ ասում են քարերի այն

չարքին, որ ձգում են ծանծաղ ջրերի կամ ճահճուտ տեղերի մէջ և քարերի վրայ կոխելով անցնում են միւս կողմը)։ Կարծում եմ, որ այս բառի մէջ մեր յ ձայնն է իր դասական հնչումով. հմ. «յանցս ճանապարհաց» բացատրութիւնը։ Նոյն դիւղացիք երբ ուզում են, որ սայլապանը կանգնեցնի իր ընթացքը՝ կանչում են. «արա՛, (ա՛յ տղայ) Ցոդն արա», այսինքն՝ «կեցո՛ւր»։ Այս բառի մէջ նոյնպէս՝ կարծում եմ՝ մեր յ ձայնն է իր վաղեմի հնչումով. հմ. «յոտն կաց»։ Կարծում եմ, այս բառերի մէջ յ-ն իր հին արտաբերութիւնը պահած է «յանց» և «յոտն անել» բացատրութեանց յատուկ իմաստի պատճառով. տեխնիկական բառերն ու բացատրութիւնները քարանում են և յարատեւում, առանց ենթարկուելու հնչական փոփոխութեանց։ Այդ կայունութեան նպաստում է բառաձեւերի ներքին իմաստի չքացումը։ Պէտք է նախ դադարէին «յանց և յոտն» ձեւերը դիտակցել իբր որոչ հոլովներ, որ կարենային այդ ձեւերը պահել իրենց նախնական արտաբերութեամբ։

491.99-53
Ա-47

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են Ա — ԻԲ պրակներ
Ա — ԻԱ ամէն պրակի գինն է 2 Ֆրանք

Թուղթի եւ տպագրութեան տարապայմանց սղութեան պատճառով ԻԲ պրակի գինն է

ԳԻՆ 3 ՖՐԱՆՔ